ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Բաց վիրաբուժություն

Հիվանդի դիրքը վիրահատական սեղանին

Մեջքի վրա

Կիրառվում է որովայնի օրգանների վրա իրականացվող վիրահատությունների մեծ մասի դեպքում: Ձեռքերը, կախված պլանավորված վիրահատության տիպից, կարող են լինել տարածված (A-1) կամ տեղակայված մարմնի երկայնքով (A-2)՝

⇒ եթե պլանավորվում է հիվանդի թեք դիրք, նրա ոտքերը վիրահատական սեղանի վրա ժապավեններով ամրացվում են

⇒ ձեռքերը պաշտպանվում են տամպոններով կամ սիլիկոնե թիթեղներով

⇒ անհրաժեշտ է խուսափել բազկային հյուսակի գերձգումից /ուսի տարածումը չպետք գերազանցի 90^0–ը/:



Ֆրանսիական դիրք

Այն լապարոսկոպիկ միջամտությունների ժամանակ կիրառվող դիրքերից մեկն է (մեկ այլ դիրք է ամերիկյանը՝ հիվանդը մեջքի վրա պառկած, ձեռքերը իրանին սեղմված)

⇒ հիվանդի ոտքերը պահվում են ծնկների տակից

⇒ ոտքերը տեղակայվում են հորիզոնական դիրքում կամ քիչ ներքև իջեցրած, ապահովելով լապարոսկոպիկ գործիքների ազատ տեղաշարժ

⇒ հարկ է խուսափել նրբոլոքային նյարդի սեղմումից:



Ծովափնյա բազկաթոռի դիրք

Ցուցված է կիրառել ճարպակալման հետ կապված վիրահատական միջամտությունների մեծ մասի ժամանակ՝

⇒ պահանջվում է հատուկ ուժեղացված սեղան

⇒ հիվանդը «նստում» է սեղանի վրա

⇒ անհրաժեշտ է խուսափել ձեռքերի, բազկային հյուսակի և նրբոլոքային նյարդերի որևե սեղմումից:

Կերակրափողի վիրահատությունների ժամանակ կիրառվող դիրքեր

Կերակրափողի մասնահատման ու վերակառուցման ժամանակ կարող են կիրառվել մի քանի մուտքեր: Հիվանդի դիրքը կախվածէ հիվանդության տեղակայումից ու վիրահատական մուտքից: Կիրառվող դիրքերն են՝

- ✓ մեջքի վրա, ողնաշարի կրծքային հատվածի առավելագույն հետծռմամբ, գլուխը թեքված դեպի աջ, պարանոցը հետգցած: Աջ ձեռքը տարածված է, ձախը՝ մարմնի երկայնքով(Նկար ա): Այս դիրքը առավել հաճախ կիրառվում է տրանսհիատալ էզոֆագէկտոմիաների ժամանակ, ապահովելով.
  - ⇒ որովայնի խոռոչի վերին հատվածների լավ էքսպոզիցիա
  - ⇒ լավ էքսպոզիցի պարանոցային բերանակցման համար:

- ✓ Աջ կամ ձախ կողմնայինդիրք (Նկար բ)՝
  - ⇒ ներկրծքային բերանակցման ժամանակ
  - ⇒ վերին կողմնային թորակոտոմիայով իրականացվող միջամտությունների ժամանակ, ընդ որում կերակրափողի վերին ու միջին կրծքային հատվածի ախտահարման դեպքում մուտքը իրականացվում է աջ կողմից, իսկ ստորին կրծքային հատվածի ախտահարման ժամանակ նախընտրելի է նույնը կատարել ձախից
  - ⇒ սեղանը կրքծի մակարդակում փոքր ինչ ծալվում է, նպաստելով թորակատոմիայից հետո կրքծավանդակի լրացուցիչ բացվելուն:



- ✓ *45^0 թեքվածությամբ կողմնային դիրք* (Նկար գ)՝
  - ⇒ թույլ է տալիս կերակրափողի վիրահատության որովայնային, կրծքային ու պարանոցային փուլերը իրականացնել առանց հիվանդի դիրքը փոփոխելու
  - ⇒ լավագույն մուտքի ապահովման համար հնարավոր է սեղանի թեքում
  - ⇒ հիմնական բացասական կողմը առավել էքսպոզիցիայի սահմանափակումն է:

Կտրվածքներ

Որովայնի խոռոչ մուտքի ընտրությունը պայմանավորված է՝

- ➢ նախավիրահատական ախտորոշման հստակությունից
- ➢ հիվանդության տեղակայումից ու տարածվածությունից
- ➢ նախորդ սպիներից
- ➢ կտրվածքի հնարավոր մեծացման անհրաժեշտությունից

- անատոմիական կառուցվածքների՝ մաշկի, փակեղների, ապոնևրոզի, մկանների, նյարդերի ու արյունատար անոթների առանձնահատկություններից:

Որովայնի խոռոչի ֆունկցիոնալ ամբողջականությունը պետք է պահպանվի: Կտրավծքները՝ հնարավորինսպետք է տեղակայվեն մաշկի լարման գծերի երկայնքով /Լանգերի գծեր/, իսկ մկաններն ու փակեղները փեղեքվում են մկանաթելերի երկայնքով:

Սխալ տեղակայման կտրվածքներից խուսափելու համար կտրվածքի տեղը պետք է նախօրոք նշագծվի:

Միջային կտրվածք - հանդիսանում է որովայնի խոռոչի բացման լավագույն եղանակ, անկախ հիվանդի կազմվածքից, ապահովելով անսահմանափակ մոտեցում /ներառյալ մուտք դեպի կոնքի խոռոչ/: Առավելություններից են

- ✓ լայնացման հնարավորություն ստերնոտոմիայի միջոցով
- ✓ նվազագույն արյան կորուստ
- ✓ մկանաթելերի հատման բացառում
- ✓ նյարդերի վնասման բացակայություն
- ✓ կրկնակի որովայնահատումների հնարավորություն
- ✓ լավագույն էքսպոզիցիայի ապահովում շտապ դեպքերում, երբ ախտորոշումը պարզ չէ:

Փ ու լ ե ր ը՝

- կտրվածքը պետք է կատարվի միջին գծով՝ պորտից վերևև ներքև, թրանման ելունից մինչև ցայլային սիմֆիզ (A-1)



- կտրվածքը շրջանցում է պորտը աջից կամ ձախից: Նախընտրելի է շրջանցնել պորտը ձախ կողմից, որովհետև աջ կողմում հանդիպում են ռուդիմենտար պորտային անոթներ: Եթե պլանավորվում է ստոմայի ձևավորում, կտրվածքը պետք է շրջանցի պորտը հակառակ կողմից
- բոլոր դեպքերում կիրառվում է նշտար կամ էլեկտրակաուտեր
- բացելով վերքը, միջին գծով ճարպային շերտը բաժանվում է մինչև ապոնևրոզ (A-2,A-3)



- արյունահոսության նվազեցման համար կարող է օգտագործվել մատնային սեղմում
- ապոնևրոզը նշտարով կամ էլեկտրադանակով հատվում է անմիջապես պորտից վերև կամ ներքև, քանի որ սպիտակ գիծը առավելագույն լայնություն ունի պորտի շուրջը (A-4)

- անհրաժեշտ էհատել սպիտակ գիծը առանց ուղիղ մկանները մերկացնելու, ինչը կհեշտացնի վերքի հետագա լավացումը:

Ենթակողային կտրվածք - սովորաբար կատարվում է խոլեցիստէկտոմիայի կամ ընդհանուր լեղածորանի ստուգման /աջակողմյա ենթակողային կտրվածք/, ինչպես նաև պլանային սպլենէկտոմիայի /ձախակողմյա ենթակողային կտրվածք/ դեպքում:

Նման կտրվածքի հիմնական առավելությունը վերին-միջային որովայնահատման նկատմամբ, ավելի լայն կողմնային էքսպոզիցիան ու նվազ ցավոտությանն է վիրահատությունից հետո: Բացասական կողմը՝ վիրահատության տևողության երկարումը, քանի որ ստիպված հատվում են ավելի շատ շերտեր: Վերքը այս կտրվածքներից հետո սովորաբար լավ է ապաքինվում, իսկ ճողվածքների առաջացման հավանականությունը ցածր է:

Փ ու լ ե ր ը՝

- մաշկը հատվում է կողաղեղից երկու մատ ներքև, հնարավորություն տալով փակել վերքը այնպես, որ հատման գիծը չտեղակայվի կողի եզրին (A-1)



- հատվում են որովայնի ուղիղ մկանի բունոցի առաջային ու հետին թերթիկները, ինքը՝ մկանը մաս-մաս հատվում է էլեկտրադանակով (A-2): էպիգաստրալ անոթները անհրաժեշտ է կապել կամ այրել



- հնարավոր է լայնակի մկանի ապոնևրոզի դրսային հատվածի հատում
- ցանակալի է ապոնևրոզը չհատել միջին գծով, անհրաժեշտության դեպքում կտրվածքը կարող է երկարացվել միջային ուղղությամբ:

Երկկողմանի ենթակողային կտրվածք - կիրառվում է լյարդի տրանսպլանտանտի վերցման կամ լյարդի լայնածավալ մասնահատման ժամանակ: Ենթաստամոքսային գեղձի մասնահատումների մեծ մասը ևս իրականացվում են այս կտրվածքով: Անհրաժեշտության

դեպքում էքսպոզիցիան կարող է բարելավվել կտրվածքի ուղղահայաց երկարացմամբ մինչև թրանման ելուն:

Փ ու լ ե ր ը՝

- մաշկի ու ապոնևրոզի կտրվածքը իրականացվում է վերը նշված եղանակով
- ենթաստամոքսային գեղձի մասնահատման ժամանակ կտրվածքը իրականացվում է կողաղեղից 3-4 մատ ներքև
- լյարդի տեղայնացումը սկսվում է մանգաղաձև կապանի հատումով
- հատվում է կլոր կապանը, որնանհրաժեշտ է կապել արյունահոսության կանխարգելման նպատակով, հատկապես դռներակային հիպերտենզիայի պայմաններում
- ցանկալի է լյարդի մոբիլիզացիան իրականացնել մինչև ռետրակտորների տեղադրումը, որպեսզի նվազեցվի նրանց տեղաշարժման անհրաժեշտությունը:

J-աձև կտրվածք - հաճախ կիրառվում է լյարդի աջ բլթի վրա միջամտությունների դեպքում: Այն հատկապես լավ մուտք է ապահովում դեպի ստորին սիներակ ու աջ երիկամային երակի միջև ընկած շրջան: Լավ էքսպոզիցիայի համար J-աձև կտրվածքը կարող է դրսային ուղղությամբ երկարացվել, անցնելով թորակատոմիայի:



Կտրվածքներ կերակրափողի վիրահատությունների ժամանակ կախված է հիվանդության տեղակայումից, բերանակցման մակարդակից և վիրաբույժի նախասիրություններից: Մեծ մասամբ օգտագործվում են ստորև բերված կտրվածքներից երկուսի ու ավելիի համակցումը՝

ա/ Վերին-միջային որովայնահատում

- այնպես ինչպես նկարագրված է որովայնի բաժնում

- առավել լավ էքսպոզիցիայի համար կարող է համակցվել լայնակի որովայնահատման հետ:

  բ/ Թորակոտոմիա

- առաջակողմնային՝ մաշկի կտրվածքը սովորաբար չորրորդ կամ հինգերորդ միջկողային տարածությունով
- հետին-կողմնային՝ մաշկի կտրվածքը յոթերորդ միջկողային տարածությունով, թիակի անկյան մոտ (A-1):

  Հնարավոր է կտրվածքի երկարաձգում հետողնաշարային կամ առաջային՝ դեպի կրծոսկր, ուղղություններով,

- միջկողային մկանը անջատվում է կողի վերին եզրով /կողի ստորին եզրով անցնող միջկողային անոթն ու նյարդը չվնասելու համար/ (A-2)

- առպատային պլևրան բացվում է մկրատով, կողերը լայնացվում են ռետրակտորով:

գ/ Պարանոցային կտրվածք (Б-1)

- կտրվածքը կրծոսկր-անրակապտկային մկանի երկայնքով (Б-2)
- ենթամաշկային մկանի հատում մաշկի կտրվածքի ուղղությամբ,
- բավարար էքսպոզիցիա ստեղծելու համար հատվում է թիակ-ենթալեզվային մկանը (Б-3) , անհրաժեշտության դեպքում հատվում ու կապվում են ստորին վահանագեղձային զարկերակն ու/կամ միջին վահանագեղձային երակը:

Б-1



Б-2

Б-3

- կրծոսկր-անրակ-պտկային մկանն ու քնային զարկերակի բունոցը իր պարունակությամբ տեղաշարժվում են դրսայնորեն, իսկ կոկորդը՝ միջայնորեն
- պարանոցային փուլի ամբողջ ընթացքում շնչափող-կերակրփափողային ակոսով անցնող հետադարձ նյարդի պրոյեցիայի ուղղությամբ լայնիչների տեղադրում չի թույլատրվում

- կրծոսկր-անրակապտկային մկանի միջային հատվածի առավել լավ տեսանելիության համար, այն կարող է անրակին մոտ հատվել
- կրերակրափողի հայտնաբերումը հեշտանում է, եթե նրա մեջ տեղադրվում է մեծ տրամաչափի զոնդ
- հաստ պարանոցով կամ օստեոարտրիտով տառապող հիվանդների մոտ, որոնց մոտ սահմանափակ է պարանոցի հետծալումը, ինչպես նաև դեպի կերակրափողի վերին հետկրծոսկրային հատված մուտքի ապահովման համար հնարավոր է մասնակի վերին ստերնոտոմիայի իրականացում:

Լապարասկոպիկ վիրաբուժություն

Պնևմոպերիտոնեումի իրականացում

Պնևմոպերիտենոումը իրականացվում է Վերեշի ասեղով կամ բաց եղանակով: Վերջինս առավել նախընտելի է և նվազագույնի է հասցնում հնարավոր վնասումները բարակ ասեղի կիրառման ժամանակ: Սակայն ճարպակալած հիվանդների մոտ ցուցված է օգտագործել Վերեշի ասեղը, քանի որ հաստ ենթամաշկային բջջանքը նրանց մոտ թույլ չի տալիս 1-2 սմ-ոց կտրվածքով հասնել ապոնևրոզին:

Մուտք Վերեշի ասեղով

- Կատարվում է մաշկի հատում /սովորաբար միջին գծով, պորտի տակ/ և ենթամաշկի բութ դիսսեկցիա:
- Կեռիկներով կամ Կոխերի սեղմիչներով բռնվում է ապոնևրոզն ու բարձրացվում դեպի առաջ (Ա-1):
- Վերեշի ասեղը մտցնելուց առաջ անհրաժեշտ է համոզվել, որ այն սարքին է:
- Ասեղը մտցվում է որովայնի պատի մեջ 90^0 անկյան տակ: Երբ նախազսպանակային մանդրենը ապոնևրոզի միջով անցնում է որովայնի խոռոչ, սովորաբար լսվում և զգացվում են երկու չրխկոցներ:
- Ֆիզիոլոգիական լուծույթի /3մլ/ ներմուծման ժամանակ դիմադրության բացակայությունը (Ա-2) և «կախված կաթիլի» հետագա փորձը /որովայնի պատը վեր բարձրացնելիս ասեղի պոչին դրված կաթիլը ներծծվում է ասեղի մեջ/ (Ա-3) ապացուցում են ասեղի ներորովայնային տեղակայումը:



- Երբ պնևմոպերիտոնեումի ընթացքում որովայնի խոռոչում ճնշումը հասնում են 13-15 մմս.ս., Վերեշի ասեղը դուրս է բերվում և նույն կտրվածքով կուրորեն մտցվում է սրածայր տրոակար, տեսախցիկի տրոակարը տեղադրելու համար:

Բաց մուտք

- Կատարվում է մաշկի կտրվածք /սովորաբար միջին գծով, պորտի տակ/ և ենթամշակայի հյուսվածքների բութ դիսսեկցիա:
- Հատվում է ապոնևրոզը /1-2սմ/, որովայնի պատը բարձրացվում ու մկրատով հատվում է որովայնամիզը: Հետագայում տրոակարը ամրացնելուցդրվում են երկու մաշկային կար (Ա-1):
- Որովայնի խոռոչ ներթափանցումը հաստատվում է վերքի մեջ մատը մտցնելով:
- Տեսախցիկի համար մտցված բութ վերջույթով տրոակարը կարելի է երկու կարով ամրացնել (Ա-2):

A-1

A-2

Հավելյալ տրոակարների տեղադրումը

Աշխատանքային պոռտերի տեղակայումը պայմանավորված են՝ պլանավորված վիրահատությամբ, վիրաբույժի նախասիրություններով, հիվանդի կառուցվածքով, սպիներով /եթե նրանք կան/, տարած վիրահատություններից հետո առաջացած ներորովայնային կպումներով:

Փ ու լ ե ր ը

- Մաշկի կտրվածքի չափերը պետք է մանրակրկիտ պլանավորվեն: Շատ փոքր կտրվածքը, առաջացնելով շփում մաշկի ու պոռտի միջև, վերջինիս տեղադրման համար պահանջում է ավելի շատ ուժ, բարձրացնելով չղեկավարվող պունկցիայի ռիսկը: Շատ մեծ կտրվածքը նպաստում է գազի արտահոսքին:
- Մաշկի տրանսիլյումինացիան օգնում է խուսափելու խոշոր անոթների վնասումից (Ա-1):
- Տրոակարը ներդրման ժամանակ նպատակահարմար է պահել ցուցամատի ու միջին մատի միջև: Որովայնի պատի միջով առաջացման ընթացքում տրոակարի առանցքաձողը հարկավոր է մյուս ձեռքով պահել (Ա-2):



Վերքի փակման ընդհանուր սկզբունքները՝

- Կարաթելի ու վերքի երկարության հարաբերությունը պետք է լինի 4:1-ի:
- Ապոնևրոզի փակման ժամանակ պետք է խուսափել թելի հավելյալ ձգումից, ինչը կարող է խախտել վերքի եզրերի արյան մատակարարումը:
- Ապոնևրոզի հետին պատը և նրա առաջային թերթիկը պորտից ներքև կարվում են որպես առանձին շերտեր:
- Ասեղը պետք է բռնել գործիքի ծայրով:

Միջային որովայնահատում՝

- Ապոնևրոզը, որովայնամիզի հետ կամ առանց նրա, անընդհատ եղանակով կարվում է մոնոֆիլամենտ ներծծվող թելով /օրինակ օղակավոր PDS-ով կամ օղակավոր Maxon-ով/:
- Ենթամաշկային ճարպաշերտը չի կարվում, դրենավորում կիրառվում է հազվադեպ:
- Ցանկալի է մաշկը կարել անընդհատ եղանակով, ներմաշկային ներծծվող մոնոֆիլամենտ թելով /օրինակ, Maxan 5-0/ կամ մեխանիկական կարով:

Ենթակողային կտրվածք՝

- Ի տարբերություն միջային որովայնահատման, ապոնևրոզը կարվում է երկու շերտով:

Տրոակարային վերքերի փակում՝

- Պոռտերը հեռացվում են անմիջական տեսողական հոսկողության տակ, անցքերից արյունահոսության բացակայությունը ստուգվում է 10 վայրկյան պոռտերի տեղադրման շրջանին հետևելով,
- 5մմ-ից ավելի մեծ տրամագիծ ունեցողբոլոր ապոնևրոտիկ դեֆեկտները փակվում են ներծծվող կարով /օրինակ, Vierylo/,
- Մաշկը կարվում է առանձին մատրացային կարերով /օրինակ, Dermalon 4-0/ կամ սկոբաներով:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Վիրաբույժը, մինչև վիրահատական դաշտը ծածկելը, պետք է անձամբ ստուգի հիվանդի ճիշտ դիրքն ու վերջույթների պաշտպանության հուսալիությունը;
- Վիրահատությունից առաջ կտրվածքի տեղի նշագրումը կանխում է նրա ոչ ճիշտ տեղակայումնու հարմար է սովորելու ընթացքում;
- Կտրվածքը միշտ պետք է լինի բավարար մեծության, ապահովելու համար վիրահատական դաշտի լավ դիտարկումը, ինչպես նաև անվտանգ ու արդյունավետ գործողությունները;
- Խուսափեք վերքի եզրերի հավելյալ ձգումից, ինչը կարող է խանգարել նրա հետագա լավացմանը;
- Տրոակարները տեղադրեք, վիրահատության պահանջներին ու հիվանդի կառուցվածքին համապատսխան /օրինակ՝ ճարպակալման ժամանակ/;
- Արյունահոսության բացառման համար անհրաժեշտ է 10 վարկյանից ոչ պակաս դիտարկել տրոակարի տեղադրման շրջանը:

ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԷՔՍՊՈԶԻՑԻԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ներածություն

Նշակետային օրգանի համարժեք էքսպոզիցիան կարևոր նախապայման է հանդիսանում ամեն մի վիրահատության համար: Օպտիմալ էքսպոզիցիայի հասնելու համար պահանջվում է տարաբնույթ լայնիչների կիրառում և որոշակի ժամանակի կորուստ: Կապված նվազագույն ինվազիվ վիրաբուժության ներդրման հետ, էքսպոզիցիայի հիմնարար սկզբունքները ենթարկվել են վերանայման: Նշենք նաև, որ փոփոխվել են միայն վիրահատական մուտքի եղանակները, մինչդեռ վիրահատության իրականացման տեխնիկան հիմնականում մնացել է անփոփոխ:

Լապարասկոպիկ միջամտությունների ժամանակ էքսպոզիցիան, ի տարբերություն բաց վիրաբուժության, ապահովվում է հիմնականում հիվանդի դիրքով և տրոակարների տեղակայումով: Ռետրակցիոն համակարգերը, այս միջամտությունների դեպքում, ունեն ավելի քիչ կարևորություն:

Լայնիչների համակարգերը

Լավագույն վիրաբուժական էքսպոզիցիայի համար վերքի լայնացման համակարգը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին, ապահովելով՝

- ✓ որովայնի խոռոչի լայն անսահմանափակ տեսադաշտ,
- ✓ լայն մոտեցում նպատակային օրգանին,
- ✓ վիրահատական դաշտի հավելյալ լուսավորման հնարավորություն,
- ✓ որովայնի պատի ու շրջակա օրգանների կայուն ռետրակցիա,
- ✓ հյուսվածքների փափուկ ռետրակցիա, կանխարգելելով տեղային իշեմիան,
- ✓ կիրառում տարբեր իրավիճակներում /տարբեր հիվանդներ, տարբեր կտրվածքներ և այլն/,
- ✓ որովայնի պատի տեղաշարժման համար տարբեր տիպի հավելյալ հարմարանքների կիրառման հնարավորություն:

Տարբեր լայնիչների հիմնական թերությունը՝ վիրահատական անձնակազմի կողմից ազատ «ձեռքերի» կորուստն է: Աշխատանքային տարածքի ստեղծման համար օգտագործվում են ինքնապահող լայնիչներ:

Ներկայումս կիրառվում են երկու տիպի ինկնապահվող լայնիչներ.

1. Փակ օղով լայնիչներ – օղակային համակարգը ինքնուրույն կայունանում է բացման համար տարբեր սարքերի ձգման փոխանցումից և չի պահանջում վիրահատական սեղանին պարտադիր ամրացում /օրինակ Կիրշների լայնիչը, Ա/: Լավագույն էքսպոզիցիան ստացվում է երբ յուրաքանչյուր ձգող սարք տեղադրվում էանիմիջապես մյուսի դիմացը, էքսպոզիցիայի և ֆիքսացիայի բարելավման նպատակով ֆիքսացիոն օղը վիրահատական սեղանին:



2. *Ջողային լայնիչներ* - սրանք պետք է ամրացվեն վիրահատական սեղանին: Նման լայնիչները թույլ են տալիս ստանալ ասիմետրիկ էկսպոզիցիա /օրինակ, Թոմփսոնի լայնիչը, Բ/:



Թոմփսոնի լայնիչ - լայնացման համար այս խիստ կայուն համակարգի հիմնական մասնիկներ են հանդիսանում՝ վիրահատական սեղանին ձողի ամրացնող սարքը, երկու առանցքաձողեր և տարբեր լայնիչ թիակներ, որոնք ամրացվում են պահող ձողին: Այս սարքը հարմար է միա- կամ երկկողմանի ենթակողային կտրվածքների համար, որոնք հաճախ կիրառվում են հեպատոբիլիար վիրահատությունների ժամանակ, որոնց պարագայում պահանջվում է լայնացում հիմնականում գլխամասային ուղղությամբ կամ դեպի առաջ: Որովայնի ստորին հատվածների էքսպոզիցիան սահմանափակ է: Որպես հավելյալ հարմարանքներ առկա է շեղբերի ու թիակների լայն տեսականի:

Բուկուոլտերի լայնիչ - Այս համակարգի հիմնական մաս է հանդիսանում վանդակը /փակ օղ/, որը ամրացվում է վիրահատական սեղանի ձողին: Վանդակին կարող են միացվել տարբեր լայնացնողհարմարանգներ, ինչպիսին են շեղբերն ու թիակները: Բուկուոլտերի համակարգը

կիրառվում է ինչպես երկայնակի, այնպես էլ լայնակի կտրվածքների ժամանակ: Չնայած այն հանգամանքին, որ լայնիչի ապահով տեղադրումը պահանչում որոշակի մարզվածություն, այնուամենայնիվ հստակ հարմարեցումը ստացվում է 3 հարթություններով: Մաքրումն ու ախտահանումը ևս բավականաչափ աշխատատար է համակարգի բարդ մասնիկների հետևանքով:



Ռոշարի լայնիչ – իրենից ներկայացնում է մեկ շեղբով սարք, որը հիմնականում կիրառվում է ստամոքս-աղիքային տրակտի վերին հատվածների վիրաբուժությունում: Մեծ կիսակլոր շեղբը բացազատում է որովայնի պատը և ամրանում է վիրահատական սեղանին ամրացվող ձողին: Նրա հիմնական բացասական կողմը միակողմանի ձգումն է և այն որ որովայնի պատը մնում է ոչ բավարար բարձրացած:

OmniTract – չնայած, որ այս լայնացման համակարգի տեղադրման համար պահանջվում զգալի ճշտություն, նրա կիրառումը հնարավորություն է տալիս ստանալ լավագույն մուտք հիմնական օգտագործվող կտրվածքներից: Բաց վանդակի համակարգը հեշտությամբ վերածվում է փակ օղի և կարող է լայնորեն կիրառվել ներորովայնային ու հետորովայնամզային վիրահատությունների ժամանակ: Խնամքն ու մաքրումը շատ բարդ չէ: Նկարը ցուցադրում է երկայնակի /Ա-1/ ու լայնակի /Ա-2/ որովայնահատումը Omnitract համակարգի օգտագործմամբ:



Կիրշների, Բալֆուրի, Օ՝Սալլիվան-Օ՝Քոնների լայնիչները /Ա,Բ/ – Քիրշների վանդակն /Ա/ ու Բալֆուրի ռետրակտորը /Բ/ հանդիսանում ենլավագույն օրինակըայն համակարգերի, որոնք չեն պահանջում որևէ ամրացում վիրահատական սեղանի ձողին: Սակայն ստացված լայնացման կայունությունը կարող է լինել անբավարար, իսկ ուժի ներդրումը ուղղահայաց հարթությունում անհնար է: Նման համակարգերը լայնորեն կիրառվում են, հեշտ հասանելի են և նախընտրելի այն դեպքերում, երբ անհրաժեշտ է միայն կողմնային էքսպոզիցիա:



*լապարասկոպիկ վիրաբուժությունում*կիրառվող լայնիչներ– չնայած որ որովայնի պատը պնևմոպերիտոնեումի ժամանակ բարձրանում է , ներորովայնային էքսպոզիցիան հիմնականում ստացվում է հիվանդի դիրքով և տրոակարների տեղադրմամբ:Գոյություն ունեն մի քանի սարքեր, որոնք կարող են կիրառվել լյարդի տեղաշարժման համար ստամոքս-աղիքային համակարգի վրա վիրահատությունների ժամանակ, ինչպիսին են լապարասկոպիկ ֆունդոպլիկացիան, ստամոքսային շունտավորումը կամ ադրենալէկտոմիան:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Լավագույն օգտագործման նպատակով, անհրաժեշտ է տեղյակ լինել և առավելագույնս ծանոթ լինել տարբեր լայնիչների, դրանց դրական և բացասական կողմերի հետ:
- Դանդաղ, քայլ առ քայլ լայնացումը կանխարգելում է կողերի կոտրվածքը և նվազեցնում է հետվիրահատական ցավը;
- Երկարատև վիրահատությունների ժամանակ ռետրակցիայի պարբերական թուլացումըկանխարգելում է տեղային իշեմիկ բարդությունները:

ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԱՐՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ներածություն

Ժամանակակից ստամոքս-աղիքային վիրաբուժությունում կարող գործիքները, հատկապես նվազագույն ինվազիվ միջամտությունների ներդրումից հետո, դարձել են ստանդարտ միջոցներ: Այդ իսկ պատճառով գործիքների և նրանց օգտագործման ձևերի մասին բժիշկը պետք է տեղեկանա վիրաբուժական մասնագիտացման վաղ շրջանում:

Նախապատմությունը

1909թ. Hultl-ը /Բուդապեշտ/, հիմնվելով մեխանիկական կարի գլխավոր սկզբունքների վրա, նախագծեց առաջին գծային կարող գործիքը գաստրեկտոմիաների ժամանակ ստամոքսի ծայրատի փակման համար: Կապված գործիքի քաշից ու չափերից, նրա հետ աշխատելը դժվար էր: Մեկ այլ հունգարացի վիրաբույժ Petz-ը, ինչպես նաև Friedrich-ն ու Neuller-ը Գերմանիայից,

անցած դարի 20-ական թվականներին ստեղծեցին ավելի հարմար ու թեթև կարող գործիք: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Սովետական կառավարությունը, վիրաբույժների պակասի հետ կապված, խթանեց տարբեր մեխանիկական սարքերի մշակման գործընթացը, հույս ունենալով օգնել փորձի պակաս ունեցող մասնագետներին: Այն բերեց ստամոքսի ու աղիքի մասնահատումների համար տարբեր գծային ու ցիրկուլյար կարող գործիքների նախագծմանը:

Անցած դարի 60-ական թվականներին ամերիկյան վիրաբույժ Ravitch-ը այդ գործիքները բերեց Միացյալ Նահանգներ, որտեղ կենտրոնացան դրանց բարելավման գործին, նպատակ ունենալով բարձրացնել գործիքների հուսալիությունն ու հարմարավետությունը: Ինժեներների հետ միասին նրա կողմից մշակվեցին երկու գծով շախմատաձև կարգով տեղակայված սկոբաներով, տարբեր երկարություն ունեցող պլաստիկ փոփոխվող քարտրիջներ: Ի շնորհիվ այս աշխատանքների, միանվագ օգտագործման կարող գործիքները անցած դարի 70-ական թվականներից սկսած մեծ կիրառություն ստացան ամբողջ աշխարհում:

Նվազագույն ինվազիվ վիրաբուժության հաջողությունները վերջին 10 տարիների ընթացքում նպաստեցին փոքր կարող գործիքների մշակմանը, որոնք ներկայումս կիրառվում են տարբեր հիվանդությունների վիրահատական բուժման ժամանակ:

Մեխանիկական կարող գործիքների տեսակները

Ներկայումս, բաց և լապարասկոպիկ վիրաբուժությունում օգտագործվում են 3 տիպի մեխանիկական կարող գործիքներ:

Ինչպես ներկայացված է ներքևում, մեխանիկական կարի սկզբունքներն ու նախադրյալ պայմանները շատ քիչ են փոփոխվել

⇒ *Հյուսվածքների մեխանիկական միացման սկզբունքները*՝

- հյուսվածքների սեղմում,
- հյուսվածքների կարում մետաղական լարի օգնությամբ,
- B-ա ձև փակ սկոբա,
- սկոբաները կարի գծով տեղակայում շախմատային կարգով:

⇒ *վիրաբուժական մեխանիկական կարիպայմանները*՝

- համարժեք լուսանցքի ստեղծում,
- հյուսվածքների համարժեք անոթավորման պահպանում,
- համադրվող հյուսվածքների ձգվածության կանխում,
- անբավարարության ու խուղակների զարգացման կանխում,
- բավարար հեմոստազի ապահովում,

- մեխանիկական ապահովություն / կարող գործիքների միատեսակություն:

Գծային կարող գործիք կամ TIA-կարիչ /Transverse Anastomosis Stapler/ լայնակի բերանակցումների կարիչ/:



Հիմնականում օգտագործվում են խոռոչավոր օրգանների հատման ու փակման համար: Կան նաև անոթային գծային կարող գործիքներ: Ցանկալի է օգտագործել սկոբաների ֆիքսված երկարության ստեպլերներ:

Սկոբաների բարձրությունը անոթային կարերի համար հավասար է 2.5մմ, չփոփոխված աղիքային պատի համար-3.5մմ, ստամոքսի կամ հաստացած հյուսվածքներ համար-4.8մմ:

Գծային հատիչ կամ կարող գործիք GIA /Gastrolnetestinal Anastomosos/ ստամոքս-աղիքային բերանակցում:

Սրանք ունենալով իրենց մեջ կտրող սարք կարող են կարելով միաժամանակ հատել խոռոչավոր օրգանը կամ իրականացնել “կողքը-կողքին” բերանակցում /Ա/:



Նվազագույն ինվազիվ վիրաբուժության համար առաջարկվել են հատուկ կառուցվածքի կարող սարքեր /Բ/: Մասնավորապես տրոակարների անկյունային շեղման կոմպենսացիայի համար սարքերը հավելվել են շարնիրային գլխիկներով:

Ցիրկուլյար կարող գործիք

Նման գործիքները կիրառվում են “ծայրը-կողքին” կամ “ծայրը-ծայրին” բերանակցումներ ձևավորելու համար: Նրանք թույլ են տալիս դնել երկշարք սկոբաներ, տեղակայված շախմատային կարգով, իսկ դանակը հատում է դրված սկոբաներից ներս: Սկոբաների բարձրությունը ընտրվում է կախված կարվող հյուսվածքների հաստությունից:



Սկոբաների տեսակները

Կասետաները լիցքավորելու համար առավել հաճախ կիառում են ուղղանկյուն ձևի սկոբաներ: Նրանք փակվելու ու սեղմվելու ժամանակ ընդունում են B տառի ձև: Մի կողմից նման ձևի սկոբաները թույլ են տալիս ստանալ միացվող հյուսվածքների պինդ հպում, իսկ մյուս կողմից՝ պահպանել նրանցում բավարար արյան մատակարարում:

Առանձին տեսակի սկոբաների համեմատականը

Կասետայի տեսակը	Անոթային	ստանդարտ	հաստ հյուսվածքի համար
գույնը	սպիտակ	կապույտ	կանաչ
սկոբայի բարդությունը	ֆիկսված	ֆիկսված	ֆիկսված
մինչև B-ձև ստանալը	2.5մմ	3.5մմ	4.8մմ
B-ձև ստանալուց հետո	1.0մմ	1.5մմ	2.0մմ
կիրառման տեղը	բարակ հյուսվածքներ արյամբ լավ մատակարարվող հյուսվածքներ անոթներ ենթաստամոքսային գեղձ լյարդ	կերակրող բարակ աղի հաստ աղի թոք - - -	- - - - - -

Տեխնիկական ասպեկտներ

Եթե կարող գործիքների կիառման սկբնական շրջանում օգտագործվում էին արծաթից ու պողպատից սկոբաներ, ապա ժամանակակից կարի տեխնոլոգիաներում օգտագործում է տիտանը, որը ունի լավագույն բիոհամատեղելիություն և շատ քիչ արտեֆակտներ է առաջացնում ՀՇ-ի և ՄՌՇ իրականացման ժամանակ: Բացի այդ, տիտանի վրա չեն ազդում ստամոքսի մագնիսական դաշտերը, իսկ նրա ջերմաստիճանը ՄՌՇ ընթացքում շատ չնչին է բարձրանում: Սրա շնորհիվ սկոբաների հաստությունը նվազեցվել է մինչև 0.2-0.3մմ:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Վիրաբույժը պետք է լավ կողմնորոշվի կարող սարքերի տարբեր ձևերի միջև: Գործիքի հետ սխալ վարմունքն ու կարիչի ոչ ճիշտ գործարկումը՝ մնում են նրանց անհաջող կիրառման հիմնական պատճառներ:
- Կարող գործիքը չի կարելի օգատգործել իշեմիայի ենթարկված, նեկրոզված, զգալի այտուցված ու բորբոքված հյուսվածքների վրա, քանի որ նման իրավիճակներում հյուսվածքների անվնաս փակումն ու բերանակցման ձևավորումը անհնար է:
- Ստեպլերի կիրառումից առաջ անհրաժշետ է հեռացնել ճարպային հյուսվածքը, տեղակայված շճային մակերեսների վրա:
- Անբավարարության ու որովայնաբորբի կանխարգելման համար անհրաժեշտ է ստուգել յուրաքանչյուր ստեղծված բերանակցման հերմետիկությունը:

ԴՐԵՆԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ներածություն

Դրենաժները նախատեսված են ներորովայնային կուտակումների հեռացման համար և կիրառվում են ախտորոշիչ, կանխարգելիչ և բուժական նպատակներով: Որովայնի վերին հատվածի օրգանների վիրաբուժությունում ախտորոշիչ դրենաժները հիմնականում տեղադրվում են ներորովայնային կուտակումների արագ հայտնաբերման համար: Նրանք հազվադեպ են մնում իրենց տեղում և, այդ իսկ պատճառով, չունեն մեծ նշանակություն: Մյուս կողմից կանխարգելիչ դրեաժները տեղադրվում են վիրահատության վերջում՝ հիմնականում երկու նպատակներով.

- հեղուկի հեռացման ու նրա ագրեսիվ ազդեցության վերացման՝ օրինակ, պանկրեատիկ հեղուկի կամ լեղի,
- հեղուկային կուտակումների ինֆեկցման ու հետագա թարախակույտի առաջացման կանխարգելման:

Կանխարգելիչ դրենաժները օգնում են հայտնաբերել այնպիսի վաղ հետվիրահատական բարդություններ, ինչպիսիք են՝ ներորովայնային արյունահոսությունը կամ բերանակցման անբավարարությունը: Եթե որովայնի հեղուկի կուտակումը ինֆեկցիվում է և զարգանում է թարախակույտ, պահանջվում է նրա բուժական դրենավորում, մաշկի միջով կամ կրկնակի վիրահատության ընթացքում,

Դրենավորման ձևերը

Դրենաժները պայմանականորեն կարող են բաժանվել պասսիվ և ակտիվ համակարգերի: *Պասսիվ դրենաժները* – ինչպիսին են Պենրոուզի դրենաժը /A-1/ կամ Easy Flow տիպի սարքերը /Ա-2/ նպաստում են հեղուկի դուրսբերմանը, ստեղծելով բնական արտահոսք, ճնշման գրադիենտի ուղղությամբ: Նրանց համար, որովայնի պատում ստեղծված անցքերը պետք է լինեն բավական լայն, քանի որ պասսիվ դրենաժների պատերը կարող են նստել: Հաճախ նրանք խցանման հետևանքով դադարում են գործել և հանդիսանալով բաց համակարգեր՝ ունեն հետընթաց ինֆեկցիայի զարգացման պոտենցիալ վտանգ:

*Ակտիվ դրենաժները,*ի տարբերություն պասսիվների, գործում են ճնշման բացասական գրադիենտի հաշվին: Սովորաբար դրանք սիլիկոնայն ռենտգենդրական Ջեկսոն-Պրատտի / A-1/ և Բլեյկի / A-2/դրենաժներն են:

Չկպչող դրենաժները -երկլուսանցքանի խողովակներ են մեծ անցքով հեղուկի հեռացման և փոքրով՝ օդի մուտքի համար: Մեծ խողովակով օդի ներհոսքը թույլ է տալիս դրենավորող խողովակներում պահպանել ճնշման գրադինենտը, խուսափել դրենաժի անցքերը շրջապատող հյուսվածքների մշտական խցանումներից՝ թույլ տալով պահել դրենաժը աշխատանքային վիճակում: Սրանք օգտագործվում են հիմնականում, երբ անհրաժեշտ է հեռացնել մեծ քանակի հեղուկ: Նման դրենաժների թույլ կողմը փոքր խողովակի հնարավոր խցանումն է, ինչի կանխարգելման համար նրա միջով կարելի է ներմուծել լվացող հեղուկ:

Լրիվ դրենաժային համակարգում - բացասական ճնշումը պահում է դրենաժին “հերմետիկ” ամրացնելով սեղմվող տանձիկ, այդպիսով նվազեցնելով հետընթաց ինֆեկցիայի զարգացման վտանգը:

Պրոֆիլակտիկ /կանխարգելիչ/ դրենավորում

Դրենաժային անցքը մաշկի վրա բացվում է նշտարով /Ա-1/: Անցքի մեջ մտցվում է Միկուլիչի սեղմանը /Ա-2/ ու թեք ուղղությամբ ծակվում է որովայնի պատը: Մյուս ձեռքը ներսից պահում է որովայնի պատը /Ա-3/, պաշտպանելով աղիները վնասումից: Նման եղանակով ստեղծվում է թունել, որը չի խախտում որովայնի հերմետիկությունը: Սեղմիչի բրանշներով բռնվում է դրենաժի ծայրը և որովայնի պատի միջով անցկացվում դեպի դուրս /Ա-4/: Որոշ վիրաբույժներ նախընտրում են թունելը ստեղծել ներսից դուրս, ներքաշելով դրենաժը դեպի որովայնի խոռոչ: Գործողության ավարատին դրենաժն ամրացվում է մաշկին և դրենաժային խողովակը միացվում արտածծիչ սարքին:



Կանխարգելիչ դրենավորումը կիրառվում է որովայնի օրգանների վրա վիրահատական միջամտություններից հետո, շրջապատող հյուսվածքների համար վտանգ ներկայացնող թունավոր կամ ինֆեկցվելու մեծ ռիսկ ունեցող ներորովայնային հեղուկի հեռացման համար /եթե կա նրա կուտակում/: Նման միջավայր են հանդիսանում ասցիտիկ հեղուկը, արյունը, ավիշը, լեղին, պանկրեատիկ հյութը կամ աղիքային պարունակությունը: Այդ իսկ պատճառով դրենաժները դրվում են հեղուկի առավել հաճախ կուտակման տարածքներում՝ ենթալյարդային /1/, աջ ենաստոծանիական /2/, ձախ ենթաստածանիական /3/, հարպանկրեատիկ, կողմնային /4/ խողովակներում, փոքր կոնքի խոռոչ:



Բերանակցման ժամանակ դրենավորումը կիրառվում է հիմնականում բերանակցման անբավարարության վաղ հայտնաբերման համար: Պարկելախոցերից խուսափելու համար անհրաժեշտ է հետևել, որ դրենաժը տեղադրվի անբավարարության բարձր ռիսկ ունեցող բերանակցումից անվտանգ տարածության վրա՝ չշփվելով նրա հետ:

Չնայած նման դրենաժների կիրառումը հաճախ դիտարկվում է որպես բարդություններ կանխարգելող եղանակ, վերջին տարիներին նրանց կիրառման անցանկալի հետևանքների հետ կապված հաղորդումները զգալի աճել են: Հատկապես նշվում է նրանց դերը հետադարձ ինֆեկցիայի զարգացման գործում: Այդ իսկ պատճառով ներկայումս այս եղանակի կիրառումը միշտ չէ, որ ընդունվում է միանշանակ:

Ապացուցողական հետազոտությունների վրա հիմնված առաջարկներ
կապված կանխարգելիչ դրենավորման կիրառման հետ

Տեղակայում	Վիրահատություններ	Առաջարկներ
Լյարդ, լեղուղիներ, ենթաստա-մոքսային գեղձ	լյարդի մասնահատում, առանց բիլիո-դիգեստիվ բերանակց-ման	առանց դրենավորման
	խոլեցիստէկտոմիա / բաց, լապարասկոպիկ/	առանց դրենավորման
	ենթաստամոքսային գեղձի մասնահատում	առանց դրենավորման
	բիլիո-դիգեստիվ բերանակ-ցում	չի գնահատվել
Ստամոքս-աղիքային խողովակի հատվածներ	կերակրափողի մասնահատում	ներկրծքային դրենաժներ բոլոր դեպքերում
	գաստրէկտոմիա	դրենավորում
	ստամոքսի դիստալ մասնա-հատում	առանց դրենավորման
	ստամոքսային շունտավորում ըստ Ռու-ի բերանակցումով	չի գնահատվել
	տասներկումատնյա աղու թափածակման ժամանակ դուոդենոտոմիա, ճարպոնով տամպոնավորում	առանց դրենավորման

Բուժական դրենավորում՝ հեղուկի կուտակման համար որովայնի խոռոչի բարենպաստ շրջաններում: Ինֆեկցված հեղուկի կուտակումները, ինչպիսին են թարախակույտերը և ինֆեկցված բիլիոմաները հանդիսանում են լավ ծանոթ բարդություններ որովայնի վերին հատվածի վիրահատական միջամտությունների դեպքում, որոնց դրենավորումը իրականացվում ներվիրահատական կամ ռենտգենաբանական հսկողության տակ տեղադրված դրենաժներով: Թարախակույտերի զարգացման համար առավել հաճախ անատոմիական շրջաններ են աջ ենթաստոծանիական տարածությունը /1/, ձախ ենթաստոծանիական տարածությունը /2/, հեպատոռենալ փոսիկը կամ Մորիսոնի գրպանիկը /3/, ձախ ենթալյարդային տարածությունը /4/ և ճարպոնային գրպանիկը /5/, փոքր կոնքի խոռոչը:



Կատետերները

Որովայնի վերին հատվածների հեղուկային կուտակումների մեծ մասը հասանելի է (տեղային անզգայացմամբ, ասեպտիկ պայմաններում, քիչ ինվազիվ եղանակներով), մաշկի միջով դրենավորման համար: Գերձայնային կամ ՀՇ-հսկողության տակ մաշկի միջով դրենավորվումը իրականացվում է տրոակարով կամ Սելդինգերի եղանակով: Մաշկով դրենավորման համար տիպիկ կատետերներ են հանդիսանում MAC-ZOC-ը /Ա-1/, որոնք հնարավոր է ներդնել կանյուլյայի /Ա-2/ կամ մանդրենի /Ա-3/ օգնությամբ: Այս ինքնաամրացվող օղակաձև կատետերի մեծ օվալ կողմնային անցքը ծառայում է նրա դրենաժային հնարավորությունների ավելացման համար, իսկ ռենտգեն պոզիտիվ շերտը օգնում է որոշելու նրա դիրքը: Մանդրենը մտցվում է կատետերի լուսանցք և ուղղում նրա եզրի օղը, որը կատետերի տեղադրումից ու մանդրենի հանելուց հետո նորից վերականգնում է իր ձևը անհրաժեշտ դիրքով: Այս օղը բացառում է կատետերի անցանկալի տեղաշարժը:



Որոշ դեպքերում հեղուկի կուտակումը կարող է պահանջել վիրաբուժական դրենավորում որովայնի խոռոչի լվացում ու կրկնակի վիրահատական ստուգում:

Ինֆեկցված հեղուկի կուտակումների հեռացումը մաշկի միջով և վիրաբուժական դրենավորմամբ:

Մաշկի միջով դրենավորում	Վիրաբուժական դրենավորում
Մեկ կամերային կուտակում, թարախակույտ	Բազմակամերային կուտակում, թարախակույտ
Ցածր մածուծիկության դրենավորվող հեղուկ	Բազմակի իրար հետ չկապված կուտակումներ
Դրենաժային կապուղին չի անցնում որովայնային օրգանների միջով և չի մտնում կրծքավանդակ:	Դրենավորվող հեղուկի բարձր մածուցիկություն
	Մաշկի միջով դրենաժային կապուղին անցնում է ներորովայնային օրգանների միջով կամ մտնում է կրծքավանդակ:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Որպեսզի նվազեցվի հետադարձ ինֆեկցիայի զարգացման վտանգը, կիրառեք փակ դրենաժային համակարգեր և տեղադրեք կարճ դրենաժներ:
- էրոզիաների կամ բերանակցման անբավարարության զարգացման կանխարգելման համար, դրենաժը տեղադրեք բերանակցմանը մոտ, բայց առանց նրանց անմիջական շփման:
- Մի հիմնվեք միային դրենաժից արտադրանքի բացակայության վրա: Այն կարող է լինել խցանված կամ սեղմված հարակից հյուսվածքներով:
- Պառկելախոցերի առաջացման կանխարգելման համար, աշխատեք ներորովայնային դրենաժները տեղադրել այնպես, որ դրենաժային խողովակը անմիջապես չհպվի արյունատար անոթների ու խոռոչային օրգանների հետ:

ՆԱԽԱՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԿԱՊՎԱԾ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հիմնական նախավիրահատական հետազոտություններ

Ամեն մի վիրահատությունից առաջ կատարվում են մի շարք հետազոտություններ.

- պլանային վիրահատությունների դեպքում հիմնական լաբորատոր քննություններ են համարվում՝ արյան կլինիկական անալիզը, էլեկտրոլիտների մակարդակի որոշումը արյան մեջ, հեմոստազի ցուցանիշները, ՄԻԱՎ-թեստ:

- կրծքավանդակի ռենտգեն նկարահանում և 40-ն անց հիվանդների մոտ ԷԿԳ:

Կախված տարիքից, հիվանդության պատմությունից ու հիվանդի վիճակից կարող են պահանջվել հավելյալ հետազոտություններ:

Բացարձակ հակացուցումներ՝

- հիվանդի ոչ վիրահատելի վիճակ,
- չի ստորագրվել պլանային վիրահատություն կատարելու վերաբերյալ հիվանդի տեղեկացված համաձայնությունը (այն անհրաժեշտ է ստանալ վիրահատությունից 1 օր առաջ)

Հարաբերական հակացուցումներ՝

Նման հակացուցումներ ի հայտ են գալիս հիվանդությամբ պայմանավորված վիրահատական բուժման ծավալի և միջամտության ռիսկի միջև հակասությունների առկայության դեպքում: Նման անհամատեղելիությունը հաճախ պայմանավորված է տեղային ու ժամանակային գործոններով: Բացառապես *էնդոսկոպիկ միջամտություններին* վերաբերվող հակացուցումները անընդհատ վերանայվում են: *Ուռուցքաբանական վիրահատությունների* և *սեպտիկ վիճակների* դեպքում պետք է ցուցաբերել հավելյալ զսպվածություն:

Ընդհանուր տեղեկություններ հիվանդի համար ու նրա համաձայնությունը.

- ❖ Տեղեկատվություն բուժման ընթացքի, հոսպիտալացման տևողության, ինտենսիվ թերապիայի անհրաժեշտության, դրենաժների, ակտիվ համագործակցության, ֆիզիոթերապիայի անհրաժեշտության, շնչառական վարժությունների և այլ գործողությունների պայմանների վերաբերյալ:
- ❖ Համաձայնություն հոսպիտալացման ընթացքում մի շարք վնասակար սովորություններից հրաժարվելու վերաբերյալ՝ հատկապես ծխելուց (եթե անհրաժեշտ է համապատասխան գրառում մտցնել հիվանդության պատմության կամ համաձայնության ձևի մեջ):
- ❖ Ընդհանուր տեղեկություններ հիվանդի մասին և նրա համաձայնությունը կապված վիրահատության հետ:
- ❖ Վերքի լավացման բարդությունների և վիրահատություն տանելու համաձայնություն;
- ❖ Նախա- և հետվիրահատական արյունահոսության հնարավորություն:
- ❖ Ալոգեն արյան փոխներարկում, մինչ վիրահատությունը աուտոարյուն վերցնելու հավանականություն:
- ❖ Աղիքային կպումային անանցանելիության հավանականություն:
- ❖ Սպիի առաջացում / հետվիրահատական ճողվածքի հավանականություն:
- ❖ Հնարավոր թրոմբոէմբոլիկ բարդություններ:
- ❖ Լապարասկոպիկ վիրահատությունից հնարավոր անցում բաց միջամտության, ինչը չի համարվում բարդություն:

Վիրահատական ստանդարտներ.

Նախավիրահատական՝

- ⇒ թրոմբոզների կանխարգելում՝ կոմպրեսիոն գուլպաներ, հիվանդի վաղ ակտիվացում, հեպարինի նշանակում;
- ⇒ քննարկել նախավիրահատական հակաբակտերիալ կանխարգելման/բուժման հնարավորությունը և անհրաժեշտության դեպքում այն անցկացնել;

⇒ տրավմայից հետո պետք է հիշել փայտացման հնարավոր վտանգի մասին;
⇒ համոզվեք, որ հիվանդը ոչինչ չի կերել ու խմել վիրահատությունից ոչ պակաս քան 6 ժամ առաջ, իսկ ստամոքսի դուրս բերող հատվածի ստենոզի կամ աղիքային պարեզի պարագայում՝ ավելի առաջ; եթե կան կասկածներ պետք է տեղադրվի քիթ-ստամոքսային զոնդ;
⇒ չարորակ ուռուցքների վիրահատական բուժման ժամանակ պետք է հայտնել հյուսվածքաբանական լաբորատորիա շտապ հետազոտություններ անցկացնելու անհրաժեշտության մասին և ճշտել անհրաժեշտ է արդյոք նատիվ մակրոպրեպարատ ախտորոշումը հաստատելու համար (օրինակ՝լիմֆոմաների կամ սարկոմաների դեպքում),
⇒ եթե ցուցված է ու հասու պլանավորեք ներվիրահատական ճառագայթային թերապիա;
⇒ վիրահատությունից առաջ հիվանդին նշանակեք ֆիզիոթերապիա և շնչառական վարժություններ;
⇒ տեղադրեք կենտրոնական երակային կատետեր: Նրա ճիշտ դիրքի վերաբերյալ հնարավոր է ռենտգենաբանական հաստատման անհրաժեշտություն և ցուցումների դեպքում անցկացրեք նախավիրահատական պարէնտերալ սնուցում;
⇒ ապահովեք արյան փոխարինողներ (էրիտրոցիտար զանգված, թարմ սառեցված շիճուկ, թրոմբոցիտար զանգված , աուտոարյուն);
⇒ սափրեք վիրահատվող շրջանը կամ օգտվեք քիմիական դեպիլյատորներից:

Ներվիրահատական

⇒ վերցրեք ցանքս (նաև տրավմատիկ վերքերից);
⇒ փաստագրման համար օգտագործեք թվայնացված ֆոտոխցիկներ;
⇒ որովայնի խոռոչ մտնելուց հետո կատարվում է կարճ, բայց ամբողջական շոշափողական ստուգում, եթե այն հնարավոր է առանց որևէ որոշակի հավելյալ ռիսկի:

Հետվիրահատական

⇒ թրոմբազի կանխարգելում;
⇒ ստրեսսոր խոցի կանխարգելում՝ անտացիդներ, H2-արգելակիչներ, պրոտոնային մղիչի արգելակիչներ, վաղ էնտերալ սնուցում;
⇒ կերակրման սկիզբը որոշվում է՝ քիթ-ստամոքսային զոնդից հետհոսքի քանակով, աուսկուլտատիվ աղիքային աղմուկով, գազերի կամ կղանքի դուրս գալով, որովայնի խոռոչի օրգանների գերձայնային հետազոտությամբ: Հերթականությունը՝ սկզբում թույլատրվում են փոքր կումերով ջուր կամ թեյ, որից հետո հեղուկ՝ առանց սահմնափակման, որից հետո յոգուրտ /գալետներ/ սպիտակ հաց և վերջապես սովորական դիետա;
⇒ աղիների շարժման ակտիվության խթանման հետվիրահատական գործառույթներ՝ երրորդ օրվանից ներերակային դեղամիջոցների օգտագործում (օրինակ՝ մետոկլոպրամիդ), որովայնային վիրահատություններից հետո հետվիրահատական կայուն աղիքային ատոնիայի ժամանակ (բոլոր բերանակցումների լավացումից հետո) կարելի է ներերակային ներարկել պիրիդոստիգմինի բրոմիդ կամ 250մգ էրիթրոմիցին (մոտիլինիազդեցություն), հոգևանների նշանակում կամ բերանով լուծողականներ (օրինակ՝ գաստրոգրաֆին, որը, և հետազոտում է, և բուժում);
⇒ հետվիրահատական շրջանում որովայնի խոռոչի ստուգում գերձայնային հետազոտությամբ (ԳՁՀ)՝ հայտնաբերելու համար հեղուկի կուտակումներ ստամոքս-

աղիքային տրակտում և ազատ որովայնի խոռոչում, աղիների պերիստալտիկ շարժումներ, խոռոչավոր օրգանների լայնացում;

⇒ հեղուկի հեվիրահատական կուտակումների դեպքում (սերոմա, հեմատոմա, բիլոմա, թարախակույտ), կարելի է ԳՋՀ-ի հսկողության տակ կատարել պունկցիա և եթե անհրաժեշտ է,հիվանդի կայուն կլինիկական վիճակի պայմաններում, մաշկի միջով դրենավորել;

⇒ ակտիվ ենթամաշկային դրենաժները հեռացվում են վիրահատությունից հետո 2-րդ օրը;

⇒ Դեմքի ու պարանոցի շրջանում կարերը հանվում են 4-6-րդ օրից սկսած, մյուս տեղերում՝ 10-12-րդ օրը;

⇒ հիվանդին պետք է տեղյակ պահել ստացիոնարից դուրս գրվելուց հետո հնարավոր վերականգնողական ծրագրերի մասին և անհրաժեշտության դեպքում, սոցիալական ծառայության աշխատակիցների հետ պլանավորել դրանք;

⇒ հիվանդներին բացատրեք երկարատև հետվիրահատական դիտարկման ու բուժման անհրաժեշտության ու հնարավոր ընթացքի մասին, օրինակ՝ ուռուցքային հիվանդությունների դեպքում;

⇒ հիվանդներին տեղեկացրեք փոխօգնության խմբերի մասին:

Լապարասկոպիկ վիրահատություններ

⇒ նախօրեին պորտի շրջանի հեռանեխում;

⇒ նախա- և հետվիրահատական քիթ-ստամոքսային զոնդի ու միզային կատետերի տեղադրում;էնդոսկոպիկ վիրահատությունների ժամանակ կարող են պահանջվել ընդունվածից տարբերվող հիվանդի հատուկ դիրքեր:

⇒ Որպես օրենք, որովայնի վերին հատվածների վիրահատությունների ժամանակ կիրառվում է ոտքերը 10-20 աստիճան դեպի ներքև դիրք (Տրենդելենբուրգի հակառակ դիրք): Որովայնի կողմնային հատվածների էքսպոզիցիայի ժամանակ նույնպես անհրաժեշտ են որոշակի դիրքեր: Վիրահատության ընթացքում լինում են դեպքեր երբ հիվանդի դիրքը մի քանի անգամ փոփոխվում է ինչը պահանջում է վիրահատական սեղանի վրա հիվանդի կայուն ֆիքսացիա:

ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Նախնական նկատառումներ վիրահատական միջամտությունների վերաբերյալ

Հիմնական նախավիրահատական հետազոտություններ

Ամեն մի վիրահատական միջամտությունից առաջ անհրաժեշտ է իրականացնել՝

- պլանային վիրահատությունների համար հիմնական լաբորատոր հետազոտությունները, արյան կլինիկական անալիզ, արյան մեջ էլեկտրոլիտների մակարդակը, հեմոստազի հետազոտում, BUN (արյան միզանյութի քանակի)-տեստավորում:
- կրծքավանդակի ռենտգեն նկարահանում և էլեկտրակարդիոգրաֆիա 40 տարին անց հիվանդների մոտ:

Կախված հիվանդի տարիքից, անամնեզից և առողջական վիճակից կարող են պահանջվել նաև հավելյալ հետազոտություններ:

Բացարձակ հակացուցումներ

- հիվանդի ոչվիրահատելի վիճակ,
- ստորագրված չէ պլանային միջամտության վերաբերյալ հիվանդի տեղեկացված համաձայնությունը /պետք է ստանալ նվազագույնը վիրահատությունից մեկ օր առաջ/:

Հարաբերական հակացուցումներ

Հարաբերական հակացուցումները առաջ են գալիս, երբ կա անհամապատասխանություն վիրահատական բուժման անհրաժեշտության, հավանական վիրահատության ծավալի և չվիրահատելու ռիսկի միջև: Նման անհամապատասխանությունը մեծ մասամբ պայմանավորված է տեղային ու ժամանակային գործոններով:

Միայն էնդոսկոպիկ միջամտություններին վերաբերվող հակացուցումները անընդհատ վերանայվում են: Կապված ուռուցքաբանական վիրահատությունների և սեպտիկ վիճակների հետ անհրաժեշտ է հավելյալ զսպվածություն:

Ընդհանուր տեղեկատվությունը հիվանդի վերաբերյալ և նրա համաձայնությունը

⇒ *տեղեկատվություն բուժման ընթացքի մասին*՝ հոսպիտալացման տևողության, ինտենսիվ թերապիայի անհրաժեշտություն, դրենաժների, ֆիզիոթերապիայի ժամանակ ակտիվ համագործակցություն, շնչառական վարժություններ և այլն:

⇒ *հոսպիտալիզացիայի ընթացքում վնասակար սովորություններից հրաժարվելու անհրաժեշտություն*՝ հատկապես ծխելուց /եթե անհրաժեշտ է գրառումը պետք է մտցվի հիվանդության պատմության կամ համաձայնագրի ձևի մեջ/:

⇒ *ընդհանուր տեղեկություններ հիվանդի մասին և վիրահատության համաձայնությունը*՝

- վերքի լավացման բարդություններ, վերքի եզրերի հեռացում,
- նախ- և հետվիրահատական արյունահոսություն,
- ալոգեն արյան փոխներարկում հնարավորություն, հնարավոր է աուտոարյան կուտակում վիրահատությունից առաջ,
- աղիքային կպումային անանցանելիություն,
- սպիի առաջացում / հետվիրահատական ճողվածք,
- թրոմբոէմբոլիկ բարդություններ,
- լապարասկոպիկ վիրահատությունների համար՝ կարող է պահանջվել անցում բաց մուտքի, ինչը չի համարվում բարդություն:

Վիրահատական ստանդարտներ

Նախավիրահատական

- ✓ թրոմբոզի պրոֆիլակտիկա՝ կոմպրեսսիոն գուլպաներ, հիվանդի վաղ ակտիվացում, հեպարինի նշանակում,
- ✓ նախավիրահատական հակաբակտերիալ /կանխարգելիչ/ թերապիայի անհրաժեշտության քննարկում և իրականացում ըստ պահանջի,
- ✓ վնասվածքներից հետո անհրաժեշտ է հիշել փայտացման մասին,
- ✓ համոզվեք, որ հիվանդը վիրահատությունից առաջ ոչինչ չի կերել/խմել ոչ պակաս 6 ժամվա ընթացքում, իսկ ստամոքսից դուրս բերող հատվածի ստենոզի կամ աղիքի պարեզի դեպքում՝ ավելի երկար ժամանակահատվածում: Կասկածների դեպքում տեղադրեք քիթ-ստամոքսային զոնդ,
- ✓ ուռուցքների հետ կապված միջամտությունների ժամանակ վիրահատությունից առաջ շտապ հյուսվածքաբանական ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության մասին հայտնեք պաթոհիստոլոգիական լաբորատորիա և ճշտեք, օրինակ լիմֆոմայի կամ սարկոմայի դեպքերում, կպահանջվի արդյոք նատիվ մակրոպրեպարատի հետազոտություն,
- ✓ պլանավորեք ներվիրահատական ճառագայթային բուժում, եթե այն ցուցված է ու հուսանելի,
- ✓ վիրահատությունից առաջ հիվանդին նշանակեք անհրաժեշտ ֆիզիոթերապիա և շնչառական վարժություններ,
- ✓ տեղադրեք կենտրոնական կատետեր, ռենտգենաբանորեն ճշտելով նրա դիրքը և նշանակեք /ըստ անհրաժեշտության/ նախավիրահատական պարենտերալ սնուցում,
- ✓ ապահովեք արյան փոխարինիչների հասանելիությունը /ԷՋ, ԹՍՊ, թրոմբոցիտար կոնցենտրատ, աուտոարյան/,
- ✓ սափրեք վիրահատության շրջանը կամ օգտագործեք քիմիական դեպիլյատոր:

Ներվիրահատական

- ✓ վերցրեք ցանքսեր /նաև տրավմատիկ վերքերից/,
- ✓ փաստագրելու համար օգտագործեք թվայնային ֆոտոխցիկ,
- ✓ որովայնի բացումից հետո հարկավոր է անցկացնել որովայնի խոռոչի ճրգանների կարճ, բայց լրիվ շոշափողական ստուգում, եթե այն հնարավոր է առանց որևէ էական հավելյալ ռիսկի:

Հետվիրահատական

- ✓ թրոբոզի կանխարգելում,

- ✓ ստրեսային խոցի կանխարգելում, անտացիդներ, H_2 բլոկատորներ, պրոտոնային մղիչների արգելակիչներ, վաղ էնտերալ սնուցում,
- ✓ սնուցման սկիզբը որոշվում է՝ քիթ-ստամոքսային զոնդից հետհոսքի չափով, աուսկուլտուցիայի ժամանակ աղիքային աղմուկով, կեղտի և/կամ գազերի դուրս գալով, որովայնի խոռոչի օրգանների գերձայնային հետազոտությամբ: Հերրթականությունը՝ սկզբում թույլատրվում է են ոչ մեծ կումերով ջուր և թեյ, հետո խմելու սահմանափակումները հանվում են, ապա յոգուրտ/հաց և վերջապես սովորական սննդակարգ,
- ✓ աղիների շարժողական գործունեության խթանման համար հետվիրահատական երրորդ օրվանից ներերակային դեղամիջոցների ներմուծում /օրինակ մետոկլոպրումիդ/, հետվիրահատական ատոնիայի հետ կապված աղիքային գործունեության ձգձգման ժամանակ /ինչպես նաև բոլոր բերանակցումների ապաքինումից հետո/ հնարավոր է պիրիդոստիգմինի բրոմիդի կամ 250 մգ էրիտրոմիցինի ներերակային կիրառում /մոտիլինի ազդեցություն/, հոգնայի կամ բերանով լուծողական միջոցների /գաստրոգրաֆին՝ հետազոտում և բուժում/ նշանակում,
- ✓ հետվիրահատական շրջանում որովայնի խոռոչի հսկողության գերձայնային հետազոտության միջոցով /հեղուկի պահում ստամոքս-աղիքային տրակտում, ազատ հեղուկ որովայնի խոռոչում, պերիստալտիկ շարժումներ, խոռոչավոր օրգանների ձգվածություն/,
- ✓ հեղուկի հետվիրահատական կուտակումները /սերոմա, հեմատոմա, բիլոմա, թարախակույտ/ կարող են գերձայնային հետազոտման հսկողության տակ ենթարկվել պունկցիայի և եթե անհրաժեշտ է, մաշկի միջով դրենավորվել, հիվանդի կայուն կլինիկական վիճակի պայմաններում /Sonnenberg, OH_0 կամ նմանատիպ կատետերով/,
- ✓ ակտիվ ենթամաշկային դրենաժները հեռացվում են վիրահատության 2-րդ օրը,
- ✓ կարերը հանվում են 10-12-րդ օրը /դեմքի ու պարանոցի վրա 4-6-րդ օրը/,
- ✓ տեղեկացրեք հիվանդին հնարավոր վերականգնողական ծրագրի մասին և անհրաժեշտության դեպքում պլանավորեք նրա համագործակցութունը սոցիալական աշխատակցի հետ:
- ✓ բացատրեք հնարավոր երկարատև հետվիրահատական հսկողության ու բուժման անհրաժեշտության, տեղեկացրեք հիվանդության ընթացքի մասին /օրինակ՝ ուռուցքային հիվանդությունների ժամանակ/,
- ✓ տեղեկացրեք հիվանդին փսխյդնության խմբերի գոյության մասին:

Լապարասկոպիկ վիրահատություններ

- ✓ վիրահատության նախօրեին իրականացվում է պորտի շրջանի դեզինֆեկցիա,
- ✓ քիթ-ստամոքսային զոնդ ի ու միզային կատետերի տեղադրումը մինչև հետվիրահատական շրջան,
- ✓ էնդոսկոպիկ վիրահատությունների ժամանակ կարող են պահանջվել հիվանդի հատուկ դիրքեր, տարբերվող ընդունվածից: Վիրահատության ընթացքում անհրաժեշտ է լինում մի քանի անգամ փոխել հիվանդի դիրքը, ինչը պահանջում է նրա կայուն ֆիկսացիան վիրահատական սեղանի վրա:

ՄԱՍՆԱՎՈՐ ԲԱԺԻՆ

Կերակրափող

Այս բաժնում լուսաբանվում են ինչպես բաց, այնպես էլ լապարասկոպիկ վիրաբուժության համար հեռանկարային շրջանի՝ կերակրափողի, ստամոքսի, տասներկումատնյա աղու բարորակ ու չարորակ հիվանդությունների վիրահատական բուժումը:

Կերակրափողի քաղցկեղի բուժման փորձեր ձեռնարկվել են քսաներորդ դարի սկզբից: 1913թ Torek-ը հաջողությամբ իրականացրեց կերակրափողի կրծքային հատվածի մասնահատում, սակայն այս ոլորտի իրական առաջաընթացը կապված է, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ու նրանից հետո, թորակալ վիրաբուժության զարգացման հետ: Ընդլայնված ավշահատաման հետ կերակրափողի հեռացման միասնական կոնցեպցիան առաջարկվել է Logan-ի կողմից դեռ 1963թ, սակայն նրա իրականացումը ուղեկցվում էր զգալի քանակի բարդություններով ու բարձր մահացությամբ:

Սակայն վերջին տասնամյակների ընթացքում վիրահատության տեխնիկան, նախա- և հետվիրահատական բուժումը, խնամքը, ինչպես նաև վիրահատական բուժումից հետո կանխատեսումը ցուցաբերում են զգալի բարելավում: Վիրաբույժների ու բժշկական

հիմնարկների փորձը, հիվանդների ընտրության սկզբունքները, վիրահատական միջամտությունների լայն սպեկտրն ու նրանց արմատականությունը, ինչպես նաև հիվանդի նախա- ու հետվիրահատական բուժումը հանդիսանում են բուժման արդյունքների վրա ազդող առավել կարևոր պայմանները:

ԿԵՐԱԿՐԱՓՈՂԻ ՊԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ներածություն

Չարորակ նորագոյացության կապակցությամբ կերակրափողի պարանոցային հատվածի մասնահատումը, ներառում է որկորի պարանոցային հատվածի հեռացում, պարանոցային ավշահատման հետ և կերակրափողի վերակառուցում ազատ բարակ աղիքային ներդիրի միջոցով, միկրոանոթային բերանակցումների ձևավորմամբ:

Ցուցումներն ու հակացուցումները

Ցուցումներ՝

- որկորի պարանոցի հատվածի չարորակ ուռուցք,
- կերակրափողի բարորակ ստրիկտուրա (նեղացում):

Հակացուցումներ՝

- տեղային անմասնահատելիություն /կոկորդի, շնչափողի կամ ողնաշարի ինֆիլտրացիա/,
- բազմաօջախային ախտահարում,
- հեռակա մետաստազներ,
- գաստրոդուոդենալ խոցի սրացում,
- Քրոնի հիվանդություն:

Նախավիրահատական հետազոտություն / պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ ռիսկի գործոնների բացահայտում /ալկոհոլ, նիկոտին/, ճշգրտումներ նախորդած ճառագայթային բուժման, ուղեկցող չարորակ հիվանդության, Քրոնի հիվանդության վերաբերյալ:
- ✓ կլինկական հետազոտություններում կարևորվում են հետադարձնյարդի վիճակը և պարանոցային ավշագեղձերի մեծացումը:
- ✓ լաբորատոր հետազոտություններից՝ տափակ-բջջային քաղցկեղի անտիգենի և հեմոստազի ցուցանիշների որոշումը:
- ✓ գործիքային ուսումնասիրություններից. բազմաօջախային /մուլտիֆոկալ/ ախտահարման բացառման համար՝ էզոֆագոգաստրոդուոդենոսկոպիա /ԷԳԴՍ/ և հիվանդության փուլի գնահատման և մասնահատելիության որոշման համար՝ *համակարգչային շերտագրություն (ՀՇ)* կամ *մագնիտոռեզոնանսային շերտագրություն (ՄՌՇ)*/ներառնելով կրծքավանդակն ու որովայնի խոռոչը/: Ինչպես նաև *դոպլեր ԳՁՀ*՝պարանոցի անոթների վիճակի գնահատման և *ՊԷՏ-սկանավորում*՝ հեռակա մետատազների բացառման համար:

Հիվանդի պատրաստում՝՝ պետք է խուսափել կենտրոնական երակային կատետերի տեղադրումից բերանակցման կողմից և պատի ստենտավորումից, պատրաստվում են աղիները, տեղադրվում են քիթ-ստամոքսային և միզապարկային կատետերներ:

Սպեցիֆիկ ռիսկեր և հիվանդի տեղեկացված համաձայնություն

- ❖ բերանակցման անբավարարություն;
- ❖ մեդիաստինիտ;
- ❖ սնուցող յեյունոստոմիա;
- ❖ աղիքային տրանսպլանտանտի մեռուկացում:

Վիրահատություն

Մուտք

Որկորի պարանոցային հատվածին մոտեցման համար իրականացվում է միակողմանի կամ երկկողմանի /U-ա ձև/ կտրվածք կրծոսկր-անրակ-պտկային մկանի ներսային /մեդիալ/ եզրով: Այն անցնում է ստորին ծնոտի ստորին եզրից մինչև լծային կտրուձը, որտեղ միանում

է հակառակ կողմի կտրվածքին: Պարանոց-կրծոսկրային ավշային հանգույցների հատման համար կտրվածքը հավելվում է մասնակի կամ լրիվ ստերնոտոմիայով: Տրանսպլանտանտի համար բավարար է ոչ մեծ լայնակի որովայնահատումը:

Էքսպոզիցիան

Վերքի եզրերը լայնացվում են տարբեր ձևի ու չափի ձեռքի լայնիչներով՝ համապատասխան անատոմիական առանձնահատկությունների:

Փուլ 1. Պարանոցային շրջանի պատրաստումը

Պարանոցի ենթամաշկային մկանի հատումից հետո կրծոսկր-անրակ-պտկային մկանը տեղաշարժվում է դեպի դուրս, իսկ թիակ-ենթալեզվային մկանը՝ փեղեքվում է կամ հատվում: Կտրվածքի ամբողջ երկայնքով առանձնացվում են ընդհանուր քնային զարկերակը, ներքին լծային երակն ու թափառող նյարդը, որոնց շրջապատող ավշագեղձերը հատվում են: Այս փուլը առավել դյուրին է իրականացնել բիպոլյար մկրատով: Վերին վահանագեղձային զարկերակը կարելի է պահպանել հետագա վերակառուցման համար: Դիսսեկցիայի միջոցով քնային զարկերակից հասնում են առաջային լայնակի կապանին, որից հետո, տեսողական հսկողության տակ կատարվում է կերակրափողի պարանոցային հատվածի դիսսեկցիա՝ հետևից: Վահաննաձև գեղձի ձախ /կամ աջ/ բլթի տեղայնացումից հետո հետադարձ նյարդը առանձնացվում է և պահպանվում հարվահանաձև գեղձը: Հետադարձ նյարդի վնասման դեպքում, այն անհապաղ պետք է վերականգնվի: Եթե պլանավորվում է ճառագայթային բուժում, կարլեի է իրականացնել հարվահանաձև գեղձի աուտոտրանսպլանտացիա նախաբազկի շրջանում:

Շատ հաճախ վիրահատության ընթացքը զգալի հեշտանում է հեմիթիրոիդէկտոմիայից հետո: Առանձնացվում է շնչափողի հետին մակերեսը և հակառակ կողմի հետադարձ նյարդի նույնականացումից հետո կերակրափողի պարանոցային հատվածը ամբողջովին տեղայնացվում է կոկորդից միչև կրծքավանդակի վերին բացվածք կամ ավելի ցածր:

Որոշ դեպքերում կարևոր անոթների նույնականացմանը կարող է օգնել ներվիրահատական դոպլեր ԳՋՀ-ն: Վիրահատական դաշտի տիպիկ անատոմիան որոշ դեպքերում կարող է լինել զգալի փոփոխված, հատկապես կոկորդի ուռուցքների հետ կապված լայնածավալ վիրահատություններից հետո: Կրծքային ծորանի վնասումը կարող է առաջ բերել մշտական խուղակի զարգացում, դառնալով հեղուկի զգալի կորստի պատճառ, ինչը ծանրանում է նախորդած ճառագայթային թերապիայի դեպքում:

Տարածված ուռուցքային աճի դեպքերում, մասնահատման իրականացման համար, կարող է առաջանալ շնչափողի ու կոկորդի վրա լայնածավալ միջամտությունների անհրաժեշտություն:

Մասնահատումից առաջ դրեք պահող կարեր բերանակցման հավանական պրոքսիմալ ու դիստալ եզրերին:



Փուլ 2. *Կերակրափողի հատումը*

Պարանոցային հատվածը հատվում է և քիթ-ստամոքսային զոնդը ձգվում մինչև պարանոցի մակարդակ, որպեսզի պրեպարատը հեռացվի առանց դժվարության: Անհրաժեշտ է իրականացնել մասնահատված երկու եզրերի շտապ հյուսվածքաբանական հետազոտություն: Եթե մասնահատման նեգատիվ եզր չի ստացվել, անհրաժեշտ է իրականացնել էզոֆագէկտոմիա:



Փուլ 3. *Բարակ աղեգալարի պատրաստումը*

Բավարար լուսանցքով զարկերակային ու երակային ոտիկով բարակ աղեգալարը վերցվում է որովայնահատումից հետո: Եթե միջընդերքը խիստ հաստ է, ճարպային հյուսվածքի մանրակրկիտ հեռացման համար իրականացվում է դիաֆանասկոպիա, որի ժամանակ առանձնացվում է բավարար երկարության զարկերակ ու երակ: Միջընդերային կողմից անոթների կապումից և տրանսպլանտանտի հատումից հետո, զարկերակի մեջ ներարկվում է հեպարինիզացված ֆիզիոլոգիական լուծույթ, մինչև երակից թափանցիկ հեղուկի ստանալը:

Եթե անոթային ոտիկը, կամ անոթներից մեկը շատ կարճ է, անհրաժեշտ է իրականացնել երակի կամ զարկերակի հատվածի ինտերպոզիցիա: Կենսունակ երակային ինտերպոնատների աղբյուր է հանդիսանում առաջին հերթին նախաբազուկը, մինչդեռ զարկերակի երկարացման համար առավել լավ է օգտագործել մեծ ենթամաշկային երակի հատված: Եթե անոթները վերցված են ձեռքի կամ ոտքի շրջանից, պիտանի են երակային ինտերպոնատների համար, իր հերթին մեծ ենթամաշկային երակը, իր չափերի ու կծկման ենթարկվելու ունակությամբ, պիտանի չէ որպես երակային ներդիրներ և պետք է օգտագործվի միայն զարկերակի երկարացման համար: Որոշ դեպքերում աղիքային տրանսպլանտանտում շատ դժվար է տարբերել զարկերակը երկաից: Որպեսզի խուսափենք շփոթից, աղիքը վերցնելուց առաջ, զարկերակն ու երակը պետք է հուսալի նշագրվեն:

Աղիքի անընդհատության վերականգնման համար իրականացվում է «ծայրը-ծայրին» բերակակցում, իսկ որովայնի խոռոչը փակվում է առանց դրենավորման:

Փուլ 4. *Անոթային բերանակցումներ*

Այս փուլում ձևավորվում են զարկերակային ու երակային բերանակցումները: Սկզբում բերանակցվում է երակը:

Տրանսպլանտանտներից առավել նպատակահարմար է օգտագործել խոշոր ընդերային երակի և նրա մանր ճյուղի միացման տեղը, իսկ մյուս կղմից լծային երակը: Վերջինիս պատի կտրվածքը չպետք է լինի 3-4 մմ-ից կարճ: Բերանակցումը իրականացվում 4 կամ ավել անգամ մեծացման տակ, ցանկալի է միկրոսկոպով, չներծծվող մոնոֆիլանտ 7-0 կամ 8-0 համարի անընդհատ կարի եղանակով: Բերանակցումը փակելուց առաջ այն լվացվում է հեպարինիզացված ֆիզիոլոգիական լուծույթով:

Երակային բերանակցումը իրականացվում է զարկերակայինից առաջ, երբ վիրահատության տևողությունը համապատասխանում է սպասվածին: Ձգձգումների դեպքում /օրինակ, պատրաստման բարդությունների կամ անեստեզիոլոգիական չկանխատեսված հանգամանքների ժամանակ, կապված ոչ կայուն սիրտ-անոթային ցուցանիշների հետ/ նախ բերանակցվում է զարկերակը, հնարավորություն տալով ենթարկել աղիքային տրանսպլանտնատը սննդանյութերով հարուստ արյան պերֆուզիայի, մինչև պերիստալտիկայի վերականգնումը: Իսկ եթե ուշացման պատճառը խանգարում է բերանակցման ձևավորմանը,

վերցրած աղիքային տրանսպլանտանտը անհրաժեշտ է պահել թաց թանզիվներում: Ցանկության դեպքում մետաբոլիզմը տրանսպլանտանտում սառեցմամբ ժամանակավոր իջեցվում է: Հատուկ կոնսերվացնող լուծույթների կիրառման անհրաժեշտություն սովորաբար չի առաջանում:

Նման տեխնիկա կիրառվում է նաև զարկերակի բերանակցման համար: Բերանակցումը կարող է իրականացվել վերին վահանագեղձային զարկերակի հետ /հաճախ բավականին փոքր/, վահանա-պարանոցային բնի կամ անմիջապես ընդհանուր քնային զարկերակի հետ: Այլ պարանոցային ճյուղեր, ինչպիս օրինակ լեզվային զարկերակը, այս նպատակով հազվադեպ են օգտագործվում:

Տրանսպլանտանտի տեղադրման և պարանոցի հյուսվածքների կարման ընթացքում խիստ կարևոր է խուսափել անոթների, հատկապես երակի, ծռումից կամ ճնշումից:

Եթե անոթային վերակառուցումն անհնար է, կարելի է վերցնել երկրորդ աղիքային տրանսպլանտանտը կամ ձևավորել ստամոքսային խուղակ:



Փուլ 5. Կերակրափող-բարակաղիքային բերանակցում

Ռեինֆուզիայից հետո հաստատվում է արյան հոսքի համապատասխանությունը: Ապա տրանսպլանտանտի համապատասխան կարճացումից հետո իրականացվում ստորին, իսկ հետո վերին ստամոքս-բարակաղիքային «ծայրը ծայրի» կամ «ծայրը կողքի» բերակակցումներ: Սրանք դրվում են միաշարք եղանակով, ներծծվող 3-0 կամ 4-0 կարով, կերակրափողի կամ ըմպանի պատը պետք է վերացնել նրա ամբողջ հաստությամբ, մինչդեռ աղիքի լորձաթաղանթը

կարի մեջ չի վերցվում: Եթե անատոմիական պայմանները անբարենպաստ են՝ օրինակ, խիստ ցածր ներկրծքավանդակային բերակակցման ժամանակ, կարելի է կիրառել հանգուցակարեր: Որից հետո քիթ-ստամոքսային զոնդ տրանսպլանտանտի միջով իջեցվում է ստամոքս:

Տրանսպլանտանտի իզոպերիստալտիկ տեղակայումը հանդիսանում է հեշտ կլման կարևոր պայման: Նույնիսկ օպտիմալ պայմաններում, տրանսպլանտանտը սկսում է նորմալ գործել միայն մի քանի շաբաթ անց:

Փուլ 6

Երկու կողմերից պարանոցը դրենավորվում է, առնվազն մեկական փափուկ դրենաժ՝ Eard Flow ամեն կողմից և կարվում ոչ հաճախ ենթամաշկային ու մաշկային կարերով:

Բավարար հետվիրահատական դիտարկման համար անհրաժեշտ է, որ բարակաղիքային տրանսպլանտանտը հասու լինի կլինիկական դիտման: Դրան հասնում են կամ մի քանի կարեր դնելով, որոնք թույլ են տալիս բացել փակող հյուսվածքները, կամ տրանսպլանտանտի այնպիսի տեղադրմամբ, որի ժամանակ նրա մասերը մնում են չփակված հետվիրահատական դիտարկման համար: Արյան հոսքի ինտենսիվությունը հաստատվում է դոպլերային ԳՁՀ-ով: Կիրառվում են նաև թթվածնի պարցիալ ճնշումը որոշող տարբեր չափիչներ:

Ստանդարտ հետվիրահատական գործառույթներ

- Հեմոստազի ցուցանիշներիմոնիթորինգ:
- Միջին զարկերակային ճնշման պահպանում 70-80 մմ ս.ս. մակարդակի վրա:
- Միկրոցիրկուլյացիայի ցուցանիշների հսկում և արյան ռեոլոգիական հատկանիշների բարելավում:
- Ամենօրյա դոպլերային ԳՁՀ:
- Առաջին օրերին վիրահատությունից հետո տրանսպլանտանտի ամենժամյա դիտարկում:

Հետվիրահատական բարդություններ

- երակային թրոմբոզ /անհապաղ կրկնակի վիրահատություն/;
- զարկերակային թրոմբոզ /անհապաղ կրկնակի վիրահատություն/;
- տրանսպլանտանտի մեռուկացում /հատում ու դրենավորում ֆարինգոստոմիայի միջոցով, վերակառուցում ստամոքսային խողովակով կամ հաստ աղիքով/;
- թքի արտահոսք /համարժեք դրենավորում/;
- ավշահոսք
- հետադարձ կոկորդային նյարդի վնասում;
- կերակրափողի ստենոզ/հեռավոր բարդություն, էնդոսկոպիկ բուժավորում/;
- կլման խանգարում /հեռավոր բարդություն/:

Փորձված վիրաբույժի խորհուրդներ

- Եթե տրանսպլանտանտի արյան մատակարարումը հարցականի տակ է չկասկածեք կրկնակի վիրահատության անհրաժեշտության վերաբերյալ:
- Խուսափեք երակի ծալվելուց, որը պետք է լինի կարճ:
- Որպեսզի խուսափեք անոթային բարդություններից պահպանեք բարձր կենտրոնական երակային ճնշում /ԿԵՃ/ և հասեք համարժեք հեպարինիզացիայի:

- Եթե աղու տեսքը “կանգային” է պարանոցը թողեք բաց, սակայն անոթները փակեք հյուսվածքներով:
- Եթե էքսպոզիցիան անոթային վերակառուցման համար անբավարար է, իրականացրեք հեմիթիրեոդէկտոմիա:
- Որոշ դեպքերում ստորին կերակրափողային բերանակցման առավել հուսալիություն ապահովելու համար իրականացվում է մասնակի ստերնոտոմիա:
- Ավշահոսքի ժամանակ պետք է գործել պահպանողական միջոցներով, խիստ հազվադեպ է պահանջվում կրծքային ավշային ծորանի կապում:
- Առավել լավ էքսպոզիցիայի կարելի է հասնել կրծոսկր-անրակ-պտկային մկանի ներսային գլխիկի հատումով:
- Ներքին լծային երակի մասնահատմամբ նախորդած վիրահատությունը պահանջում է դիսսեկցիա դեպի ներքև, մինչև ենթաանրակային երակի մակարդակ:

ՉԱՓ ԹՈՐԱԿՈ-ԱԲԴՈՄԻՆԱԼ ՄՈՒՏՔ՝ ԿԵՐԱԿՐԱՓՈՂԻ ՍՏՈՐԻՆ ՈՒ ՍՏԱՄՈՔՍԻ ԿԱՐԴԻԱԼ ՔԱՂՑԿԵՂԻ ԺԱՄԱՆԱԿ

Ներածություն

Շնչափողի երկատման շրջանից ներքև տեղակայված ուռուցքները՝ օրինակ Բարրետի կարցինոման ու կերակրափող ստամոքսային անցման քաղցկեղը, սովորաբար հեռացվում են որովայնահատման հետ համակցված աջակողմյան թորակոտոմիայով, կարելի է մասնահատել նաև ձախակողմյան թորակոտոմիայով: Ավշահատման ծավալը նման դեպքերում սահմանափակվում է միջին ու ստորին միջնորմով:

Ցուցումներ ու հակացուցումները

Ցուցումները՝

- բիֆուրկացիայից ներքև տեղակայված կերակրափողի ուռուցքներ,
- կերակրափող-ստամոքսային անցման ուռուցքներ:

Հակացուցումները՝

- բարձր ռիսկայնության հիվանդներ, տես՝ «Կերակրափողի սուբտոտալ մասնահատում, տրանսհիատալ մուտք» գլուխը:

Նախավիրահատական հետազոտում / պատրաստում վիրահատությանը

Տես «Կերակրափողի սուբտոտալ մասնահատում , տրանսհիատալ մուտք» գլուխը:

Սպեցիֆիկ ռիսկեր և հիվանդի տեղեկացված համաձայնություն

- Բերանակցման անբավարարություն
- Մեդիաստինիտ
- Թոքաբորբ
- Էմպիեմա
- Հնարավոր սնուցող յեյունոստոմայի ձևավորում

Հիվանդի դիրքը՝ հիվանդի դիրքը սպիռալածև, կրծքավանդակի ձախ կեսի 45^0 բարձրացումով: Վիրահատական սեղանի շրջում համապատասխան կրծքային / որովայնային փուլերին:

Մուտք՝ համակցված, ձախակողմյան թորակոտոմիա և վերին-միջային որովայնահատում:

Վիրահատություն

Փուլ 1. *Թորաքոտոմիա*

Մաշկի կտրվածքը թեք՝ էպիգաստրալ շրջանից դեպի ձախ վեցերորդ կամ յոթերորդ միջկողով, վիրահատական սեղանը թեքելով կարելի է ստանալ միջնորմի կամ որովայնի խոռոչի բավարար էքսպոզիցիա: Կողաճառի 1սմ մասնահատումից հետո բացվում է կրծքավանդակի ձախ կեսը: Մինչ թորակոտոմիան անհրաժեշտ է բացառել որովայնամզի ու որովայնի խոռոչի օրգանների մետաստազները:



Փուլ 2. *Ստոծանու հատում ու հաստ աղու տեղայնացումը*

Հարաորտալ ավշահատումը իրականացվում է դեպի կրծքավանդակ, ստոծանու պերիֆերիկ հատվածի բացվածքով, հաստ աղու փայծաղային անկյան տեղաշարժից հետո: Որից հետո, ձախ կողմնային կապուղով, վայրէջ հաստ աղին տեղայնացվում է դեպի ներքև՝ մինչև սիգմագաձև աղու միջնորմի հիմքը: Ձախ երիկամի, փայծաղի ու ենթաստամոքսային գեղձի տեղայնացումից հետո նույնականացվում է ձախ երիկամային երակը:



Փուլ 3. *Հարաորտալ ավշագեղձերի հեռացում*

Ձախ դրսային շրջանում իրականացվում է հարաորտալ ավշագեղձերի դիսսեկցիա, իսկ աջ դրսային հարաորտալ ավշագեղձերը հեռացվում են Կոխերի գործողության ընթացքում:



Փուլ 4. *Վերին որովայնային ավշագեղձերի հեռացում*

Իրականացվում է լյարդ-տասներկումատնյա կապանի դիսսեկցիա, ինչպես նաև ընդհանուր լյարդային, ձախ ստամոքսային զարկերակների և ընդերային ցողունի շուրջը տեղակայված հանգույցների հեռացում:

Ստամոքսի տեղայնացումն ու տասներկումատնյա աղու հատումը իրականացվում համապատասխան «Տոտալ գաստրէկտոմիա ստանդարտ ավշահատմամբ» գլխում նկարագրածի:



Փուլ 5. Ստորին միջնորմային ավշագեղձերի հեռացում

Ձախ ներկրծքային մուտքի ժամանակ հատվում է ձախ թոքային կապանը և բացվում միջնորմային պլևրան: Կերակրափողի ստորին կրծքային հատվածը ծածկող պլևրան հատվում է՝ թույլ տալով հեռացնել միջնորմի շարակցական հյուսվածքը, ստորին կրծքային հարէզոֆագեալ, վեր-ստոծանիական, հետին մեդիսատինալ և ստոր-ստոծանիայի ավշագեղձերի հետ:

Փուլ 6. *Վերակառուցում*

Կախված ուռուցքի տեղակայման ու տարածման առանձնահատկություններից, կիրառվում են վերակառուցման մի քանի եղանակներ: Բերված վերակառուցումը, ըստ Ռու-ի աղեգալարով, ցիրկուլյար կարող սարքի /EEA/ կիրառմամբ, հանդիսանում է էզոֆագոեյունոստոմիայի ձևավորման ընտրության եղանակ:

Փորձված վիրաբույժի խորհուրդներ

- Տրանսպլանտանտի ոլորումը հազվագույտ բայց վտանգավոր բարդություն է, ստամոքս-աղիքային անցման սիմպտոմատիկ խանգարման զարգացման պատճառով: Անհրաժեշտ է վիրահատական միջամտություն, աղիքային հատվածի կառճացման նպատակով:
- Շնչափողի վնասման դեպքում, այն կարվում է պերիկարդի կտորով:

ԿԵՐԱԿՐԱՓՈՂԻ ՍՈՒԲՏՈՏԱԼ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ, ՏՐԱՆՍՀԻԱՏԱԼ ՄՈՒՏՔ

Ներածություն

Անհրաժեշտ է նշել, որ տրանսհիատալ մուտքի կիրառման պարագայում վիրահատական տրավման, համեմատած տրանսթորակալ մուտքի հետ, ավելի նվազ է: Սակայն ավշահատումը, հատկապես միջին ու վերին միջնորմի շրջանում, այս դեպքում պակաս արմատական է: Այդ իսկ

պատճառով որոշ վիրաբույժներ նախընտրում են տրանսթորակալ մուտքը, կիրառելով այն նույնիսկ կերակրափողի դիստալ հատվածի քաղցկեղի ժամանակ: Սուբտոտալ տրանսհիատալ մասնահատումը ցուցված է բարորակ վիճակներով ու կերակրափողի դիստալ հատվածի քաղցկեղով հիվանդների մոտ:

Ցուցումներն ու հակացուցումները

Ցուցումները՝

- կերակրափողի դիստալ հատվածի ադենոկարցինոմա />T1 փուլից/,
- ներէպիթելիալ տափակբջջային քաղցկեղ,
- բարձր վիրահատական ռիսկի հիվանդներ,
- էրոզիայի հետևանքով /քիմիական այրվածքներ/ երկարընթաց ստրիկտուրա /ստենոզ/, կայուն ոչ վիրաբուժական բուժման հանդեպ, ներառած բուժավորումը,
- երկարաընթաց պեպտիկ ստրիկտուրա /ստենոզ/,
- մեգաէզոֆագուսի՝ կրկնություն կարդիոսպազմի վիրահատական բուժումից հետո, համակցված պեպտիկ ստրիկտուրաների և անհաջող դիլյատացիայի հետ:
- կերակրափողի տարածված բարորակ ուռուցքներ /բացառիկ դեպքերում, քանզի տեղային հատումը սովորաբար լինում է բավարար/:
- կերակրափողի պատռվածք կամ յատրոգեն թափածակում մեդիաստինիտով /առաջնային կարումը անհնար է/:

Հակացուցումներ

- ստամոքսի կամ տասերկումատնյա աղու խոցի սրացում;
- ներաճ աորտայի մեջ;
- հեռակա մետաստազներ:

Նախավիրահատական հետազոտություն / պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ Տեղեկություններ ստամոքսի կամ հաստ աղու վրատարած վիրահատությունների, ալկոհոլի կամ նիկոտինի օգտագործման, ստամքս-կերակրափողային ռեֆլյուքս հիվանդության, Բարրետի կերակրափողի վերաբերյալ:
- ✓ Հետընթաց կոկորդային ներվի վիճակի ուսումնասիրում, պարանոցային ավշագեղձերի վիճակի հստակեցում:
- ✓ Լաբորատոր հետազոտություններից CEA , լյարդի գործունեության և հեմոստազի ցուցանիշներ:
- ✓ Գործիքային հետազոտություններից՝ ԷԳԴՍ բիոպսիայով, բացառելու համար դեպի ստամոքս ուռուցքի ներաճ, կոլոնոսկոպիա՝ եթե պլանավորվում է հաստ աղու ինտերպոզիցիա:
- ✓ ՀՇ-սկանավորում /կրծքավանդակ + որովայն/, կերակրափողի էնդոսոնոգրաֆիա (ԷՍԳ), բրոնխոսկոպիա՝ եթե ախտահարված է կերակրափողի միջին երրորդը ու հնարավոր է ներաճ դեպի շնչափող:

Հիվանդի պատրաստում աղիների պատրաստում, շնչառական թերապիա, կատետերի տեղադրում միզապարկում, կենտրոնական կատետեր:

Մուտքը՝ վերին լայնակի կտրվածքի երկարացմամբ միջին գծով կամ միջային որովայնահատում:

Վիրահատություն

Փուլ 1. Որովայնահատում և ստամոքսի, կերակրափողի ստորին հատվածի լյարդի ու ռեգիոնալ ավշային հանգույցների ստուգում:

Որովայնի բավարար էքսպոզիցիայի համար ինքնապահվող լայնիչը տեղադրում է էպիգաստրալ շրջանում /Ա/: Ձախ եռանկյունաձև կապանի հատում և լյարդի ձախ կողմնային հատվածների տեղայնացում: Հարևան կառուցվածքների վնասման կանխարգելման համար, լյարդի ձախ բլթի տակ դրվում է թանզիվ /Բ/:



Փուլ 2. Ստամոքսի պատրաստումն ու տեղայնացումը, էպիգաստրալ ավշահատում, ներառյալ հարաորտալ ավշային հանգույցները

Ստամոքսի մեծ կորությամբ դիսսեկցիան սկսվում է ներքևից և տարվում մինչև փայծաղի դրունքի մակարդակ, պահպանելով աջ ստամոքս-ճարպոնային անոթներն ու աղեղը աջ և ձախ ստամոքս-ճարպոնային անոթների միջև /Ա/:

Մեծ կորության դիսսեկցիան շարունակվում է փայծաղի ուղղությամբ: Ձախ ստամոքս-ճարպոնային զարկերակը հատվում է անմիջապես փայծաղային զարկերակից անջատման տեղում: Մեծ կորության ամբողջական տեղայնացումը ավարտվում է կարճ ստամոքսային անոթների հատումով ու կապումով: Կերակրափողի քաղցկեղի ժամանակ ենթաստամոքսային գեղձի վերին եզրով հատվում է առպատային որովայնամիզը և իրականացվում ավշահատում փայծախային զարկերակի երկայնքով: Լյարդ-ստամոքսային կապանի գլխամասային հատվածը /լյարդ կերակրափողային կապան/ անջատվում է ստոծանուց: Եթե հավելյալ լյարդային զարկերակը բավականաչափ խոշոր է, այն անհրաժեշտ է պահպանել: Այս դեպքում ձախ ստամոքսային զարկերակը պետք է կապվի հավելյալ լյարդային զարկերակի անջատման տեղից ավելի դիստալ /Բ/:



Փուլ 2, /շարունակություն/

Իրականացվում է ավշահատում լյարդ-տասներկումատնյա կապանի հատվածում: Հեռացվում են լյարդային զարկերակի, ընդերային ցողունի, դռներակի և ընդհանուր լեղածորանի շրջակա բոլոր ավշային հանգույցները: Աջ ստամոքսային զարկերակի կապումն ու հատումը իրականացվում է նախադուռից ներքև, նրա հիմքի մոտ /Գ-1, Գ-2/:

Հատվում է ձախ ստամոքսային զարկերակը, հեռացվում են ավշագեղձերը նրա, փայծաղային զարկերակի ու ընդերային ցողունի երկայնքով, ինչպես նաև հարաորտալ տեղակայված հանգույցները: Բարորակ հիվանդությունների ժամանակ իրականացվում է կերակրափողի բութ դիսսկեցիա, առանց ավշահատման /Դ/:

Ստամոքսային խողովակի արյան մատակարարումը, նրա ձևավորումից հետո ապահովվում է բացառապես աջ ստամոքս- ճարպոնային զարկերակով:



Փուլ 3. Կերակրափողի որովայնային հատվածի տեղայանացումն ու ստոծանու կերակրափողային անցքի հատումը

Ավշահատումը ընդերային ցողունի երկայնքով շարունակվում է մինչև հարաորտալ շրջան: Բջջանքը ավշագեղձերի հետ տեղաշարժվում են դեպի փոքր կորություն ապա ուռուցքի հետ միասնական բլոկով մասնահատվում:

Էքսպոզիցիայի լավացման համար ստածանու ոտիկները էլեկտրադանակով հատվում են, իսկ նրանց ծայրատները կապվում: Կերակրափողի բութ տեղայնացումը իրականացվում է ցուցամատով: Այս գործողության ընթացքում անհրաժեշտ է մանրակրկիտ հեռացնել շարակցահյուսվածքային թելիկները՝ կերակրափողի, ստոծանու ոտիկների ու որովայնային աորտայի միջև /Ա/:

Աորտայի որովայնային հատվածը տեղայնացվում է և ռետինե խողովակի օգնությամբ, ձգելով այն ոտնամասային ուղությամբ:

Փուլ 3. /շարունակություն/

Ստոծանու ձախ ստորին երակի հատումից հետո կերակրափողային անցքի եզրը ուղղահայաց հատվում է լիգատուրաների միջև /Բ/:

Տեղադրվում են ռետրակտորներ: Հետկարդիալ ավշային հանգույցները հեռացվում են պրեպարատի հետ միասնական բլոկով /Գ/:



Փուլ 4. Կերակրափողի դիսսեկցիան հետին միջնորմում, ստածանու

կերակրափողային անցքի միջով հարաորտալ ավշահատմամբ,

կերակրափողի դիստալ հատվածի տեղայնացում

Կերակրափողի դիստալ հատվածի դիսսեկցիան իրականացվում է պերիկարդից նրա անջատումով: Ինֆիլտրացված պերիկարդը կարող է մասնահատվել միասնական բլոկով: Սուր դիսեկցիան շարունակվում է դեպի առաջ մինչև շնչափողի բիֆուրկացիա և ավելի վեր ավարտվում բութ դիսսեկցիայով: Դիմացից շոշափվում է շնչափողը և գլուխ պարանոցային ցողունը: Այս փուլում կա շնչափողի, կենտ երակի, թոքային անոթների կամ աորտայի վնասման զգալի վտանգ՝ հատկապես տարածված ուռուցքային աճի դեպքերում /Ա-Դ/:



Փուլ 4. /շարունակություն/

Առաջային ու հետին մակերեսների տեղայնացումից հետո կերակրափողը ձգվում է ոտնամասային ուղղությամբ: Կապանները, օրինակ այսպես կոչված «կերակրափողային կապանը» ներառնող թափառող ներվի ճյուղերը, թոքային կապանները, աորտայի ճյուղերը դեպի կերակրափող պետք է հատվեն սեղմիչների /կամ կլիպների/ միջև, կանխելով խիլաթորաքսը արյունահոսությունը և խիլապերիտոնեումը /Է/:

Հատվում է առպատային պլևրան: Դեպի պլևրա կամ թոք ուռուցքի ներաճի դեպքում կարելի է իրականացնել միասնական բլոկով մասնահատում, անհրաժեշտության դեպքում, երկարացնելով ստոծանու կտրվածքը /Ը/:



Փուլ 4. /շարունակություն/

Հետագա դիսսեկցիան դեպի վեր, մինչև շնչափողի բիֆուրակցիա, իրականացվում է կողմնային կապանների հատումով: Այս փուլում ևս իրականացվում է ավշահատում հետին միջնորմում և շնչափողի բիֆուրկացիայի հետևում /Թ-1,Թ-2/:

Պրոքսիմալ ուղղությամբ, կերակրափողի բութ դիսսեկցիայի համար մինչև շնչափողի բիֆուրակցիա, կողմնային կապանները պետք է ձգվեն ներքև և հերթականությամբ հատվեն:

Բութ դիսսկեցիան, ըստ հնարավորի, իրականացվում է մինչև կրծքավանդակի վերին բացվածք /Ժ/:



Փուլ 5, *Ստամոքսային խողովակի ձևավորում*

Կարող սարքի օգնությամբ ստամոքսի հատակի կողմից իրականացվում է փոքր կորության մասնահատում նախադռան ուղղությամբ: Ստամոքսային խողովակի կարճացումից կարելի է խուսափել մասնահատման ընթացքում ստամոքսը ձգելով երկայնակի ուղղությամբ /Ա/:

Մեխանիկական կարի գիծը փակվում է սերոզ-մկանային հանգուցակարերով: Ստացված ստամոքսային խողովակի տրամաչափը, այս գործողությունից հետո, պետք է լինի 2.5-3.0սմ /Բ/:

Փուլ 6. *Կերակրափողի պարանոցային հատվածի*

տեղայնացումն ու դիսսեկցիան, կերակրափողի մասնահատում

Առավել լավ էքսպոզիցիայի հասնելու համար հիվանդի գլուխը թեքվում է դեպի աջ: Մաշկի կտրվածքը կրծոսկր-անրակ-պտկային մկանի առաջային եզրի երկայնքով: Կատարվում է ենթամաշկային մկանի հատում և կրծոսկր-անրակ-պտկային մկանի ու պարանոցի այլ մկանների միջև բութ դիսսեկցիա, հետո կրծոսկր-անրակա-պտկային մկանը տեղաշարժվում է դրսայնորեն: Թիակ-ենթալեզվային մկանի սուր դիսսեկցիան և ենթալեզվային մկանի տեղաշարժը միջային ուղղությամբ թույլ է տալիս մերկացնել վահանաձև գեղձի լատերալ եզրը, լծայիներակն ու քնային զարկերակը /Ա,Բ/:

Կերակրափողը տեղաշարժվում է կեռ գործիքով: Պարանոցային ու վերին կրծքային հատվածներում կերակրափողի տեղայնացումը ավարտվում է մատի բութ դիսսեկցիայով կամ դիսսեկտորով /Գ,Դ/: Քիթ-ստամոքսային զոնդը հեռացվում է: Կերակրափողի ստորին հատվածի

կապումից հետո, կերակրափողը ստեպլերով /Գ/ կամ մկրատով /Է/ հատվում է: Կերակրափողի բերանային ծայրատի վրա, մինչև նրա տեղաշարժումը որովայնի խոռոչ, ամրացվում է պինդ թել կամ ռետինե ժապավեն: Այն հեշտացնում է հետագայում ստամոքսային խողովակի ձգումը դեպի պարանոց:



Փուլ 7. *Վերակառուցում*

Իրականացվում է ստամոքսային խողովակի անցկացում: Հազվադեպ հիվանդների մոտ նրա երկարացման համար կարող է պահանջվել տասներկումատնյա աղու մոբիլիզացիա /Կոխերի գործողություն/

Տեղադրման տարբերակները՝

⇒ կերակրափողի ծոցում (Ա),

⇒ կրծոսկրի հետևում /հետկրծոսկրային, (Բ)/,

⇒ կրծոսկրից առաջ /առաջկրծոսկրային, (Գ)/:



Փուլ 8. *Պարանոցային բերանակցում*

Իրականացվում է ստամոքսային խողովակի ու կերակրափողի ծայրատի երկշարք բերանակցում: Առաջին, սերոզ-մկանային շարքը ձևավորվում է հանգուցակարերով /Ա/: Կերակրափողի ու ստամոքսիային խողովակի ցցուն հատվածները հատվում են /Բ/: Երկրորդ ներքին կարերի շարքը կարելի է իրականացնել անընդհատ եղանակով /Գ/: Ապա բերանակցման միջով դեպի ներքև, բարակ աղու առաջին գալար, անցկացվում է խողովակ՝ հետվիրահատական էնտերալ սնուցման համար /Դ/:

Բերանակցման առաջային պատի ձևավորումը ավարտվում է հանգուցակարերով կամ անընդհատ կարով: Պատի կարերի երկրորդ շարքը կարելի է իրականացնել Ս-ա ձև կարերով, նպաստելով բերանակցման ներսուզմանը ստամոքսային խողովակի մեջ /է,Ը/:



Փուլ 9. *Ավարտ*

Բերանակցումից դորզալ տեղադրվում է դրենաժ և մաշկը կարվում: Միջնորմը դրենավորվում է որովայնի խոռոչ դրված երկու փափուկ խողովակներով՝:

Ստանդարտ հետվիրահատական գործառույթներ

- ✓ հետվիրահատական դիտարկում ինտենսիվ թերապիայի բաժանմունքում,

- ✓ “լայն” ցուցումներ հետվիրահատական էնդոսկոպիայի համար,
- ✓ դրենաժի ամենօրյա ստուգում:

Հետվիրահատական բարդություններ

- ➢ պլևրալ հեղուկ և թոքաբորբ,
- ➢ բերանակցման անբավարարություն,
- ➢ ինտերպոնատի մեռուկացում,
- ➢ հետադարձ ներվի վնասում /մեկ կամ երկկողմանի/,
- ➢ մեդիսատինիտ,
- ➢ ավշային խուղակ
- ➢ կերակրափողային բերանակցման սպիացում՝ ստենոզով /հեռավոր/:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Տասներկումատնյա աղու տեղայնացումը հեշտացնում է սնուցող զոնդի տեղադրումը: Այն նաև ստեղծում է պայմաններ ստամոքսային խողովակի երկարացման համար, ինչը բարելավում է բերանակցման շրջանի արյան մատակարարումը;
- Ստոծանու ոտրկների լայն հատումը ապահովում է հետին միջնորմի օպտիմալ էքսպոզիցիա, նվազեցնելով բութ դիսսեկցիայի վտանգը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲԼՈԿՈՎ ԿԵՐԱԿՐԱՓՈՂԻ ՍՈՒԲՏՈՏԱԼ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ, ԱԲԴՈՄԵՆՈ-ԹՈՐԱԿԱԼ ՄՈՒՏՔ

Ներածություն

Այս վիրահատության խնդիրը՝ կերակրափողի քաղցկեղի հեռացումն է հնարավոր առավելագույն ավշահատմամբ /երկմակարդակ ավշահատում/, որը իր մեջ ներառում է որովայնային, հետին ու միջին միջնորմային ավշահանգույցների հեռացում: Վերակառուցումը կատարվում է ստամոքսային խողովակով, կամ հաստաղիքային ներդիրով:

Ցուցումներն ու հակացուցումները

Ցուցումները՝

- կերակրափողի կրծքային հատվածի քաղցկեղ,
- բարորակ նեղացում, եթե տրանսհիատալ մասնահատումը անցանկալի է /օրինակ, շնչափող ներաճելու դեպքում/:

Հակացուցումներ՝

- տես՝ «Սուբտոտալ մասնահատում, տրանսհիատալ մուտք» գլխում,
- հիվանդների բարձր վիրահատական ռիսկ:

Վիրահատություն

Դիրքը՝ վիրահատության կրծքային փուլում՝ պառկած ձախ կողքի վրա,

Մուտքը ՝ առաջ-կողմնային թորակոտոմիա 5-րդ միջկողային տարածությունով,

Դիրքը՝ վիրահատության որովայնային փուլում՝ մեջքի վրա /տես՝ “Կերակրափողի սուբտոտալ մասնահատում, տրանսհիատալ մուտք” գլուխում/,

Մուտքը՝ վերին լայնաձիգ կտրվածք կենտրոնական երկարացումով կամ միջային որովայնահատում /տես՝ “Կերակրափողի սուբտորալ մասնահատում. տրանահիատալ մուտք” գլուխում /:

Փուլ 1. Թորաքոտոմիա և կտրվածքի գծի երկայնքով պլևրայի հատում

Թորաքոտոմիա V միջկողում, մաշկի կտրվածքով թիակի անկյունից մինչև ենթակրծքային ծալք /Ա/:

Ըստ փուլերի դրվում են երկու լայնիչներ: Իրականացվում է միակողմանի թոքային օդափողանակություն ձախից: Միասնական բլոկով կերակրափողի մասնահատման համար միջնորմայինթոքամիզը հատվում է կտրվածքի գծով: Այն սկսվում է լյարդային կապանից շրջանցելով աջ թոքարմատի դորզալ հատվածը և շարունակվում աջ բրոնխի երկյանքով: Կտրվածքը շարունակվում է աջ գլխավոր բորնխի երկայնքով վերին սիներակի լատերալ եզրով մինչև կրծքավանդակի վերին բացվածք: Ապա կտրվածքի գիծը փոխում է ուղղությունը և իջնում

ներքև աջ հարողնաշարային գծի ու կենտերակի երկայնքով մինչև ստոծանի: Շատ կարևոր է հայտնաբերել աջ ստոծանիական նյարդը /Բ/:



Փուլ 2. *Թոքային կապանի առանձնացումը*

Թոքային կապանի հայտնաբերման համար թոքը քաշվում է գլխամասային ու լատերալ ուղղությամբ: Ավշագեղձեր պարունակող ամբողջ հյուսվածքը, անհրաժեշտ է տանել դեպի կերակրափող: Կարևոր է պահպանել զգուշություն չվնասելու համար աջ թոքի ստորին բլթի երակը:



Փուլ 3. *Կենտ երակի կապումը*

Առանձնացվում են վերին սիներակն ու կենտ երակը: Կենտ երակի ծայրատի կապումը իրականացվում է վերին սիներակի ուղղությամբ:



Փուլ 4. *Մեկ բոլկով արմատական ավշահատում*

Ավշահատումը սկսվում է վերին սիներակից վերև, մինչև երկու անանուն երակների միացումը: Գլուխպարանոցային ցողունի ու աջ ենթաանրակային զարկերակի դիսսեկցիայից հետո անհրաժեշտ է առանձնացնել աջ թափառող նյարդը և նույնականացնել աջ հետադարձ նյարդը: Թափառող ներվը հատվում է հետադարձ ներվի ճյուղավորումից ավելի ներքև և նրա դիստալ հատվածը տեղաշարժվում է դեպի ապագա պրեպարատ: Ապա, վերին սիներակի դորզալ պատի երկայնքով կատարվում է հետևողական ավշահատում /Ա/:



Փուլ 4. /շարունակություն/

Վերին սիներակի մշակումից հետո շնչափողն ու աջ գլխավոր բրոնխը լրիվ մաքրվում են ավշագեղձեր պարունակող բջջանքից: Նախա- և հարշնչափողային ճարպային բջջանքը ավշագեղձերի հետ տեղաշարժվում է կերակրափողի կողմը /Բ/:

Հետո իրականացվում է հետշնչափողային ավշագեղձերի դիսսեկցիա: Տեղաշարժելով այս հանգույցները դեպի կերակրափող, պետք է զգուշանալ չվնասելու համար շնչափողի թաղանթային հատվածը /Գ/:



Փուլ 4. /շարունակություն/

Ավշագեղձերի հատումը շարունակվում է վերին հարկերակրափողային կոլլեկտորում /Դ/: Կենտ երակ թափվող բոլոր միջկողային երակները կապվում են ու հատվում: Որից հետո հեռացվում են շնչափողի երկատման հատվածի ավշագեղձերը, ձախ գլխավոր բորնխի դիսսեկցիայով /Ե/:



Փուլ 4. /շարունակություն/

Իրականացվում է հարաորտալ ավշահատում: Կրծքային աորտալ կերակրափողային ճյուղերը պետք է առանձնացվեն, զգուշորեն կապվեն ու հատվեն /է/:

Կրծքային ծորանի նույնականացումն ու մանրակրկիտ դիսսեկցիան իրականացվում է անմիջապես ստոծանուց վեր և շնչափողի երկատման մակարդակին կրկնակի կապումով /Ը/:



Փուլ 4. /շարունակություն/

Միջնորմի ավշահատումը ավարտվում է ձախակողմյան հարաորտալ ու հետպերիկարդիալ հանգույցների հեռացումով, ինչպես նաև, միջանկյալ ու ստորին բլթի բրոնխների երկայնքով դեպի ներքև մինչև ստոծանու կերակարփողային անցք /Թ/:

Կերակրափողային պրեպարատի տեղայնացման ավարտից հետո աջ պլևրալ խոռոչը դրենաժի տեղադրումից հետո փակվում է:

Հիվանդը պառկացվում է մեջքի վրա, վիրահատության որովայնային փուլի իրականացման համար:



Որովայնային ու պարանոցային փուլերի նկարագրությունը տես “Տրանսհիատալ մոտեցում” գլխում:

Որպես այլընտրանք կարելի է ձևավորել ներկրծքային բերանակցում /տես “ներկրծքային բերանակցում” գլուխում/:

Ստանդարտ հետվիրահատական հետազոտություններ ու բարդություններ

Նկարագրված “Կերակրափողի սուբտորալ մասնահատում, տրանսհիատալ մուտք” գլխում:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- եթե հնարավոր չէ իրականացնել Ro մասնահատում, ապա նախապատվությունը տրվում է հետկրծոսկրային վերակառուցմանը,
- եթե վնասվել է շնչափողը, այն անմիջապես կարվում է և պերիկարդի կտորով փակվում,
- կերակրափողի պարանոցային հատվածի էքսպոզիցիայի բարելավման համար հատվում է կրծոսկր-անրակա-պտկային մկանի միջային գլխիկը,

- ստամոքս-ճարպոնային աղեղի վնասումը բերում է բարակ աղիքային ներդիրի ձևավորման անհրաժեշտությանը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲԼՈԿՈՎ ԿԵՐԱԿՐԱՓԱՂԻ ԱԲԴՈՄԻՆՈ-ԹՈՐԱԿԱԼ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ ԲԱՐՁՐ ՆԵՐԿՐԾՔԱՅԻՆ ԲԵՐԱՆԱԿՑՄԱՄԲ

Ներածություն

Շնչափողի բիֆուրկացիայից դիստալ տեղակայված ներկրծքային ուռուցքների հեռացման ժամանակ, որպես պարանոցային բերանակցման այլընտրանք, չխախտելով ուռուցքաբանական սկզբունքները, կարող է ձևավորվել բարձր ներկրծքային բերանակցում: Առավելությունները, կապված են վիրահատության տևողության զգալի կրճատման հետ, բայց համակցվում են ծայրահեղ ծանր մեդիաստինիտի զարգացման ռիսկի հետ, բերանակցման անբավարարության դեպքում:

Ցուցումներն ու հակացուցումները

Ցուցումները՝

- կերակրափողի կրծքային հատվածի քաղցկեղ,
- տարածուն պեպտիկ ստրիկտուրա, եթե անհնար է իրականացնել տրանսհիատալ մասնահատ:

Հակացուցումներ՝

- Տես «Կերակրափողի սուբտորալ մասնահատում, տրանսհիատալ մուտք» գլխում:
- վիրահատական բարձր ռիսկի հիվանդներ:

Նախավիրահատական հետազոտություն և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ Տեղեկություններ ստամոքսի կամ հաստ աղու վրա տարած վիրահատությունների, ալկոհոլի կամ նիկոտինի օգտագործման, ստամքս-կերակրափողային ռեֆլյուքս հիվանդության, Բարրետտի կերակրափողի վերաբերյալ:
- ✓ Հետադարձ կոկորդային նյարդի վիճակի ուսումնասիրում, պարանոցային ավշագեղձերի վիճակի հստակեցում:
- ✓ ՔԷԱ, լյարդի գործունեության և հեմոստազի ցուցանիշներ:
- ✓ ԷԳԴՍ բիոպսիայով, բացառելու համար դեպի ստամոքս ներաճ, կոլոնոսկոպիա՝ եթե պլանավորվում է հաստ աղու ինտերպոզիցիա:
- ✓ ՀՇ /կրծքավանդակ + որովայն/, կերակրափողի ԷՍԳ, բրոնխոսկոպիա՝ եթե ախտահարված է կերակրափողի միջին երրորդը ու հնարավոր է ներաճ դեպի շնչափող:

Հիվանդի պատրաստում՝ աղիների պատրաստում, շնչառական թերապիա, միզային կատետր, կենտրոնական երակային կատետեր:

Հիվանդի դիրքը՝

-Դիրքը “պտուտակաձև”, ձեռքի ու կրծքավանդակի աջ կեսի 45^0 բարձրացումով:

-Սեղանի թեքում մինչև մեջքի վրա հորիզոնական դիրք ստանալը՝ վիրահատության որովայնային փուլի համար:

-Սեղանի թեքում դեպի ձախ՝ վիրահատության կրծքային փուլի համար:

Վիրահատություն

Փուլ 1.

Տես*փուլեր 1,3 և 5.* “Կերակրափողի սուբտուրալ մասնահատում. տրանսհիատալ մուտք» գլխում:

Փուլ 2.

Տես*փուլեր 2, 4.* “Կերակրափողի սուբտուրալ մասնահատում. տրանսհիատալ մուտք» գլխում:

Փուլ 3. *Բարձր ներկրծքային բերանակցում*

Կերակրափողի հատումը իրականացվում է կրծքի վերին բացվածքից 5սմ ներքև քիսեթակարի համար սեխմիչի վրա /Psrsestring 45/: Որպես այլընտրանք կերակրափողը հատվում է, իսկ քիսեթակարը դրվում ձեռքով /մոնոֆիլամինատ 2-0/: Կերակրափողի պրոքսիմալ եզրը լայնացվում է բութ սեղմիչով: Ցիրկուլյար կարող գործիքի սալը /ցանկալի է 28սմ/ մտցվում է կերակրափողի ծայրատ և ամրացումը կատարվում է քսակակարի կապումով:

Ստամոքսային խողովակը անցկացվում է ստոծանու կերակրափողային անցքով և ծայրատի գագաթը հատվում է, որովհետև հաճախ պահանջվածից շատ է: Կարող գործիքը մտցվում է ստամոքսային խողովակ և բերանակցման հակառակ կողմից սարքի գլխիկով թափածակվում է խողովակի պատը /Ա/:

Եթե ստամոքսային խողովակի երկարությունը սահմանափակ է, ապա կարող սարքը անցկացվում է վենտրալ գաստրոտոմիայի միջով և իրականացվում է «ծայրը-ծայրին» ստամոքս-կերակրափողային բերանակցում, միացնելով գործիքի գլխիկը սալին ու կարելով /Բ/:

Ստուգվում են երկու մասնահատված բերանակցման օղերը: Կարող գործիքը դուրս է բերվում և գծային կարիչով իրականացվում է ստամոքսի խողովակի ավելորդ հատվածի մասնահատում:

Որից հետո բերանակցումից ներքև մինչև բարակ աղու առաջին գալար դեկոմպրեսիայի և էնտերալ սնուցման համար անցկացվում է քիթ-ստամոքսային խողովակ: Դրենավորվում է աջ պլևրալ խոռոչը:

Որպես այլընտրանք, նույն եղանակը կարող է կիրառվել հաստաղիքային ներդիրի համար՝ էզոֆագոգաստրէկտոմիայից հետո /Գ,Դ/:



Ստանդարտ հետվիրահատական գործառույթներ

- ✓ հետվիրահատական դիտարկում ինտենսիվ թերապիայի բաժանմունքում,
- ✓ «լայն» ցուցումներ հետվիրահատական էնդոսկոպիայի համար,
- ✓ դրենաժի ամենօրյա ստուգում:

Հետվիրահատական բարդություն

- ➢ պլևրալ հեղուկ և թոքաբորբ,
- ➢ բերանակցման անբավարարություն,
- ➢ ինտերպոնատի մեռուկացում,

- հետադարձ նյարդի վնասում /միա- կամ երկկողմանի/,
- միջնորմաբորբ,
- ավշային խուղակ
- կերակրափողային բերանակցման սպիացում՝ ստենոզով /հեռավոր բարդություն/:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Ստամոքսային խողովակի ավելորդ երկարություն կարելի է ստանալ տասներկումատնյա աղու տեղայնացմամբ /Կոխերի միջամտություն/: Նման դեպքում բերանակցման համար նախատեսված ստամոքսային խողովակի եզրը, տեղակայվում է ստամոքս-ճարպոնային ոտիկին մոտ: Համարժեք արյան մատակարարումը նվազեցնում է բերանակցման անբավարարության վտանգը:

- Ի տարբերություն պարանոցային կերակրափող-ստամոքսային բերանակցման, ներկրծքայինբերանակցման ցանկացած անբավարարության ժամանակ պետք է իրականացվի շտապ էնդոսկոպիա: Եթե էնդոսկոպիկ հետազոտությունը անբավարարության նշաններ չի հայտնաբերում, պետք է նկատի ունենալ կերակրափողի ստենտավորման հնարավորությունը, շարունակվող անբավարարության կլինիկական նշանների շարունակվելու պայմաններում սարսափելի միջնորմաբորբերից խուսափելու համար:

ԿԵՐԱԿՐԱՓՈՂ-ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ՝ ԻԶՈՊԵՐԻՍՏԱԼՏԻԿ ԲԱՐԱԿ ԱՂԻՔԱՅԻՆ ՆԵՐԴԻՐՈՎ

Ներածություն

Կերակրափող-ստամոքսային անցման միասնական բլոկով սահմանափակ մասնահատումը ներառում է մետապլազիայի ենթարկված լորձաթաղանթով կերակրափողի սեգմենտի լրիվ հեռացում, ստորին կերակրափողային սեղմանի ու ստամոքսի փոքր կորության հատվածի հետ միասին՝ նոր ստամոքսի հատակի ձևավորմամբ: Քանի որ կերակրափողի ստորին հատվածի քաղցկեղի նույնիսկ սկզբնական փուլերում /T1b/, հիվանդների մոտ 20%–ի դեպքում բերում է փոքր կորությամբ և լյարդային ու փայծաղային զարկերակների երկայնքով տեղակայված ավշագեղձերի մետաստատիկ ախտահարման, հարաորտալ շրջանի ու ստորին

միջնորմի ավշագեղձերի հեռացումը հանդիսանում է այս վիրահատական միջամտության կարևորագույն մասը:

Ուռուցքի վաղ փուլով հիվանդների մոտ, նախավիրահատական էնդոսկոպիկ-սոնոգրաֆիկ դասակարգված T1a կամ T1b, ինչպես նաև կերակրափողի դիստալ հատվածի ծանր դիսպլազիայի դեպքերում, կարդիայի ու կերակրափողի դիստալ հատվածի սահմանափակ պրոքսիմալ մասնահատումը, սնուցող ոտիկի վրա բարակ աղիքային իզոպերիստալտիկ ներդիրով վերակառուցմամբ՝ բերում է բավարար ֆունկցիոնալ և ուռուցքաբանական արդյունքների:

Ցուցումներն ու հակացուցումները

Ցուցումները՝

- կերակրափողի դիստալ հատվածի ծանր դիսպլազիա /Բարրետտի կերակրափող/,
- կերակրափողի դիստալ քաղցկեղ / T1a և T1b փուլեր/,
- ամոքիչ նպատակներով /առանձին հիվանդների մոտ՝ խցանող ուռուցքներով պայմանավորված ծանր դիսֆագիա կամ ուռուցքից պրոֆուզ արյունահոսություն/:

Հակացուցումներ՝

- կերակրափողի քաղցկեղ T_2 կամ ավելի բարձր փուլերում,
- Բարրետտի մետապլազիայով սեգմենտ, տեղակայված շնչափողի բիֆուրկացիայից վեր:

Նախավիրահատական հետազոտում / պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազատություններ՝

- ✓ էզոֆագոգաստրոսկոպիա բիոպսիայով,
- ✓ Կերակրափողի էնդոսկոպիկ-սոնոգրաֆիա, կրծքավանդակի ու որովայնի խոռոչի օրգանների համակարգչային շերտագրություն, որովայնի խոռոչի օրգանների ԳՋՀ,
- ✓ Թոքերի ֆունկցիոնալ ուսումնասիրություն, աղիների օրտոգրադ լավաժ:

Հիվանդի պատրաստումը վիրահատության՝ քիթ-ստամոքսային զոնդ /եթե հնարավոր է/, միզապարկային կատետերի տեղադրում, կենտրոնական երակային կատետեր:

Հիվանդի դիրքը՝ պառկած մեջքի վրա:

Մուտք՝ վերին լայնակի կտրվածք միջային հավելյալ լայնացմամբ, կողաղեղի բարձրացման համար Ռոշարի ռետրակտորի տեղադրում:

Վիրահատություն

Փուլ 1. Ստորին հետին միջնորմի էքսպոզիցիա, դիաֆանասկոպիա

Լյարդի ձախ բիլթը լրիվ տեղայնացվում է, իսկ փոքր ճարպոնը՝ թափառող ներվի հետին ու առաջային ստամոքսային ճյուղերից անմիջապես մեդիալ, հատվում: Միջնորմի բացումը, ստոծանու երկայնակի միջին կտրվածքով, ապահովում է հետին միջնորմի ստորին հատվածների բավարար էքսպոզիցիան: Տեղայնացվում է կերակրափողի դիստալ հատվածը, ներառած հարկերակրափողային հյուսվածքները, հատվում են թափառող նյարդերը:

Բարրետտի սեգմենտի գլխամասային սահմանը, որը նաև ծառայում է որպես մասնահատման պրոքսիմալ եզր, որոշվում է ներվիրահատական էԳՍ (էզոֆագոգաստրոսկոպիա)-ով՝ դիաֆանասկոպիայի հետ միասին: Իրականացվում է փայծաղային ու լյարդային զարկերակների շուրջը տեղակայված ավշային հանգույցների հատում, ընդերային ցողունի մոտ հատվում են ձախ ստամոքսային երակն ու զարկերակը: Որից հետո ընդերային ցողունն ու հարաորտալ շրջանը ևս մաքրվում են ավշահանգույցներ պարունակող շարակցական հյուսվածքից:



Փուլ 2. *Կերակրափողի հատումը*

Բարրետտի սեգմենտի գլխամասային սահմանից մոտ 1սմ պրոքսիմալ դրվում է քիսեթային կարի համար սեղմիչը ու կերակրափողը հատվում:

Ստամքոսի փոքր կորության ու կարդիայի հեռացումը իրականացվում է մեծ կորության պրոքսիմալ հատվածից դեպի ներքև գծային կարող սարքի բազմակի կիրառումով, մինչև ստամոքսի մարմնի ու անտրալ հատվածի սահմանը: Նման գործողությամբ ստեղծվում է ստամոքսի նոր հատակ:

Ավելի տարածված ուռուցքի դեպքում, վիրահատության հնարավոր ընդլայնումը ներառում է կերակրափողի տրանսհիատալ մասնահատում կամ էզոֆագէկտոմիա ստամոքսի մասնահատմամբ:

Փուլ 3. *Բարակ աղու պրոքսիմալ սեգմենտի էզոֆագոեյունոստոմիա*

Առանձնացվում է բարակ աղու պրոքսիմալ հատվածից 15-20 սմ երկարության սեգմենտ, որը իր միջընդերային ոտիկով, լայնաձիգ հաստ աղու միջընդերքի միջով ու ստամոքսի հետևով, տեղափոխվում է ստոծանու շրջան: Որպեսզի ապահովվի աղիքային ներդիրի անոթային ոտիկի համարժեք երկարություն, անհրաժեշտ է իրականացնել մանրակրկիտ դիսսեկցիա: Բարակաղիքային ներդիրը, անցկացված ստամոքսի ու խթաղու հետևով պարտադիր պետք է լինի իզոպերիստալտիկ: Որից հետո ցիրկուլյար կարող սարքով ձևավորվում է պրոքսիմալ տերմինո-լատերալ /ծայրը կողքի/ էզոֆագոեյունոստոմիա «կերակրափող-բարակ աղիքային բերանակցում»: Կարող սարքը մտցվում է աղիքային ներդիրի բերանային ծայրով:

Բերանակցման կարից հետո նեդիրի խուլ եզրը մասնահատվում է, փակվում գծային ստեպլերով և եզրը կարվում:



Փուլ 4. *Եյունոգաստրոստոմիա*

Նոր ստեղծված ստամոքսի հատակի հիմքում, մեխանիկական կարի գիծը հատվում է 3-4 սմ երկարության վրա և ձևավորվում “ծայրը-կողքի” եյունոգաստրո բերանակցում: Ստամքոսի վրա մնացած կարը փակվում է սերոզ հանգուցակարերով: Բարակ աղու անընդհատությունը վերականգնվում է տերմինո-լատերալ յեյունո-յեյունո բերանակցումով: Միջնորմը դրենավորվում է որովայնի խոռոչի կողմից տեղադրված երկու փափուկ խողովակներով: Վիրահատության վերջում, ստոծանու կերակրափողային անցքի մոտ դրվում են առաջային ու հետին կարեր:

Սանդարտ հետվիրահատական գործառույթներ

- ✓ դերնաժների ամենօրյա դիտարկում ներկրծքային բերանակցման անբավարարության վաղ հայտնաբերման համար:

Հետվիրահատական բարդություններ

- ➢ էզոֆագոյեյունոստոմիայի կամ որովայնային բերանակցման անբավարարություն,
- ➢ մեդիաստինիտ,
- ➢ պանկրեատիտ,
- ➢ որովայնաբորբ,
- ➢ պլևրայի էմպիեմա,
- ➢ բարակ աղու տեղափոխված սեգմենտի մեռուկացում,
- ➢ ռեֆլյուքս,
- ➢ ստամոքսի դատարկման ուշացում:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Բոլոր այն դեպքերում երբ հայտնաբերվում է կերակրափողի պատի տարածուն անհարթություն կամ բազմակենտրոն օջախներ կատարվում է ներվիրահատական էնդոսկոպիա:

- Կարող սարքը մտցվում է բարակ աղու սեգմենտի բերանային ծայրից:

ԵՌԱՄԱԿԱՐԴԱԿ ԱՎՇԱՀԱՏՈՒՄ ԿԵՐԱԿՐԱՓՈՂԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԺԱՄԱՆԱԿ

Ներածություն

Կերակրափողի կրծքային հատվածի վերին երկու երրորդից ավշային դրենավորումը իրականացվում է հիմնականում դեպի պարանոց ու վերին միջնորմ, չնայած կա նաև ավշի որոշակի արտահոսք ստամոքսի ձախ զարկերակի երկայնքով տեղակայված ավշագեղձեր: Ճապոնիայում 1981թ. իրականացված եռամակարդակ ավշահատման առաջին ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուռուցքի ներկրծքային տարածման բացակայության պայմաններում կերակրափողի մասնահատումից հետո 36 հիվանդներից 10-ի մոտ պարանոցային ու որովայնային ավշային հանգույցներում գտնվել են չհայտնաբերված մետաստազներ:

Ցուցումներ ու հակացուցումները

Ցուցումներ՝

- շնչափողի բիֆուրկացիայից վեր տեղակայված կերակրափողի ուռուցքները />T1m փուլ/:

Հակացուցումներ՝

- մակերեսային քաղցկեղ /<T1m փուլ/;
- ծանր ուղեկցող հիվանդություններ /սիրտ-անոթային, թոքային հիվանդություններ, ու/կամ լյարդային անբավարարություն/;

- վիրահատական բարձր ռիսկի հիվանդների մոտ պարանոցի ավշագեղձերում մետաստազների վերաբերյալ նախավիրահատական տվյալների բացակայություն /հարաբերական հակացուցում/;
- շնչափողի բիֆուրկացիայից ներքև տեղակայցած ուռուցքներ /հարաբերական հակացուցում/:

Նախավիրահատական հետազոտում / պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ տես “Տրանսհիատալ մուտքով էզոֆագէկտոմիա” գլուխը,
- ✓ պարանոցի ԳՋՀ+ՀՇ
- ✓ Տեղային տարածուն ուռուցքների դեպքերում, սկզբում իրականացվում է քիմիո-ճառագայթային թերապիա, հետո վիրահատություն:

Հիվանդի դիրքը՝ մեջքի վրա պառկած:

Մուտք՝ առաջ կողմնային թորակոտոմիա V միջկողում, T-ա ձև կտրվածք պարանոցի վրա:

Վիրահատություն

Փուլ 1. *էքսպոզիցիա և աջ վերին միջնորմի ավշահատում*

Ուռուցքի մասնահատելիության գնահատման համար հատվում է կենտ երակի աղեղը, իսկ աջ բրոնխիալ զարկերակը կապվում հիմքի մոտ, ապահովելով բավարար մուտք դեպի վերին ու միջին միջնորմ: Աջ հետադարձ նյարդի ու աջ հարշնչափողային հանգույցների շրջանում ավշագեղձերի հեռացման համար մերկացվում են գլուխ-ուսային և աջ ենթաանրակային զարկերակները, որից հետո մանրակրկիտ կապվում են ստորին վահանագեղձային զարկերակի ճյուղերը /սլաքը ցուցադրում է ավշահատման ուղությունը/:

Փուլ 2. *Կերակրափողի մասնահատումն ու ավշահատման ավարտը*

Կերակրափողի պրոքսիմալ հատումից հետո աորտայի աղեղի մակարդակում հեռացվում են ձախ հետադարձ նյարդի շրջանի հանգույցները /ձախ հարշնչափողային ավշահանգույցներ/:

Միջին միջնորմի ավշահանգույցները՝ ներկայացված ենթաաորտալ, ենթաբիֆուրկացիոն և հարկերակրափողային հանգույցներով, հեռացվում են կերակրափողի հետ:

Սրա շնորհիվ մերկանում են գլխավոր բրոնխը, ձախ թոքային զարկերակը, թափառող նյարդի ճյուղերն ու պերիկարդը: Թափառող նյարդի երկու թոքային ճյուղերն ու վայրէջ աորտայից սկիզբ առնող ձախ բորնխիալ զարկերակը ձախ թոքի դրունքի մոտ պահպանվում են: Սակայն թափառող նյարդի կերակրափողային ճյուղերը հատվում են, իսկ կրծքային ծորանը հեռացվում կերակրափողի հետ:



Փուլ 3. *T-ա ձ և կտրվածքը պարանոցի վրա*

Պարանոցի վրա կատարվում է T-ա ձևի կտրվածք, կրծոսկր-վահանաձև, կրծոսկր-ենթալեզվային, կրծոսկր-անրակա-պտկային մկանները հատվում են մինչև անրակ, ինչպես նաև բացազատվում է թիակ-ենթալեզվային մկանը: Հետադարձ նյարդի առանձնացումից հետո նրա երկայնքով հեռացվում են ավշային գեղձերը, որոնք հանդիսանում են մինչ այդ, վերին միջնորմում հեռացված ավշագեղձերի շղթայի շարունակությունը: Կապվում ու հատվում է ստորին վահանագեղձային զարկերակը: Հարկերակրափողային ավշահանգույցները, ներառյալ հետադարձ նյարդի ավշագեղձերը պարանոցային ու կրծքային հատվածների սահմանում, դասակարգվում են որպես պարանոցային կամ վերին միջնորմային ավշագեղձեր, կախված բիֆուրկացիայի, ընդհանուր քներակի և աջ ենթաանրակային զարկերակի հանդեպ նրանց դիրքի:

Փուլ 4. *Պարանոցային ավշահատում*

Լծային երակը, ընդհանուր քներակն ու թափառող ներվը հերթականությամբ առանձնացվում են ու հատվում: Կողքից, հավելյալ ներվի պահպանմամբ հեռացվում են ներքին լծային երակից ավելի լատերալ տեղակայված ավշագեղձերը: Հետո առանձնացվում են վահանա-պարանոցային ցողունն ու նրա ճյուղերը, ինչպես նաև ստոծանիային ներվը: Երկու կողմից մաքրվում են պարանոցային ավշագեղձերը՝ ներքին լծային ավշագեղձերը մատնայածև աճառի մակարդակից ներքև, վերանրակային և պարանոցային հարկերակրափողային ավշագեղձերը /սլաքը ցույց է տալիս ավշահատման ուղղությունը/:



Ստանդարտ հետվիրահատական հետազոտությունն ու բարդությունները

Ըստ “Կերակրափողի սուբտորալ մասնահատում. տրանսհիատալ մուտք» գլխի:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- վերին միջնորմին հասնելու համար լավագույն էքսպոզիցիա ստանում են կրծոսկր-անրակ-պտկաձև մկանի միջային գլխիկի հատման և/կամ մասնակի վերին ստերնոտոմիայի միջոցով:

ԿԵՐԱԿՐԱՓՈՂԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԻՆՎԱԶԻՎ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ներածություն

Ժամանակակից լապարասկոպիկ ու տորակոսկոպիկ եղանակների հասանելիությունը, ինչպես նաև տեսաէնդոսկոպիայի զարգացումը նպաստել են կերակրափողի մասնահատման նվազագույն ինվազիվ տեխնիկայի մշակման: Ներկայումս առաջարկվում են և կլինիկորեն փորձարկված են երկու սկզբունքային եղանակներ: Կերակրափողի թորաքոսկոպիկ մասնահատումը թեորիապես հանդիսանում է տրանսթորակալ մուտկով կերակրափողի միասնական բլոկով մասնահատման նմանակը, սակայն կատարվում է միայն մի քանի

կլինիկական կենտրոններում, քանի որ հանդիսանում է բավականին դժվար միջամտություն, որը պահանջում է երկարատև միակողմանի թոքային վենտիլյացիա: Մինչ օրս մեծ սերաներում դեռ չի ապացուցվել նրանց առավելությունը սովորական բաց մասնահատումների հանդեպ: Կերակրափողի արմատական տրանսհիատալ մասնահատումը կերակրափողի մեդաստինոսկոպիկ դիսսեկցիայով /էնդոսկոպիկ/ առաջարկվել է 1990թ. Buess-ի ու համահեղինակների կողմից և անցել կլինիկական փորձարկում: Եղանակը թույլ է տալիս ուղղակի տեսողության տակ տեղայնացնել կերակրափողի պրոքսիմալ կրծքային հատվածը, իրականացնել մեդիաստինոսկոպիկ ավշագեղձերի հեռացում և նվազեցնել ներ- ու հետվիրահատական բարդությունների վտանգը համեմատած կերակարփողի սովորական տրանսհիատալ մանսհատումների հետ:

Կերակրափողի թորակոսկոպիկ մասնահատում

Ցուցումներ ու հակացուցումները

Ցուցումներ՝

- կերակրափողի կրծքային հատվածի քաղցկեղ:

Հակացուցումներ՝

- թոքերի գործունեության խանգարումներ /երկարատև մեկ թոքային վենտիլացիա/;
- վիճակ թորակոտոմիայից հետո /կպումներ/;
- տարածված քաղցկեղ;
- 65-ից ավել տարիքի հիվանդներ /համեմատական հակացուցում/:

Կերակրափողի արմատական տրանսհիատալ

մասնահատում էնդոդիսսեկցիայով

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- կերակրափողի դիստալ հատվածի քաղցկեղ /Բարրետտի կերակրափող/
- տարիքային սահամնափակումներ՝ եղանակը հաջողությամբ կարող է կիրառվել մինչև 80 տաերկան հիվանդների մոտ:

Հակացուցումներ

- վիճակներ վահանաձև գեղձի վիրահատությունից հետո կամ դեպքեր, որոնց ժամանակ մուտքը դեպի կրծքավանդակի պարանոցային հատված և/կամ վերին միջնորմ կարող է լինել դժվարացած /վիճակ կոկորդային քաղկցեղի ճառագայթային բուժումից հետո/:
- մինչ վիրահատությունը հայտնաբերած շուրջուռուցքային կամ միջնորմային ավշային հանգույցների մեծացում /ցուցված է տրանսթորակալ մասնահատում միասնական բլոկով/:

Նախավիրահատական ուսումասիրում և պատրաստում վիրահատությանը

ԷՍԳ՝ հիվանդության փուլավորման համար /T և N չափորոշիչների գնահատում ըստ UYEC դասակարգման/, կրծքավանդակի ռենտգենոգարֆիա՝ հեռավոր միետաստազների հայտնաբերման համար, որովայնի խոռոչի օրգանների ԳՁՀ՝ հեռավոր մետաստազների հայտնաբերման համար, ՀՇ՝ միջնորմում մեծացած ավշահանգույցների մասնահատելիությունը որոշման համար: Վտանգի վերլուծություն՝ սրտի, թոքերի, լյարդի գործունեության գնահատում: Ալկոհոլի ընդունման բացառում մի քանի շաբաթների ընթացքում մինչ վիրահատությունը:

Կերակրափողի թորակոսկոպիկ մասնահատում

Վիրահատություն

Փուլ 1. *Հիվանդի դիրքը և էքսպոզիցիան*

Միակողմանի թոքային վենտիլյացիայի համար անեսթեզիոլոգի կողմից շնչափողը ինտուբացվում է երկկողմանի խողովակով, որի իրականացման որակը վիրահատության հաջող ընթացքի անկյունաքարն է:

Հիվանդը թեքվում է ձախ կողքի վրա, ինչպես սովորական հետ կողմնային թորակոտոմիայի ժամանակ:

Հատուկ թորակոսկոպիայի համար կիրառվող կարճ ու օվալ տրոակարները նվազեցնում են արյունահոսության վտանգը միջկողային զարկերակներից և ավելացնում գործիքի ազատության աստիճամը: Տրոակարների դիրքը պետք է պլանավորվի համապատասխան ուռուցքի տեղակայման, իսկ էքսպոզիցիայի համար պահանջվում են թոքային ռետրակտորներ:

Նկարի վրա ցուցադրված է հիվանդի դիրքն ու տրոակարների տեղկայումը բիֆուրկացիայի մակարդակին տեղակայված կերակրափողի քաղցկեղի ժամանակ:



Փուլ 2. *Կերակրափողի դիսսեկցիա*

Միջնորմային պլևրան հատվում է լրիվ մերկացնելով կերակրափողը ու պահպանելով կենտ երակը: Որպեսզի հեշտացվի ձգումը ու լավացվի էքսպոզիցիան, կերակրափողի դիստալ հատվածի շուրջը տեղադրվում է սիլիկոնե դրենաժ: Հարկերակափողային հյուսվածքների դիսսեկցիան իրականացվում է գերձայնային դանակով այնպես, որ նրանք մնան պրեպարատի հետ: Կրծքային ծորանը անհրաժեշտ է կապել չներծծվող թելով, իսկ ուղղակի աորտայից գնացող անոթները՝ կլիպավորել, կանխելով հնարավոր արյունահոսությունը հետվիրահատական շրջանում:



Փուլ 3, *Կերակրափողի հատումը*

Ավշահատման ընթացքում շնչափողի բիֆուրկացիայից ներքև անհրաժեշտ է խուսափել գլխավոր բրոնխների վնասումից: Այս շրջանի ավշագեղձերը պետք է մնան պրեպարատի հետ միասնական բլոկում:

Կենտ երակի հատման համար կիրառվում է գերձայնային մկրատ:

Վերջապես Endo GIA-ի ևս մեկ պարկուճի օգնությամբ կերակրափողը հատվում է կրծքավանդակի մուտքի մոտ: Պրեպարատը հեռացվում է ավելի ուշ՝ վերակառուցման փուլում ստոծանու բաց կերակարփողային անցքով: Որպես այլընտրանք կերակրափողը կարելի է հատել կարող գործիքով ավելի դիստալ հատվածում /կերակրափողային անցքի մակարդակին/ և հեռացնել որևէ մեկ պոռտի պրոյեկցիայով իրականացված կտրվածքից, լայնացնելով այն մինչև 3-4սմ: Վիրահատությունը ավարտվում է տեսախցիկի պոռտից մեկ 26 Fr-ոց խողովակի տեղադրմամբ կրծքավանդակ, մյուս պոռտերի տեղադրման անցքերը փակվում են ներծծվող կարերով:

Կերակրափողի արմատական տրանսհիատալ մասնահատում էնդոդիսսեկցիայով

Փուլ 1. Էքսպոզիցիա, պատրաստում և մուտք դեպի կերակրափողի պարանոցային հատված

Հիվանդը պառկեցվում է մեջքի վրա, մշակվում մաշկը: Կերակրափողը ինտուբացվում է պինդ ռետինե խողովակով: Որովայնի պատը, առաջային կրծքավանդակի պատը, և պարանոցի ձախ հատվածը պետք է լինեն լրիվ բաց երկու վիրաբուժական բրիգադների, “որովայնային” ու “պարանոցային”, աշխատանքի համար:

Կտրվածքը պարանոցի վրա իրականացվում է կրծոսկր-անրակ-պտկային մկանի առաջային եզրով: Թիակ-ենթալեզվային մկանը հատվում է մոնոպոլյար էլեկտրադանակով, իսկ ստորին վահանգեղձային զարկերակը կտրվում ու կապվում: Դիսսկեցիայի մյուս փուլերում անհրաժեշտ է նույնականացնել և պահպանել հետադարձ և կոկորդային ներվերը: Նման նույնականացումը դյուրին է ստորին վահանագեղձային զարկեակի տակ՝ նրանց անցման տեղում: Որպեսզի կանխվի վնասումը, նյարդի հետագա դիսսկեիցայից անհրաժեշտ է խուսափել:

Որպեսզի դիսսեկցիայի համար կերակրափողի ու շնչափողի միջև ունենանք որոշակի տարածք, կերակարփողի պարանոցային հատվածը բութ և սուր եղանակով տեղայնացվում է, վերցվում սիլիկոնե խողովակի վրա ու տարվում ավելի լատերալ:



Փուլ 2. *Էնդոդիսսեկցիա*

Հավաքվում և վերին միջնորմ է մտցվում միջնորմային էնդոդիսսեկտորը: Այն զինված է հյուսվածքային լայնիչով, օպտիկական սարքով Hopkins 15 աստիճան տեսողական անկյան տակ և աշխատանքային կապուղիով՝ մեկ 5մմ լապարասկոպիկ գործիքի համար: Հյուսվածքային լայնիչը պատրաստված է հաշվի առնելով անատոմիական առանձնահատկությունները, որպեսզի այն կարողանա ազատ շարժվել կերակրափողի մակերեսով, ստեղծելով միջնորմում 2-3 սմ-ոց տարածք դիսսեկցիայի համար: Հյուսվածքային լայնիչն ու մեդիաստինասկոպը կարելի է 360 աստիճան ազատ շրջել: Այն միացված է տեսախցիկին, լույսի քսենոնային աղբյուրին և լվացման ասպիրացիոն սարքին:

Էնդոսկոպիկ դիսսեկցիայի առաջին փուլը, շնչափողի հետևում, միշտ դժվարացած է պայմանավորված սկզբնական սահմանափակ տեսանելիությամբ և կրծքավանդակի մուտքի անատոմիական նեղացումով: Սակայն մեդիաստինասկոպի աշխատանքային կապուղին թույլ

է տալիս կիրառել միկրոգործիքներ՝ մկրատներ, բռնիչներ, կոագուլյատորներ, ասպիրատորներ, ինչպես նաև գերձայնային դիսսեկտոր:



Փուլ 3. Էնդոդիսսեկցիա, առաջային միդիաստինասկոպիա

Հյուսվածքները շնչափողի հետևում անջատվում են կոագուլյացիոն գործիքի շարժումով, «կոագուլյացիայի» կարճ իմպուլսի կամ գերձայնային մկրատի միջոցով:

Կերակրափողի առաջային մակերեսը հերթականությամբ առանձնացվում է մինչև շնչափողի բիֆուրկացիայից 2-3 սմ ներքև:

Սովորաբար ձախ հետադարձ նյարդը, երկու թափառող նյարդերն ու բիֆուրկացիան հայտնաբերելուց հետո, վերջինիս տակի ավշահանգույցները լրիվ հեռացվում են:

Թեքելով գործիքի ծայրը ժամացույցի սլաքին հակառակ 90 աստիճան կարելի է առանձնացնել կերակրափողի ձախ մակերեսը: Հաճախ այն հանդիսանում է էնդոդիսսեկցիայի առավել դժվարին փուլը, կերակրափողի ու ձախ գլխավոր բրոնխի միջև կպումների հետևանքով: Այս կպումները պետք է լրիվ զգուշորեն անջատվեն, չվնասելու համար կերակրափողի երկայնակի մկանային շերտը:

Փուլ 4. *Էնդոդիսսեկցիա, հետին մեդիսատինասկոպիա*

Կերակրափողի հետին պատի ու աջ մակերեսի առանձնացումը սովորաբար մեծ դժվարություն չի ներկայացնում, իսկ մեդիսատինալ պլևրայի թափածակումը, որպես կանոն ահարկու չէ: Արդյունքում կերակրափողը պետք է լինի տեղայնացված՝ ըստ իր շրջագծի, այնպես որ միջամտության գոտիները, «որովայնային» ու «պարանոցային» միանան: Պարանոցային բրիգադը օգնում է կերակրափողի միասնական բլոկով դիսսեկցիայի ժամանակ շնչափողի բիֆուրկացիայի տակ, ապահովելով ասպիրացիան ու լուսավորումը: Այն կարող է հատկապես օգտակար լինել մեծ ուռուցքների պարագայում: Վերջապես կերակրափողի պարանոցային հատվածը կտրվում է գծային կարող գործիքով և ներքաշվում է որովայնի խոռոչ: Միջնորմային փուլը ավարտվում է հեմոստազի ստուգումով ու տեսանելի ավշագեղձերի հեռացումով՝ հիվանդության փուլի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն ստանալու համար:

Փուլ 5. Կերակրափողի արմատական տրանսհիատալ մասնահատում էնդոդիսսեկցիայով, ստորին միջնորմի և ստոծանու կերակիափողային անցքի դիսսեկցիա

Որովայնի կտրվածքից /որովայնահատում շուռ տված «T» տառի ձևով, պահող ռետրակտորների տեղադրմամբ/ և լյարդի ձախ բլթի տեղայնացումից հետո պետք է հայտնաբերվի ստոծանու կերակրափողային անցքը:

Կիրառվում է երկկողմանի ենթակողային կամ միջային կտրվա՛ծք, սովորաբար լապարատոմիայից անմիջապես առաջ կատարվում է լապարասկոպիա: էքսպոզիցիան օպտիմալ է ռետրակտորների կիրառման ժամանակ /օրինակ Թոմփսոնի/: Լապարատոմիայի ընթացքում մանգաղաձև կապանը պահպանվում է հետագայում ստամոքս–տասներկումատնյա զարկերակի ծայրա՛ի փակման համար:

Ուռուցքի մետաստատիկ տարածման գնահատում՝

- բիոպսիայով ապացուցված լյարդի կամ որովայնամզի՛ մետաստազները՛ հանդիսանում են հակացուցում պանկրեատոդուոդենալ մասնահատման համար,
- ներվիրահատական լյարդի գերձայնային սոնոգրաֆիան իրականացվում է ընտրողաբար, երբ ՀՇ-ն չի տվել որոշակի հստակ արդյունք,
- ավշագեղձերի բիոպսիան, սառեցված կտորներով, հետազոտման համար մնում է վիճելի խնդիր: Ոչ մեծ վիրահատական ռիսկի պայմաններում, ավշագեղձերի մետաստատիկ ախտահարումը չի հանդիսանում բացարձակ հակացուցում պանկրեատոդուոդենալ մասնահատման համար, հատկապես այն իրականացվում է որպես կոմպլեքսային բուժման մաս՝ ուռուցքաբանական սկզբունքներով ավշահատումով:

Բարձր վիրահատական ռիսկովիվանդների մոտ /ուղեկցող հիվանդություններ կամ ուռուցքաբանական զգուշավորություն/, դրական ռեզիոնալ ավշային գեղձերը հանդիսանում են հակացուցում պանկրեատոդուոդենալ մասնահատման համար:

Նախ և առաջ իրականացվում է մուտք դեպի ճարպոնային գրպանիկ, լայնաձիգ հաստ ուղուց մեծ ճարպոնի անջատումով:

Փուլ 1 /շարունակություն/ Վերին միջընդերային երակի առանձնացումը ենթաստամոքսային գեղձի տակ

- որպեսզի մերկացվի տասներկումատնյա աղու ամբողջ պայտը, տեղայնացվածեն վերել հաստ աղին ու նրա լյարդային անկյունը: Այս փուլում վիրացերալ որովայնամզի հատումով մինչև Տրեյցի կապան, տեղայնացվածէ բարակ աղու միջընդերքի արմատը:

– ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի երկայնքով միջին հաստաղիքային անոթներից ձախ ու աջ հատվում է որովայնամիզը, հայտնաբերելուհամար միջին հաստաղիքային երակի միացումը վերին միջընդերային երակին:

– վերին միջընդերային երակի լրիվ առանձնացման համար ենթաստամոքսային գեղձի ստորին եզրով նրանիհանելուտեղիցանմիջապեսվերհատվումէ միջին հաստաղիքային երակը, նվազեցնելով, ձգման ժամանակ, վերին միջընդերային երակի վնասման հնարավորությունը:

– պարտադիր չէ խորացնել դիսսեկցիան վերին միջընդերային երակի առաջային և ենթաստամոքսային գեղձի վզիկի հետին պատի հարթությունում, քանի որ գեղձի գլխիկի ուռուցքները գործընթացի մեջ ներառում են երակի հետին կողմնային պատը կամ նրա դռներակին միանալու տեղը, բայց ոչ այդ անոթների առաջային պատը: Նաև այս փուլում հազվադեպ է առաջանում անհրաժեշտություն հատելու ստամոքս-ճարպոնային երակը /բացի այն դեպքերի, երբ նա միջին հաստաղիքային երակի հետ կազմում է մեկ բուն /, այս անոթը առավել դյուրին է մեկուսել ենթաստամոքսային գեղձի հատումից հետո:



Փուլ 2. *Ընդլայնված Կոխերի գործողություն*

Այս գործողությունը սկսվում է տաճերկումատնյա աղու հորիզոնական մասից ստորին սիներակի առանձնացումով: Ամբողջ ֆիբրոզ-ճարպային հյուսվածքն ու ավշայինհանգույցները, որոնքտեղակայվածեն միզածորանից մեդիալ և ստորին սիներակից առաջ ներառվում են հեռացվող բլոկի մեջ:

Ենթաստամոքսային գեղձի գլխիկն ու տասներկումատնյա աղիի՝ մինչև ձախ երիկամային երակի գլխամասային եզրը /որտեղ այն հատում է աորտան/, լրիվ տեղայնացվում են: Վերին միջընդերային զարկերակի էքսպոզիցիան այս մակարդակում, կարելի է ապահովել տասներկումատնյա աղու հետ ենթաստամոքսային գեղձի գլխիկի մեդիալ ռոտացիայով և պերիներալ հյուսվածքների հատումով՝ նրա առաջին 2սմ-ից ավելի լատերալ:



Փուլ 3. *Լյարդի դրունքի դիսեկցիա*

Մերկացվում է ընդհանուր լյարդային զարկերակը և նրանիցառաջ՝ աջստամոքսայինաստամոքս-տասներկումատնյազարկերակներից Պրոքսիմալտեղակայվածավշագեղձերըհեռացվում: Դռներակը տեղակայված է ընդհանուր լյարդային զարկերակի ստորին եզրի հետևում, ստամոքս-տասներկումատնյա զարկերակի աջատման տեղից անմիջապես պրոքսիմալ:

Աջ ստամոքսային ու աստամոքս-տասներկումատնյա զարկերակները կապվում են և հատվում: Եթե ուռուցքը տարածվում է մի քանի միլիմետր ստամոքս-տասներկումատնյա զարկերակի վրա, անջատման ժամանակ մի փորձեք բութ կերպով առանձնացնելնրա հիմքը, դրա փոխարեն, ավելի պրոքսիմալ առանձնացրեք ընդհանուր լյարդային զարկերակը և ավելի դիստալ՝ լյարդի սեփական զարկերակը, որից հետո միայն հիմքի մոտ հատեք ստամոքս-

տասներկումատնյա զարկերակը: Լյարդային զարկերակը փխրուն է, ագրեսիվ բութ դիսսեկցիան կարող է բերել նրա ինտիմիայի լոսկուտի առաջացման:

Իրականացվում է խոլեցիտէկտոմիա և ընդհանուր լյարդային ծորանը պարկային ծորանին միաձուլու տեղում հատվում է, որով փաստորեն մերկացվում է ծորանի տակով անցնող դռներակը: Մանրակրկիտ շոշափումով, լեղածորանի հատումից առաջ, վիրաբույժը պետք է ճշգրտի վերին միջընդերային զարկերակից անջատվողու լեղածորանի կողմնային պատի հետևով ընթացող աբերանտ աջ լյարդային զարկերակի հնարավորգոյությունը:

Ուշադրություն՝ եթե Վինսլոու-ի անցքը փակված է կպումներով այն պետք է Կոխերի գործողության ժամանակ վերականգնվի: Վինսլոուի անցքին մոտեցումը անհրաժեշտ է լյարդի դրունքի շոշափման ու աբբերանտ աջ լյարդային զարկերակի հայտնաբերման համար:

Լեղու արտահոսքի կանխման համար, հատված ընդհանուր լյարդային ծորանի վրա, մինչև նրա վերակառուցումը, դրվում է փափուկ սեղմիչ:

Դռներակից առաջ ավելի պոչային ուղղությամբ տեղակայված շարակցական հյուսվածքը բութ կերպով փեղեքվում է: Այստեղ խորհուրդ չի տրվում լայնորեն տեղայնացնել դռներակը, քանի որ, նրա յատրոգեն վնասումը, մինչև ստամոքսի ու ենթաստամոքսային գեղձի հատում, կարող է բերել զգալի արյան կորստի՝ ոչ բավարար էքսպոզիցիայի հետևանքով:

Պետք է լինել զգույշ և հիշել լյարդի անոմալ զարկերակային արյան մատակարարման հնարավոր տարբերակների մասին: Ոչ հաճախ լյարդային զարկերակը /ստամոքս-տասներկումատնյա զարկերակի անջատման տեղից ավելի դիստալ/ անցնում է դռներակի հետևով: Հավելյալ կամ աբերանտ աջ լյարդային զարկերակը ևս կարող է անցնել դռներակի հետևով ու լատերալ, բայց սկիզբառնել ոչ թե ընդերային ցողունից, այլ վերին միջընդերային զարկերակից: Աջ լյարդային զարկերակը պետք է պահպանել: Ընդհանուր լյարդային զարկերակը ևս կարող է անջատվել վերին միջընդերային զարկերակից:



Փուլ 4. Ստամոքսի անտրալ հատվածի հատում /կամ տոտալ սուբտոտալ, եթե պլանավորվում է պահպանել նախադուռը/

Մինչև ստամոքսի հատումը, փոքր կորության երկայնքով, կապվում են ու հատվում ձախ ստամոքսային զարկերակի տերմինալ ճյուղերը:

Փոքր կորությամբ, երրորդ կամ չորրորդ լայնակի երակից մինչև մեծ կորության ստամոքս-ճարպոնային երակի միացում, ստամոքսը գծային ստեպլերի օգնությամբ հատվում է:

Մեծ ճարպոնը հատվում է մեծ կորությանը մոտեցող տեղից:

Ոչ մեծ պերիամպուլյար ուռուցքներով հիվանդների մոտ կարելի է իրականացնել ստամոքսախոռոչահատում նախադռան պահպանումով: Նման միջամտության խորհուրդ չի տրվում կատարել ենթաստամոքսային գեղձի գլխիկի տարածքի ուռուցքների ժամանակ, ուռուցքային գործընթացի մեջ տոտալ սուբտոտալ աղու առաջին-երկրորդ չափաբաժինների ներգրավման, ինչպես նաև պոզիտիվ պիլորիկ ու պրեպիլորիկ ավշագեղձերի պարագայում:

Հնարավորության դեպքում, ստամոքս-ճարպոնային անոթային աղեղը և տոտալ սուբտոտալ աղին հատվում են նախադռից 3սմ ոչ պակաս հեռավորության վրա: Սակայն վերակառուցման ժամանակ տոտալ սուբտոտալ աղուց հատվում է ևս 1.0-1.5սմ և դուոդենոյեյունոստոման ձևավորվում նախադռից 1.0-1.5սմ-ի վրա, որտեղպրյամոտակպրոքսիմը համարժեք է:



Փուլ 5. *Բարակ աղու հատում*

Փոքր կպումներից Տրեյցի կապանի առանձնացման ժամանակ, հատուկ ուշադրություն է դարձվում ստորին միջընդերային երակի պահպանմանը: Բարակաղիի հատվում է կապանից մոտավորապես 10սմ դիստալ՝ գծային կարող գործիքով: Միջընդերքը կապվում է ու հատվում:

Այս դիսսեկցիան շարունակվում է տասներկումատնյա աղու չորրոդ ու հինգերորդ հատվածների վրա: Դեվասկուլյարիզացված տասներկումատնյա աղիները ընդերային անոթներից հետ:



Փուլ 6. Ենթաստամոքսային գեղձի հատումն ու հետորովայնամզային դիսեկցիայի ավարտը

Առավել կարևոր ու վիրահատության դժվարին հատվածէ գեղձի լրիվ տեղայնացումը վերին միջընդերային երակի մ դռներակի հատման տեղում և հեռացվող բլոկի անջատումը վերին միջընդերային զարկերակի լատերալ եզրից:

Ենթաստամոքսային գեղձի վզիկի վերին ու ստորին եզրերից դրվում են կարեր- բռիչներ: Պետք է հիշել, որ շատ դեպքերում ստորին եզրի մոտ կա ոչ մեծ զարկերակ:

Ենթաստամոքսային գեղձըէլեկտրադանակով հատվում է դեպի ներքև մինչև վերին միջընդերային երակի ու դռներակների միացման տեղի առաջային մակերես:

Եթե ուռուցքը մոտ է աճում այս երակներին, ապա ենթաստամոքսային գեղձը կարելի է հատել ավելի դիստալ՝ նրանց միացման մեդիալ եզրի երկայնքով և պատրաստվել երակի սեգմենտար մասնահատման:

Հեռացվող հյուսվածքները տարվում են դիպի աջ, որից հետո անջատվում դռներակից ու վերին միջընդերային երակից՝ կապելով ու հատելով գեղձի գլխիկից ու կեռիկանման ելունից եկող առանձին երակային ճյուղերը: Պետքէուշադրություն դարձվի երակների միացման տեղի ու կողմնային պատերի հետ ուռուցքի փոխհարաբերությանը, ինչը կարելի է տեսնել միայն ստամոքսի ու ենթաստամոքսային գեղձի հատումից հետո:

Այդ փոխհարաբերությունը հնարավոր չէ ճշգրիտ գնահատել ներվիրահատական սովորական դիսսեկցիայի իրականացման ընթացքում՝ ենթաստամոքսային գեղձի վզիկի հետին պատի ու երակների միացման տեղի առաջային պատի հարթությունում: Այդ իսկ պատճառով այս հնացած գործողությունը վիրահատության վաղ փուլում այլևս չի կիրառվում:



Փուլ 7. Կեռիկանման ելունի հեռացում

Վերին միջընդերային երակի ու դռներակի միացման տեղի տեղայնացման և վերին միջընդերային զարկերակի նույնականացման համար պահանջվում է կեռիկանման ելուճի լրիվ անջատում վերին միջընդերային երակից ու նրա առաջին բարակ աղիքային ճյուղից /որը անցնում է վերին միջընդերային երակի հետևով/: Այն անջատվելով վերին միջընդերային երակի աջ հետին կողմնային պատից /ելուստի մակարդակից/, անցնում է վերին միջընդերային զարկերակից հետ և մտնում բարակաղու մեդիալ /պրոքսիմալ/ հատված, տալով մեկ կամ երկու ճյուղեր անմիջապես ելուստին, որոնք անհրաժեշտ է հատել: Եթե ուռուցքի տարածումը վերին միջընդերային երակի վրա թույլ չի տալիս իրականացնել անոթից կեռիկանման ելունի անջատում, առաջին բարակաղիքային ճյուղը կարելի է հատել /այս դեպքում հայտնաբերվում է վերին միջընդերային զարկերակը՝ համանուն երակից ավելի միդիալ/: Վերին միջընդերային երակի

վնասումը առաջին բարակաղիքային ճյուղի մակարդակին /այն անցնում է վերին միջընդերային զարկերակից հետ/ դժվար է հաղթահարել: Նման իրավիճակը առավել հաճախ դառնում է վերին միջընդերային զարկերակի յատրոգեն վնասումների պատճառ, երբ փորձում են մինչև միջընդերային զարկերակի առաջնացումը կար դնել վնասված երակի վրա:

Փուլ 8. Վերին միջընդերային երակի աջ կողմի ազատումը

Վերին միջընդերային երակի ու դաշերակի միացման տեղից մեդիալ տեղաշարժը թույլ է տալիս հայտնաբերել վերին միջընդերային զարկերակը, հեշտացնելով ենթաստոմքսային գեղձի գլխիկի ու փափուկ հյուսվածքների անջատումը վերին միջընդերային զարկերակի աջ կողմնային պատից, նրա պրոքսիմալ հատվածում: Երակների միացման տեղի ոչ լրիվ անջատումը և վերին միջընդերային զարկերակի ոչ բավարար էքսպոզիցիան սովորաբար թույլ չեն տալիս ապահովել մասնահատման դրական եզրեր, վերին միջընդերային զարկերակի հոմոգրաֆոլոգիական ելուկի և միջընդերքի փափուկ հյուսվածքների ոչ լրիվ հեռացման հետևանքով:



Փուլ 9. Ստորին ենթաստամոքս-տասներկումատնյա զարկերակի կապում

Բացի այդ, երակների միացման տեղի ոչ լրիվ տեղայնացումը, վատ էքսպոզիցիայի հետևանքով, կարող է բերել վերին միջընդերային զարկերակի վնասման: Հետվիրահատական հետորովայնամզային արյունահոսությունների հիմնական պատճառը ստորին ենթաստամոքս-տասներկումատնյա զարկերակի անջատման ու հուսալի կապման անհնարինությունն է, քանի որ անոթները կարող են կծկվել և հետվիրահատական շրջանում արյունահոսել:



Փուլ 10. Հետորովայնամզային եզրը

Որպեսզի ապահովվի հետագա ծխախոտային հետորովայնամզային եզրի ճիշտ գնահատման այլ ախտաանատոմիական տվյալներ, պրեպարատը պետք է անհրաժեշտ ձևով նշագրել: Վերին

միջընդերային զարկերակի պրոքսիմալ 3-4սմ-ի մոտ փափուկ հյուսվածքը ներկայացնում է պրեպարատի հետորովայնամզային եզրը և պաթոլոգի կողմից նշվում է պլանային հյուսվածաբանական հետազոտման համար: ՀՇ-ի տվյալների հիման վրա ճիշտ նախավիրահատական պլանավորման դեպքում, հետորովայնամզային եզր չպետք է լինի: Միկրոսկոպիկ դրական հետորովայնամզային եզր հայտնաբերվում է մասնահատումների 10-20% դեպքերում /R1 մասնահատում/: Ենթաստամոքսային գեղձի մասնահատման ու ընդհանուր լարդային ծորանի եզրերը պետք է ուղարկվեն շտապ հյուսվածաբանական հետազոտության:



Փուլ 11. Անոթային վերակառուցում

Ուռուցքի ներաճը միջընդերային երակային դաշերակի միացման լատերալ պատին հնարավորություն չի տալիս անջատել նրանց ենթաստամոքսային գեղձից և նրա կեռիկոմման ելունից, խոչընդոտելով երակների միացման տեղի մեդիալ տեղաշարժին /ինչպեսհաև, պրեպարատի լատերալ տեղաշարժին/: երակային սեգմենտար մասնահատման ստանդարտ տեխնիկան ներառում է փայծաղային երակի հատում: Այն թույլ է տալիս լրիվ մերկացնել վերին միջընդերային զարկերակը համանուն երակից ավելի մեդիալ և վերին միջընդերային երակի ու դաշերակի համար ստեղծել հավելյալ շարժունակություն /քանի որ փայծաղային երակը այլևս նրանց չի ֆիքսում/ առաջնային երակային բերանակցման համար: Հետորովայնամզային դիսսեկցիան ավարտվում է աորտայից առաջ և մերկացված վերին միջընդերային երակից աջ փափուկ հյուսվածքների սուր անջատումով, որից հետո պրեպարատը մնում է կապված միայն

երակների միացման տեղի հետ: Ուռուցքի մեջ ներառված երակային սեգմենտի վրա 2-3 սմ ավելի պրոքսիմալ /դեպի սիրտ/ և դիստալ /վերին միջընդերային երակի վրա/ դրվում են անոթային սեղմիչներ, որից հետո երակի հատումը թույլ է տալիս հեռացնել պրեպարատը: Եթե փայծաղային երակը հատված է, ապա կարելի է մասնահատել երակների միացման շրջանի սեգմենտ, ոչ պակաս 2-3սմ երկարությամբ՝ առանց հետագա պրոտեզավորման: Երակային մասնահատումը միշտ իրականացվում է վերին միջընդերային զարկերակի ներհոսքի փակմանը նախորդում՝ բարակ աղու այտուցը բացառելու համար /ինչը դժվարացնում է ենթաստամոքսային գեղձի ու լեղուղիների վերակառուցումը/: Վերին միջընդերային զարկերակի փակումից առաջ սովորաբար իրականացվում է համակարգային հեպարինիզացիա, երակների ազատ եզրերը համադրվում են 6-0 պոլիպրոպիլենի առանձին կարերով:



Փուլ 12. Վերին միջընդերային երակի վերակառուցում

Եթե ուռուցքային ինվազիան սահմանափակվում է վերին միջընդերային երակով, փայծաղային երակի դեպի դեպի երակի միացումը պահպանվում է: Փայծաղային երակի միացման պահպանումը չի խանգարում բերանակցման ձևավորմանը, միայն երբ սեգմենտար մասնահատման երկարությունը 2 սմ-ից ավելի է, մինչդեռ մյուս դեպքերում այն սահմանափակում է դեպի երակի շարժունակությունը: Այդ պատճառով հաճախ փայծաղային երակի պահպանումով վերին

միջընդերային երակի մասնահատմանժամանակ օգտագործվում է ներքինծայրերակիցվերցրած ներդիր տրանսպլանտանտ: Փայծաղային երակի պահպանումը զգալի չափով դժվարացնում է երակային վերակառուցումը, խանգարելով վերին միջընդերային զարկերակի պրոքսիմալ 3-4սմ-ին հասնելը /վերին միջընդերային երակից ավելի մեդիալ/: Երակային մասնահատումն ու վերակառուցումը կարելի է իրականացնել կամ մինչև վերին միջընդերային զարկերակի աջ կողմնային պատից պրեպարատի անջատումը, կամ այդ զարկերակից պրեպարատի լրիվ դիսսեկցիայից հետո: Երկու եղանակներն էլ պահանջում են պանկրեատոդուոդենալ մասնահատման մեծ փորձ:



Փուլ 13. Ենթաստամոքսային գեղձի վերակառուցում

Ենթաստամոքսային գեղձի մնացորդը, 2-3 սմ խորության վրա, տեղայնացվում է հետորովայնամզային տարածությունից և փայծաղային երակից, որպեսզի ստեղծվեն պայմաններ աղիք-ենթաստամոքսային բերանակցման կարերը դնելու համար: Հատված բարակաղիհետհաստաղիքային ուղիով անցկացվում է միջային հաստաղիքային անոթներից ավելի ձախ: Եթե պանկրեատիկ ծորանը լայնացած չէ, նպատակահարմար է ձևավորել "ծայրը-կողքին" երկշարք պանկրեատոեյունոստոմա, ոչ մեծ ստենտի տեղադրումով: Արտաքին շարքը դրվում է 4-0 մոնոֆիլամենտ թելի առաձին հանգուցակարերով: Ներքին շարքը՝ առանձին 4-0 կամ 5-0 մոնոֆիլամենտ կարերով, համադրելով պանկրեատիկ ծորանի պատը բարակաղուեի՝ նրա ամբողջ հաստությամբ: Հետին հանգույցները կապվում են դեպի ներս, մինչդեռ կողմնային ու առաջային

հանգույցները՝ դեպի դուրս: Եթե կիրառվում է ստենտ ապա այն անցկացվում է բերանակցման միջով մինչ առաջային կարերի կապումը, այնպես որ նրա եզրերը 2սմ տարածության վրա մոնոպրոպիլենային ծորան ու բարակ աղի:



Փուլ 14. Լեղուղիների վերակառուցում

Պանկրեատոյեյունոբերանակցումից ավելի դիստալ ներծծվող մոնոֆիլամենտ կարերով / 4-0/ ձևավորվում է “ծայրը-կողքին” միաշարք հեպատիկոյեյունոբերանակցում /այն չի ստենավորվում նույնիսկ ծորանի սովարական չափերի պարագայում/:

Բրակպոլին լեղածորանի հետ համադրվում է այնպես, որ պանկրեատիկ ու լեղային բերանակցումներում խուսափենք ձգվածությունից:



Փուլ 15. Ստամոքսի կամ տասներկումատնյա աղու վերակառուցում

Գաստրոդյուոդենոստոմայի ձևավորվում է առաջ հաստաղիքային եղանակով՝ ձեռքի երկշարք կարով: Եթե նախադուռը պահպանված է, ապա ձեռքի միաշարք կարով մոնոֆիլամենտ ներծծվող թելով իրականացվում է “ծայրը-կողքին” դոդենոյեյունոբերանակցում: Տարածությունը լեղային ու ստամոքս/տասներկումատնյա աղիքային բերանակցումների միջև պետք է լինի 50սմ, որպեսզի բացառվի ստամոքսային պարունակության ռեֆլյուքսը:

Գաստրոյեյունոբերանակցումից ավելի դիստալ, Վիտցելի եղանակով, տեղադրվում է 10Fr լայնությամբ յեյունոստոմիկ խողովակ, հետվիրահատական էնտերալ սնուցման համար:

Որպեսզի ծածկվի ստամոքս-տասներկումատնյա զարկերակի ծայրատը, մանգաղաձև կապանը տեղադրվում է ընդհանուր լյարդային զարկերակի և բերող բարակ աղու գալարի միջև: Այն թույլ է տալիս բացառել ստամոքս-տասներկումատնյա զարկերակի ծայրատի պսևդոանևրիզմայիզացումը, պանկրեատիկ բերանակցման անբավարարության և թարախակույտի առաջացման պայմանները:



Հետվիրահատական հետազոտություններ.

- ✓ Հեմոգլոբին, լեյկոցիտներ, տրոմբոցիտներ,
- ✓ էլեկտրոլիտներ, կրեատինին,
- ✓ շիճուկային ամիլազայի ակտիվության որոշում,
- ✓ ամիլազայի ակտիվությունը դրենաժով արտահոսող արտադրանքում,
- ✓ ընդհանուր շիճուկային բիլիրուբին,

- ✓ լեյկոցիտոզի կամ սեպսիսի առավել հաճախ պատճառ է հանդիսանում պանկրեատոյեյունոբերանակցման անբավարարությունը:

Տեղային բարդություններ

Մոտակա

- Ներորովայնային թարախակույտ՝ պանկրեատիկ բերանակցման անբավարարություն,
- Դողուսպրսուռ, լեյկոցիտոզ, անանցանելիություն, որովայնի փքում, սովորաբար վիրահատությունից 4-5 օրհետո: ՀՇ-ի հսկողության տակ ասպիրացիա և մաշկի միջով ինֆեկցված հեղուկի դրենավորում, որովայնի ու կոնքի ՀՇ,
- Աղիքի ու ստամոքս-տասներկումատնյա զարկերակի միջև խոցղակ,
- Ստամոքս-աղիքային ուղուց կամ դրենաժային կապուղուց արյունահոսություն հետվիրահատական առաջին 10 օրերի ընթացքում: Սովորաբար պանկրեատիկ բերանակցման անբավարարության հետևանքով, շրջակա հյուսվածքների ինֆեկցիան ու բորբոքումը բերում են ստամոքս-տասներկումատնյա զարկերակի ծայրատի պատռման: Ընտրության եղանակ է անգիոգրաֆիան լարդային զարկերակի ստենտավորումով կամ էմբոլիզացիայով, վիրահատական միջամտությունը կարող է քննարկվել որպես վերջին միջոց:
- Ստամոքսի դատարկման դանդաղում: Ստամոքսի վատ դատարկման ժամանակ, յեյունոստոմիկ խողովակի տեղադրումը թույլ է տալիս կիրառել էնտերալ սնուցում, խուսափելով ներերակային սնուցումից:

Հետաձգ

- Ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի հեռավոր ու տեղային կրկնություն, գեղձի բունոցում, մետաստազներ լարդում, թոքերում և որովայնամզում
- Էկզոկրին /~40%/ կամ էնդոկրին /~20%/ անբավարարության զարգացում,
- Պանկրէատիկ բերանակցման նեղացում, կրկնվող պանկրեատիտով կամ պանկրեատիկ ցավերով,
- Բարակ աղու անանցանելիության:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Գնահատեք ուռուցքի մասնահատելիությունը մինչև վիրահատությունը, ուռուցքի ու վերին միջընդերային երակի ու զարկերակի միջև փոխհարաբերությունները բարդ են, և հրահանգավորվող չէ գնահատել մինչև ստամոքսի ու տասներկումատնյա աղու հատումը:
- Զփորձեք բութ եղանակով առանձնացել ստամոքս-տասներկումատնյա զարկերակի անջատման տեղը, քանի որ ինտիմայի դիսեկցիան կարող է բերել լարդային

զարկերակի օկլյուզիայի /խցանման/: երբ ուռուցքը մոտ է տեղակայված ստամոքս-տասներկումատնյա զարկերակի հիմքին, լյարդային զարկերակը առանձնացրեք նրանից վերև ու ենրքև և զարկերակը հատեք նրա անջատման տեղում, առաջացած արտերիոստոմիան կարելի է փակել 6-0 պոլիպրոպիլենով՝ անոթային ներդիրով կամ առանց նրա:

- Միշտ ամբողջությամբ տեղայնացրեք վերին միջընդերային երակի միացման տեղը, մերկացնելով վերին միջընդերային զարկերակը, հանեք տեսողական հսկողությունը թույլ տա խուսափել վերջինիս վնասումից:
- Պանկրեատիկ ու լեղային վերակառուցումների համար բարակաղիքն անցկացվում է հետ հաստաղիքային ուղիով, այսպես հետորովայնամզային /մասնահատված տասներկումատնյա աղու լուծույթ/: Կտրվածքը լայնածիգ հաստ աղու միջընդերքում իրականացվում է միջային հաստ աղիքային զարկերակից ավելի ձախ:

ԵՆԹԱՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ԳԵՂՋԻԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ներածություն

1959թ. Letton-ն ու Wilson-ը հայտնեցին ենթաստամոքսային գեղձի վզիկի տրավմատիկ պատռվածքի հետո, առանց մանրադիտակային առաջին բուժման մասին: Հիվանդի մոտ գեղձի գլխիկի աջ ծայրատը խուլ կարվել էր, իսկ մարմնի ձախ մասում պոչը բերանակցվելբարակ աղիքային Y-ա ձև գալարի հետ՝ լյոՌու-ի: 1984թ. Dagrrad-ն ու Serio-ն հայտնեցին ինսուլոմայի կապակցությամբ ենթաստամոքսային գեղձի առաջին կենտրոնական մասնահատման մասին, իսկ 1988թ. Fagniez-ը, Kracht-ը և Rotman-ը ինսուլոմայով և սերոզ ցիստադենոմայովևս երկու հիվանդներիմոտ: Ներկայումս իրականացվել են 150-ից ավել կենտրոնական մասնահատումներ առանց մահացու ելքերի: Կենտրոնական մասնահատումը ներառում է ենթաստամոքսային գեղձի վզիկի և/կամ մարմնի պրոքսիմալ հատվածներում տեղակայված բարորակ ուռուցքների և սահմանային գոյացությունների անատոմիական հեռացում, երկու կողմերից 1սմ լայնությամբ չփոփոխված հյուսվածքներիհետ: Խնդիրը կայանում է 5 սմ-ից ոչ քիչ բնականոն մարմին/պոչ պահպանելու մեջ, որը ձախակողմյան մասնահատման դեպքում լիով կհեռացվեր:

1. *Ցուցումներն ու հակացուցումները*

Ցուցումները՝

- կենտոնական տեղակայմամբ, ոչ մեծ օջախային գոյացություններ /5սմ-ից փոքր չափերի/՝ անհասանելիէնուկլեյացիայի համար,
- ենթաստամոքսային գեղձի վզիկի տրավմատիկ պատռվածքներ,

- բարորակ, սահմանային կամ բարձր տարբերակման չարորակ ուռուցքներ /եզոֆագի նեյրոէնդոկրին ուռուցքներ, շճային կամ լորձային կիստոզ ուռուցքներ, սոլիդ պսևդոպապիլյար ուռուցքներ, իրական սոլիտար ուռուցքներ, ալիտար կիստաներ և այլն/,
- ենթաստամոքսային գեղձի դիստալ ծայրատի 5սմ-ից ոչ պակաս պահպանում:

Հակացուցումներ՝

- ենթաստամոքսային գեղձի չարորակ հիվանդություններ,
- ենթաստամոքսային գեղձի ընդգրկում հարևան օրգաններից առաջացած չարորակ ուռուցքի մեջ,
- ինսուլին-կախյալ շաքարախտ:

Հարաբերական հակացուցումներ՝

- մեծահասակ հիվանդներ />70տարի/,
- բարձր վիրահատական ռիսկ,
- ինսուլին կախյալ շաքարախտ:

2. ***Նախավիրահատական հետազոտություններ և վիրահատության պատրաստում***

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ էնդոկրին համասախտանիշ /հիպոգլիկեմիա, սուր պանկրեատիտ, ցավ որովայնի վերին հատվածում/ անամնեզում:
- ✓ Կլինիկական հետազոտություններում հարկ է բացառել էկզոկրին անբավարարության հետ կապված լուծի, շաքարախտի և պորտալ հիպերտենզիայի նշանները:
- ✓ Լաբորատոր հետազոտություններից կարևորվում են ամիլազան, լիպազան և/կամ պեպտիդային հորմոններ ու ինսուլինը, գաստրինը, գլյուկագոնը, վազոակտիվ ինտեստինալ պոլիպեպտիդը, սոմատոստատինը, քրոմոգրաֆին A-ն, ուռուցքային մարկերները /CA 19-9, CEA, MCA և այլն/: Եթե կասկածվում է էնդոկրին ուռուցք, պետք է պահպանել շիճուկի և/կամ պլազմայի նախավիրահատական նմուշները, համեմատական հյուսվածաբանական և իմունոքիմիական հետազոտությունների անցկացման համար:
- ✓ Ճառագայթային եղանակների կիրառումը կարևոր է տարբերակիչ ախտորոշման և ուռուցքի մասնահատելիության գնահատման համար՝ ԳՋՀ, ՀՇ, ՄՌՇ կամ էԳՍ: Ինչպես նաև.

ա/ էնդոկրին ուռուցքներիժամանակ սցինտիգրաֆիա III Yո՝ պենտետրեոտիդով /OctreoScan/,.

բ/ պոզիտրոն էմիսսիոնային շերտանկարում /ՊԷՏ/, բարորակ ու չարորակ ուռուցքների տարբերակմանհամար:

Հիվանդի պատրաստում՝ նախավիրահատական կանխարգելիչ հակաբակտերիալ թերապիա, կենտրոնական մասնահատման ժամանակ սոմատոստատինի նմանակներև հատուկ հետազոտություն չի կատարվում:

Վիրահատություն

Փուլ 1. Ենթաստամոքսային գեղձի կենտրոնական հատվածի էքսպոզիցիա

Օպտիմալ մոտեցում էհամարվում միջային կտրվածքը: Ենթաստամոքսային գեղձը առանձնացվում է, մեծ ճարպոնը անջատելովմիջածիգ հաստ աղուց և միջին հաստաղիքային անոթների ազատումով մինչև գեղձի վերին մակերեսի լրիվ բացում:

Վերին միջընդերային երակը նույնականացվում է և նրա առաջային մակերեսը գեղձի վզիկից ներքև մաքրվում: Պետք է լինել զգույշ, չվնասելառհամար երակային ճյուղերը, հատկապես եթե նրանք V տառի ձևով միացումներ են կազմում աջ ստամոքս-ճարպոնային երակի հետ: Եթե նորագոյացությունը իրաջեզրով չի հասնում վերին միջընդերային երակիդուռերակի անցմանն տեղին, ստամոքս-ճարպոնային անոթները պահպանվում են:



Փուլ 1. /շարունակություն/

Հիվանդության տարածվածությունը գնահատվում է ներվիրահատական ԳՋՀ-ով, այն հատկապես օգտակար է նորագոյացության ոչ շատ խորը տեղակայման դեպքում: Մասնահատման պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնել ուռուցքի կողմից մեկական սմ նորմալ գեղձային հյուսվածք ներառող անհրաժեշտությունը:



-2

Փուլ 2. Ենթաստամոքսային գեղձի մասնահատվող մասի տեղայնացումը

Առպատային որովայնամիզը, հեռացման ենթակա մասում, ենթաստամոքսային գեղձի ստորին եզրով հատվում է էլեկտրադանակով, այնքան մինչև տեսանելի դառնա փայծաղային երակը: Պետք է ուշադիր լինել ընդերային ցողունից մինչև ստամոքս-տասներկումատնյա զարկերակ, ենթաստամոքսային գեղձի վերին եզրով, հաճախ ընթացող ոչ մեծ զարկերակներն ու երակներըկապելուս հատելուհամար:

Լյարդային զարկերակը տեղաշարժվում է դեպի վեր:

Եթե ուռուցքը տեղակայված է փայծաղային զարկերակի անջատման տեղից ձախ, ապա այն ևս պետք է տեղայնացվի մ տարվի դեպի վեր:





Փուլ 3. *Վերին միջընդերային ու փայծաղային երակների մոբիլիզացիան*

Ենթաստամոքսային գեղձը բջջանքերտով վզիկի ու վերին միջընդերային/փայծաղային երակների միջև, որտեղ սովորաբար անոթներ չկան, զգուշորեն անջատվում է: Հազվագյուտ դեպքերում, երբ դուոդենալ առաջային մակերես է թափվում ենթաստամոքսային երակ, գեղձը կարելի է հատել ներքևից, մինչև այդ երակի մերկացում, թույլ տալով հատել այն կապեղի միջև:

Ենթաստամոքսային գեղձը վերցվում է ժապավենի վրա և տեղաշարժվում դեպի առաջ ու վեր, թույլ տալով առանձնացնել մասնահատվող մասի հետին մակերեսով ընթացող ու փայծաղային երակ թափվող ճյուղերը: Որովհետև վերջինս զգուշորեն անջատվում է գեղձի մասնահատվող մասից:

Գեղձի պրոքսիմալ հատվածի հատումը /աջ կողմի/ սկսվում է նորագոյացությունից 1սմ պրոքսիմալ, իսկ գեղձի ձախ մասի տեղաշարժը դեպի առաջ կարող է բարելավել տեսանելիությունը և թույլ տալ կապել գեղձի հետին մակերեսից դեպի փայծաղային երակ ընթացող ճյուղերը:



Փուլ 4. *Ենթաստամոքսային գեղձի կենտրոնական մասի հեռացում*

Ենթաստամոքսային գեղձի հատվող գծերից պրոքսիմալ ու դիստալ դրվում են կարեր-բռնիչներ, որպեսզի փակվեն վերին ու ստորին պանկրեատիկ անոթները, որոնք անցնում են լայնակի դեպի պարենխիմա:

Գեղձը աջից կարող է նշտարով հատվել V-ա ձև կտրվածքով, ինչը թույլ է տալիս հետագայում ծայրատը կարել «ձգան բերանի» ձևով, լայնակի հատումը իրականացվում է ուռուցքից 1սմ ավելի ձախ կարելով ու կապելով կտրվածք մակերեսի տեսանելի արյունահոսող անոթները:

Պանկրեատիկ ծորանը գեղձի մնացուդ աջ կողմից կապվում ու կարվում է չներծծվող մոնոֆիլամենտ 5-0 թելով, իսկ գեղձի հյուսվածքը՝ սինտետիկ ներծծվող 3-0 կարերով՝ «ձգան բերանի» ձևով:

Ենթաստամոքսային գեղձի շատ բարակ վզիկը կարող է կարվել գործիքով /ստեպլերով/, իսկ արյունահոսությունը մանր զարկերակներից կանգնեցվել ներծծվող սինտետիկ կարերով, բացի այդ պետք է հայտնաբերվի ու առանձին կարով կապվի չներծծվող մոնոֆիլամենտ 5-0 թելով պանկրեատիկ ծորանը:

Կենտրոնական մասնահատման աջ սահմանը հանդիսանում է ստամոքս-տասներկումատնյա զարկերակի ձախ կողմը: Գեղձի հատումը այս զարկերակից ավելի աջ կարող է բերել ընդհանուր լեղածորանի վնասման:

Պրեպարատը, աջ ու ձախ մասնահատման եզրերի հետ ուղարկվում է շտապ հյուսվածքաբանական հետազոտության: Պրեպարատի մի կողմնատպված կարը հանդիսանում է կողմնորոշիչ նշան հյուսվածաբանի համար:



Փուլ 5. Ինվագինացիոն կամ խորասուզող պանկրեատիկոյեյունոբերանակցում

Գեղձի ձախ ծայրատը տեղայնացվում է 2.5-3սմ ավելի ձախ, կարերի առաջին շարքը չներծծվող 3-0 մոնոֆիլամենտ թելերով դրվում է բարակ աղու և գեղձի հետին մակերեսի միջև՝

եզրից 2,0 սմ-ի վրա: երկրորդ անընդհատ կարի շարքը, ներծծվող 3,0 մոնոֆիլամենտ թելով՝ աղու հատված եզրերը համադրում է ենթաստամոքսային գեղձի եզրերի հետ:

Առաջային շարքը ևս աղիքի պատի ու գեղձի ծայրատի կապսուլայի միջև դրվում է առանձին կարերով ծայրատի եզրից 2սմ տարածության վրա: Այս կարերով ծայրատի առաջին 2սմ-ը ինվագինացվում է աղիքի լուսանցք:

Եթե ենթաստամոքսային գեղձի ծայրատի չափերի մեծության պատճառով հնարավոր դժվարություններ խորասուզման համար, գործողության անվտանգ ավարտի եղանակներից մեկը՝բարակացու վերջին 2սմ-ի մկանային շերտի հատումն է:

Ինվագինացիան, ինչպես նկարագրված է վերևում, ձևավորված է ներքին լորձաթաղանթային ու արտաքին լիաշերտ օղերից:



Փուլ 6. Անաստոմոզի “ծորան լորձաթաղանթային” պանկրեատիկոյեյունոբերանակցում

Ենթաստամոքսային գեղձի ձախ ծայրատը կարեր-բռնիչների տեղից ավել չի տեղայնացվում, իսկ բարակ աղու եզրը փակվում է կարող գործիքով: Բարակացու միջընդերքին հակառակ կողմում բացվում է պանկրեատիկ ծորանի տրամաչափին համապատասխան փոքր անցք, փակված եզրից 3-4սմ հեռավորության վրա,և լորձաթաղանթը ներծծվող 6-0 մոնոֆիլամենտ թելերով ներհրվում ու ֆիքսվում էշճա-մկանային շերտին: Նույնիսկ ներծծվող 5-0 կամ 6-0 թելով երկու ասեղներով իրականացվում է “լորձաթաղանթը-լորձաթաղանթին”

բերանակցում, կարերիկապելըձևավորելով լուսանցքից դուրս: Այս գործում զգալի օգնում է օպտիկական մեծացման հնարավորությունը:

Առանձին 3-0 մոնոֆիլամենտ կարերով բարակ աղու պատը համադրվում է ենթաստամոքսային գեղձի ծայրատին ու առաջային մասին:





Հետվիրահատական հետազոտություններ.

- ✓ հետվիրահատական դիտարկում, ինտենսիվ թերապիայի բաժանմունքում,
- ✓ շիճուկային ամիլազայի և/կամ լիպազայի ակտիվության որոշում,
- ✓ դրենաժի արտահոսքում ամիլազայի և լիպազայի ակտիվության ստուգում:

Տեղային հետվիրահատական բարդություններ.

Մոտակա՝

- բերանակցման պատռվածք,
- պանկրեատիկ խոռոչակ,
- հետպանկրեատիկ թարախակույտ,
- ներորովայնային արյունահոսություն,
- սուր պանկրեատիտ,
- արտաստոծանիային թարախակույտ,
- փայծաղ-դռներակային թրոմբոզ,
- պլևրալ հեղուկ:

Հեռավոր՝

- ենթաստամոքսային գեղձի պսևդոկիստա,
- պանկրեատիկ ասցիտ,
- պանկրեատիտ,
- շաքարախտ:

Փորձառու վիրաբույժի խորհուրդները

- Եթե մոտեցումը վերին միջընդերային/դռներակի բնին բարդ է, խորհուրդ է տրվում կիրառել Կոխերի գործողությունը, որը հեշտացնում է արյան կանգնեցումը:
- Եթե վնասված է վերին միջընդերային/դռներակային բունը կամ նրա ճյուղերից մեկը, չխառնվեք և չփորձեք կատարել գործիք կիրառել: Սեղմեք երակային բունը ենթաստամոքսային գեղձի գլխիկի հետևով անցկացված մատերի միջև /Կոխերի գործողությունից հետո/ և մեծ մատնահեղուկով ենթաստամոքսային գեղձի առաջային պատի վրա: Կարեք պատռվածքը 5-0 պոլիպրոպիլներով:
- Եթե ենթաստամոքսային գեղձի ծայրատը շատ մեծ է ինվագինացիոն պանկրեատոյեյունո բերանակցման համար, ընտրեք «ծորանը լորձաթաղանթին» կամ պանկրեատիկոգաստրոբերանակցման տարբերակները: Ենթաստամոքսային գեղձի ձախ ծայրատի կարումը ուղեկցվում է նրա ֆիբրոզով, որը խախտում է էնդոկրին սեկրեցիան, կենտրոնական մասնահատման երկարաժամկետ առավելությունները հասցնելով զրոյի:

ԵՆԹԱՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ԳԵՂՁԻ ԴԻՍՏԱԼ ՄԱՍԱՀԱՏՈՒՄ

Ներածություն

Ենթաստամոքսային գեղձի ծորանային ադենոկարցինոմայի ախտանիշերի ուշ դրսևորումների ախտորոշման դժվարությունների հետևանքով դիստալ տեղակայմանուռուցքերի արմատական մասնահատումների հնարավորությունը շատ ավելի սակավեն, համեմատած գլխիկի քաղցկեղի հետ: Սակայն, եթեայնուամենայնիվ մասնահատումը հնարավոր է լինում իրականացնել, ապա դիստալ ծորանային քաղցկեղի արմատականհանեցումիցհետո ապրելիության ցուցանիշըհամապատասխանումէպրոքսիմալ մասնահատումներին: Ճառագայթային տեսանելիության եղանակների բարելավմանը, ինչպես նաև բարձր ռիսկիխմբիհանձնացմանսկրինինգիծրագրինացմանհետկապված, ենթաստամոքսային գեղձի դիստալ մասնահատումների քանակը ցուցաբերում է ավելանալումիտում: Ավելին, գեղձի մարմնում ու պոչում զարգացող կիստոզ ու չգործող նեյրոէնդոկրին ուռուցքները, հաճախ գնահատվում են որպես “մասնահատելի”:

Ցուցումներն ու հակացուցումները

Ցուցումներ՝

- ✓ ենթաստամոքսային գեղձի մարմնի ու պոչի ծորանային քաղցկեղ

Հակացուցումներ՝

- ուռուցքիտարածումնշոշոր ընդերային անոթների վրա /ընդերային ցողուն, փայծաղային զարկերակի պրոքսիմալ հատված կամ լյարդային զարկերակ/,
- տեղային կամ հեռավոր մետաստազավորում /լյարդ, որովայնամիզ, դիստալ ավշային հանգույցներ /ընդերային, վերին միջընդերային, կամ հաքաորտալ/,
- տեղային տարածումըդեպի փայծաղ, ստամոքս, հաստ աղի կամ ձախ երիկամ միշտ չէ որ հանդիսանում է մասնահատմանն հակացուցում:

Նախավիրահատական հետազոտության և պատրաստում վիրահատությունը

Նախավիրահատականհետազոտություններ՝

- ✓ Կարևորվումեն՝աշի կորուստը, ցավերը որովայնում ու մեջքի շրջանում, տարած պանկրեատիտը, առաջին անգամ հայտնաբերած շաքարախտը, ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի ընտանեկան անամնեզը:
- ✓ Կլինիկականտրտունհայտություններից՝ դեղնախտը, սնվածության վիճակը, ասցիտը, շոշափվող ձախ վերանրակային պորտալ հիպերտենզիայի նշանները /սպլենոմեգալիա, ստամոքսային վարիկոզ/:
- ✓ Լաբորատորհետազոտություններից՝ ուռուցքային մարկերները /CA 19-9, CEA/, լյարդային ցուցանիշները:

- ✓ Ուռուցքի փուլավորումնուսմասնահատման իրականացման հնարավորությունը գնահատվում էէՀԽՊԳ-ի, էԳՋՀ-ին և ՀՇ-ի միջոցով /հեռավոր մետաստազների և ուռուցքի խոշոր անոթների վրա տարածման բացակայություն/:

Հիվանդիպատրաստում՝ նախավիրահատական պատվաստումըմենինգոկոկի, մինիգոկոկի և Haemophilus influenzae-ի դեմ, հիվանդության լապարասկոպիկ փուլավորում /մինչև որովայնահատումը/, ֆիբ-ստոմոֆոգաստրոդուոդենոսկոպիա, միզապիկտոեռեր:

Վիրահատություն

Մուտեցում կախված կողային անկյան լայնությունից, նախապատվությունը տրվում է վերին միջային կամ ձախ ենթակողային կտրվածքին:

Փուլ 1.

Ֆիքսված ռոիկուլյով ռետրակտորի օգտագործումը զգալի հեշտացնում էախտահարվածքրջանի ցուցադրումը և որովայնի ստուգումը: Հեռավոր մետաստազների հայտնաբերման նպատակով /որովայնամիզ, լյարդ, հեռավոր ավշային ավազաններ/ որովայնի խոռոչը մանրակրկիտ ստուգվում է:

Ենթաստամոքսային գեղձի վենտրալ մակերեսի լրիվմերկացմանհամար /ստամոքս-տոսներկումատնյա զարկերակից մինչև փայծաղի դրունք/, ստամոքս-հաստաղիքային կապանի միջով բացվում է փոքր ճարպոնի խոռոչը:

Հաստ աղու փայծաղային անկյունը տեղայնացվում է դեպի ներքև, ստամոքսը տեղաշարժվում վեր, իսկ միջածիգ հաստ աղին դեպի ներքև բացելով ենթաստամոքսային գեղձի մարմինը:

Անոթները ստամոքսի մեծ կորության երկայնքով, նեղառայալ ստամոքսի կարճ անոթները, կապվում են բարակ մետաքսով և հատվում:



Փուլ 2. Ենթաստամոքսային գեղձի ու փայծաղի առանձնացում

Ուռուցքի եզրից ոչ շատ հեռու, ենթաստամոքսային գեղձի ստորին եզրով, որովայնամիզը էլեկտրադանակով հատվում է: Փայծաղը տեղայնացվում է հատելովիետին ու լատերալ ուղղություններով նրանմերըորովայնամզիհետ:

Փայծաղ-հաստաղիքային կապանի հատումը օգնում է չվնասել հաստ աղու փայծաղային անկյանը: Բիմանուալշոշափումով գնահատվում է ուռուցքի շարժունակությունն ու տարածվածությունը: Եթե ուռուցքը ներաճած է ստամոքս, ստոծանի, հաստ աղի կամ նրա միջըներք, հետորովայնամզային տարածություն, մակերիկամ կամ երիկամ խորհուրդ է տրվում իրականացնել նրանց մասնահատում մեկ բլոկով:

Փայծաղն ու ենթաստամոքսային գեղձը, կախված ուռուցքի տարածվածությունից, բութ և սուր դիսսեկցիայի օգնությամբ տեղայնացվումեն հետորովայնամզային տարածությունից դեպի առաջ ու մեդիալ:



Փուլ 3. Փայծաղային զարկերակի առանձնացում ու մշակում

Փայծաղային զարկերակը առանձնացվում և կապվում է ենթաստամոքսային գեղձի մարմնի ու պոչի հետին ու վերին եզրի մոտ:

Փայծաղային երակը սովորաբար հայտնաբերվում է փայծաղային զարկերակից ներքև ու հետ, որտեղ այն կապվում է ու հատվում: Եթե ստորին միջընդերային երակը միաձուլում է փայծաղային երակին նրա վերին միջընդերային երակի ճյուղավորման տեղից մոտ, ապա այն կարելի է պահպանել: Մյուս դեպքերում ստորին միջընդերային երակը կապվում ու հատվում է առանց որևէ հետևանքների:



Փուլ 4. *Ենթաստամոքսային գեղձի հատում*

Հատման տեղի ուղղությամբ ենթաստամոքսային գեղձի վերին ու ստորին եզրերին դրվում են կարեր-բռնիչներ, որպեսզի ապահովեն հեմոստազն ու ձգումը:

Գեղձը հատվում է սրևէեղանակով /կաուտերիզացիան խեղաթյուրում է շտապ հյուսվածքաբանական հետազոտության արդյունքները/ անպրոբսևմամեզրըստուգվումհետազոտման՝ ուռուցքային բջիջների հայտնաբերման համար:

Եթե ենթաստամոքսային գեղձի հաստությունը չիգերազանցում 1սմ-ը, այն կարող է հատվել կարող սարքով:



Փուլ 5. *Պանկրեատիկ ծորանի փակում*

Հատված պանկրեատիկ ծորանը փակվում է [illegible] եզրից ավելի պոքսիմալ դրված ութաձև կամ U-ա ձև մակերեսային բարակ պոլիպրոպիլենային կարով: Եթե գեղձը հատվում է կարող գործիքով՝ ծորանը առանձինչիկապրվում: Գեղձի ծայրատի հատված եզրը կարվում է առանձին մասնակի իրար փակող 3-0 պոլիպրոպիլենի մատրացային կարերով:

Կարող գործիքի օգտագործման ժամանակ, նման կարերի կարիք չկա, սակայն որոշ վիրաբույժներ նախընտրում են ուժեղացնել մեխանիկական կարերի գիծը անընդհատ պոլիպրոպիլենային կարով: Եթե ենթաստամոքսային գեղձի հաստությունը գերազանցում է 1 սմ-ը ցանկալի չէ կիրառել կարող գործիք:

Մասնահատված գեղձի բունոցում, բայց ոչ անմիջական շփումով նրա հատված եզրի հետ, տեղադրվում է ակտիվ դրենաժ:



Հետվիրահատական խնամքը և հետազոտությունները

- ✓ Հետվիրահատական դիտարկում ընդհանուր բաժանմունքում, տեղափոխում ինտենսիվ թերապիայի բաժանմունք սովորաբար չի պահանջվում:

Հետվիրահատական բարդություններ

Մոտակա՝

- ներորովայնային արյունահոսություն,
- պանկրեատիկ խոցղակ,
- հեղուկի հետպանկրեատիկ կուտակում,
- ենթաստոծանիական թարախակույտ ,
- պլևրալ հեղուկ,
- շաքարային դիաբետ,
- դռներակի թրոմբոզ,
- ասցիտ /հարկ է տարբերել պանկրեատիկ և ուշ պանկրեատիկ ասցիտներ/:

Հեռավոր՝

- ենթաստամոքսային գեղձի էկզոգեն անբավարարություն,

- շաքարային դիաբետ,
- տեղային կամ հեռավոր կրկնություն,
- ենթաստամոքսային պսևդոկիտաներ:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Դիրքը հակառակ Տրենդելենբուրգի, թեթև թեքումով դեպի աջ հեշտացնում է էքսպոզիցիան, ձախ սռոծանու գմբեթից ենթաստամոքսային գեղձի ռ փայծաղի թեքման հետևանքով:
- Եթե մոտեցումը փայծաղային զարկերակի պրոքսիմալ հատվածին դյուրին է, ավելի լավ է այն կապել մինչև ենթաստամոքսային գեղձի ու փայծաղի լրիվ տեղայնացում: Նման մոտեցումը թույլ է տալիս ապահովել ռ արագ ու հուսալի հեմոստազ՝ տեղայնացմանընթացքում փայծաղի կապսուլայի վնասմանհեպճում:
- Փայծաղային զարկերակն ու երակը կարով կապվում են ու հատվում առանձին առանձին, ինչը նվազեցնում է հետվիրահատական շրջանում զարկերակ-երակային խուղակի առաջացման հնարավորությունը:
- Եթե հնարավոր է, ապա ենթաստամոքսային գեղձի հատված եզրը հարկավոր է կարել մոնոֆիլամենտ կարով, այլ ոչ մետաքսով: Օրինակ պոլիպրոպիլենը ունի ավելի ցածր սահքի կոեֆիցենտ, հեշտ է /քիչ տրավմատիկ/ անցնում է հյուսվածքներով, այն չունի դատարկություններ և ավելի կայուն է ինֆեկցիայի հանդեպ, համեմատած պոլիֆիլամենտ թելիհետ:

ԵՆԹԱՍՏԱՄՈՔՍԱՅԻՆԳԵՂՁԻՀԱՆՂԱԿՆԵՐԻ ԴՐԵՆԱՎՈՐՈՒՄ, Y-ԱՁԵՎԲԱՐԱԿԱՂՈՒԹԱՅԻՆՍԵԳՄԵՆՏՈՎ ՂՍՏՈՒՀ-Ի

Ներածություն

Պանկրեատիկ խուղակների մեծ մասը ապաքինվում էպռհսպռնռղռկռն բուժումով, որը ներառում է ամպուլայից պանկրեատիկ հյութի դրենավորման բարելավում, դիետա, սոմատոստատինի ճմռռռկների կիրառում: Եթե պանկրեատիկ խուղակը զարգանում է ենթաստամոքսային գեղձի ծորանի պատռման հետևանքով և պանկրեատիկ հյութը արտադրվում է գեղձի անջատված հատվածում ռ չի մտնում ստամոքս-աղիքային տրակտ, ցուցված է վիրահատական բուժում:

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ չկազմակերպված խուղակի ժամանակ՝

- տրավմայի հետևանքովենթաստամոքսային գեղձի ծորանի պատռվածք,
- խուղակ, ենթաստամոքսային գեղձի նեկրէկտոմիայից հետո,
- ենթաստամոքսային գեղձի բարդ վիրահատությունից հետո ձևավորվածխուղակ դեպիհոսքակիցօրգաններ /օրինակ՝ ստամոքս, հաստ աղի, ձախ երիկամ, ձախ մակերիկամ/,
- ենթաստամոքսային գեղձի արտաքին դրենավորման հետևանքով ձևավորվածխուղակ,
- խուղակ, կապված պանկրեատիկ ասցիտի հետ:

Հակացուցումներ՝

- ենթաստամոքսային գեղձի շարունակվող բորբոքում,
- ենթաստամոքսային գեղձի թարախակույտ,
- չդրենավորվող հարպանկրեատիկ հեղուկի կուտակում:

Նախավիրահատական հետազոտություն և վիրահատության պատրաստում

Նախավիրահատականհետազոտություններ՝

- ✓ Անամնեզում կարևորվումենպանկրեատիտը, գեղձի տրավման, պսևդոկիստան, ներքին և արտաքին դրենավորմամբ նախորդողպահպանողական բուժումը, ալկոհոլի օգտագործումը, ցիրրոզը, պորտալ հիպերտենզիան: Անհրաժեշտէգնահատելխուղակի արտադրությունը, համապատասխանեցնելսնուդը, ապահովել համարժեք արտաքին դրենավորում, մաշկը պաշտպանել պանկրեատիկ հեղուկից:
- ✓ Լաբորատորհետազոտությամբճշգրտվումենհիճուկի էլեկտրոլիտները, ամիլազան, լիպազան և լյարդային փորձերը, իրականացվումէ որովայնի ուլտրայխոռոչից /եթեայնկա/ պրոտոկրվողհեղուկիցանքս, ցիտոլոգիական հետազոտություն, ամիլազայի ակտիվության որոշում:

Նախավիրահատական ճառագայթային ախտորոշում՝

- ✓ ՀՇ՝ չդրենավորվող թարախակույտերի կամ հեղուկի կուտակումների բացառմանհնարավոր:
- ✓ ԷՀԽՊԳ՝ պանկրիատիկ ծորանի ընթացքի ճշտման, նրա պատռվածքի տեղի, լուսանցքըփակող քարերի կամ նեղացումներիհայտնաբերմանհնարավոր:
- ✓ Ֆիստուլոգրամմա՝ ենթաստամոքսային գեղձի անատոմիական յուրահատկությունները հայտնաբերելու, նախավիրահատական համարժեք արտաքին դրենավորում ապահովելուհնարավոր:
- ✓ Անգիոգրամմա՝ կեղծ անևրիզմայի կասկածի դեպքում:

Հիվանդիհետազոտությունը էխո-ստամոքսոյինզոնդիտեղադրում, միզապարկիկատետեր, նախավիրահատականհակաբակտերիալբուժում՝ըստցուցումների:

Վիրահատություն

Փուլ 1.

Մուտքը, կախված հիվանդի կառուցվածքից, միջային կամ երկկողմանի ենթակողային:

Առաջին քայլը ճարպոնածոցի ստուգումն ու ռետրակտորի տեղադրումն է: Նախավիրահատական ֆիստոլոգրաֆիան թույլ է տալիս գտնել վնասված պանկրեատիկ ծորանը: Մանրակրկիտ պետք է հետևել դեպի փոքր ճարպոնի խոռոչ դրենաժային խողովակի ընթացքին, դիսսեկցիան շարունակվում է բորբոքված հարպանկրեատիկ հյուսվածքների միջով դեպի ենթաստամոքսային գեղձի առաջային մակերես:

Խուղակի ընթացքը ոչ հազվադեպ կարելի է միանգամից հայտնաբերել, շնորհիվ գեղձի պարենխիմայում նրա արտաքին անցքի:

Եթե այն հստակ չի տարբերակվում,վիրահատությանընթացքում ներարկված 0.2 մգ/կգ չափաբաժնովսեկրետինը /տեստային 0.2 դոզայից հետո/ խթանում է պանկրեատիկ սեկրեցիան և օգնում հայտնաբերել ծորանի պատռվածքը:





Փուլ 2.

Եթե հնարավոր է, խուղակի ընթացքով պանկրեատիկ ծորան մտցվում է կաթետեր կամ զոնդ: Եթե պանկրեատիկ ծորանը հայտնաբերված է, առաջային պատով նրա թեք հատումը ավելացնում է բերանակցման արդյունավետ տրամագիծը և հեշտացնում վերջինիս ձևավորումը:

Եթե մինչ այդ պանկրեատոգրաֆիա չի իրականացվել, ապա այն կարող է կատարել այս փուլում: Պետք է ստանալ ծորանի ինչպես դիստալ, այնպես էլ պրոքսիմալ հատվածների պատկերը:

Բարակ աղիքը հատվում է մոտ 15 սմ Տրեյցի կապանից ավելի դիստալ: Նրա տանող եզրը փակվում է կարող սարքով կամ կարվում ձեռքով: Աղիքների անընդհատությունը վերականգնվում է «ծայրը-կողքին» յեյունոյեյունոբերանակցումով՝ ըստ Ռու-ի, ձևավորված տանող գալարի եզրից ոչ պակաս քան 60 սմ հեռավորությամբ:

Բերանակցումը իրականացվում է պանկրեատիկ ծորանի կամ խուղակիդուրսեկածոտեղիապիականհյուսվածքիերիբուբրակատուկողմնային պատի միջև:



Փուլ 3.

Կարերի հետին շարքը դրվում է 4-0 մետաքսով՝ ըստ Լամբերի: Մյուս շարքը դրվում է ներծծվող կարերով ենթաստամոքսային գեղձի ռ բարակ աղու ամբողջ հաստությամբ: Կառետերը կարելի է թողնել որպես բերանակցման ստենտ, ինչը թույլ է տալիս անհրաժեշտության դեպքում վիրահատությունից հետո հետազոտել բերանակցումը:



Փուլ 4.

Եթե պանկրեատիկ ծորանը չի հայտնաբերվում, կարելի է բարակ ենթաստամոքսային գեղձի պարենխիմային խուղակի անցքի վրա՝ բերանակցման ձևով: Նման բերանակցման ժամանակ առավել նպատակահարմար է թողնել ստենտ: Բերանակցման մոտ դրվում է ակտիվ փափուկ դրենաժ:



Հետվիրահատական հետազոտություններ

- ✓ հեմոդինամիկայի և շնչառական գործունեության դիտարկում ինտենսիվ թերապիայի բաժանմունքում,
- ✓ դրենաժի արտադրանքի ամենօրյա չափում, հատկապես ուշադրություն դարձնելով նրա քանակի փոփոխման վրա ուտելուց հետո: Դրենաժները հեռացվում են բերանով սնման վերսկսումից հետո արտադրանքի նվազեցման պայմաններում, օրվա ընթացքում 50մլ-ից պակաս:
- ✓ պետք է չափել դրենաժի արտադրանքում ամիլազայի ակտիվությունը, եթե նրա քանակը օրը 50մլ-ից ավելի է: Եթե ամիլազայի պարունակությունը հեղուկ մարմարյա է, դրենաժը 7 օրից ակտիվ վիճակից չեզոքացնել պասիվ հետեղաշարժվում օրը 1-2սմ:

Տեղային հետվիրահատական բարդություններ

- բերանակցման անբավարարություն, հնարավոր է խուղակի կրկնություն,
- թարախակույտ,
- պանկրեատիտ,
- ենթաստամոքսային գեղձի կեղծ կիստա,
- ներորովայնային արյունահոսություն:

Փորձառուվիրաբույժի խորհուրդները

- Խուղակի հայտնաբերման ու նրա հետ կապված ծորանի ընթացքը որոշելու համար անհրաժեշտ են համբերություն, համապատասխան դրենաժ և լիարժեք նախա- ու ներվիրահատական ճառագայթային վիզուալիզացիա: Եթե ծորանում կան արտահայտված պաթոլոգիական փոփոխություններ, հարկավոր է ընտրել այլ վիրահատություն, օրինակ մասնահատում կամ կողմնային պանկրեատիկո-յեյունոբերանակցում:
- Խուղակի դրենավորման նպատակներից մեկը՝ ենթաստամոքսային գեղձի էկզոկրին ու էնդոկրին գործունեության պահպանումն է: Եթե խուղակը առաջացել է ենթաստամոքսային գեղձի պոչից, գեղձի դիստալ հատվածի մասնահատումը կարող է լինել լավագույն ընտրությունը, քանի որ այդ դեպքում ֆունկցիոնալ կորուստները հասցվում են նվազագույնի:
- Խուղակի ինքնուրույն փակումը կարող է նպաստել սոմատոստատինի նմանակների ներմուծումը, նման բուժման արդյունքները կարելի է կանխորոշել ռենտգեն հետազոտության տվյալների հիման վրա: Ծորանի լրիվ պատռվածքի հետ կապված խուղակները չեն փակվում:
- Ստամոքս-աղիքային տրակտի հետ կապված խուղակի փակումը կարելի է հեշտացնել տեղափոխով տրանսպապիլյար պանկրեատիկ ստենտ:
- Դեպի ստամոքս խուղակի ներքին դրենավորում խորհուրդ չի տրվում: Եթե ինչ-ինչ պատճառներով մասնահատումը լավագույն տարբերակը չէ, նախապատվությունը պետք է տալ՝ ըստ ՌՀՒ-ի բարակաղու գալարով բերանակցմանը:
- Ենթաստամոքսային գեղձի պարենխիման պետք է կարել խուղակի անցքի մոտ այլ ոչ թե նրա երկայնքով, այստեղ պարենխիման սովորաբար հաստացած է և անհավասար պնդացած:
- Եթե ներքին դրենավորումը անհնար է, բարձր է վիրահատական ռիսկը կամ անբարենպաստ անատոմիական պայմանները, ընտրության միջոց է հանդիսանում քրոնիկ արտաքին դրենավորումը:

- Ամիլազայի բարձր ակտիվությունը դրենաժային հեղուկում խոսում է բերանակցման պատռման մասին, բուժումը զգալի հեշտանում է, եթե վիրահատության ժամանակ բերանակցման միջոցովանցկացվում է ստենտ: Կարելի է իրականացնել բերանակցման ռենտգենաբանական գնահատական, արտադրանքի քչացման հետ, ստենտը ակտիվ վիճակից տեղափոխվում է պասիվ դրենավորման, ապա առաջ քաշվում օրը 1սմ:
- Վաղ ներորովայնային արյունահոսությունը առավել լավ է կանգնեցնել կրկնակի վիրահատությամբ՝ ուղղակի կապելով անոթը: Ուշացած արյունահոսությունը կարող է լինել կեղծ անևրիզմայի նշան: Ցուցված է անհապաղ անգիոգրաֆիա և անոթի էմբոլիզացիա:

ՍՖԻՆԿՏԵՐՈՊԼԱՍՏԻԿԱԿԵՆԹԱՍՏԱՄՈՔԱՅԻՆԳԵՂՁԻ ՓԵՂԵԿՎԱԾՔՈՐԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- Բացահայտ. սուր պանկրեատիտի կրկնվող էպիզոդներ /բնորոշ ցավ, պլազմայում ամիլազայի մակարդակի բարձրացում/ ի ծնե փեղեկված ենթաստամոքսային գեղձի ծորանով /pancreasdivisum/ կամ դոմինանտ դորզալ ծորանի այլ տարբերակով /բացակա վիրսունգյան ծորան, վիրսունգյան ծորանի հետ թելանման միացումներ/ հիվանդների մոտ:
- ոչ համոզիչ. pancreasdivisum-ով և էպիզոդիկ “աբստրակտիվ պանկրեատիկ ցավերով” հիվանդներ / տեղակայմամբ ու բնութագրերով նման պանկրեատիկ ցավի, սակայն առանց հիպերամիլազեմիայի կամ գեղձի այտուցի տեսքով օբյեկտիվ ապացույցների/:

Հակացուցումնե՝

- քրոնիկական պանկրեատիտ /ֆիբրոզ, գլխավոր ծորանի լայնացում, կեղծ կիստա, սեգմենտար ծորանի խցանում, կալցիֆիկացիա/,
- ալկոհոլիզմի հետևանքով պանկրեատիտ, հիպերկալցեմիա, հիպերլիպիդեմիա, լեղային քարեր կամ տրավմա,
- մոտակա ժամանակներում տարած սուր պանկրեատիտ, զգալի մնացորդային բորբոքում/այտուց:

Նախավիրահատական հետազոտում և վիրահատության պատրաստում

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ Անամնեզում կարևորվում են էպիգաստրալ շրջանի ցավերի կրկնվող էպիզոդները, հատկապես դեպի մեջք տարածումով, սպորադիկ բնույթի ցավերի սկիզբով, նոպաների կրկնումով ամիսներ անց, որոշ դեպքերում հաճախանալով ուրտոնոզով մշտական: Այս նոպաները սովորաբար արտահայտված են չափավոր և հաճախ են հանդիպում երիտասարդ կանանց մոտ, հիվանդության սկիզբի միջին տարիքը 34, չնայած այն կարող է առաջգալ նաև մանկական հասակում: Հիվանդության սկիզբը 50 տարեկանից հետո բնորոշ չէ: Կլինիկորեն հիվանդությունը կարող է արտահայտվել ցավերով ենթաստամոքսային գեղձի պրոյեկցիայում:
- ✓ Լաբորատոր հետազոտություններից անհրաժեշտ է որոշել շիճուկում ամիլազայի և/կամ լիպազայի մակարդակը:
- ✓ Ճառագայթային ախտորոշման եղանակներից ինֆորմատիվ են էՀԽՊԳ կամ ՄՀԽՊԳ, որոնք թույլ են տալիս որոշել պանկրեատիկ ծորանի ընթացքը: էՀԽՊԳ-ն պետք է ներառի նաև դոմինանտ դորզալ ծորանի կոնտրաստավորում հավելյալ պտկիկի միջով:

Նախազգուշացում՝ վիրսունգյան ծորանի խցանումը գեղձի գլխիկի ուռուցքի հետևանքով, կարող է առաջ բերել pancreasdivisum-ին նման կլինիկական նշաններ:

Հավելում՝ տրանսաբդոմինալ ԳՁՀ-ն, էԳՁՀ-ն կամ ՄՀԽՊԳ-ն, սեկրեցիայի խթանումովհայտնաբերվում է գլխավոր պանկրեատիկ ծորանի չափերի նորմալացման ուշացում պանկրեատիկ արտազատման գերխթանումից հետո: Արտազատման խանգարումը ստենոզված հավելյալ պտկիկի միջով բերում է ծորանի երկարատև /15-30 րոպ/ լայնացման:

Վիրահատություն

Փուլ 1. Փոքր պտկիկի մերկացումը

Հիվանդի կազմվածքից կախված իրականացվում է աջ ստորկողային կամ վերին միջային կտրվածք: Տասներկումատնյա աղու և գեղձի գլխիկի տարածուն տեղայնացումը /Կոխերի տարածուն գործողություն/ հեշտացնում է էքսպոզիցիան:

Եթե կա լեղապարկ, ապա կատարվում է խոլեցիստէկտոմիա և Ֆոգարտի կաթետերը պարկային կամ ընդհանուր լեղածորանից մեծ պտկիկով անցկացվում էտասներկումատնյա աղի, օգնելով գտնել հավելյալ պտկիկը: Տասներկումատնյա աղու մեծ պտկիկից անմիջապես պրոքսիմալ /հեշտությամբ ճանաչվում է տրանսդուոդենալ կամ ծորանի մեջ տեղադրված Ֆոգարտի կաթետերով/ իրականացվում է լայնակի դուոդենոտոմիա:



Փուլ 2. Փոքր պտկիկի ներդաոդենալ հայտնաբերումը

Այն հայտնաբերվում է մեծ դուոդենալ պտկիկից 2-3 սմ ավելի պրոքսիմալ՝ դեպի առաջ և մեդիալ: Լորձաթաղանթի վնասումըանհրաժեշտ է հասցնելնվազագույնի:

Սեկրետինի ներարկումը /1 միավ/կգ/ թույլ է տալիս հայտնաբերել պտկիկը, առաջացնելով պանկրեատիկ հյութի տեսանելի հոսք և որոշ դեպքերում՝ պտկիկի ուռչեցում:

Տասներկումատնյա աղու լորձաթաղանթը, փոքր պտկիկից անմիջապես դիստալ բոնխոսկէ, դիրքը ֆիքսելուհամար: Նրա լուսանցք էնտցվում բարակ զոնդ կամ անոթային կաթետեր Angiocath /կարող է առաջանալ պտկիկի ծակման անհրաժեշտություն, եթե նրա անցքը փակ է կամ շատ փոքր/:



Փուլ 3. *Փոքր ծորանի սֆինկտերոտոմիա*

Հավելյալ պտկիկի դիստալ եզրերին դրվում են կարեր-բռնիչներ և նրա մեջ մտցված զոնդի վրայով պտկիկը հատվում է: Պանկրեատիկ հյութը պետք է դուրս թափվի հոսելով, որից հետո տեսանելի է դառնում պտկիկային մեմբրանայիցթաղանթից ավելի պրոքսիմալ տեղակայված ծորանի լայնացած նախադուռը: Հարթ վարդագույն պանկրեատիկ ծորանի լորձաթաղանթը հեշտ է տարբերել տառեերկսմատնյա աղու լորձաթաղանթից: Կտրվածքը 1սմ-ի չափով երկարացվում է, որպեսզի լայնորեն բացվի ծորանի նախադուռը:



Փուլ 4. *Փոքր ծորանի սֆինկտերոպլաստիկա*

Տասերկումատնյա աղու լորձաթաղանթն ու պանկրեատիկ ծորանի էպիթելիումը համադրվում են բարակ ներծծվող սինթետիկ կարերով՝ հեմոստազի, ասպսֆիկման հեշտացման ու կրկնակի ստենոզի բացառման համար:

Փուլ 5. *Ծորանի դրենավորում, 12-մատնյա աղու փակում*

Ծորանի հետվիրահատական խցանման բացառման համար, տասներկումատնյա աղու պատով դեպի պանկրեատիկ ծորան անցկացվում է բարակ կաթետեր /օրինակ՝ 5 Fr տրամագծով պեդիատրիկ սնուցող զոնդ/: 14G-ոց ասեղի միջոցով /կարելի է կիրառել նաև հատուկ տրոակարով կաթետեր/ այն անցկացվում է տասներկումատնյա աղու պատի միջով և կրկնակի ներծծվողֆիսեթակարերով հերմետիզացվում: Հետվիրահատական դրենավորման համար կաթետերը դուրս է բերվում որովայնի պատով և թողնվում տեղում 2-3 շաբաթների ընթացքում:

Դուոդենոտոմիան կարվում է լայնակի երկշարք կարերով, դրենաժ չի թողնվում:





Հետվիրահատական հետազոտություններ

- ✓ սովորական հետվիրահատական դիտարկում,
- ✓ կլինիկական ցուցումների բացակայության պայմաններում շիճուկային ամիլազայի հետազոտման անհրաժեշտություն չի առաջանում:

Տեղային հետվիրահատական բարդություններ.

Մոտակա՝

- ➢ սուր պանկրեատիտ,
- ➢ տառեխմատնյա աղու անանցանելիություն,

- տառեղկումատնյա աղու կարերի անբավարարություն:

  Հեռավոր՝
- պտկիկի ստենոզի կրկնություն,
- հիվանդության կրկնություն, պանկրեատիտ,
- նախավիրահատական ցավային համախտանիշի պահպանում:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Մեծ դուոդենալ պտկիկը հաճախ կարելի է շոշափել 12-մատնյա աղու պատի միջով, նույնիսկ առանց ընդհանուր լեղածորանով /օրինակ պարկային ծորանով/ ու պտկիկի ամպուլայով անցկացված կաթետերի:
- Տառեղկումատնյա աղիքում հավելյալ պտկիկը տեղակայվում է ավելի պրոքսիմալ և կարող է հայտնաբերվել նախադռից 3սմ-ի վրա /այս տեղում տառեղկումատնյա աղու լատերալ պատի վրա հաճախ հայտնաբերվում է նրա լուսանցք ապտոպիֆված անոթը:
- Լայնակի դուոդենոտոմիան ապահովում է համաթիֆ էքսպոզիցիա և նման դեպքերում դուոդենումի հետվիրահատական ստենոզ ներընծոտովելի հազվադեպ ենթամեմատոած երկայնակի կարերի հետ:
- Հավելյալ /փոքր/ պտկիկը, կապված փոքր չափերի ուտառեղկումատնյա աղու լոքձենոմակերեսին չնչին ապտոպիմանիետուաֆով, որոշ դեպքերում դժվար է հայտաբերվում,: Նրան ավելի հեշտ է հայտնաբերել տառեղկումատնյա աղու մեդիալ պատի զգույշ շոշափման միջոցով: Այն զգացվում է որպես ոչ մեծ “վուչիկ” կամ “եղուտո”,
- Պանկրեատիկ ծորանի բերանը գտնելուն օգնում է լորձաթաղանթի վրա մետիլեն կապույտի քսելը, քանի որ պանկրեատիկ հյութը, հատկապես սեկրետինի ներարկումից հետո, ծորանիքերանիմատկապույտ ներկը լվանում է:
- Ծորանիքերանի կանյուլյացիայից հետո, մինչև պտկիկի հատման ավարտը զոնդը չպետք էդուրս բերել: Տեղային տրավման խիստ դժվարացնում է տրավմայի ենթարկված ծորանիքերանի կրկնակի հայտնաբերումը:
- Դորզալ սանտորինյան ծորանը դուոդենալ պատով անցնում է ուղղահայաց /ի տարբերություն վիրսունգյան ծորանի թեք ընթացքի/, այդ իսկ պատճառով սֆինկտերոպլաստիկան ստիպված ստացվում է կարճ: Կարի մեջ բարակ թաղանթի 1սմ-ից ավելին վերցնելը դժվարացնում է սֆինկտերոպլաստիկան:

ՍՖԻՆԿՏԵՐՈՏՈՄԻԱ / ՍՖԻՆԿՏԵՐՈՊԼԱՍՏԻԿԱՊՏԿԻԿԻ ԴԻՍՖՈՒՆԿՑԻԱՅԻ ԴԵՊՔՈՒՄ, ՍՏԵՆՈԶՈՂՊԱՊԻՂԻՑ

Ներածություն

Օդդի-ի սֆինկտերի առաջային մակերեսի հասարակ հատումը /5մմ/՝ սֆինկտերոտոմիան, լայն կիրառվում էր XX դարի կեսերին, երբ բիլիոպանկրեատիկ ցավը համարվում էր լեղային դիսկինիզիայի հետևանք: Հաջողությունների բացակայությունը ստիպեցին կիրառել սֆինկտերի ավելի երկար /2-3սմ/ հատում, ֆորմալ սֆինկտերոպլաստիկայով, ինչը թերում էր միայն նվազագույն ֆունկցիոնալ լավացմանը: Կիրառվում էր երկարընթաց սֆինկտերոպլաստիկա, որի ժամանակ հատվում էր տրանսամպուլյար միջնապատը, սֆինկտերի պանկրետատիկ կոմպոնենտի ներառումով: Ճիշտ ընտրության դեպքերում, նման ընդլայնված մոտեցումը կարող է տալ գերազանց արդյունքներ: Այս գործողության ֆիզիոլոգիական իմաստը՝ սննդային ստիմուլյացիայից հետո, լեղու ու պանկրետատիկ հյութի ազատ անցմանապահովմանէտապերկումատնյա աղիք: Ներկայումս փորձված էնդոսկոպիստը կարող է իրականացնել ստենտավորում կամ նույնիսկ սեպտոտոմիան:

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- խոլեցիստէկտոմիայից հետո, որովայնի աջ վերին քառորդակում կամ էպիգաստրալ շրջանում, կայուն կամ կրկնվող ուժեղ ցավային էպիզոդներ:

Հակացուցումներ՝

- Բացարձակ.
  - ալկոհոլիզմ,
  - քրոնիկ պանկրեատիտ,
  - դեպրեսիա:
- Հարաբերական. նարկոտիկ միջոցներից կառավարվող դետոկսիկացիայի կուրս անցնելու ցանկությանբացակայություն /քիմիական աբստինենցիա/:

Նախավիրահատական հետազոտություն և վիրահատության նախապատրաստում

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ Անամնեզում կարևորում են էպիզոտիկ ցավերը էպիգաստրիումի կենտրոնում, սովորաբար խոլեցիստէկրոմիայից հետո և հիմնականումերիտասարդ /25-40տ/ կանանց մոտ: Դեղնուկը բացակայում է:
- ✓ Լաբորատոր հետազոտություններից ուսումնասիրվում են հեմոգլոբինը, ամիլազան/լիպազան, մոտ 1/3 դեպքերում, պապիլյար ստենոզի պարագայում հայտնաբերվում է՝միայն լեղային կամ պանկրեատիկ ֆերմենտների անցողիկ բարձրացում: Ցուցված է սիրտ-թոքային ֆունկցիայի ստուգում:

- ✓ Ճառագայթային ախտորոշման եղանակներից կիրառվում է ԳՋՀ-ը խոլեցիստո- կամ խոլեդոխոլիթիազի բացառման համար, ԷՈՒՊԳ-ն հնարավոր է կիրառել բոլոր հիվանդների մոտ: Պտկիկի դեֆորմացիա կամ լեղային ու պանկրեատիկ ծորանների լայնացում հանդիպում է 25% դեպքերում, պանկրեատիկ ծորանի կանուլյացիա հնարավոր է միայն 50% հիվանդների մոտ:

Այլ՝ տրանսպապիլյար մանոմետրիան պանկրեատիկ ու լեղային ծորաններում հայտնաբերում է հանգստի բարձր ճնշում:

Հոգեբան/հոգեբույժի կոնսուլտացիա՝ վիրահատական բուժման բոլոր թեկնածուների մոտ անհրաժեշտ է փորձել իրականացնել նարկոտիկ միջոցների հանդեպ նախավիրահատական ակտիվ թունազերծում /որպես կանոն այնքիչ արդյունավետ է/:

Վիրահատության նախապատրաստում՝

- ✓ Խորհուրդ է տրվում լուրջ քննարկել հիվանդի պարտավորվածությունը նարկոտիկ միջոցների հանդեպ հետվիրահատական դետոկսիկացիայի հետ կապված:
- ✓ Նախավիրահատական հակաբակտերիալ թերապիա /մաքուր վիրահատություն հնարավոր կոնտամինացիայով/:
- ✓ Կանխարգելիչ հեպարինոթերապիա և շարունակական կոմպրեսիոն սարքերի կիրառում՝ երակային թորմբոզները կանխազգուշացնելու համար:

Վիրահատություն

Տրանսամպուլյար սեպտէկտոմիայով տրանսդուոդենալ սֆինկտերոպլաստիկա

Փուլ 1.

Մուտքը որովայնի խոռոչ իրականացվում է նախորդած խոլեցիստէկտոմիայի սպիով կամ վերին-միջային կտրվածքով:

Էքսպոզիցիան ստացվում է Տոմպսոնի կամ նման ռետրակտորի միջոցով:

Տասներկումատնյա աղին, ենթաստամոքսային գեղձի գլխիկի ստուգումից հետո, լայն տեղայնացումէ՝ ըստ Կոխերի: Շաստ աղու լյարդային անկյունը, առանց Հերտի փակեղի վնասման, տեղայնացումէ դեպի ներքև: Ենթաստամոքսային գեղձի գլխիկը անջատվում է ներքևում տեղակայված սիներակից ու աորտայից անոթների ցազան գոտում՝ տասներկումատնյա աղու հետևում:

Նման լայն տեղայնացումը մուտք է բացում դեպի պարկային ծորանի ծայրատը և տասներկումատնյա աղու առաջային մակերես՝ նրա երկրորդ հատվածի միջին ու ստորին երրորդականի մակարդակին, որտեղ գտնվում է մեծ դուոդենալ պտկիկը: Պապիլլան սովորաբար լավ շոշափվում է տասներկումատնյա աղու դրսային պատը միջայինին սեղմելուժամանակ:



Փուլ 2. Փոքր պտկիկի ինտրադուոդենալ հայտնաբերում

Պտկիկիտեղակայումըճշտելու համար ինտուբացվում է ընդհանուր լեղածորանը:

Մոտեցումը լեղածորանին իրականացվում է պարկային ծորանի ծայրատով կամ ընդհանուր լեղածորանի ոչ մեծ կտրվածքով: Այսգործողությունից կարելի է խուսափել, եթե տասներկումատնյա աղու շոշափումով ճշտորեն որոշվում է ամպուլայի տեղակայումը:

Պտկիկի հայտնաբերման համար, ընդհանուր լեղածորանի միջով դեպի տասներկումատնյա աղի է ներխրվում թելանման միզածորանոսկին 3 Fr տրամագծով զոնդ /կամ Ֆոգարտի ոչ մեծ լեղային կատետեր/:

Եթե կա խոլեդոխոլիթիազի կասկած կարող է պահանջվել լեղածորանի ստանդարտ ստուգում: Խորհուրդ չի տրվում օգտագործել կարծր զոնդեր /օրինակ Bakes-ի լայնիչները/, որովհետև պտկիկի ստենոզի ժամանակ կարող են հեշտությամբ թափածակել լեղածորանը: Հիշեք, որ պտկիկով թելանման զոնդի անցկացման ժամանակ վիրաբույժը պետք է ձեռքով պահի ընդհանուր լեղածորանի ներենթաստամոքսային հատվածը:



Փուլ 3.

Պոկիկից զոնդի դուրս գալուտեղիվրա, կատարվումէ 2սմ-ոց առաջային դուոդենոտոմիա: Պոկիկըդուոդենոտոմիայի մակարդակիհ բարձրացնելու համար 2 և 8 ժամերի ուղղությամբ դրվում են երկու կարեր-բռնիչներ:

Պոկիկի առաջային պատի հարթության երկայնքով ժամը 11-ի ուղղությամբ իրականացվում է կտրվածք: Սֆինկտերի հատումը առավելդյուրինէկատարել փոքր մկրատներով, կաուտերիզացիայի կիրառմանընպատակահարմար չէ, քանի որ դժվարացնում է լորձաթաղանթի եզրերի ճանաչումը:

Ծորանի լորձաթաղանթի համադրումը տասներկումատնյա աղու լորձաթաղանթի հետ իրականացվում է 5-0 պոլիգլիկոլաթթվի հաջորդական կարերով: Սֆինկտերոպլաստիկայի երկարությունը /2-3սմ,/ որոշվումէայն կետով, որտեղ լեղային ծորանը անջատվում է տասներկումատնյա աղու պատից: Այստեղ անհրաժեշտ է մանրակրկիտ համադրել լեղածորանի էպիթելն ու աղիքի լորձենին:

Փուլ 4.

Պոլիկի ստենոզը հաճախ կապված է ամպուլյար միջնապատի տեսանելի ձևախախտման հետ /հյուսվածքի այն մասը, որը պոլիկի ներսում բաժանում է ընդհանուր լեղածորանի ներպանկրեատիկ սեգմենտը, պանկրեատիկ ծորանից/:

Վիրսունգյան ծորանի բերանը հաճախ դժվար է տեսնել և կարող է անհրաժեշտ լինի, արցունքային զոնդերից ամենափոքրով, պոլիկի ստորին շրթի զգուշավոր զոնդավորում: Ծոռանիքերանիկանուլյացիայից հետո այն պետք է լայնացվի մեծ չափերի մեկ կամ երկու զոնդերով:

Միջնապատը կարելի է նշտարով անվտանգ հատել 1սմ-ից ոչ պակաս երկարության վրա կամ մինչև այն կետը, որտեղ պանկրեատիկ ծորանը կունենա 3մմ-ից ոչ պակաս տրամագիծ: Այս շրջանի ձևախախտումը կամ սպիացումը դժվարացնում է միջնապատի հատումը:

Սրանից հետո պետք է իրականացվի պանկրեատոգրաֆիա, եթե այն չի կատարվել:



Փուլ 5.

Աչքի փոքր ասեղովպանկրեատիկ ծորանի ու լեղածորանի լորձաթաղանթևերըառանձին կարերով /պոլիգլիկռլային 7-0 թել/ համադրվում են: Պլաստիկայից հետո պսակիկի առաջային մակերեսը լինում է հարթված և ընդհանուր լեղածորանն ու վիրուսանգյան ծորանը թափվում են տասներկումատնյա աղիք առանձին:



Փուլ 6.

Տասներկումատնյա աղին փակվում է երկշերտ կարերով՝ ներքին, բարակ ներծծվող և արտաքին, առանձին շճա-մկանային լամբերի կարերով: Տասներկումատնյա աղու հետորովայնամզային բունոցում տեղադրվում է դրենաժ: Դուոդենոտոմիայի վրա կարվում է ճարպոնի շերտ:



Հետվիրահատական հետազոտություններ.

- ✓ Հեմոգլոբին, լեկոցիտներ, շիճուկային ամիլազա,
- ✓ Դրենաժի արտադրանքի դիտարկում,
- ✓ T-ա ձև դրենաժի տեղադրմանդեպքում՝ խոլանգիոգրաֆիան կատարվում է հետվիրահատական 6-րդ օրը,
- ✓ Փոր-ստամոքսային զոնդ անհրաժեշտ չէ,
- ✓ կերակրման սկիզբը՝ կախված հետվիրահատական ընթացքից:

Տեղային հետվիրահատական բարդություններ.

Վաղ՝

- ➢ Պանկրեատիտ՝ սովորաբար վիրահատությունից հետո 1-ին օրը ջերմության բարձրացում /տենդ/, ցավեր որովայնում, շիճուկային ամիլազայի բարձրացում,

- Թոքի ատելեկտազ՝ սովորաբար վիրահատության 2-րդ օրը ջերմության բարձրացում, դեղնուկ,
- Լեղու արտահոսք դրենաժից՝ սովորաբար հետվիրահատական 3-7-րդ օրը – տասներկումատնյա աղու անբավարարություն,
- Վերքային ինֆեկցիա՝ սովորաբար վիրահատության 4-7-րդ օրը ջերմության բարձրացում, լեյկոցիտոզ, այտուց, վերքի կարմրություն,
- Թոքային զարկերակի էմբոլիա՝ սովորաբար հետվիրահատական 7-10-րդ օրը շնչահեղձություն,
- Ստամոքս-աղիքային արյունահոսության սֆինկտերոպլաստիկայի տեղից:

Ուշացած՝

- ցավի կրկնություն,
- լեղային կամ պանկերատիկ ծորանի ստենոզի կրկնություն /պանկրեատիտ/,
- թմրանյութերից կայուն կախվածության:

Փորձված վիարբույժի խորհուրդները

- Նման վիրահատության համար հիվանդները պետք է ընտրվեն խիստ մանրակրկիտ:
- Օգտակար է հագնել գլխի լույս և կիրառել օպտիկական մեծացման սարք:
- Պոկիկի հետ պետք է վարվել քնքուշ ու զգույշ:
- Անհրաժեշտ է պնդել թմրամիջոցներից հետվիրահատական դետոկսիկացիայի անհրաժեշտությունը:
- Նման հետխոլեցիստէկտոմիկ ցավով հիվանդի հանդեպ, որը բերում է թմրանյութերից կախվածության, եղեք նրբանկատ և ուշադիր:

ԵՆԹԱՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ԳԵՂՁԻՒՈՒՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԿԼԵԱՅԻՆ

Ներածություն

Ապացուցված է, որ գործող նեյրոէնդոկրին /ինսուլինոմա, որոշ գաստրինոմաներ/ և լավ սահմանազատված, չգործող նեյոէնդոկրին ուռուցքների /< 2սմ/ էնուկլեացիան հանդիսանում է համարժեք բուժում: Մևնույն ժամանակ չարորակ նեյրոէնդոկրին ուռուցքները պահանջում են ենթաստամոքսային գեղձի ստանդարտ անատոմիական մասնահատում:

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- Ինսուլինոմաներ,
- Որոշ գաստրինոմաներ, սոմատոստատինոմա

- Գործող նեյրոէնդոկրին ուռուցքներ, սովորաբար 2սմ-ից պակաս չափերի, հստակ սահմաններով, առանց չարորակացման նշանների:

Հակացուցումներ՝

- Գլյուկագոնոմա /այս ուռուցքները սովորաբար չարորակ են և պահանջում են օրգանի անատոմիական մասնահատում/,
- Ոչ շատ վաղուց տարած սուր պանկրեատիտ,
- Անվերահսկելի կոագուլոպաթիա /ծանր թրոմբոցիտոպենիա,
- Սպասվողկյանքի երկարատևությունը զգալի կարճացնող ուղեկցող հիվանդություններ,
- Ակտիվ պեպտիկ խոցեր /գաստրինոմայով հիվանդներ/,
- Մալիգնիզացիայի նշաններ, բազմակի մեծացած ավշային հանգույցներ, մետաստազներ լյարդում:

Նախավիրահատական հետազոտություններ և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ Անամնեզում կարևորվում են հիպոգլիկեմիկ կրիզները, Ուիպպլի եռախտանիշը /ինսուլինոմա/; պեպտիկ նշանները, կայուն ստամոքս կերակարափողային ռեֆլյուքսը, դիարեան, ոչ սովորական տեղակայումով դուոդենալ խոցերը /աղու 1-ին հատվածից ավելի դիստալ /գաստրինոմա/:
- ✓ Կլինիկական հետազոտությունները ինսուլինոմայիդեպքում՝ նեյրոգլիկոպենիայի հաստատված էպիզոդներ /գիտակցության մթագնում, ամնեզիա, տեսողության երկատում, մշուշ աչքերի առաջ, կոմա/, գլյուկոզայի նշանակման դեպքում ախտանիշների արտահայտվածությունը նվազումէ/Ուիպպլի եռաախտանիշ/: Գաստրինոմայիդեպքում՝ պլազմայում բարձր գաստրինի և ստամոքսաթթվի արտադրություն: Լաբորատոր հետազոտություններ.ինսուլինոմա՝ 72 ժամաընց ստուգվող սովածություն /մինչև նեյրոգլիկոպենիա և պլազմայում գլյուկոզայի մակարդակը <45մգ/, C-պեպտիդի մակարդակի բարձրացում /200պկմոլ/լ/, ինսուլինի մակարդակի բարձրացում մինչև 3 /քանակային իմմունոխեմիլյումինեսցենտային անալիզ/ կամ ավելի, պրոինսուլինի մակարդակի բարձրացում, մեզի սուլֆանիլ միզանյութի բացասական տեստ, ինսուլինի հանդեպ հակամարմինների բացասական տեստ; գաստրինոմա /առանց հակասեկրետոր միջոցների/՝ շիճուկային գաստրինի մակարդակի բարձրացում /500պգ/մլ/, ստամոքսի պարունակության pH <3, դրական տեստ սեկրետինի պրովոկացիայի դեպքում /եթե հասանելի է/ կամ կալցիումի խթանման տեստ:

Տոպիկ ախտորոշում եռաֆազ կոնտրաստավորմամբ սպիրալային ՀԾ, ներորովայնային ԳՁՀ, ԷՔՍ, բարակ ասեղային ասպիրացիոն բիոպսիա, կալցիումի զարկերակային խթանման ընտրողական տեստ /ինսուլինոմաներ, գաստրինոմաներ/, օկտրեոտիդով սցինտիգրաֆիա /առանձին դեպքերում/:

Վիրահատություն

Բաց էնուկլեացիա

Փուլ 1. Պատրաստում, էպիգաստրալ շրջանում լայնակի կտրվածք, ճարպոնայի գրպանիկի ստուգում մատով

Գլյուկոզայի մակարդակը պլազմայում անհրաժեշտ է ստուգել ամեն 20-30 րոպեն մեկ, բոլոր գլյուկոզա պարունակող հեղուկների բացառման պայմաններում /միայն ինսուլոմայով հիվանդների մոտ/:

Առավել ռացիոնալ է համապրվում լայնակի կտրվածքըէպիգաստրալ շրջանում: էքսպոզիցիան հեշտացնում է մեխանիկական ռետրակտորիկիրառումը, թույլ տալով իրականացնել որովայնի խոռոչի ու կոնքի մանրակրկիտ զննում:

Սկզբում, միջածիգ հաստ աղուց անջատվում է ստամոքս-ճարպոնային կապանը, ձախից աջ, բացելով ճարպոնային գրպանիկի խոռոչը, օգնականը՝ ստամոքսն ու ճարպոնը ձգում է գլխամասային ուղղությամբ, իսկ լայնակի հաստ աղին՝ տեղաշարժում դեպի ոտնամաս, բացելով ենթաստամոքսային գեղձը:



Փուլ 2. Կոխերի գործողություն, մարմնի ու պոչի տեղայնացում, զննում շոշափումով

Մինչ հետագա տեղայնացումը, ենթաստամոքսայի գեղձը մանրակրկիտ զննվում է շոշափումով: Եթե ուռուցքը գեղձի մակերեսին կամ նրա եզրին լավ երևում է և տեղակայումը համապատասխանում է նախավիրահատական տվյալներին, ապա ընտանեկան անամնեզի կամ բազմակի ուռուցքների նախատրամադրող այլ վիճակների բացակայության պայմաններում, հետագա տեղայնացումը կարող է սահմանափակվել ուռուցք պարունակող ենթաստամոքսային գեղձի հատվածով:

Գլխում և կեռիկանման ելուստի շրջանում տեղակայված ուռուցքների ժամանակ, տասներկումատնյա աղիքը լայնորեն տեղայնացվում է՝ ըստ Կոխերի, ներառելով Տրեյցի կապանը; աջ ստամոքս-ճարպոնային անոթների ու ենթաստամոքս-տասներկումատնյա երակի հատումը կեռիկանման ելուստի շրջանում հեշտացնում են գլխիկի էքսպոզիցիան և իջեցնում հետագա դիսսեկցիայի ժամանակ անոթների անզգույշ վնասման վտանգը արյունահոսությա

հնարավորությունը:Գլխիկի և կեռիկանման ելուստի առաջային հատվածների շոշափումը թույլ է տալիս հայտնաբերել այս շրջանում տեղակայված ուռուցքը:



Փուլ 3.

Երբ ուռուցքը տեղակայված է ենթաստամոքսային գեղձի վզիկում, դիսսեկցիան տարվում է գեղձի վզիկի ստորին մակերեսի և նրա տակ տեղակայված դռներակի միջև, մինչև վերջինիս միանալը վերին միջընդերային երակին: Դիսսեկցիան ավարտվում է ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի մոտ ցուցամատի կամ կլորացված եզրով ներծծիչի /ասպիրատորի/ ուղղակի տեսողական հսկողության տակ իրականացվող զգույշ շարժումներով: Դիսսկեցիան անհրաժեշտ է իրականացնել անմիջապես երակի վրա, ինչը թույլ է տալիս խուսափել կողմնային երակային ներհոսկերից /կեռիկանման ելուստից/: Ինսուլինոմայով հիվանդների մոտ այն իրականացվում է հիմնականում առանցքժխտությունների:



Փուլ 4.

Եթե ուռուցքը տեղակայված է ենթաստամոքսային գեղձի մարմնում, դիսսեկցիան շարունակվում է անոթավորումից զուրկ գեղձի ստորին եզրով: Ենթաստամոքսային գեղձի մարմինը տեղայնացվում է ստորին եզրից մինչև վերինը: Եթե ուռուցքը տեղակայված է գեղձի պոչում, լավագույն էքսպոզիցիա ստանում է փայծաղի տեղայնացումով, նրա կողմնային կապանների և երիկամի ու դիաֆրագմայի հետ կպումների հատման միջոցով: Եթե դիսսեկցիան իրականացվում է փայծաղի պահպանումով ստամոքսային անոթները չեն հատվում:

Եթե ուռուցքը թաքնված է, այս բոլոր գործողությունները անհրաժեշտ է իրականացնել մինչև ներվիրահատական ԳՋՀ:Բիմանուալ և երկմատանի շոշափումը թույլ է տալիս հետազոտել գեղձը գլխիկից մինչև պոչը, կասկածելի ավշային հանգույցները հատվում են առաջնային շտապ հյուսվածքաբանական հետազոտության:

Հետո իրականացվում է 6 ՄԳՀ ցուցիչով գեղձի գերձայնային սկանավորում, երկայնակի ու լայնակի ուղղություններով: Կղզյակա-բջջային ուռուցքները արտահայտվում են գեղձի պարենխիմայում հիպոէխոգեն գոյացության տեսքով, շրջապատի պարենխիմայիհետհամեմատ, ավելի խիտ կառուցվածքով: Նմանուռուցքներիգունավոր դոպլերային հետազոտությունը սովորաբար

հայտաբերում ուժեղացած արյան հոսքի գոտուն համապատասխան շրջանակ, ինչը չի լինում ավշագեղձերի շուրջը:

ԳՋՀ-ի ժամանակ դիտարկված օջախային գոյացությունների պրոյեկցիայով շոշափումը ենթաստամոքսային գեղձի ներսում հաճախ հայտնաբերում է ոչ մեծ պնդացումներ, որոնք հաշվի չեն առնվել առաջնային ստուգման ժամանակ:

Եթե մնում են կասկածներ, ապա իրականացվում է բարակ ասեղով ասպիրացիոն բիոպսիա շտապ հյուսվածքաբանական հետազոտության համար: Այն հատկապես կարևոր է գեղձի գլխիկում խորը թաքնված կղզյակա-բջջային ուռուցքների դեպքում, որոնք կարող են ընդունվել պանկրեատիկ և/կամ լեղային ծորանի տեղ: Ցիտոլոգիական վստահ հաստատումից հետո իրականացվում է ուռուցքի հեռացում՝ պանկրեատո-դուոդենալ մասնահատումով:



A-1





Ա-3

Փուլ 5. *Էնուկլեացիա*

Ուռուցքի տեղակայումը ճշտելուց հետո և այլ պաթոլոգիական գոյացությունների բացակայության պայմաններում, անհրաժեշտ է որոշում ընդունել էնուկլեացիայի կամ մասնահատման վերաբերյալ:

Ինսուլոմանները, երկու երրորդից ավելիպեպտեռում, կարող են առանց որևէ վտանգի ենթարկվել էնուկլեացիայի:

Գեղձի եզրին, նրա առաջային կամ հետին մակերեսով շոշափվող ուռուցքների դեպքում, ուռուցքը ծածկող հյուսվածքների բարակ շերտը բիպոլյար կաուտերով բարակ բրահեներովսեղմիչով զգուշորեն հատվում է: Ինսուլինոման մերկացվում է և պատռվածքից խուսափելուհամարերովրոպրվում են խորը ութաձև կար-բռնիչները: Ռենիչհմշտական զգույշ ձգումը թույլ է տալիս տեսնել փոքր սնող անոթները, որոնքհմշակվում են բիպոլյար էլեկտրադանակով կամ, հազվադեպ, բարակ մետաղական կլիպներով: Ենթաստամոքսային գեղձի պարենխիման անջատվում է ուռուցքից բարակ էնդարտերէկտոմիկ թիակով: Այն թույլ է տալիս ուռուցքի հիմքում տեղաշարժել պարենխիման, ինչը հատկապես կարևոր է պանկրեատիկ ծորանին հպվող ուռուցքի հեռացման դեպքում:

էնուկլեացիայի ավարտից հետո գլխավոր պանկրեատիկ ծորանի ամբողջականությունը ստուգվում է ԳՋՀ-ով: Առաջներում, պանկրեատիկ ծորանի լայնացման և պանկրեատիկ հյութի զգալի արտահոսքիպեպտոմում էնուկլեացիայի տեղում ներարկվում էր սեկրետին:



Փուլ 5. /շարունակություն/

Եթե փայծաղը զբաղեցնում է մեծ ծավալ կամ հիվանդը նիհար է, ապա փայծաղային զարկերակն ու երակը կարելի է անջատել ենթաստամոքսային գեղձից երակային ու զարկերակային ճյուղերը առանձին փակելով մետաղական կլիպների և/կամ հարմոնիկ նշտարիմիջոցով: Եթե կան կասկածներ փայծաղային երակի անցանելիության վերաբերյալ, ապա պետք է, իրականացվի սպլենէկտոմիա, կամ փայծաղային զարկերակն ու երակը կապվեն,

թողնելով փայծաղը ստամոքսային կարճ անոթների վրա: Փայծաղի մեծ չափերի դեպքում անհրաժեշտ է իրականացնել առաջին տարբերակը: Այն հնարավորություն է տալիս հետագայում խուսափել ձախակողմյան դռներակային հիպերտենզիայի և ստամոքսի երակների վարիկոզ լայնացման զարգացման վտանգից:

Բոլոր կղզյակ-բջջային չարորակ ուռուցքների ժամանակ, պետք է պահպանել մասնահատման ուռուցքաբանական սկզբունքները կատարել ենթաստամոքսային գեղձի դիստալ մասնահատում և սպլենէկտոմիա կամ պանկրեատոդուոդենալ մասնահատում, ռեգիոնալ ավշահատումով:

Էնուկլիացիայից/մասնահատումից հետո որովայնի խոռոչը լվացվում է ու իրականացվում է հեմոստազ: Ստամոքսն ու մեծ ճարպոնը վերադարձվում են իրենց տեղը, որովայնի խոռոչը կարվում: Ենթաստամոքսային գեղձի մարմնի ու պոչի զգալի տրավմայի դեպքում առավել նպատակահարմար է միանգամից իրականացնել ենթաստամոքսային գեղձի դիստալ մասնահատում:

Գեղձի գլխիկում ծորանի զգալի տրավմայի դեպքում կատարվում է՝

ա/ բարակ ներծծվող կարերով ծորանի վերականգնում, դրենավորումով;

բ/ պտկիկիցանոցկացված շատ բարակ սիլաստիկ ստենտի վրա անցքի կարում, էնուկլեացիայի տեղի վրա Ռու-ի գալարի տեղադրումով;

գ/ պանկրեատոդուոդենալ մասնահատում /<2% հիվանդների մոտ/: Բոլոր հիվանդների մոտ պահանջվում է պարտադիր արտաքին դրենավորում:

Ինսուլինոմայի հեռացումից հետո գլյուկոզայի կոնցենտրացիան պլազմայում չափվում է ամեն 15 րոպեն մեկ, նրա կոնցենտրացիայի բարձրացումը 20մգ/դլ-ով առաջին 30 րոպեների ընթացքում սովորաբար խոսում է վիրահատության հաջողության մասին, սակայն հնարավոր են թե կեղծ-դրական և թե կեղծ-բացասական արդյունքներ: Որոշ կլինիկաներ ունեն ինսուլինի կոնցենտրացիայի շտապ հետազոտման հնարավորություն:

Էնուկլեացիայի տեղը թողնվում է բաց և նրան մոտեցնում դրենաժ:

Մարմնի կամ պոչի կենտրոնում տեղակայված >2սմ ուռուցքների ժամանակ, հավանաբար ավելի ռացիոնալ է իրականացնել օրգանի դիստալ մասնահատում սպլենէկտոմիայով կամ առանց նրա, բացառությամբ ուռուցքի էքսցենտրիկ տեղակայման դեպքերի:

Ենթաստամոքսայի գեղձի պոչի ուռուցքների ժամանակ, սովորաբար, փայծաղային զարկերակի ու երակի անջատումը գեղձից դժվար չէ, գեղձի պոչային մասը հեռացվում է կարող գործիքի միջոցով, մեխանիկական կարերի գիծը ուժեղացվում է ներծծվող թելերի հորիզոնական մատրացային կարերի շարքով, որի ժամանակ պանկրեատիկ ծորանը: Տեղադրվում են դրենաժներ:

Փայծաղի պահպանումը, ենթաստամոքսային գեղձի մարմնի մեծ ուռուցքների դեպքում, հնարավոր է իրականացնել երկու ճանապարհներով: Ճարպակալած հիվանդների մոտ

փայծաղային զարկերակն ու երակը հատվում են փայծաղի դրունքից 1-1.5 սմ հեռավորության վրա թողնելով փայծաղը կարճ ստամոքսային անոթների վրա: Փայծաղի անջատումից հետո, փայծաղային զարկերակը նորից է հատվում ու կապվում իր հիմքի մոտ: Փայծաղային երակը ևս նորից հատվում է ու կապվում վերին միջընդերային երակը դուռերակի հետ միացմանտեղում: Որիցհետո գեղձի մարմինն ու պոչը հատվումէկտրողգրծիքով հեռացվում:

Լապարասկոպիկ էնուկլեացիա

Փուլ 1. Վիրահատարանի կազմակերպում/տրոակարների տեղադրում

Հիվանդը գտնվում է ընդհանուր անզգայացման տակ ներշնչավողային ինտուբացիայով: Մտցվում է քիթ-ստամոքսային զոնդ և Ֆոլեի ուրոլոգիական կաթետեր: Կանխտրգելիչհոպատոակով պարենտերալ ներարկվում է հակաբիոտիկ:

Հիվանդը պառկած լիտոտոմիկ դիրքով, ձախ կողքի տակ դրված բարձով /բարձրացում 45^0-ով/:

Վիրաբույժը կանգնում է հիվանդի ոտքերի արանքում, առաջին օգնականը հիվանդից աջ, վիրահատական քույրը՝հիվանդից ձախ: Հիվանդի ուսերի երկու կողմերում տեղադրվում են մոնիտորներ:

Կիրառվում է հինգ տրոակարների /10մմ-ոց տրոակար պորտի շրջանում 30^0-ոց 10մմ լապարասկոպի համար/ տեխնիկական, մյուս չորս տրոակարների չափերն ու տեղակայումը կախված հիվանդի կառուցվածքից, կարող գործիքի տեղադրման համար օգտագործվում է ձախ միջին անրակային գծով դրված 12մմ-ոց տրոակար:



Փուլ 2. Ենթաստամոքսային գեղձի էքսպոզիցիան ու տեղայնացումը

Ուռուցքի տեղային ռեռավոր տարածման բացառման համար իրականացվում է ախտորոշիչ լապարասկոպիա: Լավագույն էքսպոզիցիայի հասնելու համար սեղանը թեքվում է Տրենդելենբուրգին հակառակ ուղղությամբ, ձախ կողմի բարձրացումով, որըբերումէբարակաղիների տեղաշարժմանըվիրահատական դաշտից:

Փոքր ճարպոնի խոռոչ մտնումենգերձայնային նշտարով կամ անոթների «եփման» համար էլեկտրաթերմիկ բիպոլյար սարքով /Ligasure,/ ստամոքս-ճարպոնային աղեղիցերիւ ստամոքս-խթաղիմայն կապանըհատելով: ենթաստամոքսային գեղձի պոչի մերկացման համար հաստ աղու փայծաղային անկյունը տեղայնացվում է դեպի ներքև, եթե պահանջվում է առավել էքսպոզիցիա, ապա հատվում են ևու կարճ ստամոքսային անոթները:

ենթաստամոքսային գեղձի մարմնի ու պոչի վերին ու ստորին եզրերի երկայնքով բացվում է հետորովայնամզային տարածությունը, միջընդերային անոթները առանձնացվում են կեռիկանման ելունի, իսկ փայծաղային զարկերակը՝ գեղձի վերին եզրի մոտ:



Փուլ 3. *Գերձայնային սոնոգրաֆիա*

Ուռուցքի հայտնաբերման, մասնահատման եզրերի որոշման, երկրորդային ախտահարումների բացառման /լյարդային կամ պանկրեատիկ/ և պանկրեատիկ ծորանի ու խոշոր անոթների հետ նրա հարաբերակցությունը պարզաբանմանհամարսովորաբար իրականացվում է էնդոսկոպիկ գերձայնայինսոնոգրաֆիա:

Գերձայնային ցուցիչըմտցվում է 10մմ-ոց տրոակարով, մակերեսի հետ առավելագույն հպման ապահովման համար նրա եզրը կարող է թեքվել: Ոչ մեծ ուռուցքների ժամանակ, սկանավորման պայմանների լավացման համար ցուցիչի ու գեղձի հյուսվածքի միջև տեղադրվում է ջրով բալոն: Բուժման լավագույն եղանակ է հանդիսանում էնուկլեացիան, սակայն մեծ կամ խորը, ինչպես նաև խոշոր անոթներին կամ պանկրեատիկ ծորանին շատ մոտ տեղակայված ուռուցքների ժամանակ, նախընտրելի է ենթաստամոքսային գեղձի պոչի մասնահատում սպլենէկտոմիայով կամ առանց նրա:



Փուլ 4. *Ենթաստամոքսային գեղձի ուռուցքի էնուկլեացիա*

Իրականացվում է շրջանաձև էնուկլեացիա, ուռուցքից մի քանի մմ հեռավորության վրա ռրիհատոր կիրառվում է գերձայնային շշտար: Դեպի խորքը դիսսեկցիայի ժամանակ, ոչ մեծ անոթները, ենթարկվում են կաուտերիզացիայի կամ «եփվում» գերձայնային էներգիայի միջոցով:

Արյունը վիրահատական դաշտից հեռացվում է ասպիրացիայով, եթե առաջանում է արյունահոսություն, ապա նրա աղբյուրը մի քանի րոպե սեղմվում է:

Փուլ 5. *Ենթաստամոքսային գեղձի ուռուցքի էնուկլեացիա*

Ուռուցքը սնուցող մեծ տրամաչափի անոթները փակվում են 5 կամ 10մմ-ոց անոթային կլիպներով: Մասնահատված ուռուցքը տեղադրվում է պահուճակի մեջ և դուրս բերվում 12մմ-ոց տրոակարով: Շտապ հյուսվածաբանական հետազոտությունը թույլ է տալիս ճշտել ախտորոշումը և գնահատել մասնահատման եզրերը: Ինսուլինոմայի մասնահատումից առաջ ու հետո որոշվում է ինսուլինի մակարդակը:



Փուլ 6. *Հեմոստազ և դրենավորում*

Պանկրիատիկ հյութի արտահոսքը բացառելու համար, ուռուցքի բունոցը ծածկվում է ֆիբրինային սոսնձով: Ճարպոնային գրպանիկում, էնուկլեացիայի տեղին մոտ, թողնվում է ակտիվ դրենաժ:



Հետվիրահատական հետազոտություններ

- ✓ Գյուկոզայի մակարդակի մոնիտորինգ 24 ժամերի ընթացքում /ինսուլինոմայի ժամանակ/:
- ✓ Պլազմայի գլյուկոզայի հետազոտում ամեն 6-8 ժամը մեկ 48 ժամվա ընթացքում, ապա օրը 2 ամգամ, մինչև սովորական սնուցում անվերահսկելիությունը /ինսուլինոմայի ժամանակ/:
- ✓ Երկու օրը մեկ արյան կլինիկական անալիզ, էլեկտրոլիտներ, ամիլազա:
- ✓ Եթե դրենաժից արտադրանքը դառնում է ոչ թափանցիկ, անհրաժեշտ որոշել ամիլազայի ակտիվությունը:

Հետվիրահատական բարդություններ

Մոտակա՝

- պանկրեատիկ հյութի արտահոսք,
- սուր պանկրեատիտ,
- արյունահոսություն,
- վերքային ինֆեկցիա,
- չկարգավորվող հիպոգլիկեմիա, հիպերգաստրինեմիա:

Հեռավոր՝

- քրոնիկ արտաքին պանկրեատիկ խուղակ,
- պանկրեատիկ ասցիտ /ներքին խուղակ/,
- ենթաստամոքսային գեղձի կեղծ կիստա,
- շաքարային դիաբետ,
- կրկնվող պեպտիկ խոց /գաստրինոմայի ժամանակ/,
- հիպոգլիկեմիայի կրկնության բաց թողնված ինսուլինոմայի պատճառով, չբացահայտված արհեստական հիպոգլիկեմիա, ենթաստամոքսային գեղձի կղզյակների հիպերպլազիա, բազմակի էնդոկրին ուռուցքների համախտանիշ:

Փորձառու վիրաբույժի խորհուրդներ

Բաց էնուկլեացիա

- Նվազագույնի հասցրեք ենթաստամոքսային գեղձի տեղայնացումը, եթե ուռուցքի տեղակայումը բացահայտ է,
- Ներվիրահատական ԳՁՀ-ն օգնում է ուռուցքի հեռացման ժամանակ / էնուկլեացիա կամ մասնահատում/: Օգտագործեք այս հետազոտությունը, որպեսզի ստուգեք էնուկլեացիայից հետո գլխավոր պանկրեատիկ ծորանի անընդհատությունը
- Որպեսզի բացառվի ծորանի վնասումը, էնուկլեացիայի ընթացքում խուսափեք կարերից և մոնոպոլյար կոագուլյացիայից, օգտագործեք կարեր-բռնիչներ, բիպոլյար կաուտերիզացիա, բարակ կլիպներ և էնդարտերէկտոմիկ թիակ,
- էնուկլեացիայի տեղը թողեք բաց,
- ֆիբրինային սոսինձն ու օկտրեոտիդը չեն բացառում պանկրեատիկ խուղակի ձևավորումը,
- միշտ թողեք դրենաժ /դրենաժներ/:

Լապարասկոպիկ էնուկլեացիա

- Խորը դիսսեկցիայի համար ենթաստամոքսային գեղձի ու ինսուլինոմայի միջև կարող է շատ հարմար լինի էլեկտրավիրահատական կեռիկի կիրառումը,
- էնուկլեացիան իրականացրեք գերձայնային հսկողության տակ:
- Եթե էնուկլեացիան ընթանում է դժվար, պետք է անցկացնել լապարասկոպիկ կամ բաց ենթաստամոքսային գեղձի դիստալ մասնահատում:
- Կլիպավորեք ենթաստամոքսային գեղձի պարենխիման կտրվածքի խորքում 1սմ-ի երկյանքով, այն թույլ կտա փակել անոթները որոնք հետևից սնուցում են ուռուցքը և հնարավոր դարձնում փակել մանր պանկրեատիկ ծորանները:

Հարամպուլյար թարթիչավոր նորագոյացությունների տրանսդուոդենալ մասնահատում

Ներածություն

Հարամպուլյար քաղցկեղի կապակցությամբ ամպուլայի առաջին մասնահատման մասին հաղորդել է Halsted-ը 1899թ: Այս վիրահատական միջամտությունը զգալի նվազեցնում է վիրահատական ռիսկերն ու հնարավոր հետվիրահատական բարդությունները, սակայն ի տարբերություն առավել արմատական միջամտությունների, նրանցից հետո խիստ բարձր է հիվանդության կրկնությունների հաճախականությունը մշտական էնդոսկոպիկ ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Ցուցումներն ու հակացուցումները

Ցուցումներ՝

- բարորակ պերիամպուլյար թարթիչավոր ուռուցք,
- պանկրեատոդուոդենալ մասնահատման անընդունելի ռիսկ,
- հիվանդի նախընտրությունը կամ պանկրեատոդուոդենալ մասնահատումից նրանց հրաժարվելը

Հակացուցումներ՝

- մալիգնիզացիայի կասկած կամ հաստատում,
- պանկրեատիկ կամ ընդհանուր լեղածորանի 1,5 սմ-ից ավել տարածվածությամբ ուռուցք,
- մեծ ուռուցք />2,5սմ/, որը խոչնդոտում է վերակառուցման ու փակման համար համարժեք եզրեր ստանալուն:

Նախավիրահատական հետազոտություններ և պատրաստում վիրահատությանը

Նախամիրահատակային հետազոտություն՝

էնդոսկոպիա.

- ✓ բոլոր հիվանդների մոտ պարտադիր էնդոսկոպիա բիոպսիայով,
- ✓ բիոպսիայով ապացուցված չարորակացմանիկամ նրա բարձր հավանականության դեպքում, հատկապես ինվազիվ աճով ուռուցքների դեպքում, գերադասելի է արմատական մասնահատումը,
- ✓ չարորակացման մասին են խոսում՝ լեղածորանի և/կամ պանկրեատիկ ծորանի լայնացումը, պնդացած կամ խոցակալված ուռուցքները, ինչպես նաև հայտնաբերված դիսպլազիայի բարձր աստիճանը:

Նախազգուշացնող մեջբերումներ՝

- ⇒ էնդոսկոպիկ բիոպսիան 40% դեպքերում չարորակ ուռուցք չի հայտնաբերում,
- ⇒ ինվազիայի /ներթաիլ/ գնահատման առավել ճշգրիտ եղանակ է հանդիսանում ուռուցքի լրիվ հեռացումնուրբա հյուսվածքաբանական հետազոտությունը:

Ճառագայթային ախտորոշում

- ✓ էնդոսկոպիկ ռետրոգրադ խոլանգիոպանկրեատոգրաֆիա՝
- հանդիսանում է «ոսկյա» ստանդարտ,
- որոշում է ծորանով պաթոլոգիականգործընթացի տարածումը:
- ✓ Համակարգչային շերտանկարում՝ բացառում կամհայտնաբերում է ամկա տեղային բարդությունները /ծորանի լայնացում, պանկրեատիտ և այլն/ կամ մետաստատիկ գործընթացները:
- ✓ էնդոսկոպիկ գերձայնային սոնոգրաֆիա՝
- հմուտ մասնագետի կողմից իրականացնելիս կարող է հայտնաբերել տրանսմուրալ ինվազիա, տարածում ծորանով և ռեգիոնար ավշային հանգույցների ախտահարում,
- ճշգրտությունը հիմնականում պայմանավորված է հետազոտողի փորձով:

Պերիամպուլյար նորագոյացության տրանսդուոդենալ մասնահատում

Վիրահատություն

Փուլ 1. *Մոտեցում ու էքսպոզիցիա*

Հիվանդների մեծ մասի մոտ նախընտրելի է աջակողմյան ենթակողային կտրվածքը:

Ստուգման ժամանակ նախ և առաջ պետք է բացառվի լյարդի, ինչպես նաև ավշային հանգույցների ու որովայնամզի /հանդիպում է խիստ հազվադեպ/ մետաստատիկ ախտահարումը:

Որովայնի խոռոչի վերին հատվածների համար կիրառվող ամրացված մեխանիկական լայնիչը զգալի լավացնում է էքսպոզիցիան և հեշտացնում վիրահատությունը:

Լյարդային անկյունից դեպի ներքև հատոպտոզ տեղայնացումից հետո, իրականացվում է Կոխերի ընդլայնված գործողությունը, թույլ տալով տասներկումատնյա աղին տեղաշարժել միջայնուղղությամբ: Գեհատովամբ տասներկումատնյա աղու հետին պատը: Աղիքի կողմնային պատով իրականացվող շոշափման ժամանակ հայտնաբերվում են ուռուցքն ու ամպուլան:



A-1



Փուլ 2. *Դուոդենոտոմիա*

Կատարվում է թեք առաջկողմնային դուոդենոտոմիա:

Խոլեցիստէկտոմիան իրականացվում է սովորական ձևով: Պարկային ծորանով ու պտկիկով, դեպի տոսնեերկումատնյա աղի, անտեգրադ անցկացվում է փափուկ կաուետեր /օրինակ Ֆոգարտի լեղային կաուետերը/, օգնելով գտնել ամպուլան:

Ադենոմայի եզրերից նահանջելով 5-10մմ<, շրջ ակալ ուրծաթաղանթըէլեկտրակաուտերով ցիրկուլյար հատվումէ: Եզրերին դրված կարերը օգնում են բացազատել լորձաթաղանթը: Որպեսզի լորձաթաղանթը ուռուցքի հետ բարձրացվի և հեշտացվի մասնահատումը, ենթալորձային շերտ է ներարկվում է էպինեֆրինի /1:10000/ ֆիզիոլոգիականական լուծույթի խառնուրդ:



Փուլ 3. *Մասնահատում*

Հատման խորությունն ու երկարությունը որոշվում է նախավիրահատական և ներվիրահատական գնահատմամբ՝ ծորանը չներառող մակերեսային ուռուցքների դեպքում կարող է իրականացվել ենթալորձային մասնահատում, մինչ դեռ տրանսմուրալ ներաճով կամ դեպի ծորան տարածվող ուռուցքների պարագայում անհրաժեշտ է իրականացնել լիաշերտ ամպուլէկտոմիա:

Չախտահարված հյուսվածքներով շրջապատված ուռուցքների հատման համար կիրառվում է ասեղանման էլեկտրոդ: Բացասական եզրեր ապահովելու համար պահանջվում է ավելի լայն մասնահատում, ներառյալ ենթաստամոքսային գեղձի եզրը, ինչպես նաև պանկրեատիկ և ընդհանուր լեղածորանը: Կտորը մանրակրկիտ դիտարկվում է, դրվում են նշաններ շտապ հյուսվածքաբանական հետազոտության համար: Այս փուլում, ինչպես նաև վերակառուցման ընթացքէում զգալի օգնություն կարող է ցուցաբերել օպտիկական մեծացման հարմարանքը:

Եթե հայտնաբերվում է in situ կամ ինվազիվ քաղցկեղ, ընդունելի վիրահատական ռիսկերով հիվանդների մոտ առավել նպատակահարմար է անցնել ստանդարտ պանկրեատոդուոդենալ մասնահատման:



Փուլ 4. *Վերակառուցում*

Ուռուցքի բարորակ բնույթի հաստատումից հետո, սկսվում է տեղային վերակառուցումը, որի եղանակը կախված է մասնահատման երկարությունից և ծորանների անատոմիայից:

Ենթալորձային հատման տեղը վախվում է ներծծվող հանգուցակարելով՝ համադրելով ամպուլայի ու առաձգամատնյա աղու լորձաթաղանթները: Պետք է զգուշանալ ազատված ամպուլայի ռոնամասայի հատվածում տեղակայված պանկրեատիկ ծորանի լուսանցքը կտրելուց: Եթե այն չի հայտնաբերվում, ապա նրան գտնելու համար ենթերակային ներարկվում է սեկրետին /0.25պկգ/կգ/:

Ամպուլէկտոմիայից հետո դեֆեկտը կարվում է ներծծվող 5-0 կամ 6-0 հանգուցակարերով՝ պանկրեատիկ ու լեղածորանների մոտակա սեգմենտների համադրմամբ, որին հետևում է ամբողջ կոպլեքսի վերակառուցումը, ինչպես ենթալորձային հատման ժամանակ:

Ամպուլէկտոմիան կամ ավելի լայնածավալ մասնահատումը կարող են պահանջել պանկրեատիկ և լեղային ծորանների առանձնացված վերակառուցում՝

ա/ անհրաժեշտ է ծորանների անցանելիության գնահատում, որը իրականացվում է փոքր զոնդով,

բ/ կողմնային դուոդենոտոմիան կարվում է երկշարք կարով,

գ/ Մորրիսոնի տարածքում, տասերկումատնյա աղու երկայնքով, տեղադրվում է դրենաժ, որը աջ կողմնային պատով դուրս է բերվում որովայնի խոռոչից:





Հետվիրահատական ընթացք

-քիթ-ստամոքսային զոնդը հեռացվում է երեկոյան/վիրահատության հաջորդ առավոտը
-սովորական հետվիրահատական հետազոտություններ ու դիտարկման եղանակներ չեն պահանջվում:
-դրենաժը հեռացվում է հիվանդի սնվելուց հետո, բարդությունների բացակայության պայմաններում:

Տեղային հետվիրահատական բարդությունները

Մոտակա՝

- լարդի գործունեության և պանկրեատիկ ֆերմենտների շիճուկային ցուցանիշների անցողիկ բարձրացում /հազվադեպ են ունենում կլինիկական նշանակություն/,
- դուոդենալ պարունակության, լեղու կամ պանկրեատիկ հյութի արտահոսք,
- տասներկումատնյա աղու լուսանցքի արյունահոսություն,
- պանկրեատիտ:

Հեռավոր՝

- ընդհանուր լեղածորանի կամ պանկրեատիկ ծորանի նեղացում,
- տասներկումատնյա աղու նեղացում,
- թարթչավոր ադենոմայի կրկնություն /40% հավանականություն 10 տարում/
- ամպուլյար քաղցկեղի հնարավոր զարգացում /չարորակ կրկնություն/, որի համար անհրաժեշտ են հիվանդիպաթբերական ստուգումներ:

Հետվիրահատական դիտարկում

- ✓ վիրահատությունից 6 ամիս անց գաստրո-դուոդենոսկոպիա կողմնային դիտման հնարավորությամբ գործիքով, այնուհետև տարին երկու անգամ՝ առաջին 2 տարիների ընթացքում, իսկ հետո ամեն տարի,
- ✓ ուռուցքի կրկնությունը բացառելու համար մանրակրկիտ հետազոտվում են նեղացումները և իդեալական դեպքերում պանկրեատոդուոդենալ մասնահատումով վերացվում:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Ենթակողային կտրվածքը ապահովումէբավարարբավարար էքսպոզիցիա, զգալի հեշտացնելով մուտքն ու դիսսեկցիան:
- Թեք առաջ-կողմնային դուոդենոտոմիան ապահովումէ լավագույն էքսպոզիցիա, թույլ տալով անհրաժեշտության դեպքում երկարացնել կտրվածքը, իսկ հետագա երկշարք կարը չի բերում տասներկումատնյա աղու լուսանցքի նեղացման:

- Ընդլայնված Կոխերի գործողության իրականացումը պարտադիր է:
- Տասերկումատնյա աղու հետևում տեղադրված ծալված թանզիվը տեղաշարժում է գրանդէպի առաջ:
- Պարկային ծորանով անտեգրադ անցկացված կատետերը, թույլ է տալիս հայտնաբերել ու պահպանել ընդհանուր լեղածորանի ռետրոդուոդենալ հատվածը՝ հատկապես լիաշերտ հատման ժամանակ:
- Հեռացվող կոմպլեքսի եզրերին տեղադրված կարերը բարելավում են գրա էքսպոզիցիա և օգնում դիսսեկցիային:
- Մասնահատման և վերակառուցման ժամանակ շատ է օգնում օպտիկական մեծացմանհնարավորությունը:

ՔՐՈՆԻԿ ՊԱՆԿՐԵԱՏԻՏ

Ներածություն

Պանկրեատիտների ժամանակ ցավի պաթոգենեզի մասին գիտելիքների կուտակման և ենթաստամոքսային գեղձի մասնահատումների փորձի ավելացմանհետ, սիմպտոմատիկ քրոնիկ պանկրեատիտով հիվանդների մոտ ներկայումս վիրահատությունների հանդեպ ուշադրությունը դիստալ մասնահատումից /60-80-95% մասնահատում/ տեղափոխվել է պրոքսիմալ /պանկրեատոդուոդենալ մասնահատում/ և տասերկումատնյա աղու պահպանումով ոչ անատոմիական սուբտոտալ մասնահատումներին:

Ենթաստամոքսային գեղձի պրոքսիմալ մասնահատում

Քրոնիկ պանկրեատիտի ժամանակ ստամոքսի նախադռան պահպանմամբ Ուիպպլի վիրահատությունը հետապնդում են երկու նպատակ՝ առաջինը, գլխիկի հեռացում, որը հանդիսանում է քրոնիկ ցավի աղբյուր, ըստ Longmire՝ “պանկրեատիտի խթանիչ”: Ճիշտ ընտրված հիվանդների մոտ, գրեթե միշտ, արձանագրվում է ցավի թեթևացում և 75% դեպքերում՝ այն չի վերսկսվում: Մնացած դեպքերում հասնում են ցավի զգալի թեթևացման, որը բերում է հիվանդների ընդհանուր վիճակի զգալի լավացման, վերադարձնելովգրանց իրենց սովորական կյանքին:

Երկրորդը՝ ստամոքս-աղիքային տրակտի դիսֆունկցիայի նվազեցումնէ: Անատոմիական մոտեցումը կապված է ստամոքսի լրիվ պահպանման հետ, գործող նախադռով ու տասներկումատնյա աղու 3-5 սմ–ով: Լայն դիսսկեցիա նախադռան շուրջը չի կատարվում, թույլ տալով լրիվ պահպանել նրա արյան մատակարարումնուևյարդավորումը: Վերջինիս բնականոն

աշխատանքի համար հատկապես անհրաժեշտ է պահպանել ստամոքսի դիստալ հատվածի վագուսային /թափառող նյարդի/ նյարդավորումը:

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- հյուծող ցավեր որովայնում,
- քրոնիկ պանկրեատիտ/ենթաստամքսային գեղձում մնացորդային նեղացում ու ֆունկցիոնալ խանգարումներ, որոնք պահպանվում են առաջնային պատճառի ու այլ ապրող գործոնները վերացումից հետո,
- գեղձի գլխիկում գլխավոր պանկրեատիկ ծորանի /քորով կամ առանց նրա, լեղային նեղացում,տասներկումատնյա աղու ստենոզ, կամ գլխիկի պսևդոկիստա՝կեղծ անեվրիզմայով կամ առանց նրա/:
- ցավի էթիոլոգիան վերացված է /լեղային քար կամ ալկոհոլի ընդունում/,
- էնդոսկոպիկ բուժման անհաջողության դեպքում /էքստրակորպորալ լիտոտրիպսիայով կամ առանց նրա/:

Հակացուցումներ /պիլորուսի պահպանման դեպքում/

- նախորդած վագոտոմիա կամ չգործող նախադուռ /ստենոզ/,
- ենթաստամոքսայի գեղձի գլխիկի առաջ-վերին հատվածի քաղցկեղ,
- անամնեզում խոցային հիվանդության ծանր ընթացք,
- դուոդենումի կամ վերին միջընդերային երակի խցանում /համակարգչային շերտանկարման ժամանակ լյարդ-տասներկումատնյա կապանում հայտնաբերված խոշոր կոլլատերալներ:

Նախավիրահատական հետազոտություններ և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ Անհրաժեշտ են ՀՇ-ով ենթաստամոքսային գեղձի բոլոր հատվածների վիզուալիզացիա, ԷՌԽՊԳ, առանձին դեպքերում ներվիրահատական պանկրեատոգրաֆիա, դեղնուկի ժամանակ սովորաբար ցուցված է լեղային ուղիների դեկոմպրեսիա մինչև բիլիրուբինի ցուցանիշների նորմալացում:
- ✓ Նվազագույն ինվազիվ դրենավորման միջոցով անհրաժեշտ է, հասնել սուր բորբոքման կամ ինֆեկցիոն գործընթացի թուլացման:
- ✓ Կեղծ անևրիզմայի բացառման համար, գեղձի գլխիկի ներպանկրեատիկ կիստայի դեպքում հաճախ ցուցված է զարկերակային նկարահանում /արտերիոգրաֆիա/:

Եթե անևրիզման կա ապա պահանջվում է անոթի նախավիրահատական էմբոլիզացիա:

Հիվանդի պատրաստում՝

- ✓ Աղիների նախավիրահատական պատրաստում և ներերակային կանխարգելիչ հակաբիոտիկային թերապիա:

Պանկրեատոդուոդենալ մասնահատում

Վիրահատություն

Փուլ 1. Կտրվածք, տեղայնացում, տասներկումատնյա աղիք, նախադուռ, անտրալ հատված

Վերին միջային կտրվածքը, թրանման ելուստից իջեցված պորտից ներքև, ապահովում է առավելագույն էքսպոզիցիա: Մեխանիկական լայնիչը բարձրացնում ու ձգում է կողաղեղը, իսկ շարնիրային լայնիչը՝ լյարդն ու լյարդ-տասներկումատնյա կապանը:

Կլոր կապանի հատումը նրա որովայնային հատվածում հաճախ բարելավում է էքսպոզիցիան: Տասներկումատնյա աղին լայնորեն տեղայնացվում է՝ ըստ Կոխերի, վերին միջընդերային զարկերակի շուրջը: Ճարպոնային գրպանիկը բացվում է, թողնելով ճարպոնը ստամոքսին կպած:

Լայն դիսսեկցիան ազատում է տասներկումատնյա աղու կոճղեզի վեր- առաջային մակերեսն ու նախադուռը լյարդ-տասներկումատնյա կապանի էլեմենտներից, իսկ հետին-ստորին մակերեսը՝ ենթաստամոքսային գեղձի գլխիկի հետ կպումներից, աջ ստամոքս-ճարպոնային զարկերակից ու երակային հյուսակից, որոնք վերին միջընդերային երակի մակերեսին թափվում են աջ ստամոքս-ճարպոնային երակ: Նախադռան անոթալիճում լարդային կապերը, տասներկումատնյա աղու կոճղեզից վեր ու ներքև մանրակրկիտ պահպանվում են:

Նախադռան շրջանում, իրենց հիմքի մոտ, հատվում են՝ աջ ստամոքսային զարկերակը /սովորաբար ոչ մեկ մեծ անոթ/, վերին դուոդենալ անոթները, ինչպես նաև ստամոքս-ճարպոնային զարկերակն ու երակը՝ ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի մոտ:

Տասներկումատնյա աղու կոճղեզի դիսսեկցիան շարունակվում է 3-5սմ-ի վրա մինչև տասներկումատնյա աղու առաջին հատվածի ու ենթաստամոքսային գեղձի սահման, «անկյան» ձևավորումով: Սրանից ավելի դիստալ ենթաստամոքսային գեղձի ու տասներկումատնյա աղու միջև հանդիպում են շատ մանր ընդհանուր անոթներ: Այս անկյան մոտ տասներկումատնյա աղին կարող գործիքով հատվում է: Շարժուն դարցած ստամոքսն ու կարված տասներկումատնյա աղու առաջին հատվածը տարվում են դեպի որովայնի վերին ձախ քառորդակ:



Փուլ 1. /շարունակություն/

Ենթաստամոքսային գեղձի պարանոցի վերին ու ստորին եզրերին դրվում են կարեր-բռնիչներ, ապա զգուշորեն, վզիկի հետին ու վերին միջընդերային ու դուոդենալ միացման տեղի առաջային մակերեսների միջև ստեղծվում է տարածություն, որից հետո ենթստամոքսային գեղձի վզիկը հատվում է: Ծանր քրոնիկ բորբոքումով հիվանդների մոտ այս գործողությունը կարող է լինել բավականին դժվար:



Փուլ 2. Ենթաստամոքսային գեղձի գլխիկի հեռացում, տասներկումատնյա աղու մնացորդային և ընդհանուր լեղածորանի դիստալ հատվածների հետ:

Նման մասնահատումը չի տարբերվում քաղցկեղի ժամանակ իրականացվող մասնահատումներից, բացի այն, որ վերին միջընդերային զարկերակից աջ տեղակայված ավշային գեղձերի հեռացումը պարտադիր չէ: Որպեսզի անջատենք կեռիկանման ելուզը վերին միջընդերային ուղղահոսովանցքող առաջին բարակաղիքային երակներից, նրան կարելի է սեղմել: Արյան կորստի նվազեցման համար վիրաբույժը հիվանդի ձախ կողմից ձախ ձեռքի մատերի միջև սեղմում է ենթաստամոքսային գեղձի գլխիկն ու կեռիկանման ելունը, փակելով անոթները՝ վերին միջընդերային զարկերակի և դռներակի հետևի շրջանում:

Դռներակի վրա գլխավոր պանկրեատիկ ծորանի հատման ժամանակ հարկավոր է խուսափել էլեկտրակոագուլյացիայից, որը ինչպես և հարմոնիկ նշտարը առավել հարմար է գեղձի պարենխիմայի հատման ընթացքում:



Փուլ 3. Նոր տասներկումատնյա աղու պատրաստումը

Գերձայնային նշտարով հատվում են լնդերային անոթային կապերը բարակ աղու պրոքսիմալ հատվածի հետ: Տրեյցի կապանից 6-8 սմ ավելի դիստալ՝ կարող գործիքով հատվում է բարակ աղին: Միջաձիգ հաստ աղու միջընդերքի անոթներից զուրկ հատվածում, միջին խթաղիքային երակից անմիջապես աջ, բացվում է պատուհան:

Տրեյցի կապանում առաջացածդեֆեկտը, ներքին ճողվածքի կանխարգելման համար, փակվում է:

Կատարվում է գեղձի ծայրատի ներվիրահատական ռենտգենյան պանկրեատոգրաֆիա, եթե ծորանի այս հատվածը նախավիրահատական ԷՌԽՊԳ-ի ընթացքում չի հայտնաբերվել: Եթե պանկրեատոգրաֆիայի ժամանակ հայտնաբերվում են «լճերի շղթայի» ձևով կառուցվածքներ, կարող է առաջանալ անհրաժեշտություն գեղձի մարմնի կամ պոչի մասնակի երկայնակի կողմնային հատման ու պանկրեատիկոյեյունոստոմայի ձևավորման:





Փուլ 4. *Պանկրեատիկ բերանակցում*

Պանկրեատիկ ու լեղային բերանակցումները ձևավորվում են հետխթաղիքային ուղիով, իսկ դուոդենոյեյունոբերանակցումը՝ առաջ խթաղիքային: Բերանակցումները տեղակայվում են այնպես, որ անբավարարության դեպքում լեղային ու պանկրեատիկ բերանակցումը մեկուսացվեն դուոդենոյեյունոբերանակցումից, նվազագույնի հասցնելով ստամոքսի դատարկման հետ կապված դժվարությունները:

Բարակ աղու պրոքսիմալ ծայրատը որովայնի խոռոչի վերին հարկ է տեղափոխվում միջաձիգ հաստ աղու միջընդերքհպատոռհանով: Ստամոքսը պահպանված նախադռով ու տասներկումատնյա աղու կոճղեզով տեղադրվում է միջաձիգ խթաղու վրայից՝ թույլ տալով ձևավորել անատոմիորեն առանձնացված դուոդենոյեյունոբերանակցում:

Ենթաստամոքսային գեղձի ծայրատի նորմալ 2-3մմ ծորանով հիվանդների մոտ ավելի հաճախ է առաջանում պանկրեատիկոյեյունոբերանակցման անբավարարություն:



Փուլ 5. Պանկրեատիկոյեյունոբերանակցում

Պանկրեատիկոյեյունոբերանակցման տեխնիկան ներառում է սերոզ-մկանային ռեզերվուարի ստեղծում, բաղկացած ստենտավորված “ծայրը-կողքին” և “լորձաթաղանթ-

լորձաթաղանթային” բերանակցումներից, վերջինսպասակահարմարէ ձևավորել օպտիկական մեծացման տակ:

Սկզբից 3-0 մետաքսաթելով ձևավորվում է բերանակցման հետին արտաքին պատը, հանգույցները կապվում են դիմացից: Պանկրեատիկ ծորանի դիմաց ոչ մեծ կտրվածքովբացվումէ բարակ աղու լորձաթաղանթը: Առանձին 6-0 պոլիգլիկոլային թելերով ստեղծվում է «լորձաթաղանթ-լորձաթաղանթային» բերանակցում: Արտաքինից, միկրոսկոպի խոշորացման միջոցով, ներքին շերտի լորձաթաղանթային կարերի ճշգրիտ կատարումը հանդիսանում է նման վիրահատության կարևորագույն մաս: Վերջին /առաջային/ կարը դնելուց անմիջապես առաջ ծորանի մեջ տեղադրվում է 4 սմ երկարությամբ ռենտգենպոզիտիվ 3Fr տրամագծով ստենտ, մակերեսվրա բազաթիվ անցքերով: Վերջին առաջային կարի մոտ ստենտը՝ իր միջին մասում, ոչ շատ ամուր 6-0 թելով ամրացվում է աղիքի լորձենուն: Այն ապահովում է լորձաթաղանթների համադրումն ու պանկրեատիկ ծորանի դեկոմպրեսիան: Կարը ինքնուրույն պոկվում է 2 շաբաթից: Նրա դիրքը ռենտգենաբանորեն կարող է ստուգվել: Բերանակցումը ավարտվում է առաջային արտաքին շերտի կարերով /3-0 մետաքսաթելի/:

Եթե ենթաստամոքսային գեղձի ծայրատում կան լայնացած ծորաններ՝ “լճերի շղթայի” ձևով, պետք է կիրառվի երկայնակի “կողքըկողքին” բերանակցման տեխնիկան:



Փուլ 6. *Լեղային բերանակցում*

Լեղածորանի ու բաբախապող միաշարք “ծայրը-կողքին” բերանակցումը դրվում է 5-0 պոլիդիոքսոնի հանգուցակարերով: Հանգույցների վրա քարերի առաջացման բացառման համար, նրանք կապվում են արտաքինից: Բաբախապող գալարը 3-0 մետաքսաթելով ֆիքսվում է միջաձիգ հաստ աղու միջընդերքին:



Փուլ 7. Առաջհաստաղիքայինդուոդենոյեյունոբերանակցում

Ինտակտ ստամոքսը, տասներկումատնյա աղու առաջին հատվածն ու ճարպոնը դրվում են լայնակի հաստ աղու վրայից: Բարակ աղեգալարը /միջաձիգ հաստ աղու միջընդերքից դուրս գալուցիեառ/ մոտեցվում է մեխանիկական կարերով փակված տասներկումատնյա աղու եզրին և նրանցմիջև, Տրեյցի կապանից 10սմ դիստալ ձևավուրվում “ծայրը-կողքին” երկշարք բերանակցում: Ներքին շերտը իրականացվում է անընդհատ կարով /3-0 ներծծվող թել/, իսկ արտաքինը՝ 3-0 մետաքսի հանգուցակարերով:

Լեղային ու պանկրեատիկ բերանակցումների տակ տեղադրվում են 15 Fr տրամագծով դրենաժներ և դուրս բերվում աջ վերին քառորդակով: Միջային կտրվածքի ապոնևրոզը կարվում է 0 համարի պոլիգլիկոնատի առանձին ութաձև կարերով :



Հետվիրահատական շրջան

- ✓ հետվիրահատական դիտարկում,
- ✓ քիթ-ստամոքսային զոնդը հեռացվում է հետվիրահատական 1-3 օրերին,
- ✓ դրենաժները հեռացվում են, երբ ամիլազայի ցածր ակտիվության պայմաններում, արտադրանքի քանակը հասնում է օրը 30-50մլ-ի,
- ✓ բերանով սնուցումը՝ ըստ նրա ընդունման հնարավորության:

Հետվիրահատական բարդություններ

Մոտակա՝

- ➢ ներորովայնային արյունահոսություններ՝ պետք է հետազոտվեն կապելքլվերը նշված խոշոր անոթների վրա /կեղծ անևրիզմաներ/ և ենթաստամքսային գեղձի ծայրատը,
- ➢ ստամոքս-աղիքային արյունահոսության դուոդենոյեյունոբերանակցման կամ պանկրեատիկոյեյունոբերանակցման շրջանից,
- ➢ ստամոքսի դատարկման դանդաղում,
- ➢ բերանակցման անբավարարություն՝ հաճախ պանկրեատիկոյեյունոբերանակցման հետ կապված, չնայած հնարավոր են նաև խոլեդոխոյեյունոբերանակցման ու դուոդենոյեյունոբերանակցման դեպքում,

- ներորովայնային թարախակույտ՝ սովորաբար կապված է բերանակցման կարճատև կամ երկարատև անբավարարության հետ,
- վերքային ինֆեկցիա,
- աղիքային անանցանելիություն՝ պետք է բացառվի ներքին ճողվածքը:

Հեռավոր՝

- կրկնություն /ռեցիդիվ/ էպիգաստրալ շրջանում,
- արտալյարդային դեղնուկ խոլեդոխոյեյունոբերանակցմաննեղացման հետևանքով:
- ենթաստամոքսային գեղձի անբավարարության՝ հիվանդության պրոգրեսիաի /քրոնիկ պանկրեատիտ/ կամ պանկրեատիկոյեյունոբերանակցմաննեղացման պատճառով,
- կպումային աղիքային անանցելիության,
- բերանակցման կամ դուոդենոյեյունոբերանակցման հատվածում 12-մատնյա աղու խոց,
- ենթաստամոքսային գեղձի քաղցկեղ, որի հնարավոր զարգացումը չի գերազանցում տարում 1%:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Քրոնիկ պանկրատիտի ժամանակ, ցավի թեթևացման լավագույն միջոց է հանդիսանում ենթաստամոքսային գեղձի մասնահատումը, իրականացված վերը բերված անատոմիական չափորոշիչների խիստ համապատասխան ընտրությամբ:
- Մեծ արյան կորուստը ծանրացնում է հետվիրահատական ընթացքը: Դրանից խուսափելու համար չներծծվող թելերով անոթները եռակի կապվում են: Մանր երակների հատման համար, հատկապես տեղակայված աջ ստամոքս-ճարպոնային անոթների շուրջը կամ վերդուոդենալ շրջանում, օգտագործեք գեղձայնային մկրատ: Նման տեխնիկան հարմար է նաև Տրեյցի կապանի շրջանի միջընդերային անոթային կապերի մեռակման համար՝ պրեպարատի հետ հեռացվող ընթացակարգում պրոքսիմալ հատվածում:
- Ենթաստամոքսային գեղձի գլխիկի դորզալ մակերեսից ավշային անոթների կպումների անջատման ժամանակ, հիվանդից ձախ կանգնած վիրաբույժը, աշխատելով ձախ ձեռքով, կարող է արյան կորուստը վերին ընդերային զարկերակի շրջանում հասցնել նվազագույնի:
- Հյուսվածքային ոտիկները հատվում են, ըստ դիսսեկցիայի առաջացման՝ վերին միջընդերային զարկերակի երկայնքով: Ոտիկների հատման ժամանակ, նրանցից ամեն

մեկի համար օգտագործվում է մեկ սեղմիչ, դրված մնացող կողմից: “Գնացող” կողմը օգնականը սեղմում է ձախ ձեռքով:

- Մեծ ճարպոնի լրիվ պահպանումը, նվազեցնում է հետվիրահատական ինֆեկցիայի վտանգը որովայնի խոռոչում:
- Ենթաստամոքսային գեղձի ծայրատի դրենավորման համարժեքությունը գնահատվում է ներվիրահատական ռենտգենյան պանկրեատոգրաֆիայով: Վերջինիս համար օգտագործվում է եզրային բալոնով խոլանգիոգրաֆիկ կաթետեր:
- Եթե պանկրեատիկոյեյունոբերանակցման համար օգտագործվում է մանր պանկրեատիկ ծորան, առավել ապահով է բերանակցումը իրականացնել խոշորացման տակ, խուսափելով թելերի խաչաձևումից: Հսկելով ծորանից աղի ասեղի ընթացքը, կարելի է հասնել ծորանի հետ ավելի ճշգրիտ “լորձաթաղանթ լորձաթաղանթին” բերանակցման: Հնարավոր անբավարարությունը նվազագույնի հասցնելու համար օգտակար է X12,5 խոշորացման վիրաբուժական մանրադիտակի կիրառումը:
- Խոլեդոխոյեյունոբերանակցման ժամանակ բոլոր կարերը պետք է կապվեն արտաքինից, իսկ ներծծվող թելը չպետք է ենթարկվի լեղու հոսքի ազդեցությանը:
- Առաջ հաստաղիքային դուոդենոյեյունոբերանակցումը, ի տարբերություն հետ հաստաղիքայինի, տեխնիկապես զգալի նվազեցնում է խնդիրները, կապված ստամոքսի դատարկման դժվարացման հետ:

Ոչ անատոմիական մասնահատումներ /ըստ Ֆրեյ-Բեգերի/

Ներածություն

Ենթաստամոքսային գեղձի գլխիկի տեղային, ոչ անատոմիական երկայնակի պանկրեատիկոյեյունոբերանակցումով մասնահատումը /Ֆրեյի վիրահատություն/ և գլխիկի սուբտոտալ մասնահատումը /անատոմիական/ 12-մատնյա աղու պահպանումով /Բեֆերի վիրահատություն/ հետապնդում են նմանատիպ նպատակներ՝ ցավի թեթևացում և պանկրեատիտի հետ կապված տեղային բարդությունների բուժում /լեղային, դուոդենալ կամ երակային խցանման վերացում, պանկրեատիկ ծորանի դրենավորում, տարածուն բորբոքային ինֆիլտրատի ժամանակ ենթաստամոքսային գեղձի սուբտոտալ մասնահատում/: Նման մոտեցումը հիմնավորվում է այն կարծիքով, թե քրոնիկական պանկրեատիտի ժամանակ ցավը առաջանում է որպես հետևանք ծորանային հաճակարգի կամ պարենխիմայի հիպերտենզիայի, ինչպես նաև նյարդերի բորբոքումների «գոգռման»: Համարվում է, որ ենթաստամոքսային գեղձի գլխիկի հյուսվածքը դառնում է ցավ առաջացնող կամ նրա գեներատոր: Արդյունքում ենթաստամոքսային գեղձի սուբտուտալ մասնահատմամբ հնարավոր է դառնում, առանց ծանր

բարդությունների, հեռացնել «ցավ առաջացնող» հատվածի ծավալի քանակ և պահպանել ստամոքս-աղիքային տրակտի անընդհատությունը:

Ցուցումներ և հակացուցումներ

Ցուցումներ

- սովորաբար երկարատև հյուծող ցավ որովայնում, առանձին դեպքերում ընդհատումներով ու հաճախակի կամ կապված սուր պանկրեատիտի կրկնվող նոպաների հետ,
- քրոնիկ պանկրեատիտի հետևանքով առաջացած բարդությունների լուծում՝ կապված պանկրեատիկ և արտապանկրեատիկ կառուցվածքների հետ, այդ թվում՝
    - ⇒ արտապանկրետիկ՝ ընդհանուր լեղածորանի կամ տասներկումատնյա աղու խցանում, առանձին դեպքերում դուոդենալի և/կամ վերին միջընդերային երակի ճնշում:
    - ⇒ պանկրեատիկ՝
        - պարենխիմային՝ սպիացում, ծորանի բազմակի ֆիբրոզ նեղացումներ /«լճերի շղթա»/ համակցված կրակալկոմբ, ծորանային հիպերտենզիա, ռետենցիոն կիստաներ, քարեր ծորաններում:
        - ծորանային համակարգի պատռվածք, մեկուսացված-կեղծ կիստաներ, չմեկուսացված՝ ասցիտ, խուղակ պլևրալ կամ պերիկարդիալ:
- ծորանի դրենավորման կամ ենթաստամոքսային գեղձի դիստալ մասնահատումից հետո ցավի ոչ բավարար թեթևացում,
- Pancreas divisum, առաջացնող քրոնիկ պանկրեատիտ:

Բացարձակ հակացուցումներ՝

- Անամնեզում ալկոհոլիզմի, հիպերլիպիդեմիայի, հիպերպարաթիրեոիդիզմի բացակայությունը, ոչ երկար ցավային անամնեզում CA 19-9–ի շիճուկային մակարդակի ցուցանիշի բարձրացումը թույլ են տալիս մտածել չարորակ ուռուցքի առկայության մասին,
- եթե հնարավոր չէ բացառել քաղցկեղը, պլանավորվում է պանկրատոդուոդենալ կամ գեղձի դիստալ մասնահատում,
- վերին միջընդերային երակի ու դուոդենալի միացման տեղի լրիվ թրոմբոզ, պերիպանկրեատիկ վարիկոզով:

Հարաբերական հակացուցումներ՝

- հիվանդությաւն սահմանափակված գեղձի մարմնով ու պոչով /հազվադեպ/:
- նույն ծավալներով թմրամիջոցների ընդունում, հիվանդի հրաժարում հետվիրահատական դետոկոսիկացիայից:
- հետվիրահատական շաքարային դիաբետի կորեկցիայի անհնարինություն սպասվող հիվանդի վատ համագործակցության հետևանքով:
- վերին միջընդերային երակի ու դռներակի միացման տեղի խցանում թեթև կամ չափավոր դրունքային հիպերտենզիայով:

Այլ նկատառումներ՝

- «Փոքր» պանկրեատիկ ծորանը /<3-4մմ/ գեղձի գլխիկում, մարմնում կամ պոչում չեն հանդիսանում հակացուցում:
- Ծորանները ենթաստամոքսային գեղձի գլխիկում /մարմնում կամ պոչում/ կամ հատված են, կամ բացված, ինչը նվազեցնաւմէ ճնշումը նրանց մեջ ևբարակաղեգալարը՝ ըստ Ռաւ-ի, կարող է կարվել ենթաստամոքսային գեղձի պատյանին:

Նախավիրահատական հետազոտություններ և վիրահատության պատրաստում

Նախավիրահատական հետազոտություն՝

- ✓ անամնեզով պետք է բացառվեն ալկոհոլային կամ նարկոտիկ կախվածությունը, լեղաքարային հիվանդությունը, պանկրեատիտը սրացնող դեղամիջոցների ընդունումը, հիպերպարաթիրեոիդիզմը, հիպերկալցեմիան և հիպերլիպիդեմիան:
- ✓ անհրաժեշտ է հայտնաբերել ստեատորեա և շարքային դիաբետ /եթե նրանք կան/, անհրաժեշտության դեպքում որոշել ինսուլինի օգտագործման քանակը, որոշել նաև ցավի ծանրությունը /Լիկերտի սանդղակ/, փսիխո-սոցիալ կայունությունը, կյանքի որակը /պարտադիր չէ/՝ըստ քաղցկեղի հետազոտության ու բուժման եվրոպական կազմակերպության /EORTC/, կյանքի որակի սանդղակի /QZQ-C30/, ցավի ազդեցությունը աշխատանքի վրա, ընտանիքի օգնությունը, ամենօրյա ակտիվությունը:
- ✓ գնահատվում է հիվանդի քիմիական կախվածության աստիճանը /նարկոտիկներ, ալկոհոլ/, բացառվում ցավի արտապանկրեատիկ բնույթը, իրականացվում առավելագույն կոնսերվատիվ բուժում, ներառած սնունդը, ֆերմենտային թերապիան, բացառվում ալկոհոլի ընդումը: Անհրաժեշտ է մինչ վիրահատություն հիվանդից ստանալ հետվիրահատական ռեաբիլիտացիայի անցնելու վերաբերյալ պարտավորություն, հրաժարվելով ալկոհոլից և/կամ թմրամիջոցներից:

- ✓ կլինիկական ուսումնասիրություններից կարևորվում են դեղնուկի, ասցիտի, սնուցվածության վիճակի, քաշի, հոգեկան առողջության գնահատումը: Ըստ ցուցումների ենթաստամոքսային գեղձի ընթացիկ էկզոկրին ու էնդոկրին գործոնեության վիճակը:
- ✓ լաբորատոր հետազոտություններից՝ուռուցքային մարկերներ CA 19-9 /առավել հավաստի է ընդհանուր լեղածորանի անցանելիության պահպանման պարագայում/, լյարդի ֆունկցիոնալ տեստեր, հեմոգլոբին, գլյուկոզայի տանելիության տեստ: Կղանքում ճարպի պարունակության և սեկրետինի հետազոտությունը հազվադեպ են պահանջվում:
- ✓ ճառագայթային ախտորոշում՝ *եռաֆազ սպիրալային ՀՇ*՝ ենթաստամոքսային գեղձի ստրիկտուրաների գնահատման, դրենիրման և ձախակողմյան հիպերտենզիայի կամ փայծաղային երակի թրոմբոզը, հարևան օրգանների ներառման, պանկրեատիտի արտաենթաստամոքսային պատճառների /խոլելիթիազ/ հայտնաբերման համար; *ԷՈՒԽՊԳ*՝ լեղուղիների և ենթաստամոքսային գեձի ծորանային համակարգի գնահատման համար, ինչպես նաև *ԷԳԴՍ*՝ խոցային հիվանդության բացառման համար: Ըստ ցուցումների՝ էնդոսկոպիկ կամ ներվիրահատական ԳՋՀ անոթների ներգրավածության գնահատման և բիոպսիայի համար:

Հիվանդի պատրաստում՝ նախավիրահատական կանխարգելիչ թերապիա լայն ազդեցության սպեկտրի հակաբիոտիկներով, աղիների լրիվ պատրաստում, քիթ-ստամոքսային զոնդ, միզապարկի կատետեր:

Ենթաստամոքսային գեղձի գլխիկի տեղային մասնահատում, երկայնակի պանկրեատիկոյեյունոբերանակցումով /Ֆրեյի վիրահատություն/

Վիրահատություն

Փուլ 1. Էքսպոզիցիա և ստուգում, ենթաստամոքսային գեղձի գնահատում և տեղայնացում, մուտք դեպի փոքր ճարպոնի խոռոչ

Հիվանդների մեծ մասի մոտ իրականացվում է երկկողմանի ենթակողային կտրվածք: Միջային կտրվածք թրանման ելունից մինչև պորտ, կատարվում է ուղղահայաց կողմնորոշված կողաղեղներով հիվանդների մոտ:

Ստամոքս-ճարպոնային կապանի հատումը խթաղու լյարդային ու փայծաղային անկյունների միջև, բացում է փոքր ճարպոնի խոռոչը: Որպեսզի մերկացվի ենթաստամոքսային գեղձի գլխիկի ու մարմնի առաջային մակերեսը աջ ստամոքս-ճարպոնային զարկերակն ու երակը հատվում են:

Ստամոքսի գլխամասային ու միջաձիգ խթապատվածային ձգումը ապահովում է ենթաստամոքսային գեղձի մարմնի ու պոչի մերկացում:

Ենթաստամոքսային գեղձի առաջային մակերեսի լրիվ էքսպոզիցիայի համար տեղայնացվում են նաև նրա մարմնի ու պոչի ստորին եզրը:



Փուլ 2. Ենթաստամոքսային գեղձի գլխիկի էքսպոզիցիան

Տասներկումատնյա աղին ու ենթաստամոքսային գեղձի գլխիկը տեղայնացվում են՝ ըստ Կոխերի ընդլայնված գործողության, թույլ տալով ձեռքով շոշափել ենթաստամոքսային գեղձի գլխիկի երկու կողմերը, որոշելու համար նրա հաստությունը՝ ծավալային գոյացության առկայությունը:

Ստամոքս-տասներկումատնյա զարկերակը կարելի է վերցնել անոթային բուլիչիով և եթե գլխիկի մասնահատման ժամանակ պահանջվի՝ կապել /հազվադեպ/:



Փուլ 3 Վերին միջընդերային երակի էքսպոզիցիան ենթաստամոքսային գեղձի գլխիկի մոտ

Կարևոր է, որ դռնեթակը պետք չի ազատել ենթաստամոքսային գեղձի գլխիկի մոտ: Որպեսզի ապահովվի օպտիմալ էքսպոզիցիա, անհրաժեշտ է մերկացնել վերին միջընդերային երակը գլխիկի ու գեղձի կեռիկանման ելուճի մոտ:

Գլխիկի ու կեռիկանման ելուճիմեերկացումը կարևոր է ոչ միայն ելուճը հատելու, այլ և ենթաստամոքսային գեղձի հյուսվածքի բավարար եզր ստեղծելուհամար, որին կկարվի՝ ըստ Ռու-ի, առանձնացված բարակ Y-ա ձև աղեգալարը:

Պեռիէնտակիեն վերին միջընդերային երակի կողմից դեպի գլխիկ ընթացող մանր երակային ու զարկերակային ճյուղերը: Հատկապես պետք է ուշադիր լինել ներքևից՝ տասներկումատնյա աղու երրորդ հատվածից, դեպի վերին միջընդերային երակ երակային ներհոսքերիհանդեպ: Անհրաժեշտ է հիշել, որ ստորին պանկրեատոդուոդենալ զարկերակը որոշ դեպքերում կարող է ընթանալ վերին միջընդերային երակի դիմացով, այլ ոչ թե հետևով:



Փուլ 4. *Գլխավոր պանկրեատիկ ծորանի մերկացումը*

Գլխավոր ծորանը ենթաստամոքսային գեղձի մարմնում սովորաբար տեղակայված է էքսցենտրիկ՝ վերին եզրին և գեղձի հետին մակերեսին ավելի մոտ: Եթե այն լայն է, կարող է արտափքվել գեղձի առաջային մակերեսից, ոչ մեծ ծորանը սովորաբար շոշափվում է որպես օրգանի առանցքի երկայնքով տեղակայված "ակոս":

Ոչ մեծ ծորանը նույնականացվում է 10 մլ-ոց ներարկիչին միացված 23 G-ոց ասեղ-թիթեռնիկով, որն ուղղվում է թեք և հետ՝ ենթադրյալ ծորանի ուղղությանը համապատասխան: Պետք է խուսափել գեղձի վզիկի շրջանում փնտրտուկից/ասպիրացիայից, որպեսզի նվազագույնի հասցվի նրա տակով անցնող վերին միջընդերային երակի վնասմանհավանականությունը: Մաքուր հեղուկի ասպիրացիան հանդիսանում է հայտնաբերման ծորանի ցուցանիշ:

Ծորանում ճնշումը հաշվարկվում է ասեղը միացնելով մանոմետրին, ենթաստամոքսային գեղձի միջին ճնշումը քրոնիկ պանկրեատիտի ժամանակ համապատասխանում է 33 սմ ջրի սյան /20-47սմ ջ.ս.շրջանակներում/, ի տարբերություն նորմալ ծորանային ճնշման՝ 10 սմ ջ.ս.:

Ասեղը թողնվում է ծորանում:

Վիրսունգյան ծորանը գեղձի վզիկի շրջանում սովորաբար տեղակայված է էկսցենտրիկ, քիչ վեր ու հետ /ավելի մոտ վերին միջընդերային ու դրունքային երակների միացմանը/:





Փուլ 5. Ենթաստամոքսային գեղձի ծորանային համակարգի բացումը

Ենթաստամոքսային գեղձի առաջային պատյանը էլեկտրոկաուտերով անմիջապես հատվում է ասեղի վրայով, զոնդավորման և ուղղության որոշման համար կիրառվում է ուղիղ անկյան տակ թեքված սեղմիչ:

Ծորանի առաջային պատը հատվում է մինչև պոչից 1.5սմ-ի վրա տեղակայված կետը: Դեպի տասներկումատնյա աղիք այն հատվում է մինչև 0.5-1.0սմ չհատած լյարդա-ենթաստամոքսային ամպուլայիև:

Դռներակի վրայով անցնելուց հետո, ծորանը իջնում է դեպի հետ ու հետո ընթանում ստորին կողմնային ուղությամբ, ենթաստամոքսային գեղձի գլխիկում անցնելով ավելի մոտ պատյանի հետին թերթիկին:

Կեռիկանման ելունից ծորանը դեպի վիրսունգյան ծորան /գլխիկի կենտրոն/ նույնպես անցնում է գեղձի հետին մակերեսին մոտ և բացվում է ուղիղ անկյան տակ ծռված սեղմիչի օգնությամբ, ինչը թույլ է տալիս որոշել նրա ուղղությանը:

Իրականացվում է պանկրեատիկ քարերի փնտրտուկ կողմնային ճյուղերում և նրանք բոլորը հեռացվում են:

Ամպուլայի անցանելիության և գլխիկի մասնահատման համապատասխանության գնահատման համար, վիրաբույժը զոնդի /Bakes-ի 2-3մմ դիլյարատոր/ լայնիչ/կամ կեռ սեղմիչի եզրը մտցնում է բաց վիրսունգյան ծորան և հրում է նրան դեպի տասներկումատնյա աղու պատի մեջ ներհրված մատը:

Տասներկումատնյա ամպուլայով դեպի աղիք անց է կացվում սեղմիչ:

Ենթաստամոքսային գեղձի գլխիկը, որտեղ տեղակայված է պանկրեատիկ ծորանի ամպուլյար հատվածը գտնվում տասներկումատնյա աղու մոտ: Գլխավոր պանկրեատիկ ծորանի ոչ հաջող հատումը, մինչև տասներկումատնյա աղի առանց դրենավորման կթողնի վիրսունգյան ծորանի մի զգալի հատված իր վտակներով: Նման իրավիճակ առաջանում է, երբ ամպուլայի հայտնաբերման համար որպես նշագիծ ընդունվում է պանկրեատոդուոդենալ միացման առաջային մակերեսը: Ջհատված ոչ մեծ ռետենցիոն կիստաները, կապված ծորանիվտակների հետ ու տեղակայված ֆիբրոզ փոփոխված օրգանի գլխիկի խորքում, նույնպես կարող են դառնալ շարունակվող ցավի աղբյուր:







Փուլ 6. Ենթաստամոքսային գեղձի գլխիկի տեղային մասնահատումը

Բաց պանկրեատիկ ծորանից առաջ դիսսեկցիայի ժամանակ, պանկրեատիկ հյուսվածքը հատվում է շերտ առ շերտ, որի ժամանակ հեռացվում է գեղձի պատյանի առաջային թերթիկը և ամբողջ պարենխիման մինչև վիրսունգյան ծորան: Որպեսզի որոշվի հյուսվածքի քանակը, որը դեռ պետք է հեռացվի, ենթաստամոքսային գեղձի գլխիկի մնացած շերտի հաստությունը մանրակրկիտ գնահատվում է ամեն մի կտրվածքից հետո:

Գեղձի գլխիկում վիրսունգյան ծորանի հետին պատը համապատասխանում է մասնահատման հետին սահմանին, քանի որ գտնվում է գեղձի հետին մակերեսից մի քանի միլիմետրի վրա:

Սանտորինյան ծորանն ու նրա բերողծորանները, ենթաստամոքսային գեղձի գլխիկում, տեղակայված են առջևից, և նրանից, առջևում տեղակայված հյուսվածքներին հատվում են: Ի տարբերություն սրա կեռիկանման ելունի ծորանն ու նրա բերողծորանները, ինչպեսնաև վիրսունգյան ծորանը տեղակայված են ավելի հետ և սրանք պետք է բացազատվեն, բայց չհատվեն, քանի որ կարող է վնասվել գեղձի հետին մակերեսի պատյանը, մերկացնելով հետորովայնամզային տարածության հյուսվածքները:

Մասնահատումից հետո մնացածենթաստամոքսային գեղձի գլխիկի հյուսվածքների մանրակրկիտ շոշափումը, օգնում է ծորանի ուբերողծորանների համակարգում հայտնաբերել մնացորդային կիստաներ կամ ներհրված քարեր որոնք անհրաժեշտ է հեռացնել:

Սրտանիցհետո, տասներկումատնյա աղու պայտի ներքին մակերեսին մնում է միայն պանկրեատիկ հյուսվածքի շրջանակ, 5-10 մմ-ոց հյուսվածքների շերտը պետք է պահպանվի նաև վերին միջընդերային երակից աջ, որպեսզի խուսափենք նրա վնասումից:

Հատված ֆիբրոզ հյուսվածքի քաշը պետք է լինի մոտ 4-12 գր: Այն ավելի քիչ է քան ընդհանուր հեռացված հյուսվածքների քանակը, քանի որ վերջիններիս որոշ հատված “եփվում” է հատման ժամանակ:

Եթե կան չափորակման վերաբերյալ կասկածներ, մասնահատված հյուսվածքը կարող է ուղարկվել շտապ հյուսվածքաբանական հետազոտության: Քաղցկեղի հայտնաբերման դեպքում պետք է կատարվի պանկրեատոդուոդենալ մասնահատում:



Փուլ 7, Ընդհանուր լեղածորանի վնասման կանխարգելումը

Քրոնիկ պանկրեատիտով հիվանդների մոտ 50%-ի մոտ ռենտգենաբանական տվյալները խոսում են ընդհանուր լեղածորանի ոլորվածության, ծռվածության և նեղացման մասին: Զգալի նեղացումների պարագայում մասնահատման ենթարկված հիվանդների 10%-ում, հայտնաբերվում են ընդհանուր լեղածորանի խցանման կլինիկական նշաններ:

Հատման ընթացքում, անհրաժեշտ է հայտնաբերել ու առանձնացնել ընդհանուր լեղածորանի ներպանկրեատիկ սեգմենտը բորբոքված ու ֆիբրոզ փոփոխված հյուսվածքներից:

Ընդհանուր լեղածորանի դիրքը ենթաստամոքսային գեղձի գլխիկում փոփոխական է, ծորանը կարող է անցնել, կամ ներկված գեղձի հետին պատին /շոշափման ժամանակ կարելի է շոշափել ակոս/, կամ նրա պարենխիմայով, վերջինս ավելի հաճախ է համակցվում ստրիկտուրայի հետ:

Խցանման ժամանակ, որպեսզի հայտնաբերերվի ու պաշտպանվի ընդհանուր լեղածորանը, ենթաստամոքսային գեղձի մասնահատումը անցկացվում է Bakes-ի 3մմ-ոց դիլատատորի կամ Ֆոգարտի լեղային կատետերիզում:

Եթե ընդհանուր լեղածորանը վնասված է կամ նեղացած կամ խցանումը հնարավոր չէ հայտնաբերել, կարող է դրվել խոլեդոխոյեյունոբերանակցում:

Ենթաստամոքսային գեղձի գլխիկի հյուսվածքի հատմանը այլընտրանք է հանդիսանում հյուսվածքի էքսկավացիան գլխավոր ու հավելյալ ծորանների լրիվ հատումով: Ծորանային համակարգը դիտարկվում է մինչև ամպուլա կամ մինչև այն տեղը, որտեղ պանկրեատիկ ծորանը հանդիպում է ընդհանուր լեղածորանի ներպանկրեատիկ հատվածին: Պանկրեատիկ ծորանը հատվում է, պրոքսիմալ եզրը կարվում 4-0 նեյլոնային թելով: Գերձայնային ասպիրատորի cavitron /CUSA-ի/ կիրառումը էլեկտրոկաուտերիզացիայով հեշտացնում է պարենխիմայի կոնուսաձև հատումը, 70-80% հզորությամբ բարձր էներգետիկ ծայրատի օգտագործումը թույլ է տալիս հստակ նույնականացնել ծորաններն ու անոթները ենթաստամոքսային գեղձի գլխիկում: Պանկրեատիկ ծորանի պրոքսիմալ հատվածը լրիվ հեռացվում է, գեղձի վզիկում նրա դորզալ հատվածի հատումից հետո:



Փուլ 8. Խորության չափումը բթամատի ու ցուցամատիջոցով

Ըստ վիրսունգյան ծորանի դիրքի որոշվում է էքսկավացիայի/մասնահատման անհրաժեշտ խորությունը, գլխավոր պանկրեատիկ ու, պատյանի հետին թերթիկի մատով

անցնող, կեռիկանման ելուզի ծորանները բացվում են /դեկոմպրեսիա/, սանտորինյան ծորանը հատվում:

Մասնահատված ենթաստամոքսային գեղձի գլխիկի և տասներկումատնյա աղիքի միջև կարելի է թողնել պանկրեատիկ հյուսվածքի ոչ մեծ մասիժեռ: Սովորաբար թողնվում է այնքան պանկրետաիկ հյուսվածք, ինչքան անհրաժեշտ է խիստ կարևոր ենթաստամոքս-տասներկումատնյա ապեղի պաշտպանման համար, որը ապահովում է տասներկումատնյա աղու միջին հատվածի կենսունակությունը:



Փուլ 9 Վերակառուցում բարակ աղու՝ ըստՌու-ի Y-աձև գալարով, ենթաստամոքսային գեղձի գլխիկի դրենավորում պանկրետաիկոյեյունոբերանակցում միջոցով, բերանակցման արտաքին շարքը

Ռու-ի գալարը անցկացվում է միջաձիգ հաստ աղու միջնդերքով և տեղադրվում ամբողջ ենթաստամոքսային գեղձի երկյանքով: Իրականացվում է երկշարք պանկրեատիկո-յեյունոբերանակցում արտաքին 3-0 մետաքսաթելի հանգուցակարերով ըստ Լամբերտի, համադրող բարակաղու սերոզ թաղանթը ենթաստամոքսային գեղձի պատյանի հետ, կարող է ներառել նաև 12-մատնյա աղու պատը: Բորբոքումն ու այտուցը կարող են դժվարացնել տասներկումատնյա աղու ու ենթաստամոքսային գեղձի միջև սահմանի որոշումը:



Փուլ 10 Պանկրեատիկոյեյունոբերանակցում ու բերանակցման ներքին շարքը

Անընդհատ ներծծվող կարով աղիքի պատը /վերցրած ամբողջ հաստությամբ/, կտրվում է պատյանի երկանքով ենթաստամոքսային գեղձ և շարունակվում մասնահատված ենթաստամոքսային գեղձի գլխիկի եզրի երկայնքով, ֆորմալ բերանակցում պանկրետատիկ ծորանի և բերանակցու միջև չի պահանջվում:

Բերանակցու կարումը ենթաստամոքսային գեղձին, այլ ոչ թե պանկրեատիկ ծորանին թույլ է տալիս իրականացնել 2-3մմ տրամագծով ծորանների դեկոմպրեսիա /գեղձի պարենխիմայում ճնշման թուլացում/:

Եթե պաթոլոգիական փոփոխությունները գտնվում են միայն ենթաստամոքսային գեղձի գլխիկում, կամ եթե հիվանդը արդեն տարել է գեղձի դիստալ մասնահատում, ապա պահանջվում է գլխիկի միայն մասնակի հատում և նրա դրենավորում ըստ Ռու-ի տեղայնացված աղեգալարով:

Բերանակաղիքային գալարը ըստ Ռու-ի ֆիքսվում է միջառձիգ հաստ աղու միջընդերքին, որպեսզի բացառվի ներքին ճողվածքի առաջացումը:

Ստամոքս-աղիքային տրակտի անընդհատությունը վերականգնվում է “ծայրը-ծայրին” յեյունոյեյունոբերանակցումով, պանկրեատիկոյեյունոբերանակցումից 60-70 սմ դիստալ:

Միջընդերքի բոլոր դեֆեկտները փակվում են, դրենաժի կարիք չկա, բացի այն դեպքերից, երբ իրականացվել է խոլեդոխոտոմիա:



Ենթաստամոքսային գեղձի ոչ անատոմիական մասնահատում 12-մատնյա աղու պահպանմամբ /Բեգերի վիրահատություն/

Ենթաստամոքսային գեղձի մասնահատում 12-մատնյա աղու պահպանմամբ առաջին անգամ նկարագրվել է Beger-ի կողմից, 1979թ: Վիրահատության նպատակը ենթաստամոքսային գեղձի գլխիկի սուբտոտալ մասնահատումն է, բորբոքային զանգվածների հեռացումով և տասներկումատնյա աղու, ընդհանուր լեղածորանի արտալյարդային սեգմենտի, լեղապարկի, ստամոքսի, ինչպես նաև ենթաստամոքսային գեղձի գլխիկի պարենխիմայի մի հատվածի պահպանությամբ:

Վիրահատություն

Փուլ 1

Ստամոքս-ճարպոնային կապանի հատմամբ մերկացվում է ենթաստամոքսային գեղձի գլխիկը, առանց վնասելու ստամոքս-ճարպոնային անոթները: Հատվում է տասներկումատնյա-խթաղիքային կապանն ամիջապես հաստ աղին զգուշությամբ իջեցվում, որպեսզի իրականացվի Կոխերի գործողությունը: Սրան հետևում է գեղձի ստորին եզրի մոտ դուոդենալի ու վերին միջընդերային երակի մերկացումը:



Փուլ 2. *Սնող անոթների կապում*

Ստամոքս-տասներկումատնյա զարկերակը կապվում է ենթաստամոքսային գեղձի մարմնի վերին եզրի մոտ: Առանձնացվում է ընդհանուր լյարդային զարկերակն ու վերցվում անոթային օղի վրա: Ընդհանուր լեղածորանը իր ամբողջ տրամագծով առանձնացվում է լյարդ-տասներկումատնյա կապանում՝ ենթաստամոքսային գեղձի վերին եզրով: Դիսսեկցիան շարունակվում դուոդենալի առաջային ու ենթաստամոքսային գեղձի գլխիկի հետին մակերեսների միջև՝ կամ գեղձի վզիկի վերևից, դուոդենալի կողմից, կամ ավելի հաճախ, վզիկի ներքևից՝ վերին միջընդերային երակի կողմից: Այս գործողությունը հատկապես բարդէգլխիկի բորբոքային փոփոխությունների ունեցող հյուսվածքների այտուցի պայմաններում:



Փուլ 3. *Ենթաստամոքսային գեղձի վզիկի հատումը*

Ենթաստամոքսային գեղձի գլխիկի սուբտոտալ մասնահատումը սկսվում է դռներակի դուոդենալ եզրի մակարդակով նրա վզիկի հատումից: Գեղձի ձախ հատվածի մակերեսին, 5-0 կամ 6-0 չներծծվող մոնոֆիլամենտ թելերով, իրականացվում է մանրակրկիտ հեմոստազ:



Փուլ 4. *Գեղձի գլխիկի սուբտոտալ մասնահատում*

Ենթաստամոքսային գեղձի գլխիկը, դուոդենումից նրա բութ անջատման միջոցով, թեքվում է վենտրալ ու ներքև: Անմիջապես դռներակ թափվող մեզենտերիալ ճյուղերը կապվում են ու հատվում: Ենթաստամոքսային գեղձի գլխիկը հետորովայնամզային հյուսվածքների կպումներից ազատվում է որոշ տեխնիկական դժվարություններով, քանի որ դռներակ բազմաթիվ անոթների ինդիվիդուալ առանձնացումը պահանջում է մանրակրկիտ աշխատանք: Ենթաստամոքսային գեղձի պարենխիման հատվում է ընդհանուր լեղածորանի ներգեղձային հատվածի ձախ պատի երկայնքով՝ մեծ դուոդենալ պտկիկից մոտ 1 սմ:



Փուլ 5

Ենթաստամոքսային գեղձի գլխիկի սուբտոտալ մասնահատումը ավարտվում է կեռիկանման ելունի հատումով: Տասներկումատնյա աղու արյան հոսքը մատակարարումը չի ենթարկում ստամոքս տասներկումատնյա զարկերակի պահպանում, քանի որ վերին միջընդերային զարկերակից սկիզբ առնող սուպրադուոդենալ անոթները, ապահովում են օրգանի բավարար պերֆուզիան: Հիվանդների մեծ մասի մոտ ենթաստամոքսային գեղձի դիսսկեցիան ընդհանուր լեղածորանի ներգեղձային հատվածի երկայնքով և, ավելի ցած, կեռիկանման ելունի ներառումով, դժվարություն չի ներկայացնում: Ընդհանուր լեղածորանի ընթացքով ֆիբրոզ հյուսվածքների հեռացումը առավելահեռախ բերում է նրա դեկոմպրեսիայի: Ընդհանուր լեղածորանի պատի բորբոքումով հիվանդների մոտ, լիարժեք ներքին լեղային դրենավորման համար կողմնային պատը կտրվածքով բացվում է:



Փուլ 6. Պանկրեատիկոյեյունոբերանակցում

Վերակառուցումը սկսվում է, Տրեյցի կապանից 40սմ ավելի դիստալ, բարակ աղու վերին հատվածի հատումով: Ըստ Ռու-ի՝ Y-աձև բարակ աղեգալարը բարձրացվում է հետհաստաղիքային ուղիով: Ենթաստամոքսային գեղձի ձախ հատվածի ուբարակաղու միջև իրականացվում է “ծայրը-կողքին” բերանակցում /Warren-Cattell-ի վիրահատություն/: Սկզբից բերանակցվումեն պանկրեատիկ ծորանն ու բարակաղու լորձաթաղանթը: Բերանակցումն ավարտվում է բարակաղուշճա-մկանային և ենթաստամոքսային գեղձի ձախ հատվածի պատյանի միջև դրված միաշարք կարով: Բարակաղեգալարի և ենթաստամոքսային գեղձի ծայրատի միջև, 5-8սմ երկարության վրա, ձևավորվում է “կողքը-կողքին” բերանակցում: Բերանակցման համար հատված բարակաղու մասը համապատասխանում է 4-8սմ-ի: Բերանակցման ներքին շարքը հանգուցակարեր են դրված բարակաղուու ենթաստամոքսային գեղձի կտրվածքի գծի երկայնքով: Արտաքին շարքը միացնում է գեղձի պատյանը աղու շճա-մկանային շերտին: Աղիքի անընդհատության վերականգնման համար, ենթաստամոքսային բերանակցումից 40սմ ավելի դիստալ, ձևավորվում է էնտերո-էնտերոբերանակցում:



Փուլ 7. Խոլեդոխոյեյունոբերանակցում

Ենթաստամոքսային գեղձի մարմնի ու պոչի լայն մնացորդի դեպքում լավագույն լուծում է “ծայրը-կողքին” պանկրեատիկոյեյունո բերանակցումը: Պրոքսիմալ “կողքը-կողքին” պանկրեատիկոյեյունոստոմայի մեջ կարող է ներառվել գեղձի գլխիկի պրոքսիմալ հատվածում բացված ընդհանուր լեղածորանը:

Եթե ենթաստամոքսային գեղձի սուբտոտալ մասնահատումը չի բերել ընդհանուր լեղածորանի ներգեղձային հատվածի լրիվ դեկոմպրեսիայի և ներվիրահատական ուսումնասիրությունը հայտնաբերում է նրա ներառումը կպումային գործընթացի մեջ, պապիլլայից վեր՝ կարող է ձևավորվել հավելյալ բերանակցում ընդհանուր լեղածորանի սուպրաստենոտիկ հատվածի միջև: “Կողքը-կողքին” բերանակցումը ձևավորվում է միաշարք կարով: Նմանդեպքերումնպաստավորհամարվումէկատարել խոլեկցիստէկտոմիա:



Փուլ 8. Պանկրեատիկոյեյունոբերանակցման մոդիֆիկացիա

Լայնացած պանկրեատիկ ծորանով կամ նրա ստենոզով հիվանդների մոտ գլխավոր պանկրեատիկ ծորանը, իր առաջային մակերեսով, հատվում է երկայնակիորեն մինչև պոչ: Այստեղ կատարվում է “կողք կողքի” բերանակցում բազմակողեզալային և երկայնակի հատված ենթաստամոքսային գեղձի միջև՝ինչպես Պարտինգտոն-Ռոշալի /Partington-Rochelle/ վիրահատության ժամանակով:



Հետվիրահատական շրջան

- ✓ հետվիրահատական դիտարկում ինտեսիվ թերապիայի բաժանմունքում պահանջվում է հազվադեպ, կախված է արտապանկրեատիկ ուղեկցող հիվանդություններից;
- ✓ կյանքի համար կարևոր ֆունկցիաների, ջրա-աղային բալանսի և շիճուկային գլյուկոզայի մակարդակի մանրակրկիտ մոնիթորինգ;
- ✓ ժամանակավոր քիթ-ստամոքսային դեկոմպրեսիա;
- ✓ խորհուրդ չի տրվում կիրառել սոմատոստատինի նմանակներ:

Տեղային հետվիրահատական բարդություններ

Մոտակա

- ➢ պանկրեատիկ հյութի արտահոսք, ասցիտ, խուղակ, տեղային կուտակում,
- ➢ լեղու արտահոսք /ոչ հաճախ/,
- ➢ մեխանիկական դեղնուկ /օրինակ ընդհանուր լեղածորանի վիրաբուժական վնասումից կամ հետվիրահատական բորբոքումից ու այտուցից/,

- բարակ աղիքային բերանակցման անբավարարություն,
- ներորովայնային արյունահոսություն

Պանկրեատիկ հյութի արտահոսքի ժամանակ՝

- լրիվ պարենտերալ սնուցում և աղու հանգիստ, առավելահաճախ արտահոսքը, ինքնուրույն դադարում է,
- ՀՇ հսկողության տակ, մաշկի միջով հեղուկի կուտակումների դերնավորում,
- սեպսիսի պարագայում կրկնակի վիրահատություն

Հեռավոր՝

- պսևդոկիստա,
- լեղային ստրիկտուրա,
- ցավի ռեցիդիվ,
- գեղձի էկզոկրին և/կամ էնդոկրին գործունեության անբավարարություն:

Փորձառու վիրաբույժի խորհուրդներ.

Ֆրեյի վիրահատություն

⇒ Մի «ուղղորդեք» հիվանդին վիրահատության՝

- Մանկրակրկիտ բացատրեք վիրահատության ծավալը և բոլոր մոտակա և հեռավոր բարդությունները, ներառելով ցավի հնարավոր շարունակությունը:
- Բացատրեք քրոնիկ պանկրեատիտի ընթացքը, ներառելով ապագայում հնարավոր էկզոկրկին ու էնդոկրին անբավարարության զարգացման հնարավորությունը:

⇒ Տեխնիկական

- Վիրսունգյան ծորանը ենթաստամոքսային գեղձի գլխիկում պետք է բացվի մինչև ամպուլա, ստանալու համար ծորանի “քարտեզը” մինչ պարենխիմայի մասնահատում: Եթե ծորանը լցված է քարերով, նրանք կարող են հեռացվել փոքր ոսկրային կյուրետի օգնությամբ, ուղիղ անկյան տակ թեքված բրանշներով սեղմիչով կամ քարերի համար աքցանով:
- Ընդհանուր լեղածորանի խցանումով հիվանդների մոտ ծորանը պետք է լրիվ առանձնացվի: Ընդհանուր լեղածորանի վնասումից խուսափելու համար, պարկային ծորանից կամ խոլեդոխոտոմիկ անցքից նրա մեջ մտցվում է Bakes-ի լայնիչը, որը ծորանի ազատման ընթացքում մեծ մատի ու ցուցամատի միջև անընդհատպահվում շոշափվի լուսանցքում:
- Որոշ դեպքերում, ըստ Ռու-ի՝ Y-ա ձև բարակ աղեգալարը մասնահատված ենթաստամոքսային գեղձի հետ բերանակցման ժամանակ, անհնար է հստակ որոշել

տասներկումատնյա աղու պատի և ենթաստամոքսային գեղձի միջև սահմանը: Նման դեպքերում տասներկումատնյա աղու պատի հատվածի ներառումը կարի մեջ պատճառ չի դառնում բարդությունների զարգացման:

- Հետվիրահատական դիտարկում վիրահատությունից հետո շարունակեք ինքներդ, հիվանդները ունեն հատկապես ձեր հոգեբանական և էմոցիոնալ օգնության կարիքն:

Բեգերի վիրահատություն

- Դռներակի ակոսի երկայնքով ենթաստամոքսային գեղձի թունելավորումը սկսվում է գեղձի վզիկի ոտնամասային եզրից՝ վերին միջընդերային երակի անջատումով: Բութ դիսսեկցիան տարվում է դռներակի միջընդերային պատի երկայնքով դեպի վզիկի գլխամասային եզր: Որպեսզի հեշտացվի այս փուլը, գեղձի ստորին եզրը կարով վերցվում է բռնիչի վրա, թույլ տալով բարձրացնել վզիկը դեպի առաջ: Ջանգվածային արյունահոսության ժամանակ ենթաստամոքսային գեղձի սեղմումը ողնաշարին բացառում է արյան ներհոսքը փայծաղի երակից, խսկգլխիկի հատումը՝ դռներակի առաջային մակերեսով մերկացնում է անոթի պատը, դեֆեկտը կարելու համար:
- Ենթաստամոքսային գեղձի գլխիկի սուբտոտալ մասնահատման ժամանակ գլխիկի հետևում դրված ձեռքի դաստակը օգնում է նվազագույնի հասցնել արյան կորուստը:
- Եթե ընդհանուր լեղածորանի ներպանկրեատիկ սեգմենտը տեսանելի չէ ու չի շոշափվում ապա խոլեդոխոտոմիկ անցքով կամ /ավելի ցանկալի է/ պարկային ծորանով մտցվում է Կերի կատետր կամ Ֆոգարտի լեղային կատետեր, օգնելով շոշափել ընդհանուր լեղածորանի դիստալ սեգմենտը:
- Ենթաստամոքսային գեղձի հեռացված հյուսվածքները ընդհանրական շտապ հյուսվածքաբանական հետազոտություն, քանի որ 5% դեպքերում բորբոքային ինֆիլտրատում հայտնաբերվում է քաղցկեղ:
- Ընդհանուր լեղածորանի ներպանկրեատիկ սեգմենտի պատի հանկարծակի վնասումը պահանջում է անհապաղ կարում, այս սեգմենտը կարող է ներառվել գեղձի գլխիկի մնացորդի ռեզեկցիագալարի բերանակցման մեջ /"կողք կողքի"/:
- Ընդհանուր լեղածորանի ներպանկրեատիկ սեգմենտի զգալի ստենոզի ժամանակ, անհրաժեշտ է հավելյալ լեղային բերանակցում: Միաշարք բերանակցումը ռեզեկցիագալարի ու ընդհանուր լեղածորանի միջև, դրված ներծծվող կարերով, կարող է լինել բավարար:

«Գաստինոմայի եռանկյան» ստուգում

Գաստրին արտազատող ուռուցքների առաջին անգամ նկարագրվել են Zollonger և Ellison-ի կողմից 1955թ: Այս ոչ սովորական ուռուցքները կարող են լինել և բարորակ, և չարորակ: Հիվանդների մոտ Զոլինգեր-էլիսոնի համաախտանիշը հաստատվում է սոված ժամանակ պլազմայում գաստրինի />100 պկգ/մլ/ ու թթվի բազալ սեկրեցիայի/>10 մէկվ/լ/ կոնցենտրացիայի բարձրացման, ինչպես նաև սեկրետինի տեստի արդյունքների /շիճուկային գաստրինի կոնցենտրացիայի բարձրացում >200ոկգ/մլ, սեկրետինի 2 Մ/կգ չափաբաժնի ներարկումից հետո/ հիման վրա: Չնայած գաստրինոմաները սկզբում համարվում էին ենթաստամոքսային գեղձի առաջնային ուռուցքներ, սակայն հիմա հայտնի է, որ “բուժվող” գաստրինոմաները առաջանում են տասներկումատնյա աղու պրոքսիմալ հատվածի պատից: Նրանք կարող են լինել եզակի ուռուցքի կամ բազմակի էնդոկրին նորագոյացությունների համաախտանիշի /ԲԷՆ-1/ արտահայտություններից մեկը, վեջինս ներառում է հիպոֆիզի, հարվահանաձև գեղձի, տասներկումատնյա աղու ու ենթաստամոքսային գեղձի նեյրոէնդոկրին ուռուցքների, ինչպես նաև առաջային ու միջին աղիքի կարցինոիդ ուռուցքները:

Ցուցումներ և հակացուցումներ

Ցուցումներ՝

- Զոլինգեր-էլիսոնի համաախտանիշ, առանց անմասնահատելի մետաստազների նշանների:

Հակացուցումներ՝

- շիճուկային գաստրինի «կեղծ» բարձրացում՝ պայմանավորված պերնիցիոզ սակավարյունությամբ;
- թթվի արտադրությունը ճնշող դեղամիջոցների ընդունում, օրինակ H2 ռեցեպտորների անտագոնիստներ, պրոտոնային մղիչի բլոկատորներ;
- G-բջիջների հիպերպլազիա:

Նախավիրահատական հետազոտություններ և ն պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ անամնեզում կարևորվում են պեպտիկ խոցը, ջրանման կղանքը, գաստրոէզոֆագեալ ռեֆլյուքսային հիվանդությունը, հնարավոր է էնդոկրինոպաթիայի ընտանեկան հիվանդություն, առաջնային հիպերպարաթիրեոիդիզմը, պրոլակտինոման, Քուշինգի համաախտանիշը, կարցինոիդ ուռուցքներն ու կարցինոիդ համաախտանիշը:
- ✓ կլինիկայում կիրառվում են՝ ստամոքս-աղիքային տրակտի վերին հատվածքների ԷԳԴՍ, ԷԳՋՀ-ի հետ կամ առանց նրա:

- ✓ լաբորատոր հետազոտություններից՝ գաստրինի շիճուկային մակարդակի որոշումը սոված ժամանակ, սեկրետինային տեստը, ստամոքսի բազալ սեկրեցիան թթվի սկերցիայի ինհիբիտորների ընդունման դադարեցումից հետո ոչ պակաս, քան 3-7 օրերի ընթացքում: Ըստ ցուցումների՝ չփոփոխված պարաթիրեոիդ հորմոնի կոնցենտրացիան շիճուկում, ընդհանուր կամ իոնիզացված կալցիումը, պրոլակտինը կամ գլյուկոզան սոված ժամանակ, պանկրեատիկ պոլիպեպտիդը, քրոմոգրանին A-ևև սերոտոնինը, ազատ կորտիզոլի 24 ժամյա սեկրեցիան մեզով և, եթե ցուցված է, 5-հիդրոքսիինդոլ քացախաթթուն:
- ✓ ճառագայթային ախտորոշում՝ ՀՇ կամ ենթաստամոքսային գեղձի ՄՌՇ, տասներկումատնյա աղիքի և լյարդի վիզուալիզացիայի, ինչպես նաև լյարդում մետաստազների բացառման համար: Սոմատոստատինի հանդեպ ռեցեպտորների սցինտիոգրաֆիան /Octreo-Scan-ը/ հանդիսանում է վիզուալիզացիայի լավագույն միջոց, թույլ տալով հայտնաբերվել գաստրինոմաների 90%-ը և չնայած այս եղանակը հնարավորություն ունի հայտնաբերելու հեռակա մետաստազները ևս, այն հաճախ "բաց" է թողնում տասներկումատնյա աղու ոչ մեծ գաստրինոմաները:

Հիվանդի պատրաստումը՝ թթվի հիպերսկրեցիայի արգելակման, խոցային և ռեֆլյուքս հիվանդությունների դիարեայի բուժման համար համապատասխան պրոտոնային մղիչների արգելակիչների բարձր դեղաչափերի կիրառում: Հաճախ պահանջվում է օրը երկու - երեք անգամ օգտագործել մինչև 80-120մգ պանտոպրազոլ կամ 20-40մգ օմեպրազոլ: Պանտոպրազոլը նույն դեղաչափով կարելի է նշանակել կամ ներերակային կամ բերանով հետվիրահատական շրջանում ընդունմանհամար: Քիթ-ստամոքսային զոնդի տեղադրում, միզապարկի կատետեր:

"Գաստրինոմաների եռանկյան" ստուգում

Վիրահատություն

Փուլ 1. Ենթաստամոքսային գեղձի մերկացումը

"Գաստրինոմաների եռանկյունին" ներառում է ենթաստամոքսային գեղձի գլխիկնուտասներկումատնյա աղիքը, որտեղ առաջանում են գաստրինոմաների 85%: Նրանց մեծ մասը, հատկապես միայնակ ուռուցքները, առաջանում են տասներկումատնյա աղու պրոքսիմալ հատվածում, սակայն կարող են առաջանալ նաև ենթաստամքսային գեղձի գլխիկից, առավել հաճախ՝ բազմակի էնդոկրին նորագոյացությունների /ԲԷՆ/ համաախտանիշի ժամանակ:

Հայտնվել են տեղեկություններ մի քանի "առաջնային" գաստրինոմաների առաջացման վերաբերյալ "գաստրինոմաների եռանկյան" շրջանի ավշային հանգույցներում, և բոլոր

դեպքերում երկարատև դիտարկման արդյունքներով գրանցվել է լիակատար ապաքինում, միայն ավշահատման կիրառումից հետո:

Սպորադիկ գաստրինոմաները սովորաբար լինում են եզակի ու հաճախ /50% դեպքերում/ մետաստազներ են տալիս ավշային գեղձեր:

Ընտանեկան ԲԷՆ-1-ի պարագայում, գաստրինոմաները սովորաբար բազմակի են, տեղակայվում են տասներկումատնյա աղում ու ենթաստամոքսային գեղձում և այդ իսկ պատճառով միայն լուսանցքի բացումն ու տրանսմուրալ շոշափումն են հնարավորություն տալիս ախտորոշել նրանց:

Մուտքը առավել ճիշտ է իրականացնել երկկողմանի ենթակողային կտրվածքով, մանգաղաձև կապանի հատումով ու մեխանիկական լայնիչի տեղադրումով: Որից հետո վիրաբույժը լայնորեն բացում է ճարպոնածոցը ստամոքս-աղիքային կապանը հատելով լյարդային անկյունից մինչև փայծաղային, մերկացնելով գեղձի վզիկը, մարմինն ու պոչը: Հյուսվածքների հատումը ենթաստամոքսային գեղձի ստորին եզրով թույլ է տալիս ներպանկրեատիկ ուռուցքները շոշափել մեծ մատի և ցուցամատի միջև:



Փուլ 2. *Կոխերի ընդլայնված գործողություն*

Մյուս փուլը ներառում է Կոխերի ընդլայնված գործողությունը, հաստ աղու ամբողջ աջ կեսի, տասներկումատնյա աղու պրոքսիմալ ու դիստալ հատվածների տեղայնացմամբ, այն թույլ է տալիս շոշափել ենթաստամոքսային գեղձի գլխիկը և, նույն չափ կարևոր, տասներկումատնյա աղու պատը:

Սիստեմատիկ կատարվում է ներվիրահատական գերձայնային սոնոգրաֆիա, բարձր զգայնության ցուցիչով: Ենթաստամոքսային գեղձի ոչ մեծ ուռուցքները դիտվում են որպես հիպոէխոգեն գոյացություններ՝ ենթաստամոքսային գեղձի համեմատաբար ավելի հիպերէխոգեն հյուսվածքում: Տասներկումատնյա աղու ներվիրահատական ԳՋՀ-ի ժամանակ գաստրինոմաները հաճախ չեն հայտնաբերվում, եթե չափերով մեծ չեն,:

Վերջապես մետաստատիկ ախտահարման բացառման համար հետազոտվում է լյարդը:



Փուլ 3. “Գաստրինոմաների եռանկյան” շրաջանի ավշահատում

Այս շրջանի բոլոր ավշագեղձերը, հյուսվածաբանական հետազոտության համար, հետևողականորեն հատվում են, սկսած լյարդ-տասներկումատնյա աղու կապանի հանգույցներից ավշահատումից: Ավշային գեղձերը սկսած լյարդի դրունքից մինչև տասներկումատնյա աղիք հատվում են, նշագրվում են և ուղարկվում հյուսվածքաբանական հետազոտության, ինչպես նաև ենթաստամոքսային գեղձի գլխիկի վերին ու ստորին եզրերին տեղակայված հանգույցները:

Ենթաստամոքսային գեղձի գլխիկում հայտնաբերված ֆեյրոէնդոկրին ուռուցքները ենթարկվում են էնուկլեացիայի՝ շոշափման կամ ԳՋՀ-ի հասկողության տակ: Եթե ենթաստամոքսային գեղձի գլխիկից հեռացվում է ուռուցք ապա էնուկլեացիայի տեղը լցվում է 5մմ ֆիբրինային սոսինձ և կողքը տեղադրվում ակտիվ դրենաժ:



Փուլ 4. Տասներկումատնյա աղու բացումը, աղիքի գաստրինոմաների հայտնաբերման ու հեռացման համար

Եթե ուռուցքի տեղակայումը անհայտ է, անհրաժեշտ է իրականացնել դուոդենոտոմիա, քանի որ տասներկումատնյա աղու գաստրինոմաները հաճախ հայտնաբերվում են միայն նման ձևով: Վիրաբույժը կարող է աղիքի պատի մեջ տեղակայված ուռուցքը շոշափել ցուցամատով՝ լուսանցքի կողմից և մեծ մատով՝ դրսից:

Եթե հայտնաբերվում է տասերկումատնյա աղու ուռուցք, ապա նրա պատի կտրվածքը թույլ է տալիս հեռացնել ուռուցքը և ուսումնասիրել օրգանի մյուս հատվածները:

Քանի որ ուռուցքը առաջանում է ենթալորձային շերտից և կարող է ներաճել լորձային շերտ, գաստրինոման անհրաժեշտ է հատել շերտ առ շերտ, ուռուցքի շուրջը միշտ ունենալով տասներկումատնյա աղու նորմալ պատի հյուսվածքների շրջանակ: ԲԷՆ 1-ով հիվանդների մոտ կարող են լինել տասներկումատնյա աղու բազմաթիվ ուռուցքներ, և վիրաբույժը, նրա լուսանցքի բացումից հետո, պետք է մանրակրկիտ շոշափի և հետազոտի աղիքի հասանելի ամբողջ ներքին մակերեսը: Չպետք է լյարդ-ենթաստամոքսային ամպուլան կամ փոքր պանկրեատիկ ծորանի դուրս գալու տեղը խառնել գաստրինոմայի հետ: Տասներկումատնյա աղու բացվածքը, գաստրինոմայի հատումից հետո, լայնակի ուղղությամբ /որպեսզի չնեղացվի լուսանցքը/ ներծծվող թելով միաշարք կարվում է՝վերցնելով պատը ամբողջ հաստությամբ: Եթե պահանջվում է դուոդենոտոմիա երկար տարածքի վրա, ապա դրվում է երկայնակի կար: Տասներկումատնյա աղու կամ ենթաստամոքսային գեղձի մոտ թողնվում է ակտիվ դրենաժ:





Հետվիրահատական շրջան

- ✓ Վիրահատությունից հետո 1-3 ամիսների ընթացքում նշանակվում են պրոտոնային մղիչների արգելակիչներ, նույն չափաբաժիններով, Զոլլինգեր-Էլլիսոնի համաախտանիշի ժամանակ առաջացած առպատային բջիջների հիպերտրոֆիան հետ է զարգանում 3-6 ամիսների ընթացքում:
- ✓ Սոված ժամանակ, հետվիրահատական շրջանում շիճուկային գաստրինի մակարդակը պետք է համեմատվի նախավիրահատական մակարդակի հետ: Առանձին հիվանդների մոտ այն, ինչպես նաև բազալ ստամոքսային սեկրեցիան մ

սեկրետինով խթանված գաստրինհամակարգակը որոշվում են վիրահատությունից հետո՝ 3-6 ամիսների ընթացքում:

- ✓ Որոշ դեպքերում, վիրահատությունից 5-6 օր անց կատարվում է բերանով կոնտրաստավորմամբ ՀՇ, որպեսզի բացառվի տասներկումատնյա աղու անբավարարությունից պանկրեատիկ հյութի կուտակումը:
- ✓ Դրենաժը հեռացվում է, սովորական սնուցման վերականգնումից հետո և երբ իջնում է ամիլազայի մակարդակ նրա արտազատուկում և նրա ծավալները չեն գերազանցում օրը 20մլ: Հիվանդին կարելի է դուրս գրել դրենաժով, հեռացնել այդ հետագայում:

Տեղային հետվիրահատական բարդություններ

Մոտակա՝

- տասներկումատնյա աղու անբավարարություն,
- պանկրեատիկ հյութի արտահոսք և/կամ թարախակույտ,
- պանկրեատիկ խուղակ,
- ներորովայնային արյունահոսություն,
- պանկրեատիտ,
- տասներկումատնյա աղու խոցային արյունահոսություն:

Հեռավոր

- տասներկումատնյա աղու նեղացում,
- հիպերգաստրինեմիայի կրկնություն,
- ԲԷՆ 1-ի այլ արտահայտություններ /հիպոթալամիկ, պարաթիրեոիդ, կարցինոիդ/:

Փորձված վիրաբույժի խորհուրդներ

- Ջպետք է ման գալ կարճ ճանապարհի, իրականացրեք նույն վիրահատությունը ամեն անգամ անկախ նորագոյացության նախավիրահատական տեղակայումից:
- Ընտրեք մասնագիտացված կոլլեկտիվ մոտեցում, որոշիչ պահ է ԳՋՀ-ի մասնագետի ներկայությունը, որը գաստրինոմայի հայտնաբերման համար չի խնայում ժամանակ և ուժեր:
- Հիշեք տասներկումատնյա աղիքի մեդիալ պատի ամպուլայի ու պանկրեատիկ ծորանի մասին, նրանք կարող են շոշափվել հանգույցներին և սխալմամբ ընդունվել որպես գաստրինոմա: Եթե առաջանում է ինչ-որ կասկած լյարդ-ենթաստամոքսային ամպուլայի տեղակայման վերաբերյալ, պետք է հեռացնել լեղապարկը և պարկային ծորանից

անցկացնել կատետեր ընդհանուր լեղաձորանով դեպի տասներկումատնյա աղի: Որոշ դեպքերում, եթե կա կասկած, որ հայտնաբերվել է պանկրետահիկ ծորանի դուրս եկող անցքը, ներվիրահատական ներարկվում է սեկրետին, խթանելով ենթաստամոքսային գեղձի սեկրեցիան:

- ԲԷՆ-1-ը պետք է բացառվի մինչև վիրահատությունը, այլ էնդոկրինոպաթիաների սկրինինգի և ընտանեկան անամնեզի բացահայտման ճանապարհով
- Հիշեք, որ Զոլլինգեր-Էլլիսոնի համաախտանիշով և ԲԷՆ-1-ով հիվանդները սովորաբար ենթաստամոքսային գեղձում և տասներկումատնյա աղիքում ունենում են բազմակի նեյրոէնդոկրին ուռուցքներ և այդպատճառով, լրիվ ապաքինման հաճախականությունը խիստ ցածր է: Եթե հիվանդի մոտ կա առաջնային հիպերթիրեոիդիզմ, նախ և առաջ պետք է վիրահատվեն հարվահանաձև գեղձերը, քանի որ այն կարող է թեթևացնել Զոլլինգեր-Էլլիսոնի համաախտանիշի արտահայտությունները:
- Համոզվեք, որ հետվիրահատական շրջանում դեղորայքային բուժումը, ուղղված ստամոքսի թթվայնության սեկրեցիայի ճնշման իրականացվում է անհրաժեշտ ծավալով:

Նեկրէտոմիա /մեռուկահատում/

Ներածություն

Սուր պանկրեատիտը մնում է կյանքի համար վտանգավոր հիվանդություն: Առաջին փուլը /մոտ 10-14 օր/ բնութագրվում է պանկրեատիկ ու հարպանկրեատիկ մեռուկացումներով, ինչպես նաև համակարգային բորբոքային պատասխանի համաախտանիշի զարգացումով: Ենթաստամքսային գեղձի բորբոքման/մեռուկացման ման համակարգային պատասխանը առաջ է բերում վաղ օրգանային անբավարարություն, որը պահանջում է ինտենսիվ թերապիա: Երկրորդ փուլում /2 շաբաթ անց/ բարդությունների ու մահվան ելքի հիմնական պատճառ է դառնում մեռուկացման շրջանի գերինֆեկցիան, բերելով սեպտիկ բազմաօրգանային անբավարարության: Վերջին երկու տասնամյակներում պանկրեոնեկրոզի բուժման գործում կա զգալի առաջընթաց, ինտենսիվ թերապիայի արդյունավետության բարձրացման հետ, դիտվում է ընդհանուր միտում պահպանողական բուժման առավել հաճախ կիրառման: Վիրահատության հիմնականում դիմում են կապված մեռուկացման գոտու ինֆեկցիոն գործընթացի տեղային ու ընդհանուր արտահայտման հետ կապված և ավելի քիչ՝ ստերիլ մեռուկացման դեպքում: Ներկայումս սեպտիկ բարդություններից առաջացած պանկրեատիկ ինֆեկցիան հանդիսանում է մահվան ելքերի 80% պատճառ և այդ առումով մեռուկացած պանկրեատիկ և հարպանկրեատիկ հյուսվածքների ինֆեկցումը սովորաբար հանդիսանում է որևէ տիպի վիրահատական միջամտության բացարձակ ցուցում:

Վիրահատական նեկրէկտոմիայի խնդիրներն են՝ մեռուկացած ու ինֆեկցված հյուսվածքների հեռացումը՝ կենսունակ հյուսվածքների նվազագույն վնասումով: Բացի այդ ամեն մի վարքևճված տեխնիկա հետապնդում է էքսուդատի ծավալի և գեղձի սահմաններից դուրս եղած էկզոկրին սեկրետի նվազեցման նպատակ, քանի որ դրենավորման բացակայությունը անպայման բերում է ինֆեկցիայի զարգացման:

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- պանկրեատիկ և/կամ հարպանկրեատիկ մեռուկացում /ՀՇ սկանավորման դինամիկ ուսումնասիրման տվյալներով/, բարդացած ինֆեկցմամբ /բարակ ասեղային ասպիրացիայի ժամանակ ստացված կուլտուրա կամ ներորովայնային հետորովայնամզային գազի առկայություն/;
- ստերիլ նեկրոզ պրոգրեսիվ կլինիկական վատացումով, ինտենսիվ դեղորայքային բուժման պայմաններում: Չնայած առանց ինֆեկցման մասին օբյեկտիվ տվյալների, ագրեսիվ վիրաբուժական մոտեցումը վիճելի է;
- մեռուկահատումը անհրաժեշտ է նախաձեռնել ինչքան հնարավոր է ուշ, երբ մեռուկացման գործընթացը ավարտվել է, կենսունակ ու ոչ կենսունակ հյուսվածքները լավ տարանջատվել, իսկ ինֆեկցված մեռուկացած զանգվածները ավելի կազմակերպված են ու առհասարակ;
- հիվանդության սկզբից 3-4 շաբաթ անց վիրահատական մեռուկահատումը մնում է վիճելի՝ լավացման բացակայության, սնունդ ընդունելու անհնարինության և հաստատված “ստերիլ նեկրոզի” դեպքում: Կա կարծիք, որ մեռուկահատումը արագացնում է “լավացումը”, մյուս կողմից՝ պահպանողական բուժումը ավելի անվտանգ է:
- զանգվածային արյունահոսություն, հաստ աղու կամ տասներկումատնյա աղու թափածակում:

Հակացուցումներ՝

- պանկրեատիկ և/կամ հարպանկրեատիկ մեռուկացում առանց ինֆեկցման կամ կլինիկական վատացման նշանների:
- վաղ վիրահատությունից /սուր պանկրեատիտի սկսվելուց մեկ շաբաթվա ընթացքում/ մինչև բորբոքային պատասխանի համախտանիշը նշանակվում է հանգիստ, երբ դեռևս պահանջվում է ինտենսիվ պահպանողական բուժում: Ենթաստամոքսային գեղձի մեռուկացման վաղ շրջանում հեմոդինամիկ ու

մետաբոլիկ անկայունությունները հանդիսանում են ոչ թե բակտերիալ սեպսիսի, այլ “բորբոքային համակարգային պատասխանի” համաախտանիշի հետևանք:

Նախավիրահատական հետազոտություններ և վիրահատության պատրաստում

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ սուր պանկրեատիտը ախտորոշվում է անամնեզի հիման վրա, բոլոր այլ վիրահատական վիճակների բացառման, կլինիկական և բիոքիմիական տվյալների վրա: Ծանրությունը գնահատվում է ինտենսիվ թերապիայի բաժանմունքում, մշտական դիտարկման միջոցով /APACHE II սանդղակ/:
- ✓ Լաբորատոր հետազոտություններ՝ արյան կլինիկական անալիզ և էլեկտրոլիտներ, լյարդային պրոբաներ ու հեմոստազ, որոշ կլինիկաներում հետազոտվում է C-ռեակտիվ սպիտակուցը, որպես ախտորոշիչ/պրոգնոստիկ չափորոշիչ: Սուր պանկրեատիտից հետո առաջին 10-14 օրերին՝ արտային, թոքային գործունեության և մետաբոլիզմի վերականգնում, համակարգային բորբոքային պատասխանի համաախտանիշի ինտենսիվ բուժում:
- ✓ Կոնտրաստային ուժեղացմամբ ՀՇ սկանավորում սուր պանկրեատիտի սկսվելուց մոտ 1 շաբաթ հետո գնահատելու համար մեռուկացման առկայությունն ու նրա տարածվածությունը, ինչպես նաև արտալուսանցքային հետորովայնամզային գազի կուտակումը:
- ✓ Համապատասխան հակաբիոտիկների վաղ “կանխարգելիչ” նշանակումը /Իմիպենեմ/ աղիներից պանկրեատիկ գերինֆեկցիայի բացառման համար ընդունվում է մեծ մասի, բայց ոչ բոլոր վիրաբույժների կողմից: Նպատակահարմար է հակասնկային դեղամիջոցների բերանով ընդունումը:
- ✓ Ծանր լեղաքարային պանկրեատիտի ժամանակ, եթե կա խոլեդոխոլիթիազ, վաղ էնդոսկոպիկ սֆինկտերէկտոմիան և քարերերի հեռացումը նվազեցնում են բարդություններն ու մահացությունը:
- ✓ Նախավիրահատական ՀՇ-ն ծառայում է «ճանապարհային քարտեզ» մեռուկահատման պլանավորման համար, օգնելով հայտնաբերել ենթաստամոքսային գեղձից հեռու հատվածներում հեղուկի բոլոր կուտակումները, հատկապես հարհաստաղիքային և հարերիկամային գոտիներում:

Հիվանդի պատրաստումը՝ պարէնտերալ սնուցում, վաղ անցումով բարակաղիքային զոնդային կերակրման /քիթ-աղիքային զոնդով, որի ծայրը գտնվում է տասներկումատնյա աղու չորրոդ հատվածից ավելի դիստալ/, արդյունավետ է ներստամոքսային սնուցումը:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- Անոթների ու հարակից օրգանների /ստամոքս, բարակ աղի/ էրոզիա արյունահոսությամբ ու խուղակի ձևավորմամբ /50%-ից ավել դեպքերում/,
- խոլեցիստէկտոմիայի անհրաժեշտություն /T-ա ձև դրենավորում/ կամ սպլենէկտոմիա /30%-ից</,
- բազմակի որովայնահատումներ /որովայնաստոմա/:

Հիվանդի դիրքը՝ պառկած մեջքի վրա:

Մուտքը՝ վերին միջային որովայնահատում:

Բաց մեռուկահատում, փակ հետվիրահատական լավաժով /լվացումով/:

Վիրահատություն

Փուլ 1. *էքսպոզիցիա*

Բերված մեռուկահատման տեխնիկան իր մեջ ներառում է առաջնային օրգանապահպան նեկրոտիկ հյուսվածքների տեղային հեռացում՝ մեռուկացած զանգվածի ինֆեկցված մնացորդների հեռ, նեկրոզի նոր օջախների, հարպանկրեատիկ էքսուդատի և կուտակվող պանկրեատիկ էկզոկրին սեկրետի հետագա հեռացում մշտական հարպանկրեատիկ լավաժով: Նման մոտեցումը լինելով նվազ ինվազիվ մանիպուլյացիա, ցուցադրում է մյուս բուժական մոտեցումների համարժեք արդյունավետություն:

Միջային ուղղահայաց կտրվածքը թույլ է տալիս ստուգել ամբողջ որովայնի խոռոչը, իրականացնել լվացում և ձևավորել իլեոստոմա, երբ նեկրոտիկ գործընթացի մեջ ներառնված են հաստ և բարակ աղիների միջընդերքի մի մասը:

Մուտք դեպի փոքր ճարպոն իրականացվում է բութ եղանակով: Ստամոքսի մեծ կորության մոտ ու ստամոքս-ճարպոնային անոթներից ներքև հատվում են տասներկումատնյա-խթաղիքային ու ստամոքս-խթաղիքային կապանները, այս մուտքը թույլ է տալիս խուսափել հաստաղիքային անոթների ու միջաձիգ հաստ աղու վնասումից:

Անհրաժեշտ է զգուշանալ ենթաստամոքսային գեղձի, միջաձիգ հաստ աղու միջընդերքի և ստամոքսի հետին պատի միջև առաջացած բորբոքային կպումներից:

Լրիվ մերկացվում է ենթաստամոքսային գեղձի գոտին, մեռուկացման գոտիներն ավելի մուգ գույնի են և ունեն ավելի պինդ կոնսիստենցիա, համեմատած կենսունակ հյուսվածքների հետ:

Մեռուկացումը սովորաբար սահմանափակվում է ենթաստամոքսային գեղձով, բայց կարող է տարածվել նաև հարպանկրեատիկ և հետպանկրեատիկ ճարպային բջջանք:

Ենթաստամոքսային գեղձի պարենխիմայի մեռուկացումը սովորաբար օջախային է ու մակերեսային, մինչ դեռ գեղձի խորը հատվածներում պահպանված է լինում պերֆուզիան և հյուսվածքների կենսունակությունը:





Փուլ 2. Մեռուկացած հյուսվածքների բութ դիսսեկցիան

Հեղուկի բոլոր կուտակումները՝ ըստ ՀՇ-ի տվյալների, պետք է բացազատվեն հեռացվեն ներծծիչով: Ենթաստամոքսային գեղձի ու հարպանկրեատիկ ճարպայինի բջջանքի մեռուկացած հյուսվածքների հեռացումը իրականացվում է մատով կամ գործիքային ու իրիգացիոն զգույշ դիսսկեցիայով, սուր դիսսեկցիայից անհրաժեշտ է խուսափել, չկարգավորվող արյունահոսությանների կանխարգելման համար:

Մեռուկացած փոփոխությունների օջախները հետևողականորեն նույնականացվում են հետորովայնամզային տարածությունում հաստ աղու վերել, միջաձիգ ու վայրէջ հատվածների հետևում, ինչպես նաև ավելի ներքև՝ մինչև Հերոտի փակեղ: Բոլոր նեկրոզված հյուսվածքները բութ դիսսեկցիայով հեռացվում են:

Մեռուկացած հյուսվածքն ու հեղուկը ուղարկվում է բակտերիոլոգ ցանքսի: Մեռուկահատումից հետո, ենթաստամոքսային գեղձն ու հետորովայնամզային շրջանները լվացվում են 4-10լ ֆիզիոլոգիական լուծույթով:



Փուլ 3. *Հեմոստազ մեռուկահատումից հետո*

Մանրազնին բութ դիսսեկցիան թույլ է տալիս հեռացնել ոչ կենսունակ հյուսվածքները, պահպանել ենթաստամոքսային գեղձի անվնաս պարենխիման: Ենթաստամոքսային գեղձի արյունահոսությունը կանգնեցվում է չներծծվող մոնոֆիլամենտ կարերով:

Փայծաղը սովորաբար չի ներգրավվում մեռուկացման գործընթացի մեջ և այդ իսկ պատճառով սպլենէկտոմիայի անհրաժեշտություն առաջանում է խիստ հազվադեպ:



Փուլ 4. Կաnետերների տեղադրումը հետագա հետվիրահատական փակ լավաժի համար

Չորս դրենաժներ /երկուական ամեն կողմից/ ուղղվում են հարպանեկրեատիկ տարածության հակառակ կողմերը և տեղադրվում ծայրերով դեպի ենթաստամոքսային գեղձի գլխիկն ու պոչը, վերել ու վայրէջ խթաղիների հետևում: Այդ չորսից երկուսը /20-24 Fr/ ունեն երկուական լուսանցքներ՝ փոքրը լվացող հեղուկի ներհոսքի համար, իսկ մեծը արտահոսքի: Մյուս դրենաժները /սիլիկոնային խուղակներ 28-32 Fr/ ունեն մեկ մեծ տրամագծի լուսանցք և հնարավորություն են տալիս հեռացնել հեղուկը և հյուսվածքների մեռուկացած հատվածները:



Փուլ 5. *Փակումը*

Հարպանկրեատիկ տարածքը փակվում է ստամոքս-խթաղիքային ₥ տասերկումատնյա-խթաղիքային կապանների կարումով, ինչը թույլ է տալիս իրականացնել ճարպոնային գրպանիկի ու հարևան շրջանների հետորովայնամզային տարածության հետվիրահատական լավաժ:

Խթաղու միջընդերքի ու հետհաստաղիքային տարածության տարածուն մեռուկացման ժամանակ, որը սպառնում է լայնաձիգ հաստ աղու կենսունակությանը, որովայնի պատի ստորին աջ քառորդում ձևավորվում է դուրսբերող իլեոստոմա:



Մեռուկահատում և փակ տամպոնադա

Վիրահատություն

Փուլ 1. էքսպոզիցիա, փոքր ճարպոնի խոռոչի բացում, պանկրեատիկ և հարպանկրեատիկ նեկրէկտոմիա:

Պանկրեանեկրոզի բոլոր վիրահիբուժական մոտեցումների դեպքում, վիրահատության խնդիրը, մեռուկացած հյուսվածքների, ինչպեսնաև էքսուդատի ու ենթաստամոքսային գեղձի էկզոկրին սեկրետի հեռացումն է: Նման իրավիճակներում կրկնակի վիրահատությունը կարող է լինել դժվար իրականանալի, բերելով բարդությունների ավելացման: Մեռուկահատման և «փակ տամպոնավորման» սկզբունքը մեկ վիրահատության իրականացումն է, նեկրոզված ու ինֆեկցված հյուսվածքների մանրակրկիտ հեռացումով, նվազագույնի հասցնելով կրկնակի վիրահատության կամ հետագա դրենավորման անհրաժեշտությունը:

Հիվանդների մեծ մասի մոտ միջային կտրվածքը թույլ է տալիս ստանալ լավագույն էքսպոզիցիա և օպտիմալ տեղադրել դրենաժները:

Միջածիգ հաստ աղին բարձրացվում է դեպի առաջ և նրա միջընդերքի ձախ հատվածով իրականացվում մուտք դեպի փոքր ճարպոնի խոռոչ: Ընդարձրակ պանկրեանեկրոզի ժամանակ այս հատվածում հաճախ դիտարկվում է փքվածություն և մուտքը կարող է իրականացվել ուղղակի մատով կամ սեղմիչով: Հեղուկը էվակուացվում է և ուղարկվում ցանքսի:

Անցքը լայնացվում է, երկու մատերով հետազոտվում փոքր ճարպոնի խոռոչը: Կախված նեկրոտիկ փոփոխությունների տեղակայումից ու տարածվածությունից, անհրաժեշության դեպքում, կարելի է իրականացնել կտրվածք նաև հաստ աղու միջընդերքի աջ հատվածում, հատելով միջին հասաղիքային անոթները:



Փուլ 2. Պանկրեատիկ ու հարպանկրեատիկ մեռուկահատում /սանացիա

Մեռուկացման օջախների սանացիան ու հեռացումը /մեռուկահատում/ իրականացվում է բութ եղանակով՝ մատերով կամ թանզիֆով: Մեռուկացած զանգվածի առավելագույն հեռացման համար կարևոր է մտնել, ՀՇ-ի ժամանակ հայտնաբերված, խոռոչի բոլոր գրպանիկները, որոնց նմուշները ևս անհրաժեշտ է ուղարկել բակտերիոլոգիական հետազոտության: Պինդ կպումները կարող են սեղմվել և կապվել:

Հաճախ ենթաստամոքսային գեղձը կարելի է տարբերել հարպանկրեատիկ հյուսվածքներից միայն տեղակայման ու կոնսիստենցիայի միջոցով: Ենթաստամոքսային գեղձի մասնահատումը պետք է իրականացնել զգույշ և միայն գեղձի պարենխիմայի մեռուկացման ակնհայտ նշանների դեպքում:

Եթե մեռուկացման գոտին տարածվում է խորը հարլյարդային տարածություն և միջընդերքով հնարավոր չի հասնել նրան, նեկրոտիկ զանգվածի հեռացման համար բացվում է համապատասխան կողմնային կապուղի:

Մեռուկահատման/սանացիայի ավարտից հետո ենթաստամոքսային գեղձի ծայրատը լվացվում է մի քանի լիտր ֆիզիոլոգիական լուծույթով:



Փուլ 3. *Դրենաժների տեղադրում*

Պենրոուզի դրենաժներից, պինդ լցված 2 մարլյայի տամպոններով, սարքվում է այսպես կոչված «սիգարային» դրենաժներ, որոնք օգտագործվում են սանացիայից հետո առաջացած մեծ խոռոչի տամպոնավորման համար: Սրանք մտցվում են որովայն միջային կտրվածքից ավելի կողմնային ստեղծված առանձին կտրվածքներից: Այս դրենաժների խնդիրը խոռոչի լցումն է և ճնշման ապահովումը, այլ ոչ թե այդ շրջանի ուղղակի դրենավորումը: Կախված խոռոչի չափերից նրանց քանակը փոփոխական է՝ 2-ից 12 դրենաժներ:

Բացի այդ, թողնվում են փափուկ սիլիկոնային դրենաժներ /Ձեկսոն-Պրատտի/ փակ արտածծման համար, սովորաբար մեկական, սանացիայից հետո մնացած ամեն մի մեծ խոռոչում:

Պենրուզի լցված դրենաժները հեռացվում են վիրահատությունից 5-7 օր անց, սովորաբար օրը մեկ դրենաժ, ինչը խոռոչին թույլ է տալիս հետզհետե փակվել: Ձեկոսոն-Պրատտի դրենաժները հեռացվում են վերջում, երբ նրանցով արտազատումը դադարում է:

Սանացիայի ժամանակ դրված գաստրոստոմիկ խողովակը, շատ հիվանդների մոտ համարվում է օգտակար: Այն ավելորդ է դարձնում քիթ-ստամոքսային զոնդի տեղադրումը և

կարող է օգտագործվել ստամոքսային կերակրման համար: Յեյունոստոմիկ խողովակ սովորաբար չի դրվում:

Խոլեցիստիտով հիվանդների մոտ կարող է կատարվել խոլեցիստէկտոմիա, եթե հիվանդը կայուն է և աջ վերին քառորդակում բորբոքման արտահայտվածությունը վտանգավոր չի դարձնում նման միջամտությունը: Հակառակ դեպքում խլեցիստէկտոմիան առավել նպատակահարմար է իրականացնել ուշ:

Որովայնի խոռոչը փակվում է առաջնային սովորական կարով:





Պլանային կրկնակի նեկրէկտոմիա

Վիրահատություն

Փուլ 1

Վիրահատությունը սկսվում է ամբողջ ենթաստամոքսային գեղձի, երկկողմանի հետհաստաղիքային տարածությունների, հաստ աղու միջընդերքից ներքև, բարակ աղու միջընդերքի և ենթաստամոքսային գեղձից վեր՝ հետորովայնային հյուսվածքների մանրազննին, մանուալ և տեսողական ստուգումով: Նեկրոզի շրջանների հայտնաբերման համար կողմնորոշիչ են ՀՇ-սկանավորման տվյալները:

Մուտքը դեպի ճարպոնային գրպանիկ իրականացվում է ստամոքս-հաստաղիքային կապանով /այլ ոչ միջածիգ հաստ աղու միջընդերքով/, քանի որ այն ապահովում է ենթաստամոքսային գեղձի եզրին առավել լավ մոտեցում, առանց վտանգելու միջին և աջ հաստաղիքային անոթները: Չնայած որ, նեկրոտիկ փոփոխությունները հաճախ տեսանելի են հաստ աղու միջընդերքի ձախ հատվածից /ենթաստամոքսային գեղձի պոչի ու մարմնի ախտահարում/ կամ նրա աջ հատվածից /օրգանի գլխիկը և կեռիկանման ելունի ախտահարում/, այնուամենայնիվ լրիվ մեռուկահատման համար մեզոկոլոնով մուտքերը բավարար էքսպոզիցիա չեն ապահովում և առնչվում են հնարավոր վնասումների և ոչ լրիվ մեռուկահատման վտանգի հետ: էքսպոզիցիան ստամոքս-հաստաղիքային կապանի միջով հատկապես կարևոր է մարմնի ու պոչի շրջանի մեռուկացման ժամանակ, բացի այն դեպքերից, երբ մեռուկացման գործընթացը ներառում է գերազանցապես գեղձի գլխիկն ու կեռիկանման

ելունը կամ, երբ ենթաստամոքսային գեղձի վրա նախորդ վիրահատությունների արդյունքում, փոքր ճարպոնի խոռոչը լինում է փակ /օբլիտերացիա/:

Մատով ստամոքս-հաստաղիքային կապանի շոշափումը սովորաբար հայտնաբերում է փոքր ճարպոնում նեկրոզված հյուսվածքներ պարունակող խոռոչ: Այն զգուշությամբ բացվում է, չվնասելու համար ստամոքս-ճարպոնային արկադան և միջաձիգ հաստ աղու միջընդերքի անոթները:

Փուլ 2

Մեռուկահատումը կատարվում է ձեռքերով, բութ դիսսեկցիայի եղանակով: Դեպքերի գերակշիռ մասում մեռուկացած հյուսվածքների զգույշ հեռացումը լինում է հնարավոր: Սուր ճանապարհով մեռուկահատում /մկրատով կամ նշտարով/ կտրականապես խորհուրդ չի տրվում, հատկապես փայծաղային, վերին միջընդերային երակների և միջին հաստաղիքային անոթների մոտակայքում: Բութ եղանակով հեռացման համար հասանելի բոլոր մահացած հյուսվածքները պետք է դուրս բերվեն: Առաջանային նեկրէկտոմիան թույլ է տալիս հասնել հնարավոր առավելագույն էքսպոզիցիայի և այդ պատճառով լրիվ անվտանգ մեռուկահատման բոլոր փորձերը պետք է ձեռնարկվեն այս ընթացքում:



Փուլ 3

Երբ ստամոքս-հաստաղիքային կապանի հատումից հետո հասնում են մեռուկացման շրջանին, անհրաժեշտ է լինել չափազանց զգույշ, չվնասելու համար միջածիգ խթաղին և նրա միջընդերքը, որը հաճախ կնճռոտված է, հաստացած, քիչ շարժուն ու տեղաշարժված դեպի օբլիտերացված փոքր ճարպոնի շրջան:

Քանի դեռ մեռուկացած հյուսվածքները մնում են կապված կենսունակ հյուսվածքների հետ, նրանց բութ բաժանումը կամ սուր դիսսեկցիան կարող են առաջ բերել դժվար դադարեցվող արյունահոսություն: Այս շրջանները ինքնուրույն անջատվում են կենսունակ հյուսվածքներից պլանային կրկնակի որովայնահատման ժամանակ, երկու կամ ավել օրեր հետո: Նման դեպքում բորբոքված, փխրուն, արտահայտված անոթավորումով, բայց կենսունակ հյուսվածքների ամբողջականությունը պահպանվում է, ինչը նվազագույնի է հասցնում արյան կորուստը:

Նեկրոզված հատվածների հեռացման ընթացքում նոր առաջացած խոռոչը կարող է հատվել հյուսվածքների կամրջակով: Չնայած նրան հատելու առաջացած ցանկությանը, վիրաբույժը չպետք է շտապի այն իրականացնել, քանի որ այստեղով սովորաբար անցնում է պահպանված արյան հոսքով արյունատար անոթ: Նման բորբոքված հարպանկրեատիկ տարածքի մեռուկահատման ժամանակ, բոլոր տեսակի արյունահոսությունների կանգնեցումը դժվարին գործ է: Բացի այդ, մեծ արյունատար անոթի կապումը կամ կարումը կարող է բերել պսևդոանեվրիզմայի առաջացման; մեռուկահատման հիմնական խնդիրը պետք է լինի առանց արյունահոսության բոլոր մեռուկացած հյուսվածքների հեռացումը:

Փուլ 4

Որպեսզի մերկացվի և դիտարկվի հետորովայնամզային տարածությունը, անհրաժեշտ է հատել որովայնի կողմնային կապուղիները ծածկող որովայնամիզը, ինչը հատկապես ցուցված է, եթե ըստ ՀԾ-սկանավորման տվյալների կա բորբոքային գործընթացի տարածում այս շրջանների վրա: Նման դեպքերում սովորական շոշափումը, շուրջպանկրեատիկ բջջանքի մեռուկացման հայտնաբերման համար քիչ տեղեկատվական է՝ հատկապես ճարպոտ անձնանց մոտ: Գործընթացի մեջ այս շրջանների ներառման դեպքում, հաստ աղու մեդիալ տեղայնացումից հետո նրանք, միջածիգ խթաղու միջընդերքից ավելի միդիալ կամ լատերալ, պետք է լայն մուտքով բացվեն: Բարակ աղու միջընդերքի արմատի և ենթաստամոքսային գեղձից վեր շրջանի /օրինակ հետէգոֆագեալ/ հյուսվածքների մեռուկացման գործընթացը կարող է չհայտնաբերվել, քանի որ դիսսեկցիան սովորաբար տարվում է վերին միջընդերային անոթների երկանքով:

Մեռուկացած հյուսվածքների մնացորդների, բորբոքային էքսուդատի ու բակտերիաների հեռացման համար նեկրէկտոմիայից հետո մաքրված շրջանները լվացվում են մեծ քանակի հեղուկով /առավել նախընտրելի է իրիգատորի Water-Pik-ի օգնությամբ, որը ունի մաքրման ու լվացման համար հեղուկի ճնշման ղեկավարման համակարգ/:



Փուլ 5

Եթե հայտնաբերվում են հյուսվածքների կասկածելի կենսունակությամբ հատվածներ, ապա հիվանդը 2 օրից վերադարձվում է վիրասրահ և ընդհանուր անզգայնացման տակ կատարվում է կրկնակի վիրահատական ստուգում և մեռուկահատում: Առաջնային մեռուկահատումից հետո սանացիայի ենթարկված շրջանները թաց թանզիվներով տամպոնավորվում են:Եթե փայծաղային կամ վերին միջընդերային զարկերակները մերկացած են՝ նրանց հարկ է պաշտպանել ոչ ադգեզիվ նյութից կազմված ներդիրներով, օրինակ Adaptic /Yduson L Yduson/ կամ սիլաստիկի բարակ շերտով: Ազատ հեղուկը, որը կարող է կուտակվել ու բարձրացնել ճնշումը որովայնի խոռոչում, դուրսբերելու համար մառլիայի թանզիվներից վեր տեղադրվում են փափուկ ակտիվ դրենաժներ:

Որովայնի խոռոչը փակվում է ապոնևրոզին կարվող փակիչ շղթայով: Այն ոչ միայն արագացնում է որովայնի խոռոչի բացումն ու փակումը կրկնակի սանացիայի ժամանակ, այլ նաև պաշտպանում որովայնի խոռոչը նման պրոցեդուրաների միջև, հեշտացնելով վերքի հետաձգված առաջնային փակումն ու թոքային օդափոխանակությունը: Գտնում են, որ ապոնևրոզի ռետրակցիայից խուսափելու համար, որը կարող է դժվարացնել կամ անհնար դարձնել նրա հետագա կարումը, մաշկը ցանկալի չէ կարել: Կրկնակի վիրահատությունը պլանավորվում է 48 ժամ անց, իսկ մինչ այդ կատարվում են ստորև նկարագրված ընթացիկ միջոցառումները: Ապա բացվում է շղթան և դիտարկվում ամբողջ որովայնի խոռոչը: Անհրաժեշտության դեպքում կատարվում է հավելյալ մեռուկահատում՝ բութ մաքրում: Գործողությունը կրկնվում է 48 ժամյա ընդմիջումներով, մինչև մեռուկացած գործընթացի ավարտ, ինչը որոշվում է թարախագոյացման դադարով և մեռուկացած գոտիների

բացակայությամբ: Եթե առաջնային վիրահատության ժամանակ հնարավոր է լրիվ մեռուկահատում, որը սովորաբար հասանելի է և, եթե վիրահատությունը կատարվում է ենթաստամոքսային գեղձի բորբոքումը սկսվելուց 21-օր անց, ապա որովայնի խոռոչը փակվում է առանց պլանավորելու կրկնակի ստուգումներ:



Փուլ 6

Եթե կա համազմունք, որ բոլոր մեռուկացած հյուսվածքները հեռացված են, որովայնի խոռոչը դրենաժների վրա փակվում է: Պետք է նախընտրել ակտիվ ասպիրացիայի համար փափուկ սիլիկոնային դրենաժներ, որոնք նվազագույնի են հասցնում ճնշման հետևանքով հարակից հյուսվածքների մեռուկացման վտանգը: Անհրաժեշտ է խուսափել լայն, կոշտ, մեծ անցքերով դրենաժներից, քանի որ ուշ /այլ ոչ թե վաղ/ առաջնային մեռուկահատման եղանակը, հետագա պլանային կրկնակի միջամտություններով, սանացիայի շրջանում թողնում է միայն չնչին քանակի խոշոր կտորներ և մեծ լուսանցքով դրենաժների անհրաժեշտություն չի առաջանում:

Դրենաժները պետք է տեղադրվեն խոշոր անոթներից հեռու, բացառելով ուղղակի շփումը հաստ և բարակ աղիների հետ: Տեղադրվող դրենաժների քանակին պետք է վերաբերվել ազատ, սակայն հիշել, որ ամեն մի մեռուկացման անատոմիական գոտում պետք է տեղադրվի առնվազը մեկ դրենաժ: Դրենաժները ուղղվում են լյարդի տակ և աջից հաստ աղու լյարդային

անկյան հետև, ինչպես նաև փայծաղային ստորին բևեռի մոտ: Ստամոքսի դեկոմպրեսիայի համար տեղադրվում է գաստրոստոմիկ խողովակ, իսկ էնտերալ սնուցմը ապահովվում՝ պունկցիոն կատետերային յեյունոստոմիայով:

Վերջին սանացիայի ժամանակ փակիչ շղթան հեռացվում է և որովայնի պատը չներծծվող կարերով փակվում: Մաշկը թողնվում է բաց ու տամպոնավորվում:



Մեռուկահատում մաշկի միջով

Փուլ 1 *Մուտք*

Հիվանդը տեղափոխվում է ռադիոլոգիական բաժանմունք երակի կոնտրաստավորումով ՀՇ սկանավորման և ռենտգենաբանական հսկողությամբ 8 Fr դրենաժային կատետերի պունկցիոն ներդրման համար:

Ընդհանուր անզգայացման ձևի ընտրությունը կախված է օրգանների անբավարարության աստիճանից, մուտքի տեղից և հիվանդի նախապատվություններից:

Հետո հիվանդը տեղափոխվում է վիրասրահ:

Նշենք որ նվազագույն ինվազիվ մուտքի եղանակի զարգացումը սահմանափակվում է տեխնիկական դժվարություններով: Սակայն, քանի որ վիրաբուժական մեռուկահատման խնդիրը միայն մեռուկացած ու ինֆեկցված հյուսվածքների հեռացումն է, առանց անվնաս հյուսվածքների կորստի, նվազագույն ինվազիվ մուտքի օգտագործումը ունի շատ առավելություններ:

Այս վիրաբուժական մոտեցումը ունի մի քանի հատուկ ցուցումներ ու հակացուցումներ: *Հատուկ ցուցումներ*՝ նեկրոզի գոտին պետք է հասու լինի ենթամաշկային պունկցիայի և պունկցիոն կապուղու լայնացման համար: *Հատուկ հակացուցումներ*՝ այն ցուցված չէ աղիքի իշեմիայի, խոռոչավոր օրգանի թափածակման /ոչ երկար գոյություն ունեցող խուղակով/ կամ նախավիրահատական զգալի արյունահոսության ժամանակ:

Փուլ 2 *Նեֆրոսկոպի պատրաստումը /նեկրոզէկտոսկոպ/*

Ասպիրատորը /ներծծիչը/ պետք է միացվի եռաոտիկին: Ճնշման տակ գտնվող իրիգացիոն համակարգում պետք է օգտագործվի տաքացված հեղուկ: Որպեսզի ապահովվի հորիզոնական հասունություն պունկցիան կապուղու ամբողջ երկայնքով, հիվանդը պետք է գտնվի աջ /կամ ձախ/ կողքի վրա, իսկ որովայնի այդ հատվածը պետք է բերձրացվի բարձիկի օգնությամբ: Լվացման հեղուկի հավաքման համար հարմար է կիրառել “բարերային” նեֆրոլիտիկ սավան: Սկզբնական փուլում իրականացվում է խոռոչի լավաժ/ասպիրացիա նրա պարունակության հեռացման համար:

Վնասումից խուսափելու համար կիրառվում են ընդհանուր ցավազրկում և փափուկ սեղմիչներ: 8-Fr դրենաժային կատետերի միջոցով դեպի խոռոչ է անցկացվում 0.035 ուղեկցորդ, որից հետո դրենաժային կատետերը փոխարինվում է լայնիչով: Ստեղծված կապուղով անցկացրեք լայնացնող բալոն կամ լայնացրեք կապուղին նշագրված բուժերով:

Ամենալայն լայնիչի վրայով ներդրվում է պահուճակը 37Amplatz 34Fr-ը:



Փուլ 3. Մեռուկացած զանգվածների հեռացումը

Amplatz ուղեցի միջոցով նեֆրոսկոպը զգուշորեն մտցվում է խոռոչ: Թարախից մաքրելու համար սկզբում իրականացվում է խոռոչի լավաժ, հայտնաբերված մահացած հյուսվածքների զգույշ հեռացմամբ: Ամուր կպած հյուսվածքները թողնվում են տեղում, հետագա ստուգումների ժամանակ հեռացման համար: Խիստ ակտիվ սանացիան կարող է բերել զանգվածային արյունահոսության:



Փուլ 4. Խոռոչի հետվիրահատական լվացումը

Փոքր մեռուկացած հյուսվածքների ամբողջական հեռացումից հետո, լայնիչի ուղեկցորդը նորից է մտցվում լայնացած կապուղի և նրա միջով անցկացվում է փափուկ խողովակավոր 34 Fr-ոց դրենաժ, որի միջով իրականացվում է խոռոչի հետվիրահատական լվացում: Վիրջինիս համար օգտագործվում է արյան տաքացուցչի միջով տրվող դիալիզային հեղուկ՝ 250 մլ/ժամ ծախսով:

Անատոմիական առանձնահատկություններ, լուրջ ռիսկեր, վիրահատական հնարքներ

ա/ սուր շրջանում խուսափեք ենթաստամոքսային գեղձի ֆորմալ մասնահատումից,

բ/ մանրակրկիտ ուսումնասիրեք բոլոր մեռուկացած գոտիները և իրականացրեք նրանց բութ կոնսերվատիվ վիրահատական մշակում:

գ/ ճարպոնային պայուսակից դուրս զգալի մեռուկացած փոփոխությունների դեպքում, լավաժը իրականացվում է որովայնի խոռոչի պլանային ստուգման հետ /որովայնի ժամանակավոր փակում՝ ադհեզիվ թաղանթով պատված ներծծվող փափուկ ցանցով/:

Զգուշացում՝ բաց չթողնեք դրենաժների երկար մնալու հետևանքով օրգանների պարկելախոցերը՝ հատկապես հաստ աղու /կիրառեք փափուկ դրենաժներ, օրինակ սիլիկոնից/:

Հետվիրահատական շրջան

- ✓ հեմոդինամիկ ու շնչառական մշտական մոնիթորինգ ինտենսիվ թերապիայի բաժանմունքում:
- ✓ համապատասխան հակամիկրոբային ու հակասնկային բուժում հիմնավորված մանրեաբանական հետազոտման տվյալներով,
- ✓ պարէնտերալ կամ էնտերալ /ավելի նախընտրելի/ սնուցում, հատկապես գեղձի տարածուն մեռուկացումների ժամանակ:

Հետվիրահատական բարդություններ

Մոտակա՝

- ➢ պանկրեատիկ ստամոքս-աղիքային խուղակներ,
- ➢ կրկնվող շուրջպանկրեատիկ թարախակույտեր,
- ➢ Բարակ աղու մեռուկացում՝ թարախակույտ-խուղակ
- ➢ ներորովայնային արյունահոսություն,
- ➢ սեպտիկ համաախտանիշ,
- ➢ վերքային ինֆեկցիա:

Հեռավոր՝

- ➢ ենթաստամոքսայինգեղձիէնդոկրինանբավարարություն;
- ➢ ենթաստամոքսայինգեղձիէկզոկրինանբավարարություն;
- ➢ հետվիրահատականճողվածք;
- ➢ կեղծկիստա /հազվադեպ/, եթեձևավորվումէապահովաբարեհաջողէհեղուկիպարփակվածմնացուդիկոմանջատվածծորանիհամասեռտանիբի՝ ենթաստամոքսայինգեղձիվզիկի լրիվ մեռուկացմանժամանակ:

- կլինիվոդպոնկրեատիտ /հազվադեպ/:

Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

⇒ Մեռուկահատման շրջանի դիֆֆուզ արյունահոսության դեպքում կարող է պահանջվել որովայնային տամպոնադայի թանզիվներ, որոնք մնում են 24-48 ժամ,

⇒ Աղիքային խուղակները պետք է բացվեն վիրաբուժական եղանակով: Եթե պանկրեատիկ խուղակը լավ է դրենավորվում, նախընտրելի է սպասողական մարտավարությունը, իրականացնելով ստուգում միայն հիվանդի լրիվ վերականգնումից հետո: Նրանց ինքնուրույն փակվելու հավանականությունը մեծ է:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ լվացման կատետերը հեռացվում է միայն լաբորատոր ցուցանիշների նորմալացումից և դրենաժից մաքուր արտաթորանք ստանալուց հետո: Պլանային ստուգումները ավարտվում են որովայնի խոռոչի բորբոքային նեկրոտիկ գործընթացի նվազումից և կլինիկական իրավիճակի կայունացումից հետո: Դրենաժները հեռացվում են արտահոսքի դադարից հետո, իսկ կրկնակի հեղուկային կուտակումների կամ թարախակույտերի դեպքում իրականացվում է ներմաշկային դրենավորում:

Կերակրման վերսկսում՝ լաբորատոր ցուցանիշների կարգավորումից ու աղիների գործունեության վերականգնումից հետո:

Աղիների գործունեության վերականգնում՝ նշանակվում է պահպանողական բուժում, հնարավոր է բերանով թեթև թուլացնող միջոցների ընդունում:

Ֆիզիոթերապիա՝ շնչառական վարժություններ, ընդհանուր ֆիզիոթերապիա:

Անաշխատունակության տևողությունը՝ հնարավոր է մի քանի ամիս:

Փորձաժվիրաբուժիխորհուրդները

Բաց մեռուկահատում, վակհեռավիրահատականտախտով՝

- *Բութ մեռուկահատում՝* մեռուկացածհյուսվածքերըհեռացվումենմատերով դիսեկցիայիմիջոցով, առանցգործիքների կիրառման: Մկրատի օգտագործումը բարձրացնումէդեռևկենսունակհյուսվածքերի հեռացման վտանգը, հաստաղիքային, վոյծաղայիև, վերինմիջընդերայինառնոթերովնաստանհավանականությունը, առաջբերելովիժվարկանգնեցվողությունահոսություն;
- *Հետորովայնամզային մեռուկացում՝* բութմատնոյինդիսեկցիանհրաժեշտէնույնիսկ, եթեմեռուկացումը տարածվումէմիհչևգոհ:

Նմանդիսեկցիանիրականացվումէառաջայինմուտիցմոնեղովիսթեթոպոնիխոռոչայինակիհաստաղուվերևիցումեռուկացածվոփ ոխությունևերևընթացովառաջանողովերիև:

- *Հեղուկհյուսվածքիէնդոսկոպիա*՝ լեղամուղային համակարգի ախտահիվանդությունների ժամանակ կարելի է կատարել էնդոսկոպիկ հետազոտություն՝ էնդոսկոպիկ ռետրոգրադ խոլանգիոպանկրեատոգրաֆիա, ընդհանուր լեղածորանը մանրադիտակային հետազոտության համար: Այն թույլ է տալիս որովայնահատման ժամանակ իրականացնել միային խոլեցիստէկտոմիա առանց լեղածորանի վրա միջամտության, ինչը նվազեցնում է վերջինիս վնասման վտանգը:
- *Դուոդենոստոմիայի ձևավորում*՝ խթաղուց դուոդենոստոմիայի կատարման ժամանակ, նման իլեոստոմայի ձևավորումը նվազեցնում է խթաղիքային խուղակի զարգացման վտանգը: Բարակաղիքի հյուսվածքի վերականգնման ժամկետները:

Մեռուկահատում և վիրահատական բուժում՝

- Վիրասրահում գտնվող ջիՇ-ի կարգավորիչը հանձնարարական է ”հանգստացած”, օգնելով գտնել մեռուկացած հյուսվածքների սահմանները:
- Մեռուկացած հյուսվածքների հեռացման ընթացքում պետք է հաշվի առնել ջրազրկման վտանգը: Եթե այդ վտանգ չկա, կարելի է սահմանափակել մի շարք հետազոտությունների անհրաժեշտությունը: Այնուհետև կարելի է մի քանի ժամ հետո կրկնել վիրահատությունը:

Կրկնակի պլանային մեռուկահատում

- Պանկրեասի մեռուկացումով հիվանդների մոտ պետք է խուսափել վաղ վիրահատական միջամտությունից, նույնիսկ հեմոդինամիկ ու մետաբոլիկ խանգարումների պարագայում: Ամեն կերպ պետք է աշխատել հետաձգել վիրահատությունը՝ կատարելով այն հնարավորին չափ ուշ, նույնիսկ մեռուկացման շրջանի ինֆեկցման պարագայում, հիվանդի վիճակի կայունությունը ապահովելով առավելագույնս ինտենսիվ թերապիայով: Նման մարտավարությունը թույլ է տալիս հանգամանքների, երբ մնացող կենսունակ ու մեռուկացած հյուսվածքները առավել տարբերակելի են: Այս հանգամանքը խիստ կարևոր է, քանի որ հնարավորություն է տալիս իրականացնել միանվագ լիարժեք մեռուկահատում և որովայնի առաջային պատի փակում, ապահովելով բավարար արդյունք:
- Վիրահատության պլանավորումը հիմնված է հետազոտական ջիՇ-ի տվյալների վերլուծության հետ: Հետազոտության ընթացքում ստացված բոլոր տվյալները պետք է գտնել, բացահայտել: Ցանկալի է, որ հետազոտությունը չհանգեցնի հետագա հետազոտությունների անհրաժեշտության;
- Առավելագույն տեսանելիության ապահովման համար մեռուկահատման ժամանակ հյուսվածքների հնարավորությունները մեռուկացած հյուսվածքների ամբողջական հեռացման համար:
- Բութ գործիքով հյուսվածքների շոշափումը հնարավորություն է տալիս “կամրջակի” /եթե այդպիսին կա/ առկայությունը, հանձնարարական է հետագա հյուսվածքային խթաղիքային անաստոմոզի:

Աբկխունիջով մեռուկահատում

- Հեղուկի տաքացուցիչը տեղադրեք ներվիրահատական լվացման համար հեղուկ մղող սարքի 1-ին մակարդակի ճնշման տակ
- Մեռուկահատմանը առավել նպատակահարմար է վերադառնալ մյուս օրը կամ երկու օր անց, քան թե չափից ավել ժրաջանություն ցուցաբերել առաջին կամ հետագա սանցիաների ընթացքում:
- Զգալի արյունահոսությունը կարելի է կանգնեցնել բալոնային տամպոնադայով, մինչև լապարատոմիան ու արյան վիրաբուժական կանգնեցումը:
- Սիրտ-անոթային անբավարարության նշանների դեպքում կանգնեցրեք պրոցեդուրան, անհրաժեշտ է հասնել հիվանդի վիճակի կայունացման, լվացեք խոռոչն ու վերադարձրեք գործողությանը հաջորդ օրը:

ՇՈՒՐՋԱՄՊՈՒՅԱՐ ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՊԱՐԱՍԿՈՊԻԿ ՓՈՒԼԱՎՈՐՈՒՄ

Ներածություն

Լապարասկոպիկ փուլավորման հիմնական միտքը մասնահատման համար չարորակ նորագոյացություններով հիվանդների առավել ռացիոնալ ընտրությունն է: Քանի որ, անմասնահատելի պերիամպուլյար ուռուցքների դեպքում կատարված որովայնահատումները չունեն բուժական արժեք և հիվանդները ստիպված են անցնել «ոչ անհրաժեշտ» հետվիրահատական շրջան, փուլավորող որովայնադիտումը օգնում է ընտրել արմատական մասնահատման համար առավել բարձր հնարավորություններով պոտենցիալ հիվանդների և ոչ մասնահատելի դեպքերի մեծ մասում խուսափել անիմաստ որովայնահատումից:

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- մասնահատելիության գնահատում
    - ենթաստամոքսային գեղձի քաղցկեղ,
    - լեղածորանի դիստալ հատվածի քաղցկեղ,
    - տասներկումատնյա աղու քաղցկեղ,
    - ամպուլյար քաղցկեղ

- կղզյակային բջիջների քաղցկեղ,

- հիվանդության տեղային տարածուն փուլավորում, մինչև քիմիա-ճառագայթային բուժում
- մետաստազների հայտնաբերում,
- հյուսվածաբանորեն հաստատված, ճառագայթային բուժման համար անբուժելի հիվանդություն: :

Հարաբերական ցուցումներ՝

- ընդհանուր անզգայացման համար անընդունելի ռիսկ,
- անամնեզում բազմաթիվ վիրահատություններ որովայնի խոռոչում,
- որովայնաբորբ:

Նախավիրահատական հետազոտություններ նախապատրաստում վիրահատությունը

Նախավիրահատական հետազոտություններ՝

✓ Անամնեզում կարևորվում են դեղնուկը, քաշի կորուստը, ցավերը որովայնում, վաղ հագեցման զգացողությունը:

✓ Կլինիկական ուսումնասիրություններում ուշադրություն է դարձվում դեղնուկի նշանների, կախեքսիայի, էպիգաստրալ շրջանի ծավալային գոյացության առկայության, ասցիտի վրա:

✓ Լաբորատոր հետազոտություններից՝ լյարդի գործունեության ցուցանիշներ /ալբումին, ընդհանուր սպիտակուց, բիլիրուբին, հիմնային ֆոսֆարազա, տրանսամինազներ/, հեմոստազի ցուցանիշներ /*պրոթրոմբինային ժամանակ, APTT/, միզանյութ և էլեկտրոլիտներ, արյան կլինիկական անալիզ,C-ռեակտիվ սպիտակուց, ուռուցքային մարկերներ /CA 19-9, CEA/:

✓ Ճառագայթային ախտորոշում՝ գերձայնային սոնոգրաֆիա, առանձին հիվանդների մոտ կոնտրաստավորումով, ենթաստամոքսային գեղձի ու լյարդի դինամիկ բարակ շերտերով ՀՇ, ԷԳՋՀ, ԷՀԽՊԳ, ՄՌ-պանկրեատոգրաֆիա:

Կիրառվող լապարասկոպիկ գործիքներ՝

- 30-աստիճանի լապարասկոպ, 10մմ կամ 5մմ,
- 5մմ-ոց լապարասկոպիկ գործիքներ: Մերիլենդի դիսսեկտոր,
- բութ վերջույթով դիսսեկտոր,
- գթալանման բիոպսիոն ակցան,
- ատրավմատիկ սեղմիչ,
- լյարդային ռետրակտոր,
- մկրատներ,
- ասպիրացիայի համար 10մմ-ոց խողովակ,

- լապարասկոպիկ գերձայնային ցուցիչ՝ պարտադիր չէ:

Վիրահատություն

Փուլ 1

Հիվանդը վիրահատական սեղանին մեջքի վրա պառկած դիրքով: Նրա տակ դրվում է տաքացնող ներքնակ և հիվանդը համապատասխան ձևով ֆիքսվում է սեղանին:

Պահանջները՝

- ընդհանուր անզգայացում
- բերան-ստամոքսային զոնդ ստամոքսի դեկոմպրեսիայի համար
- միզային կատետեր /ոչ պարտադիր/
- անեստեզիոլոգիական պիտույքներ առանձին սեղանի վրա



Փուլ 2. *Տրոակարների տեղադրում*

Կիրառվում է մի քանի պոռտերի եղանակը: Առաջին տրոակարը /բութ վերջույթով 10մմ/ դրվում է բաց եղանակով, սովորաբար պորտի տակ: Մաշկի ու ենթամաշկի հատումից հետո երկու սեղմիչներով բռնվում է ապոնևրոզը և նշտարով կամ էլեկտրադանակով հատվում ու

աչքի հսկողության տակ բացվում է որովայնամիզը: Մտցվում է բութ ծայրով Հասսոնի տիպի տրոակար, տեղում ֆիկսվում և CO_2-ով իրականացվում է պնևմոպերիտոնեում: Օպտիմալ է համարվում 10-12 մմ/սս հավասար ներորովայնային ճնշումը: Մտցված լապարասկոպով իրականացվում է որովայնի խոռոչի առաջնային զննում: Եթե տեսանելի մետաստազներ չեն հայտնաբերվում՝ որովայնի վերին քառորդներում աջից ու ձախից համապատասխան դրվում են 5-10մմ-ոց ու 5մմ-ոց պոռտեր, հավանական որովայնահատման գծին համապատասխան:

Պորտային պոռտի մեջ մտցվում է 30^0 լապարասկոպ, երկու 5մմ-ոց պոռտերը օգտագործվում են սեղմիչների, մկրատների ու լյարդային լայնիչի համար: Այն հատկապես հարմար է տեղաշարժման և «կույր» շոշափման համար: Կողմնային պոռտը օգտագործվում է նաև լապարասկոպիկ գերձայնային սոնոգրաֆիայի համար:



Փուլ 3. *Հետազոտում*

Իրականացվում է որովայնի խոռոչի համակարգային դիտարկում, ինչպես բաց վիրահատության ժամանակ: Եթե կան կպումներ՝ նրանք հատվում են դիտարկման հեշտացման համար: Որովայնի խոռոչի ամեն մի գոյացությունից գթալանման բիոպսիոն աքցանով վերցվում է հյուսվածքանյութ:

Հետազոտման հերթականությունը.

⇒ որովայնի խոռոչ,

⇒ լյարդի աջ ու ձախ բլթեր,

⇒ տասներկումատնյա աղիք ու Վինսլոուի անցք,

⇒ միջաձիգ հաստ աղու միջընդերք ու Տրեյցի կապան

⇒ փոքր ճարպոն, ճարպոնածոց, ստամոքս ու լյարդային զարկերակ:



Փուլ 4. *Որովայնի խոռոչի ստուգում*

Որովայնի խոռոչի լրիվ դիտարկումից հետո վիրահատական սեղանի գլխամասային ծայրը բարձրացվում է մոտ 10 աստիճան դեպի վեր: Լյարդի հետազոտությունը սկսում են լատերալ բլթի առաջային մակերեսից /2 և 3 սեգմենտներ/: Շոշափումը իրականացվում է 10մմ և 5մմ գործիքներով: Հետևողական հետազոտության են ենթարկվում ձախ կողմնային ու աջ բլթերի առաջային ու հետին մակերեսները:



Փուլ 5. *Լյարդի դրունք ու Վինսլոուի անցքի դիտարկում*

Ձախ վերին քառորդի պոռտից մտցված լայնիչով բարձրացվում է լյարդի աջ բիլթը: Ցուցումների դեպքում կարելի է կատարել լյարդ-տասներկումատնյա կապանի դիսսեկցիա և վերցնել բիոպսիայի համար կասկածելի ավշային հանգույց:



Փուլ 6. *Լյնակի հաստ աղու միջընդերքի հետազոտում*

Այնուհետև հիվանդը տեղափոխվում է գլուխը 10 աստիճան ներքև վիճակի: Ճարպոն-միջածիգ խթաղին տարվում է ձախ վերին քառորդ, թույլ տալով հետազոտել Տրեյցի կապանը:



Փուլ 7. *Փոքր ճարպոնի խոռոչի հետազոտում*

Հիվանդը հորիզոնական դիրքով: Լյարդի ձախ կողմնային բլիթը բարձրացվում է ձախ վերին պոռտից մտցված 5մմ-ոց ռետրակտորով: Բռնվում, բարձրացվում ու հատվում է փոքր ճարպոնը: Պետք է պահպանելով զգշությունը փորձել հայտնաբերել ձախ աբերանտ լյարդային զարկերակը, որը անհրաժեշտ է պահպանել:

Երբ փոքր ճարպոնի խոռոչը բացված է, ձախ ստամոքսային կամ ընդհանուր լյարդային զարկերակների երկայնքով կարելի է իրականացնել կասկածելի ավշային հանգույցների բիոպսիա: Հնարավոր է ուսումնասիրել ենթաստամոքսային գեղձի վզիկն ու մարմինը:





Փուլ 8. *Լապարասկոպիկ գերձայնային սոնոգրաֆիա*

Աջ կողմնային պոռտով մտցվում է լապարասկոպիկ գերձայնային ցուցիչը: Հետազոտությունը սկսվում է լյարդի ձախ բլթի սկանավորումից /I, II, III< սեգմենտներ/, հետո անցնելով աջ բլթի ուսումնասիրմանը:

Դիտարկվում է լյարդ-տասներկումատնյա կապանը ընդհանուր լյարդային ու ընդհանուր լեղային ծորանները, նույնականացվում են լյարդային զարկերակներն ու դռներակը: Այս կազմավորումների վիզուալիզացիան հեշտացնում է գունավոր դոպլերոգրաֆիան: Որից հետո ցուցիչի ոչ արագ շարժումով հետազոտվում է ենթաստամոքսային գեղձը: Կարելի է որոշել ուռուցքի, պանկրեատիկ ծորանի ու ենթաստամոքսային գեղձի շրջական անոթների /դռներակ, վերին միջընդերային երակ, վերին միջընդերային զարկերակ/ փոխհարաբերակցությունը:



Հետվիրահատական հետազոտություններ.

- ✓ նման միջամտությունները կարող են իրականացվել ամբուլատոր պայմաններում,
- ✓ լաբորատոր հետազոտությունների կարիք կարող է չլինել:

Տեղային հետվիրահատական բարդություններ.

- ➢ սովորական խնդիրներ կապված լապարասկոպիայի հետ՝ ցավեր ուսագոտու շրջանում և ինֆեկցիա, տրոակարների անցքերի ճողվածքներ:
- ➢ արտահայտված ցավի ու ջերմության դեպքում պետք է իրականացնել լապարասկոպիա, որովայնի խոռոչի օրգանների վնասումների հայտնաբերման համար:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Եղեք համբերատար և որովայնի խոռոչով տեղաշարժվեք դանդաղ: Մետաստազների չափերը հաճախ փոքր են և անփույթ դիտարկման դեպքում նրանց կարելի է բաց թողնել:
- Հետևեք հեմոստազին, արյունը կլանում է լույսը և փակում անատոմիական կառուցվածքները:
- Մեկ պոռտի միջով հետազոտումը չի կարող լինել լիարժեք: Բավարար տեսադաշտի համար պահանջվում են մի քանի պոռտեր:
- Տասներկումատնյա աղու տեղայնացում չի պահանջվում:
- Կողմնային աջ վերին քառորդում, ըստ հնարավորի, տեղադրեք 10 մմ-ոց պոռտ: Այն թույլ կտա գերձայնային ցուցիչը լյարդ-տասներկումատնյա կապանի վրա տեղադրել անհրաժեշտ անկյան տակ, հեշտացնելով լեղածորանների/անոթների հայտնաբերումը:

ԵՆԹԱՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ԳԵՂՁԻ ԴԻՍՏԱԼ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ներածություն

Չնայած դիֆուզ քրոնիկ պանկրեատիտի ժամանակ ենթաստամոքսային գեղձի դիստալ մասնահատումները կորցրել են իրենց նշանակությունը, սակայն գոյություն ունեն իրավիճակներ, երբ ցուցված է ենթաստամոքսային գեղձի դիստալ հատվածի սահմանափակ անատոմիական մասնահատում:

Ցուցանիշներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- գեղձի մարմնով /պոչով/ սահմանափակված քրոնիկ պանկրեատիտով պայմանավորված՝ քրոնիկ ցավ որովայնում, օրինակ հետտրավմատիկ /գլխավոր պանկրեատիկ ծորանի հետնեկրոտիկ ստրիկտուրայի հետևանքով/,
- կասկածներ ենթաստամոքսային գեղձի պոչի ու մարմնի ադենոկարցինոմայի վերաբերյալ, առաջացած քրոնիկ պանկրեատիտի ֆոնի վրա,
- պանկրեատիկ ասցիտ, գեղձի պոչի/մարմնի շրջանում առաջացած ծորանի պատռման հետևանքով,
- գեղձի մարմնի/պոչի շրջանի պսեդոկիստա:

Հակացուցումներ՝

- ամբողջ ենթաստամոքսային գեղձի դիֆֆոզ քրոնիկ բորբոքային փոփոխություններ,

- եթե գեղձի դիֆուզ փոփոխությունները առավել արտահայտված են գեղձի ձախ հատվածում, որոշ դեպքերում կարող է համարժեք լինել դիստալ մասնահատումը /օրինակ ալկոհոլային պանկրեատիտ, ախտաբանական գործընթացների գերակշռմամբ գեղձի ձախ կեսում, ստրիկտուրա միջին սեգմենտում կամ բարդ պսևդոկիստա գեղձի միջին/դիստալ հատվածում/:
- լապարասկոպիկ մուտքի համար՝ ձախակողմյան պորտալ հիպերտենզիա, նախորդած բազմակի վիրահատություններ որովայնի խոռոչի օրգանների վրա, լայնածվալ կպումների առաջացումով:

Նախավիարհատական հետազոտություններ և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ Անամնեզում կարևորվում են ենթաստամոքսային գեղձի տրավման և ալկոհոլի չարաշահումը, քրոնիկ ցավը որովայնում, ստեատորեան, դիաբետը, պանկրեատիտի կամ ենթաստամքսային գեղձի քաղցկեղի ընտանեկան անամնեզը, ցավազրկող միջոցների ընդունումը: Ալկոհոլային/թմրանյութային կախվածության ժամանակ ստացեք հիվանդից պարտավորվածություն մասնագիտացված հիմնարկում թունազերծման կուրս անցնելու վերաբերյալ:
- ✓ Կլինիկական հետազոտություն՝ որովայնի ցավոտություն կամ ծավալային գոյացություն, սպլենոմեգալիա /կասկած փայծաղային երակի թրոմբոզի վերաբերյալ/:
- ✓ Լաբորատոր հետազոտություններ՝ արյան ընդհանուր անալիզ, գլյուկոզա, կալցիումի մակարդակը պլազմայում, տրիգլիցերիդներ:
- ✓ Ճառագայթային ախտորոշում՝ ՀՇ, ՄՌՇ կամ ԷԳՋՀ, պարենխիմայի ախտահարման տարածվածության գնահատական (պետք է սահմանափակված լինի մարմնով/պոչով), եթե կա սպլենոմեգալիա և/կամ ստամոքսի երակների վարիկոզ լայնացում՝ կասկածեք փայծաղային երակի թրոմբոզի մասին: ԷՀԽՊԳ-ով գնահատվում են պանկրեատիկ ծորանի միջին ու ընդհանուր հատվածի նեղացումները:

Նախավիրահատական պատրաստում՝ եթե պլանավորվում է սպլենէկտոմիա վիրահատությունից 2 շաբաթ առաջ իրականացվում է պնևմոկոկկային իմմունիզացիա, ինչպես նաև Haemophilus influenzaeB տիպի և մենինգոկոկկային վակցինաներով:

Ուշադրություն դարձրեք հետվիրահատական ցավազրկման համար էպիդուրալ կատետերների օգտագործման վրա /նախավիրահատական թմրանյութերից կախվածությունը հարաբերական հակացուցում է, քանի որ հիվանդի մոտ կպահանջվի թմրանյութերի համակարգային օգտագործում/:

Խորանիստ երակների թրոմբոզի կանխարգելում հետևողական կոմպրեսիայով և/կամ հեպարինի ենթամաշկային ներարկմամբ /հեպարինոթերապիա անցկացման վերաբերյալ էպիդուրալ անալգեզիայով հիվանդների մոտ պետք է խորհրդակցել անեստեզիոլոգների հետ:

Հակաբիոտիկի կանխարգելիչ ներարկում վիրահատությունից 30 րոպե առաջ:

Սպեցիֆիկոխսկեր, հիվանդիտեղեկացվածհամաձայնություն.

- Սպլենէկտոմիա
- Պանկրեասիխտուլակ
- Սուբպանկրեատիտ
- Շեմարոայիդիաբետ
- Ստոմոսիպատիվնաուում

Հիվանդիդիրքը` պառկածմեջքիվրա

Մուտքը` ձախվերին/ձախկիսորովայնահատում, հազվագյուտդեպքերում՝ միջայիներովայնահատում

Ենթաստամոքսային գեղձի բաց դիստալ մասնահատում՝ սպլենէկտոմիայով

Վիրահատություն

Փուլ 1. Առաջնային էքսպոզիցիա, մուտք դեպի փոքր ճարպոն

Երկկողմանի ենթակողային կամ միջային կտրվածքի ընտրությունը կախված է կողանկյան լայնությունից, սովորաբար նախապատվությունը տրվում է ենթակողային կտրվածքին:

Որովայնի խոռոչի լրիվ ստուգումից հետո դրվում է լայնիչ, օգնելով տեղաշարժել կողաղեղը գլխամասային ուղղությամբ:

Ճարպոնածոցը բացվում է միջաձիգ խթաղուց մեծ ճարպոնի անջատումով և ստամոքսի հետ նրա տեղաշարժումով դեպի վեր:

Ստամոքսի ու փայծաղի դրունքի միջև կտրվում ու կապվում են ամենաստորին կարճ ստամոքսային անոթները, ավելի վեր գտնվող կարճ անոթներին առավել հեշտ է մոտենալ փայծաղի տեղայնացումից հետո: Այս գործողությունների արդյունքում մերկանում են ենթաստամոքսային գեղձի մարմինն ու պոչը:

Հետագա դիսսեկցիան հեշտանում է, եթե հաստ աղու փայծաղային անկյունը լրիվ տեղայնացվում և իջեցվում է ներքև:



Փուլ 2. *Վերին միջընդերային երակի մերկացումն ու ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի տեղայնացումը*

Միջին հաստաղիքային երակով իջնելով ներքև հայտնաբերվում է վեհին միջընդերային երակը:

Այն պետք է անջատվի ենթաստամոքսային գեղձի ստորին եզրից դեպի ներքև և դարձվի տեսանելի մինչև նրա անցնելը գեղձի վզիկի հետին մակերես, այս գործողությունը հեշտացնում է վզիկի հետագա հատումը:

Ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի երկյանքով հատվում է որովայնամիզը, գեղձի մարմինը/պոչը բարձրացվում են օրգանի հետևում զգուշավոր սուր դիսսեկցիայով:

Փուլ 3. *Փայծաղի տեղայնացումը*

Փայծաղը տեղայնացվում է դեպի առաջ՝ որովայնի կողմնային կպումներից ազատվելուց հետո: Հատվում են նաև փայծաղի կպումները հաստ աղու /փայծաղ-խթաղիքային կապան/ և ստոծանու հետ:

Մշակվում են մնացած կարճ ստամոքսային անոթները և ստամոքսը տեղաշարժվում է վիրահատական դաշտից վեր, լրիվ մերկացնելով ենթաստամոքսային գեղձի դիստալ հատվածը:



Փուլ 4. Ենթաստամոքսային գեղձի դիստալ հատվածի տեղայնացումը

Փայծաղն ու ենթաստամոքսային գեղձի դիստալ հատվածը տեղայնացվում են հիվանդի մարմնի աջ կողմի ուղղությամբ, կարևոր է դիսսեկցիան տանել ճիշտ երիկամի ու ենթաստամոքսային գեղձի պոչի միջև չխախտելով հետևում տեղակացված Հերոտի փակեղը:

Առաջանային տեղայնացումից հետո ձեռքը մտցվում է հետպանկրեատիկ տարածություն, որը ստեղծվել է *փուլ 3-ի* ընթացքում:

Հետորովայնամզային կպումները ենթաստամոքսային գեղձի վերին եզրի երկայնքով կապվում են ու հատվում մինչև փայծաղային զարկերակի սկզբնամասի հայտնաբերումը: Վերջինիս տեղակայումը ճշգրտվում է շոշափման միջոցով:

Փայծաղն ու ենթաստամոքսային գեղձը պահվում են դեպի վեր ու աջ ծգված, այնպես, որ վիրաբույժը կարողանա տեսնել գեղձի հետին մակերեսը և հայտնաբերի այստեղով անցնող փայծաղային երակը:



Փուլ 5. *Փայծաղային զարկերակի կապում*

Ենթաստամոքսային գեղձի վերին եզրով առանձնացվում է փայծաղային զարկերակը ընդերային ցողունից անջատման տեղում: Այստեղ այն հատվում է ու պրոքսիմալ եզրը կարվում 2-0 թելով, դիստալը՝ կապվում է: Պետք է ստուգել, որ անջատվող զարկերակը փայծաղայինն է, այլ ոչ թե լյարդայինը:



Փուլ 6. *Փայծաղային երակի անջատում/կապում*

Առաջանալով գեղձի հետին ու ստորին եզրով, հարպանկրեատիկ փափուկ հյուսվածքների դիսսեկցիան շարունակվում է այնքան ժամանակ, մինչև հասնեն փայծաղային ու վերին միջընդերային երակների միացման տեղին:

Ստորին միջընդերային երակը կապվում է ու հատվում, եթե այն անմիջապես լցվում է փայծաղային երակ կամ խանգարում է վերին միջընդերային երակի մոտ փայծաղային երակի կապելուն, սակայն դա սովորաբար այդպես չէ:

Վերին միջընդերային երակի հետ փայծաղային երակի միացման տեղում հյուսվածքները մանրակրկիտ անջատվում են երակից:

Վերին միջընդերային երակի ու դռներակների միացման տեղում դրվում է Սատինոսկու սեղմիչ, երակի վերջավորությունը փայծաղի կողմից կապվում է 2-0 թելով:

Փայծաղային երակը հատվում է լիգատուրայի և սեղմիչի միջև, բրանշից դուրս երակային պատի վրա թողնելով մանժետ:

Փայծաղային երակի պրոքսիմալ եզրը կապվում է ու 5-0 պոլիպրոպիլենով անընդհատ կարվում, որից հետո անոթային սեղմիչը հանվում է:





Փուլ 7. Ենթաստամոքսային գեղձի հատում

Ենթաստամոքսային գեղձի վզիկը հատվում է էլեկտրակաուտերով, վերին միջընդերային երակի ու դռներակի միացման տեղում: Եթե կան կասկածներ ուռուցքի վերաբերյալ, անհրաժեշտ է ձախից, ուռուցքների տեսանելի եզրից, թողնել առնվազն 1սմ լայնության եզր և իրականացնել մասնահատված եզրի շտապ հյուսվածքաբանական հետազոտության:

Ենթաստամոքսային գեղձը սնող եզրային անոթը, որը արյունահոսում է, հատումից հետո կարով կապվում է: Հատված գեղձից արյունահաոսության դադարեցումից հետո հայտնաբերվում է պանկրեատիկ ծորանի լուսանցքը, որը կապվում է 3-0 պոլիպրոպիլենով: Ենթաստամոքսային գեղձի հատված մակերեսը կարվում է 3-0 պրոպիլենի անընդհատ կարով:

Ենթաստամոքսային գեղձը կարելի է հատել նաև գծային կարող գործիքով կամ հյուսվածքների եփման տեխնիկայով: Գեղձի հատված մակերեսին մոտեցվում է ակտիվ դրենաժ, որը ձախ կողմնային պատով դուրս է բերվում որովայնի խոռոչից:

Որովայնի պատը շերտ առ շերտ կարվում է:



բ/ վայծաղանուսամոքսընստամոքսայինկարճանոթներիբոլքանումտեղակայվածեներոպաբուռոմոտ,

գ/ ենթաստամոքսայինգեղձիմարմնիուռուցքներիներթափանցումերակվերինմիջնորեդայիներակիմոնացմանեղումսառոլոբաբովկայումէգործընթացիանմասնահատելհնությանմասին,

դ/ կարեռվենթաստամոքսայինգեղձիհատվածմակերեսըվակելուդեպքում, գեղձիծորանըպետէկարվհատանձին, պարենխիման՝ “ձկանբերանի” ձևովկամխողըկարերով (3-0 PGA): Եթեկանկասածներկարվելեռաբեյալ, վակեռայն Y-ձևաղեզալարով՝ ըստՈռւ-ի:

9. *Գործառույթներպահպանվիվիրաբուժությունների ժամանակ*

- *Պանկրեատիտի դեպքում* կատարելիէորդեգրելսպասողականմարտավարություն՝ կիրառելով պարենտերալ սնուցում: Հնարավորէսոմատոստատինիներերակայինեղանակով: Խուղակըստամոքսիհաճախվակվումէինքնուրույն:

10. *Հետվիրահատականգործառույթներ*

Բժշկականխնամք՝ բիլթ-ստամոքսայինզոնդըհեռացվում է 1-2 օրից, լաբորատորիսկողությունովպահեստվիրահատականբոլքանում (ամիլազա, լիպազա, գլյուկոզա): Դրենաժըհեռացվում են 4-6-րդ օրը:

Կերակրմանեղանակ հերուկըկոմերով 1-2-րդօրից, եթեայնլավէյուրացվումևայտնվելէկղանք, սննդակարգըստազբաղնդլայնվումէ:

Աղիներիգործունեություն հնարավորէպերիստալտիկանխթանողմիջոցներկամ բերանով թեթևթուլացնողմիջոցներ:

Ախտահոգում՝ ամնիջապես:

Ֆիզիոթերապիա՝ շնչառականվարժություններ:

Անաբխտաստանալությանտևողություն՝ 2 շաբաթ:

Ենթաստամոքսային գեղձի դիստալ հատվածի մասնահատում փայծաղի պահպանումով

⇒ Քրոնիկ պանկրեատիտով հիվանդների մոտ ենթաստամոքսային գեղձի մարմնի ու պոչի հեռացումը փայծաղի պահպանումով տեխնիկապես դժվար խնդիր է: Փայծաղային երակի շուրջը առաջացած սպիացումները կարող են դժվարացնել դիսսեկցիան, դարձնելով երակի պահպանումը ոչ միայն դժվար, այլև վտանգավոր:

⇒ Եթե կասկածվում է չարորակ նորագոյացություն, ապա փայծաղն ու փայծաղային անոթները չպետք է պահպանվեն:

⇒ Եթե ենթաստամոքսային գեղձի դիստալ մասնահատումը իրականացվում է ցավային համախտանիշի կապակցությամբ, չկա ուռուցքի կասկածև փայծաղային երակը անցանելի է՝ փայծաղի պահպանմանը ուղղված փորձերը արդարացված են:

⇒ Եթե սպլենէկտոմիա չի կատարվում, ապա վիրահատության ընթացքը զգալի փոխվում է:

⇒ Ճարպոնածոց մտնելուց հետո վիրահատությունը շարունակվում է վերին միջընդերային երակի ու դռներակի միացման տեղում ենթաստամոքսային գեղձի վզիկի հատումով:

⇒ Փայծաղը չի տեղայնացվում, ենթաստամոքսային գեղձի մարմնի/պոչի դիսսեկցիան ընթանում է հատման տեղից դեպի փայծաղ, ճանապարհին հատվում են գեղձի պարենխիմայից փայծաղային երակ թափվող բազմաթիվ մանր ճյուղեր:

⇒ Ենթաստամոքսային գեղձ մտնող փայծաղային զարկերակի ճյուղերը ևս հատվում են դիստալ ուղղությամբ ընթացող դիսսեկցիայի ընթացքում:

⇒ Մինչ ենթաստամոքսային գեղձի անջատումը փայծաղից, խելամիտ է ստեղծել մուտք դեպի փայծաղային երակ /վերին միջընդերային երակ նրա թափման տեղը/ և փայծաղային զարկերակ /նրա հիմքի մոտ/, ինչը թույլ կտա արագ սեղմել անոթներն ու կանգնեցնել հետագա դիսսեկցիայի ընթացքում հնարավոր արյունահոսության զարգացումը:

⇒ Փայծաղային երակի ճյուղերը առավել նպատակահարմար է փակել բարակ անոթային կլիպներով կամ բարակ լիգատուրաներով /4-0 կամ 5-0 մետաքս/, քանի որ նրանք փոքր են, բարակ ու հեշտությամբ պատռվող:

⇒ Վիրաբույժը որոշում է, թե որ չափի արյունահոսությունն է ընդունելի փայծաղի պահպանման փորձի ժամանակ և պետք է պատրաստ լինի, անհրաժեշտության դեպքում հրաժարվել նման փորձից:

Ենթաստամոքսային գեղձի լապարասկոպիկ դիստալ մասնահատում

Նվազագույն ինվազիվ վիրաբուժության ներդրումն ու նրա տեխնիկական կատարելագործումը հնարավոր դարձրեցին քրոնիկ պանկրեատիտի և այլ հիվանդությունների առանձին դեպքերում գեղձի դիստալ մասնահատումը իրականացնել լապարասկոպիկ եղանակով:

Փուլ 1. *Մուտք որովայնի խոռոչ*

Մուտքը որովայնի խոռոչ իրականացվում է միջին գծով, պորտից ներքև նվազագույն կտրվածքով՝ մինչև 15մմ/սս ճնշման պնևմոպերիտոնեումի իրականացման համար: Լապարասկոպը մտցվում է 10մմ-ոց պոռտով:

Հետո միջին անրակային գծով դրվում են 5մմ-ոց պոռտեր աջ վերին ու միջին քառորդակում և 12մմ-ոց պոռտ՝ ձախ միջային քառորդակի ներքևում:

Որովայնամզում ու լյարդում մետաստատիկ ախտահարումներ հայտնաբերելու համար ստուգվում են որովայնի խոռոչը և հետազոտվում փայծաղը:

Անհրաժեշտության դեպքում կպումները հատվում են:



Փուլ 2. *Մուտք դեպի փոքր ճարպոնի խոռոչ*

Ստամոքս-հաստաղիքային կապանը հատվում է գերձայնային դիսեկտորով, ինչը մուտք է բացում դեպի փոքր ճարպոնի խոռոչ: Օգնականը ստամոքսը տեղաշարժում է դեպի վեր, թույլ տալով դիտարկել ճարպոնային խոռոչն ու ենթաստամոքսային գեղձի առաջնային մակերեսը:

Այս ամենը հաճախ թույլ է տալիս տեսանելի դարձնել ախտաբանական գործընթացը ենթաստամոքսային գեղձի պոչում: Եթե որևէ փոփոխություն չի հայտնաբերվում, այն կարելի է նույնականացնել լապարասկոպիկ գերձայնային հետազոտության միջոցով: Վերջինս պետք է կիռարվի նաև լյարդի հետազոտման համար, եթե կա չարորակ ուռուցքի մետաստազների հավանականություն:

Ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի երկյանքով փայծաղի ուղղությամբ հատվում է որովայնամիզը: Գեղձը զգուշորեն տեղայնացվում է հետորովայնամզային տարածության փափուկ հյուսվածքներից, որից հետո գնահատվում է լապարասկոպիկ մասնահատման հնարավորությունը:



Փուլ 3, «Ձեռքի օգնությամբ» եղանակ

Աջ ստորին քառորդում իրականացվում է Մակբուրնեի կտրվածք և մկանների տարանջատում: Կտրվածքի չափերը /4-5 սմ/ պետք է լինեն այնպիսին, որ կտրվածքը պինդ “բռնի” վիրաբույժի դաստակը:.

Վիրաբույժը դաստակի ամուր բռնած որովայնի պատի մկանների միջով, ձեռքը մտնցնում է որովայնի խոռոչ /ոչ լայն կտրվածքը թույլ է տալիս կանխարգելել գազի արտահոսքը/: Նույն գործողությունը կարող են հեշտացնել հատուկ հերմետիզացնող սարքերը:

Որովայնի խոռոչը հնարավոր է ստուգել նաև ձեռքով:

Վերցնելով գեղձի մարմինը/պոչը այն ձեռքով բութ անջատվում է, հրելով ստամոքսը դաստակի դորզալ մակերեսով: Նման տեխնիկան իրենից ներկայացնում է գեղձի դիստալ մասնահատման մեդիալ ու լատերալ մոտեցում՝ օրգանը տեղայնացնելով մարմնից դեպի պոչ ու փայծաղ, այլ ոչ թե հակառակը:

Հետագա դիսսեկցիան հեշտացնում է գեղձային դիսսեկտորի օգտագործումը:

Փուլ 4.

Ենթաստամոքսային գեղձը մինչև փայծաղի դրունք լրիվ անջատվում է: Փայծաղը տեղայնացվում է հետորովայնամզային տարածությունից, ստոծանուց, երիկամից և հաստ աղուց գերձայնային դիսսեկտորով հատելով փայծաղ-ստոծանքնիական, փայծաղ-երիկամային, և փայծաղ-խթաղիքային կապանները: Ձեռքի օգնությունը զգալի հեշտացվում է այս գործողությունները:

Ձեռքի համար նախատեսված կտրվածքով, վիրաբույժի ձախ դաստակիմակերեսին հպված, որովայն է մտցվում պրեպարատի համար ստերիլ կոնտեյները, որից հետո պրեպարատը բռնվում է և ձեռքի դանդաղ շարժումով կոնտեյները հագցվում է պրեպարատի վրա, որը թույլ է տալիս նրա մակերեսը անջատել վերքից:



Փուլ 5

Փայծաղային երակը հայտնաբերվում է ենթաստամոքսային գեղձի հետևում, եթե ենթադրվում է մասնահատում փայծաղի պահպանումով: Գեղձի հետին մակերեսից գնացող մանր երակները, գերձայնային դիսսեկտորով, հնարավորության դեպքում հատվում են: Եթե երակը անհնար է անջատել գեղձից և չի բացառվում չարորակ ուռուցքի առկայությունը, երակը մասնահատվում է պրեպարատի հետ: Այն կապվում է ինտրակորպորալ հանգույցով կամ կարվում կարող անոթային գործիքով:

Անջատվում է փայծաղային զարկերակը, որը հաճախ ունենում է ոլորուն ընթացք, տեղակայվելով ենթաստամոքսային գեղձի վերին եզրի երկայնքով: Եթե պլանավորվում է սպլենէկտոմիա, ապա փայծաղային զարկերակը անջատվում ու հատվում է գերձայնային դիսսեկտորով կամ կապվում ինտրակորպորալ հանգույցով: Որոշ վիրաբույժներ փայծաղային զարկերակը հատում են կարող գործիքով:

Երբ փայծաղը պահպանվում է, ենթաստամոքսային գեղձը գերձայնային դիսսեկտորով անջատվում է ինտակտ փայծաղային զարկերակից ու երակից, մինչև գեղձի դիստալ հատվածի լրիվ ազատվելը կպումներից:

Եթե որոշված է փայծաղը հեռացնել պրեպարատի հետ, ապա դիսսեկցիան պետք է ընթանա այս անոթներից ավելի դրսայնորեն, թողնելով փայծաղային անոթները կպած ենթաստամոքսային գեղձի պոչին:



Փուլ 6.

EndoGIA կարող գործիքը մտցվում է ձախակողմյան 12մմ-ոց պոռտով և ենթաստամոքսային գեղձը մասնահատման գծից ավելի մեդիալ կարվում: Գեղձի կարելու և

հատման գծի փակման համար կարող են կիրառվել նաև այլ եղանակներ, օրինակ հյուսվածքների եփում:



Հետվիրահատական շրջան

- ✓ Եթե հիվանդի վիճակը կայուն է, նա տեղավորվում է սովորական վիրաբուժական սենյակում:
- ✓ Ասպիրացիան կարելի է ստուգել քիթ-ստամոքսային զոնդով՝ 24 ժամերի ընթացքում, սակայն այն սովորաբար պետք չի լինում:
- ✓ Հեղուկ սնունդը տրվում է վիրահատությունից մեկ օր անց, հետագայում, ելնելով վիճակից, դիետան ընդլայնվում է:
- ✓ Հիշեք պանկրեատիկ խուղակի զարգացման հնարավորության մասին /դրենաժից արտահոսող հեղուկում ամիլազայի բարձր պարունակությունը հուշում է դրա մասին/:
- ✓ Ստացիոնարից դուրս գրումը՝ վիրահատությունից 5-6 օր անց:

Տեղային հետվիրահատական բարդություններ

Մոտակա՝

- ➢ պանկրեատիկ հյութի արտահոսք/ենթաստամոքսային գեղձի խուղակ,
- ➢ ձախակողմյան ենթաստծանիական թարախակույտ /արտահոսք ծորանային համակարգից/
- ➢ սպլենէկտոմիայի հետ կապված տրոմբոցիտոզ,
- ➢ ներորովայնային արյունահոսություն /հատկապես, եթե մինչև վիրահատությունը կար փայծաղային երակի թրոմբոզ և ձախակողմյանդռներակային հիպերտենզիա/:

Հեռավոր՝

- շաքարային դիաբետ,
- մարսողության/ներծծման խանգարում /ստրեատորրեյա/ կամ էկզոկրին անբավարարության հետևանքով սննդանյութի անբավարար ներմուծում /օրինակ ենթաստամոքսային գեղձի պարենխիմայի մասնահատումից հետո, եթե մնացած հատվածում կան ախտաբանական փոփոխություններ/:

Փորձված վիրաբույժի խորհուրդներ

Ենթաստամոքսային գեղձի բաց դիստալ մասնահատում՝

- Ներվիրահատական հիմնական խնդիրները, կապված են խոշոր երակների վնասումների հետ, նրանց ձգման կամ ոչ ճիշտ դիսսեկցիայի պատճառով: Վերին միջընդերային երակի վաղ հայտնաբերումն և վերին միջընդերային երակի ու ենթաստամոքսային գեղձի միջև թունելի ստեղծումը կարևոր գործառույթներ են դիսսեկցիայի ընթացքում այդ անոթի պահպանման համար: Անհրաժեշտության դեպքում, այն թույլ է տալիս արագ հատել գեղձի պարենխիման երակի վրա և կանգնեցնել արյունահոսությունը:
- Դիստալ մասնահատման ժամանակ անոթների վնասման ռիսկը թելադրում է վիրասրահում ունենալ զանազան անոթային սեղմիչներ, որոնց հետ վիրաբույժը պետք է ծանոթանա մինչ միջամտությունը:
- Որոշ դեպքերում՝ պսևդոկիստայի տեղակայումը գեղձի պոչի հետին մակերեսով կամ փայծաղի դրունքի ծանր քրոնիկ բորբոքումը, պրակտիկորեն անհնար կամ ոչ ռացիոնալ են դարձնում փայծաղի տեղայնացումը պերիֆերիայից դեպի կենտրոն: Նման դեպքերում առավել խելամիտ է փորձել, վերին միջընդերային երակին մոտ զգուշորեն մտնել հետպանկրեատիկ տարածություն: Եթե հնարավոր է, ցանկալի է ընտրել առավել անվտանգ հարթություն դիսսեկցիայի համար և շարժվել ենթաստամոքսային գեղձի հետևով կենտրոնից դեպի ծայրամաս: Նման դեպքերում անհրաժեշտ է հիշել երիկամային երակի վնասման ռիսկի մասին, երբ դիսսեկցիան իրականացվում է շատ խորը շերտում: Կարևոր է միշտ մնալ գեղձի հետին մակերեսին մոտ:
- Որոշ դեպքերում տեղայնացման ընթացքում վնասվում է փայծաղը, առաջ բերելով նրա հեռացման անհրաժեշտությունը՝ հավելյալ արյունահոսության պակասեցման համար: Մինչդեռ փայծաղը հարմար «բռնիչ» է գեղձի տեղաշարժման համար և ցանակալի է մինչև դիսսեկցիայի ավարտը նրան թողնել տեղում: Արյունահոսությունը հաճախ կարելի է կանգնեցնել որովայնի թանզիֆը ձեռքով

սեխմելով փայծաղին: Որպեսզի պակասեցվի զարկերակային ներհոսքը դեպի փայծաղ կարելի է նաև անջատել ու կապել փայծաղային զարկերակի մոտակա սեգմենտը:

Ենթաստամոքսային գեղձի լապարասկոպիկ դիստալ մասնահատում

- Լապարասկոպիկ վիրահատությունները զգալի հեշտանում են որովայնի խոռոչ ձեռքի մուտքով /"ձեռքի օգնությամբ" տեխնիկան/: Լապարասկոպիան ձեռքի օգնությամբ թույլ է տալիս՝

⇒ Մանիպուլյացիայի ենթարկել ծավալային օրգանները /հաստ աղիք, ստամոքս, լյարդ, փայծաղ և ենթաստամոքսային գեղձ/:

⇒ Դիսսեկցիայի ընթացքում առաջացած զգալի արյունահոսության ժամանակ իրականացնել հեմոստազ՝ փայծաղային երակի ճյուղերի վնասումից առաջացած զգալի արյունահոսությունը հեշտությամբ կանգնեցվում է դրունքի ճնշումով, մինչդեռ լապարասկոպիկ գործիքներով նրանք դժվար են կարգավորվում:

⇒ Ձեռքի օգնությամբ լապարասկոպիայի համար կարելի է կիրառել որովայնի պատի հերմետիկությունը ապահովող սարքեր, սակայն դրանք պարտադիր չէն: Եթե որովայնի պատի կտրվածքը մեծ չէ, դաստակի անցկացումը նրա միջով թույլ է տալիս պահպանել պնևմոպերիտոնեումը: Բացի այդ, որպեսզի որովայնի խոռոչում ստեղծվի հավելյալ աշխատանքային տարածության, նախաբազկով կարելի է բարձրացնել :

Փ ա յ ծ ա ղ

Ներածություն

Սիգմայաձև աղու լրիվ տեղայնացումը պահանջում է բորբոքային ինֆիլտրատի կամ ուռուցքի անջատում որովայնի կողմնային պատից: Եթե հնարավոր է աղիքը պետք է շրջանցել ուռուցքից ավելի պրոքսիմալ: Կողմնային կպումների անջատումը շարունակվում է մինչև ուղիղ աղուց ավելի պրոքսիմալ գտնվող ազատ շրջան: Միզածորանը կարելի է գտնել զստային անթոները նրա հատման տեղում՝ սերմնա/ձվարանային անոթների հետ:



Փուլ 5. Ուղիղ աղու պրոքսիմալ սեգմենտի տեղայնացում

Տեղայնացումը պետք է շարունակվի դեպի ներքև՝ կոնքի խոռոչ, որպեսզի ուղիղ աղին համարժեք անջատվի իր հետորովայնամզային կպումներից: Սրանով ապահովվում է աղիքի բավարար երկարություն, առողջ սեգմենտում նրան անվտանգ փակելու համար: Մեզոռեկտումը հատվում է սեղմիչների միջև և կարերով կապվում /3-0PGA/:



Փուլ 6. *Մասնահատում*

Ուղիղ աղու տեղայնացումից և նրա մեզոռեկտումի մշակումից հետո աղիքը հատվում է: Այն կարելի է իրականացնել բաց եղանակով կար բռնիչների միջև՝ փակելով աղիքը հանգուցակարերով: Առավել նախընտրելի է աղիքի մասնահատումը TA-55 կարող սարքով: Այն կարող է նախ կիրառվել աղիքի պրոքսիմալ հատվածում, ապա՝ դիստալ: Մասնահատվող աղիքային սեգմենտի լուսանցքը երկու կողմերից փակվում է Կոխերի սեղմիչներով:



Փուլ 7. *Ուղիղ աղու ծայրատի կարում*

Ուղիղ աղու ծայրատը կույր փակող մետաղակարի գիծը հանգուցակարերով /3-0 PGA/ վերցվում է կարի մեջ: Մեկ անգամ ևս ստուգվում է մեզոռեկտումի շրջանի հեմոստազը: Որից հետո ձևավորվում է եզրային սիգմոստոմա, ինչպես ուղիղ աղու ամպուտացիայի ժամանակ:



Փուլ 8. *Ստոմայի ձևավորում*

Սպիտակեղենի համար բռնիչներով որովայնի պատի ձգումից հետո, նախորոք որոշված տեղում իրականացվում է մաշկի շրջանաձև կտրվածք: Այստեղ ևս օգտակար է կիրառել

վիրահատական սպիտակեղենի համար բռնիչ: Ենթամաշկային ճարպաշերտը հատվում է դիաթերմիայով և բացվում ուղիղ մկանի ապոնևրոզի առաջային թերթիկը:



Փուլ 9.

Ապոնևրոզը խաչաձև հատվում է, մկանները բութ բացվում և լայնիչներով ձգվում: Խորքում հայտնաբերվում է որովայնամիզը և խաչաձև հատվում: Անցքը պետք է ազատ բաց թողնի երկու մատից ոչ պակաս:



Փուլ 10.

Մեխանիկական կարով փակված աղիքի եզրը անցկացվում է ստոմայի անցքով և առանձին կարերով նախնական ամրացվում մաշկի մակարդակին, որպեսզի բացառվի նրա հետ քաշվելը դեպի որովայնի խոռոչ: Ներքին ճողվածքի կանխարգելման համար, որովայնի ներսից անցքը փակվում է առպատային որովայնամզի քսակակարով:



Փուլ 11.

Աղիքի լուսանցքը բացվում է մեխանիկական կարի գծով, հակասեպտիկ նյութով մաքրվում ու մշակվում: Աղիքային պարունակությունը պետք է ենթարկվի արտածծման:



Փուլ 12. *Ստոմայի ֆիքսացիա*

Ստոման ամրացվում է առանձին մաշկ-լորձաթաղանթային կարերով /3-0PGA/: Այն չպետք է արյունահոսի, բայց պետք է պահպանի կենսունակությունը /այսինքն լորձաթաղանթը պետք է լինի վարդագույն/: Գունաթափման դեպքում անհրաժշտ է աղիքի հետագա

մասնահատում, մինչև կենսունակ հյուսվածքներ և նոր ստոմայի ձևավորում: Վիրահատությունը ավարտվում է կղանքընդունիչ սարքի տեղադրումով:

Անատոմիական յուրահատկություններ, լուրջ ռիսկեր, վիրահատական հնարքներ

ա/ Ստոմայի համար անցքը ուղիղ մկանի շրջանում պետք է լինի բավականաչափ լայն, որպեսզի տեղավորի սիգմայաձև աղին, միջընդերքի անհրաժշետ քանակի հետ:

Զգուշացում՝ խուսափեք որովայնի պատի վրա դուրս բերված սիգմայաձև աղու ոլորումից:

բ/ Ստոման չպետք է ունենա ձգվածություն, պետք է թողնել որոշ «երկարության ավելցուկ», որպեսզի բացառվի նրա պոկումը, որովայնի պատի ձգվածության հետևանքով:

Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

- ✓ Ստոմայի բարդությունների դեպքում.
  - օպտիմիզացրեք ստոմայի խնամքը,
  - կրկնակի վիրահատություն, ըստ ցուցումների,
  - քննարկեք ստոմայի ռեամպուտացիայի կամ մեկ այլ տեղ տեղափոխելու հնարավորությունը:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ կախված է ընդհանուր իրավիճակից, 1-2 օրից հեռացրեք քիթ-ստամոքսային զոնդը, ստոմայի խնամքը սկսեք մինչև դուրս գրումը, հայտնեք նման հիվանդին օգնող խմբերի գոյության մասին, եթե նրանք գործում են:

Կերակրման վերսկսում՝՝ թույլատրեք հեղուկի քիչ քանակներ 2-3-րդ օրից, սովորական սննդակարգ՝ անմիջապես ստոմայի գործելուց հետո:

Աղիների գործունեությունը՝ ոչ մեծ ծավալների հոգնաներ ստոմայից և բերանով թուլացնող միջոցներ 4-րդ օրվանից:

Ակտիվացում՝՝ անմիջապես:

Ֆիզիոթերապիա՝ շնչառական վարժություններ:

Անաշխատունակության տևողությունը՝ 2-3 շաբաթ:

ՍՏՈՄԱՅԻ ՓԱԿՈՒՄ

Ցուցումներ և հակացուցումներ

Ցուցումներ՝

- Պլանային. եթե ստոման այլևս պետք չէ: Փակման ժամկետը հիմնականում որոշվում է ոչ թե ստոմայի ձևավորման ժամանակով / ստոմայի ձևավորումից 1-ից մինչև 4-6 շաբաթ անց/, այլ ընդհանուր հանգամանքներով:

Հակացուցումներ՝

- դիստալ ստենոզ,
- բերանակցման անբավարարություն կամ դիսֆունկցիա:

Նախավիրահատական հետազոտություններ և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ աղիքի դիստալ սեգմենտի էնդոսկոպիա կամ ռենտգենկոնտրաստային հետազոտություն:
- ✓ ճառագայթային հետազոտություն /ԳՋՀ և ՀՇ-սկանավորում/ ուռուցքների մոտակա ու հեռավոր տարածման հայտնաբերման համար:

Հիվանդի պատրաստում՝ աղիների օրտոգրադ, ինչպես նաև դիստալ հատվածի լվացում, հարվիրահատական հակաբակտերիալ թերապիա, քիթ-ստամոքսային զոնդ, միզային կատետեր:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- ❖ Բերանակցման անբավարարություն, խուղակ /<10% դեպքում/:
- ❖ Ներորովայնային թարախակույտ /<5%/:
- ❖ Կարի բացում /10-20%/:
- ❖ Բերանակցման նեղացում:

Հիվանդի դիրքը՝ մեջքի վրա պառկած:

Մուտքը՝ կարճ օվալածև կտրվածք ստոմայի շուրջը:

Վիրահատություն

Փուլ 1. Օվալածև կտրվածք ստոմայի շուրջը

Կտրվածքի մեջ պետք է ներառվի մաշկի 3-5մմ-ոց եզր ենթամաշկային շերտով, հնարավորություն տալով բռնիչով բռնելու մաշկը:



Փուլ 2. *Ենթամաշկային շերտի դիսեկցիա*

Ենթամաշկային շերտի հատումից հետո երկու լայնիչով բացվում են վերքի եզրերը և ստոմայի ենթամաշկային կպումները կտրող դիաթերմիայով հետևողական հատվում: Առանձին անոթները բռնվում են և ենթարկվում կոագուլյացիայի: Մաշկի եզրերը պահվում են սուր կեռիկներով: Դիսսեկցիան շարունակվում է դեպի ներքև, մինչև ապոնևրոզի դեֆեկտ, այնպես որ հնարավոր լինի մնալ աղիքին մոտ և չվնասել մկանը:



Փուլ 3. *Դիսսեկցիա ապաոնևրոզի մակարդակում*

Դիսսեկցիան շարունակվում է աղիքի պատի երկյանքով մինչև ապոնևրոզ: Բոլոր հանդիպած կպումները հատվում են կամ ենթարկվում կոագուլյացիայի: Ապոնևրոզի մակարդակին աղիքը բոլոր կողմերից պետք է լինի ազատ ու շարժուն: Առանձին կպումային խտրոցներ տեսողական հսկողության տակ բռնիչների վրա հատվում են: Դիսսեկցիայի

ավարտից հետո վիրաբույժի ցուցամատը ապոնևրոտիկ կպումների մակարդակում պետք է ազատ շարժվի աղիքի շուրջբոլորը: Այս մակարդակում են հատվում նաև որովայնի պատի հետ կպումները:



Փուլ 4. *Աղիքի պատի դիսսեկցիա*

Բերող ու տանող աղիքային սեգմենտների լրիվ տեղայնացումից հետո, երկու կողմից միջընդերքի կպման տեղում դրված կապեր-բռնիչներից ձգելով, աղիքը դուրս է բերվում որովայնի առաջային պատի վրա: Որովայնի պատի վերքը պաշտպանվում է ասեպտիկ լուծույթով թրջված թանզիֆով: Աղիքի պատը ստոմայի եզրից մոտ 0.5 սմ ներքև մասնահատվում է: Այն բերում է 1սմ լայնքով մաշկ-լորձային մանժետի առաջացման, որը ստոմայի ամբողջ տրամագծով հեռացվում է: Մանր անոթները բռնվում են, ենթարկվում կոագուլացիայի կամ կապվում: Դիսսեկցիայի ավարտից հետո աղիքի պատերը բոլոր կողմերից պետք է ունենան արյան լավ մատակարարում և լինեն առանց ձգման հասու բերանակցման համար:



Փուլ 5. *Աղիքային պատի կար*

Աղիքային պատը փակվում է միաշարք հանգուցակարերով /3-0PGA/ աղիքի լայնակի առանցքի երկայնքով: Կարերի միջև տարածությունը հասնում է 0.6սմ: Կարի գիծը պետք է լինի հերմետիկ և չխանգարի արյան մատակարարմանը: Կարելի է կիրառել նաև միաշարք անընդհատ կարի եղանակը:



Փուլ 6. Որովայնհատման վերքի փակում

Դրենավորումը պարտադիր չէ: Եթե թողնվում է, ապա այն դուրս է բերվում որովայնի խոռոչից առանձին վերքով և ֆիկսող կարով ամրացվում: Որովայնի պատը փակվում է խորը ապոնևրոտիկ կարերով, ենթամաշկային տարածությունը դրենավորվում ակտիվ դրենաժով, իսկ մաշկը՝ փակվում հանգուցակարերով:



Անատոմիական յուրահատկություններ, լուրջ ռիսկեր, վիրահատական հնարքներ

ա/ իլեոստոմայի դեպքում /ինչպես նաև ոչ պարզ իրավիճակներում/ ցանկալի է լրիվ մասնահատել ստոման և ստեղծել “ծայրը-ծայրին” ֆորմալ բերանակցում,

բ/ անհրաժեշտ է ապահովել ստոմայի մաշկային եզրերի համարժեք հատում, այտուցված կամ սպիական փոփոխություններով եզրերի պայմաններում չպետք է փորձել ձևավորել նոր բերանակցում:

գ/ մեծ մատի և ցուցամատի օգնությամբ պետք է ստուգվի բերանակցման անցանելիությունը:

Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

⇒ բերանակցման անբավարարություն. եթե բացակայում է դիստալ խցանում, կա լավ դրենաժ և չկան բորբոքման նշաններ՝ պարենտերալ սնուցման պայմաններում կարելի է ակնկալել նրա ինքնուրույն ապաքինում:

⇒ վերքի բացում. վերքը լայն բացեք և սպասեք նրա երկրորդային լավացմանը:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ հեռացրեք քիթ-ստամոքսային զոնդը 1-2-րդ, ակտիվ դրենաժը՝ 2-րդ,իսկ դրենաժները որովայնի խոռոչից 5-7-րդ օրերին:

Կերակրման վերսկսում՝ 3–րդ օրվանից քիչ քանակով հեղուկներ, պինդ սնունդ՝ ստոմայով գազերի ու կղանքի դուրս գալուց հետո:

Աղիքի գործունեություն՝՝պրոկինետիկների նշանակում 4-րդ օրվանից, հնարավոր է թեթև լուծողական միջոցների նշանակում 5-7-րդ օրերից:

Ակտիվացում՝ անմիջապես:

Անաշխատունակության տևողությունը՝ 2 շաբաթ:

ԿՈԼՈՏՈՄԻԱ ԵՎ ՊՈԼԻՊԷԿՏՈՄԻԱ

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- խթաղու հաստ հիմքով ադենոմաներ, որոնք չեն կարող հեռացվել էնդոսկոպիկ եղանակով:

Հակացուցումներ.

- բիոպսիայով հաստատված 3-րդ ու բարձր աստիճանի դիսպլազիա:

Այլընտրանքային գործառույթներ՝ ուռուցքաբանական սկզբունքներին համապատասխան ֆորմալ սեգմենտար մասնահատում:

Նախավիրահատական հետազոտություն ու պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական ուսումնասիրություն՝

- ✓ այլ հաստաղիքային ախտահարումների բացառում, էնդոսկոպիա բիոպսիայով, որովայնի ԳՁՀ:

Հիվանդի պատրաստում՝ աղիքի օրտոգրադ լավաժ, հարվիրահատական հակաբիոտիկ թերապիա, միզապարկի կատետերի տեղադրում:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- ❖ Վիրահատական ծավալի ընդլայնում չարորակ ուռուցքի հայտնաբերման դեպքում,
- ❖ Բերանակցման գծի կարերի անբավարարություն, որովայնաբորբ, թարախակույտ կամ խուղակ /5% դեպքերում/,
- ❖ Ադենոմայի կրկնություն

Հիվանդի դիրքը՝ պառկած մեջքի վրա, հնարավոր է լիտոտոմիկ դիրք

Մուտք՝ միջային լապարաստոմիա, կախված գոյացության տեղակայումից, հնարավոր է նաև հարմիջային կտրվածք կամ կտրվածք ըստ Պֆաննենշտիլի:

Վիրահատություն

Փուլ 1. *Մուտք*

Ներկայումս կոլոտոմիան կիրառվում է խիստ հազվադեպ: Մաշկի կտրվածքը կախված է գոյացության տեղակայումից: Այստեղ նկարագրված է միջաձիգ հաստ աղու աջ կեսում տեղակայած պոլիպի հեռացում և համապատասխան իրականացվում է կարճ լայնակի կտրվածք որովայնի խոռոչի վերին հատվածում, ինչպես տրանսվերզոստոմայի դեպքում:



Փուլ 2. *Որովայնահատում*

Մաշկի ու ենթամաշկային ճարպաշերտի հատումից հետո բացվում են ապոնևրոզը, որովայնի ուղիղ մկանի արտաքին շերտն ու որովայնամիզը: Տեղադրվում է ռետրակտոր և հայտնաբերվում միջաձիգ հաստ աղին: Շոշափվող պոլիպի շրջանում այն ազատվում է մեծ ճարպոնից ու դուրս բերվում:



Փուլ 3. *Աղիքի լուսանցքի բացում*

Հաստ աղին վերցվում է կարեր-բռնիչների վրա և, նրանց միջև, պատը նշտարով բացվում: Սովորաբար աղիքի պատը հատվում է taenia libera-ով, բայց այն հիմնականում պայմանավորված է գոյացության տեղակայումով, քանի որ աղիքի պատը անհրաժեշտ է բացել պոլիպի հակառակ կողմից, եթե դա հնարավոր է:



Փուլ 4. *Պոլիպէկտոմիա*

Պոլիպի հիմքից ավելի պրոքսիմալ ու դիստալ դրվում են կարեր-բռնիչներ թույլ տալով դուրս բերել նրան վերքի մեջ: Որոշ դեպքերում հարմար կարող են լինել կարեր-բռնիչները դրված պոլիպի հիմքի շուրջը:



Փուլ5.

Պոլիպն ամբողջությամբ /նրա հիմքի հետ միասին/ աղիքի պատից հատվում է կտրող դիաթերմիայով: Որոշ դեպքերում դրա համար անհրաժեշտ է հատել պատի մի մասը, ստացված դեֆեկտը փակելով առանձին կարերով:



Փուլ 6.

Դեֆեկտի փակումը հանգուցակարերով պետք է իրականացվի շատ ուշադիր, որպեսզի աղիքի հետին պատին բաց չթողնվի որևէ անցք: Հետին խորը կարերի մեջ չպետք է վերցվեն արտաաղիքային կառուցվածքներ: Այդ իսկ պատճառով աղիքը պետք է զննվի բոլոր կողմերից:



Փուլ 7. *Կոլոստոմայի փակումը*

Այն փակվում է առանձին հանգուցակարերով /3-0PGA/: Կարի գիծը կարող է փակվել ճարպոնի հատվածով: Քանի որ կոլստոմիայից հետո կարող է զարգանալ որովայնաբորբ անհրաժշետ է կարեր դնել չխախտելով աղիքի արյան մատակարարումը: Եթե դեֆեկտը պոլիպէկտոմիայից հետո ստացվում է շատ մեծ կամ աղիքի պատը ենթարկվել է տրավմայի՝ խորհուրդ է տրվում իրականացնել հաստ աղու սեգմենտի ցիրկուլյար մասնահատում "ծայրը-ծայրին՛" բերանակցումով: Հեռացված հյուսվածքները միշտ պետք է ուղարկվեն հյուսվածքաբանական քննության: Չարորակ ուռուցքի հայտնաբերման դեպքում վիրահատական ծավալը պարտադիր ընդլայնվում է մինչև աղիքի մասնահատում և ռեգիոնար ավշային համակարգի հեռացում:



Անատոմիական առանձնահատկություններ, լուրջ ռիսկեր, վիրահատական հնարքներ:

Ադենոմայի ներվիրահատական փնտրտուկը կարող է հեշտացնել, անմիջապես միջամտությունից առաջ իրականացված էնդոսկոպիան և ներկանյութով նրա նշագրումը: Հակառակ դեպքում կարելի է կատարել ներվիրահատական կոլոնոսկոպիա:

Գործառույթները սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

Կարի գծի բացվելու դեպքում, եթե անբավարարության շրջանը լավ դրենավորվում է և չկան համակարգային բորբոքման նշաններ, հիվանդին կարելի է տեղափոխել պարենտերալ սնուցման և սպասել խուղակի ինքնուրույն փակմանը: Որովայնաբորբի նշանների դեպքում իրականացվում է կրկնակի որովայնահատում, որովայնի խոռոչի սանացիա և անբավարարության տեղից վեր ստոմայի ձևավորում կամ հենց նրա դուրս բերում, որպես ստոմա:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ հեռացրեք քիթ-ստամոքսային զոնդը 1-2-րդ և դրենաժը՝ 5-7-րդ օրը:

Կերակրման վերսկսում՝ թույլ հեղուկներ 2-րդ օրից, պինդ սնունդ, առաջին հետվիրահատական կղանքից հետո:

Աղիների գործունեություն՝ հնարավոր է թեթև լուծողական միջոցների ընդունում 5-րդ օրից:

Ակտիվացում՝ անմիջապես:

Անաշխատունակության տևողությունը՝ 1-2 շաբաթ:

ԱՄՈՔԻՉ ԲԵՐԱՆԱԿՑՈՒՄ ՁՍՏԱՊՈՒ ԵՎ ՄԻՋԱՁԻԳ ՀԱՍՏ ԱՂՈՒ ՄԻՋԵՎ

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- բարակ աղու դիստալ կամ խթաղու պրոքսիմալ սեգմենտի անմասնահատելի ստենոզ, պայմանավորված ուռուցքային գործընթացով:

Հակացուցումներ՝

- միջաձիգ հաստ աղու կեսից ավելի դիստալ տեղակայված ուռուցքային ստենոզ:

Այլընտրանքային գործառույթներ՝ պարենտերալ սնուցում և երկար խողովակով աղիքի դեկոմպրեսիա:

Նախավիրահատական հետազոտություն և պատրաստումվիրահատությանը

Նախավիրահատական ուսումնասիրություններ՝

- ✓ ախտաբանության հյուսվածաբանական հաստատում,
- ✓ բազմակողմանի ախտորոշիչ ստուգում ուղղված մետաստազների հայտնաբերմանը. ԳՋՀ, էնդոսկոպիա բիոպսիայով կամ մաշկի միջով բիոպսիա, ՀՇ, կոնտրաստ զանգվածով /ջրում լուծվող կոնտրաստ նյութ/ ստամոքս-աղիքային տրակտի ռենգենաբանական հետազոտություն:

Հիվանդի պատրաստում՝ քիթ-ստամոքսային զոնդ, հնարավոր է երկար աղիքային խողովակի օգտագործում /Դեննիսի խողովակ/:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- ❖ Կրկնակի օբստրուկցիա /խցանում/,
- ❖ Բերանակցման անբավարարություն,
- ❖ Որովայնաբորբ:

Հիվանդի դիրքը՝ պառկած մեջքի վրա:

Մուտքը՝ միջային որովայնահատում /կախված իրավիճակից/: Հնարավոր այլընտրանք է լապարասկոպիկ մուտքը 3-4 տրոակարների ու մի քանի Endo-GYA–ների կիրառումով:

Վիրահատություն

Փուլ 1. Մուտք

Հաստ աղու քաղցկեղի ժամանակ վիրահատության նպատակը ուռուցքի հեռացումն է: Նույնիսկ ամոքիչ ցուցումներով առավել նպատակահարմար է փորձել իրականացնել R_2 մասնահատում, չթողնելով ամբողջ ուռուցքը տեղում: Չնայած ուռուցքի ծավալուն ներաճը դեպի որովայնի պատ, տասներկումատյա աղի, ենթաստամոքսային գեղձ, լյարդի դրունք՝ հաճախ խոչընդոտում է իրականացնել նույնիսկ ամոքիչ մասնահատում: Նման դեպքերում ցուցված է ամոքիչ բերանակցման ձևավորում զստաղու և միջաձիգ հաստ աղու միջև: Լավագույն մուտքը վերին աջ լայնակի որովայնահատումն է: Հնարավոր են նաև միջային կամ աջ պարառեկտալ կտրվածքներ: Եվս մեկ այլընտրանք է՝ լապարասկոպիկ մուտքը, գծային կարող գործիքով բերանակցման ձևավորումով:



Փուլ 2. *Վիրահատության սկզբունքներ*

Բերանակցումը իրականացվում է զստաղու տերմինալ հատվածի և միջաձիգ հաստ աղու միջև: Պետք է լինել զգույշ, չոլորելու համար բարակ աղու գալարը և չառաջացնել բերանակցման շրջանի ձգում:



Փուլ 3. *Մոտեցում բարակ և հաստ աղիներին*

Որովայնի խոռոչի բացելուց հետո հաստ աղին ճարպոնի հետ տարվում է դեպի վեր: Հայտնաբերվում է զստաղու վերջին գալարը, որը երկու առանձին կարերով ամրացվում է միջաձիգ հաստ աղու taenia libera-ին: Բերանակցումը կարելի է ձևավորել բաց եղանակով կամ

կարող գործիքի միջոցով: Բաց եղանակի դեպքում հաստ աղիքը բացվում է taenia libera-ի երկայնքով, իսկ բարակը՝ երկու կար-բռնիչների միջև: Հաստ աղու վրա կարևոր է նշտարի կիրառումը մետանի պայթյունի վտանգի պատճառով, մինչդեռ բարակ աղու համար ավելի նպատակահարմար է դիաթերմիայի օգտագործումը:



Փուլ 4. Ջեռքի եղանակով բերանակցում

Աղիների լուսանցքները մեկուսացվում են փափուկ սեղմիչներով: Նրանց շուրջբոլորը փակվում է թանզիֆներով: Բերանակցման հետին պատը ձևավորվում է միաշարք հանգուցակարով: Հետին պատի անկյունային կարերը թողնվում են երկար որպեսզի հնարավոր լինի նրանց ձգել ու խորասուզել առաջային պատի կարի մեջ: Կարանյութը և կարերի միջև տարածությունը տիպային են աղիների մասնահատման համար: Աղիքային սեղմիչները հանում են բերանակցման առաջային պատի ձևավորումից հետո: Հերմետիկությունը հաստատվում է սեղմիչ դնելով, իսկ բերանակցման լայնությունը՝ մեծ մատով ու ցուցամատով:



Փուլ 5.

Բերանակցման ձևավորման ավարտից հետո ստուգվում է նրա դիրքը: Բերանակցման ծալվելուց խուսափելու և բարակ աղու գալարի առավելագույնս բացվելու համար բերող ու տանող գալարները կարող են կարվել taenia libera-ին առանձին կարերով: Բերանակցումը ծածկում են ճարպոնով: Վիրահատությունը ավարտվում է որովայնի խոռոչի դրենավորումով ու նրա պատի շերտ առ շերտ կարումով:



Փուլ 6. *Գործիքային բերանակցում*

Կարող GYA գործիքի կիրառման ժամանակ բարակ ու հաստ աղիները մոտեցվում են նույն եղանակով՝ երկու կարեր բռնիչներով: Աջ կար բռնիչի դիմացով երկու 1 սմ-ոց կտրվածքներով բացվում են աղիների լուսանցքները՝ կարող սարքի երկու բրանշների համար:

Պետք է համոզվել, որ հետևից վերցվել են միայն աղիների պատերը, առանց որևէ այլ կառուցվածքների: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում հաստատել սարքի դիրքը, տեղադրելով ձեռքը բարակ աղեգալարի հետևում: Կարող սարքի աշխատացնելուց հետո բերանակցումը շուռ է տրվում և հետազոտվում՝ հնարավոր արյունահոսող աղբյուրի հայտնաբերման համար: Ոչ հազվադեպ գործիքային կարի գծի վրա կարելի է հայտնաբերել շիթով արյունահոսող անոթ, ինչը պահանջում է նրա կարով կապումը:



Փուլ 7.

Կարող սարքի հեռացումից հետո հաստ ու բարակ աղիների պատերի օվալ դեֆեկտը փակվում է հանգուցակարերով դրված լայնակի ուղղությամբ: Որպեսզի ապահովվի անվտանգ փակում, կարի գիծը պետք է հասնի մեխանիկական կարի գծին:



Փուլ 8.

Կարի ավարտից հետո աղիքի երկու լուսանցքները մի անգամ ևս փակվում են: Ինչպես և ձեռքով կարի ժամանակ բերանակցման ծալվելը բացառելու համար խորհուրդ է տրվում բերող ու տանող բարակ և հաստ աղիների պատերի միջև դնել առանձին կարեր:



Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

- Բերանակցման անբավարարություն. ինչքան հնարավոր է տանել կոնսերվատիվ, որովայնաբորբի նշանների դեպքում՝ կրկնակի վիրահատություն, բերանակցումը դուրս բերելով որպես ստոմա:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ հեռացրեք քիթ-ստամոքսային զոնդը ռեֆլյուքսը նվազագույնին հասնելու և աղիների գործունեության նշաններ հայտնվելուն պես: Դրենաժները հեռացրեք 7-8-րդ օրը:

Կերակրման վերսկսում՝՝ թույլ տվեք հեղուկների օգտագործում 1-2-րդ օրից, հնարավոր է նույնիսկ քիթ-ստամոքսային զոնդի պայմաններում: Պինդ սնունդը՝ առաջին հետվիրահատական կղանքից հետո:

Աղիների գործունեություն՝ հետվիրահատական շրջանում հնարավոր է ջրում լուծվող կոնտրաստային նյութի նշանակում, բերանով կամ քիթ-ստամոքսային զոնդով՝ աղիների պարունակության շարժման ստուգման համար:

Անաշխատունակության տևողությունը՝ կախված է ընդհանուր իրավիճակից:

Փորձված վիրաբուժի խորհուրդները

- Անհրաժեշտ է ճիշտ որոշել բարակ և հաստ աղու սեգմենտների բերանակցվող հատվածները:
- Բերանակցման լայնությունը պետք է կազմի 8-10սմ:
- Բերանակցումը կարելի է ձևավորել միաշարք անընդհատ կարի եղանակով, ամրացնելով առանձին հանգուցակարերով նրա երկու անկյունները:

ԱՋԱԿՈՂՄՅԱՆ ՀԵՄԻԿՈԼԷԿՏՈՄԻՅԱ

Ցուցումներն ու հակացուցումները

Ցուցումները՝

- Իլեոցեկալ հատվածի, վերել և միջաձիգ հաստ աղու, լյարդային անկյան չարորակ ուռուցքներ,
- Վերել հաստ աղու բարորակ ախտահարումներ, որոնց ժամանակ ավելի քիչ տարածուն մասնահատումը անընդունելի է:

Այլընտրանքային գործառույթներ՝ իլեոցեկալ մասնահատում, ընդլայնված աջակողմյան հեմիկոլէկտոմիա, սուբտոտալ կոլէկտոմիա, ամոքիչ էնտերո-էնտերոստոմա:

Նախավիրահատական հետազոտություններ և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական ուսումնասիրություններ՝

- ✓ պարատադիր կոլոնոսկոպիա, բիոպսիայով ու ստացված հյուսվածքների հյուսվածքաբանական հետազոտությամբ:
- ✓ Հնարավոր է կոնտրաստային ռենտգենաբանական նկարահանում:
- ✓ Ցանկալի է գինեկոլոգիական և ուռոլոգիական հետազոտում:
- ✓ Հեռակա մետաստազների բացառման համար կիրառվում են ԳՋՀ և ՀԾ:

Հիվանդի պատրաստում՝ աղիքի օրտոգրադ լավաժ, կենտրոնական երակի կատետերիզացիա, հարվիրահատական հակաբակտերիալ թերապիա, միզապարկի կատետերիզացիա, անեմիայի կարգավորում /եթե կան նշաններ/:

Սպեցիֆիկ ռեիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- Բերանակցման անբավարարորություն /2% դեպքերում/:
- Արյունահոսություն /1%/:
- Աղիքային անանցանելիություն /2%/:
- Վերքային ինֆեկցիա /2-10%/:
- Միզածորանի կամ 12-մատյա աղու վնասում:

Հիվանդի դիրքը՝ մեջքի վրա պառկած

Մուտքը՝ միջային, աջակողմյան հարմիջային կամ վերին լայնակի որովայնահատում, որին բնորոշ են լավագույն կոսմետիկ արդյունքներ ու քիչ քանակի հետվիրահատական ճողվածքներ:

Վիրահատություն

Փուլ 1. *Մասնահատման ծավալը*

Արմատական աջակողմյան հեմիկոլէկտոմիայի ժամանակ հեռացվում են հաստ աղու աջ կեսն ու զստաղու տերմինալ հատվածը, ռեգիոնար ավշային ուղիներով, մեծ ճարպոնի աջ կեսի հետ միասին:



Փուլ 2. *Վերակառուցման պլան*

Աղիքային ուղու անընդհատությունը վերականգնվում է զստաղու դիստալ հատվածի և միջաձիգ հաստ աղու բերանակցումով, որը հիմնականում տեղակայվում է որովայնի խոռոչի վերին հատվածի կենտրոնում:



Փուլ 3. *Մուտք*

Չնայած ստանդարտ իլեոցեկալ մասնահատումների համար բավարար է ստորին լայնակի որովայնահատումը, աջակողմյան հեմիկոլէկտոմիայի դեպքում անհրաժեշտ է իրականացնել վերին լայնակի, կամ հարռեկտալ, կամ միջային որովայնահատում: Արտահայտված ճարպակալումով տառապող և ձգված որովայնի պատ ունեցող հիվանդների մոտ վերին լայնակի որովայնահատումը կարող է տալ առավել լավ էքսպոզիցիա: Կարող է նաև իրականացվել լապարասկոպիկ տեղայնացում, ոչ մեծ լայնակի կտրվածքից հեռացվող հատվածի դուրս բերումով և արտաորովայնային բերանակցման ձևավորումով:



Փուլ 4. *Մեծ ճարպոնի հատում*

Դիսսեկցիան աջակողմյան հեմիկոլէկտոմիայի ժամանակ սկսվում է մեծ ճարպոնի երկայնակի հատումով: Անոթները սեղմիչների միջև կտրվում են ու կապվում: Մեծ ճարպոնի հատումը իրականացվում է մինչև միջաձիգ հաստ աղու տեննիա:



Փուլ 5. Ստամոքս-հաստաղիքային կապանի հատում

Ստամոքս-հաստաղիքային կապանը սեղմիչների միջև հետևողականորեն հատվում է, մոտ ստամոքսի պատին: Մասնահատման աջ եզրը, որը պահում է աղիքի լայարդային ոլորանը՝ լյարդ-հաստաղիքային կապան, հատվում է սեղմիչների միջև և կարով կապվում:



Փուլ 6. *Ստամոքս-հաստաղիքային կապանի հատում*

Ստամոքսը բռնվում է Դյուվալի բռնիչով և շուռ է տրվում առաջա-վերին ուղղությամբ, միաժամանակ, երկրորդ բռնիչով հաստ աղին ձգվում է առաջա-հետին ուղղությամբ: Այն թույլ է տալիս ստամոքսին մոտ իրականացնել մեդիալ ուղղությունով ստամոքս-հաստաղիքային կապանի հետագա հատում, սեղմիչների միջև: Ավարտելուց հետո, վերքի խորքում երևում են միջին ու աջ հաստաղիքային անոթները:



Փուլ 7. *Հաստ աղու աջ կեսի տեղայնացում*

Հաստ աղու աջ կեսը անջատվում է կողմնային կպումներից, սկսած կույր աղու շրջանից: Անջատումը հիմնականում իրականացնում են սուր կերպով առանց որևէ խոշոր անոթ կապելու: Վերքի խորքում հայտնաբերվում են աջ միզածորանն ու 12-մատյա աղին, որոնք բութ կերպով տեղաշարժվում են մի կողմ: Կույր աղու ձգումը գլխամասային ուղղությամբ թույլ է տալիս հայտնաբերել վերել հաստ աղու միջընդերային ոտիկը:



Փուլ8. *Լյարդ-հաստաղիքային կապանի հատում*

Լյարդային անկյունը դեռ մնում է կպած համապատասխան կապանին: Տեղայնացումը շարունակվում է երկու փուլերով: Մակերեսային մակարդակով երկու բռնիչների միջև հատվում է լյարդ-հաստաղիքային կապանը: Լյարդ-երիկամային կապանը հատվում է ավելի խորը, որից հետո հաստ աղու աջ կեսը կարող է զգալի տեղաշարժվել մեդիալ ուղղությամբ: Վերքի խորքում մերկանում են 12-մատնյա աղին ու աջ միզածորանը:



Փուլ 9.. *Մասնահատման եզրերի որոշումը*

Մասնահատման երկու եզերը նշվում են ռետինե բռնիչներով, փակելով աղիքի լուսանցքը: Լուսանցք կարող է մտցվել նաև ցիտոտոքսիկ լուծույթ /200մլ/ օրինակ, բետադին, որպեսզի սպանվեն բոլոր ազատ լողացող կենսունակ ուռուցքային բջիջները: Այս փուլում ճշգրտվում է մասնահատման ծավալը: Կույր աղու բարորակ ախտահարումների ժամանակ բավարար է իրականացնել նրա սովորական մասնահատումը, առանց մեծ ճարպոնի մասնահատման և լյարդային անկյան տեղայնացման: Սկելետիզացիան սահմանափակվում է զստաղու տերմինալ հատվածի և աղիքին մոտ վերել հաստ աղու դիսեկցիայով: Բոլոր տեսակի չարորակ ախտահարումների ժամանակ անհրաժեշտ է ավշային ճանապարհների արմատական հեռացում: Սրա համար պետք է առանձնացվեն զստա-հաստ աղիքային զարկերակը, աջ հաստաղիքային զարկերակը և միջին հաստաղիքային զարկերակը: Այս նպատակով կատարվում է միջընդերքի արմատի դիաֆանոսկոպիա, հետագա դիաթերմիկ դիսեկցիայով և սկելետիզացիայով:



Փուլ 10. Հաստ աղու միջընդերքի արմատական հեռացում

Հաստ աղու միջընդերքը հատվում է փուլ առ փուլ նրա արմատի մոտ: Մասնահատումը սկսվում է զստա-հաստաղիքային անոթներից, որոնց հաջորդում են աջ ու միջին հաստաղիքային անոթները: Անհրաժեշտ է համոզվել Ռիոլանի աղեղի ամբողջականության մեջ /որն ապահովում և միջաձիգ հաստ աղու մնացած հատվածի արյան մատակարարումը/: Կասկածի դեպքում անհրաժեշտ է միջին հաստ աղու զարկերակի ձախ ճյուղը պահպանել: Անթոներն իրենց արմատի մոտ կապվում են ու կարվում: Սա միակ հնարավորությունն է ապահովելու ավշային ուղիների հեռացման արմատականությունը:



Փուլ 11. *Բարակ աղու հատման գիծը*

Վիրահատության վերջին փուլը զստաղու տերմինալ սեգմենտի անոթային աղեղի հատումն է: Անոթները բռնվում են երկու սեղմիչների միջև հատվում և կապվում: Վիրաբույժը պետք է վստահ լինի, որ զստաղու տերմինալ սեգմենտը ունի բավարար արյան մատակարարում: Հակառակ դեպքում հատման գիծը պետք է տեղափոխվի ավելի վեր:



Փուլ 12. *Հաստ աղու գծի հատումը*

Լայնակի հաստ աղու վերջին մնացած անոթային աղեղը վերցվում է սեղմիչով և նույն կերպ հատվում: Կարևոր է համոզվել միջաձիգ հաստ աղու ձախ կեսի բավարար արյան մատակարարման վերաբերյալ:



Փուլ 13. *Միջաձիգ հաստ աղու հատում*

Լայնակի հաստ աղու ձախ մասի վրա դրվում է փափուկժոմ և նրա տակ տարվում անտիսեպտիկ լուծույթով թրջված թանզիվ: Ոչ պարտադիր կարեր-բռնիչներ դնելուց հետո աղիքը լայնակի հատվում է և աղիքի ծայրատը մշակվում հակասեպտիկ լուծույթով:



Փուլ 14. *Ջատաղու հատում*

Ջատաղու հատումը կատարվում է երկու կարեր-բռնիչների միջև, փափուկ ժոմի պաշտպանության ներքո: Այստեղ ևս աղիքի տակ կտրվածքի գծի ուղղությամբ դրվում է հակասեպտիկ նյութով թրջված թանզիվ: Աղիքը հատվում է թեք ուղղությամբ դիստալ միջընդերային եզրից դեպի պրոքսիմալ հակաընդերայինը: Այն թույլ է տալիս ստանալ բարակ աղու լայն թեք կտրվածք, որը համապատասխանում է հաստ աղու լուսանցքին: Կարեր-բռիչները կարող են հեշտացնել թեք հատումը:



Փուլ 15. *Հետին պատի բերանակցում*

Իրականացվում է ”ծայրը-ծայրին“ բերանակցում միաշարք հանգուցակարի տեխնիկայի / 3-0 PGA/ կիրառումով: Լուսանցքների լայնության անհամապատասխանությունը պահանջում է “հավաքել” լայն եզր, կութերը դնելով անհրաժեշտ ուղղություններով: Կարերի միջև տարածությունը կազմում է 0.6սմ: Հետին պատի ձևավորման ավարտից հետո վերջին կարը օգտագործվում է որպես կար-բռնիչ: Բարակ ու հաստ աղիների միջև բերանակցումը պետք է կառուցվի այնպես, որ նրանց միջընդերքները լինեն նույն կողմից /միջընդերքը միջընդերքին/:



Փուլ 16. *Առաջային պատի բերանակցում*

Առաջային պատի կարը իրականացվում է նույն միաշարք հանգուցակարերով: Կար բռնիչը /այսինքն հետին պատի վերջին անկյունակարը/ խորասուզվում է առաջային պատի առաջին կարով: Բերանակցումը պետք է լինի ձգումից ազատ, լավ մատակարարվի արյունով և ունենա լայն լուսանցք: Լուսանցքի լայնության համապատասխանությունը հաստատվում է մեծ մատի ու ցուցամատի միջև:



Փուլ 17. *Միջընտերքի դեֆեկտի փակում*

Միջընդերքի դեֆեկտը փակվում է առանձին հանգուցակարերով, առանց անցնող անթոների վնասման: Բերանակցումը կարելի է ծածկել ճարպոնի հատվածով:



Անատոմիական յուրահատկությունները, լուրջ ռիկսերը,վիրահատական հնարքները

ա/ Հաստ աղու աջ կեսի արյան մատակարարումը ապահովվում է զստա-հաստաղիքային, աջ և միջին հաստ աղիքային զարկերակներով ու երակներով /եզրային աղեղներ/:

բ/ Հաստ աղու աջ կեսն ու աջ միզածորանը տեղակայված են իրար մոտ:

գ/ Մեծ ճարոպոնի մասնահատում.

- ցուցված է հաստ աղու լյարդային անկյան ուռուցքների ժամանակ, կատարեք մասնահատումը ստամոքս-ճարպոնային անոթային աղեղի սահմաններում:

- Պարտադիր չէ կույր աղու շրջանի ուռուցքների ժամանակ, հնարավոր է աջ սերմնային/ձվարանային զարկերակի ու երակի մասնահատում:

դ/ Գտեք աջ միզածորանը, որը հատում է ընդհանուր զստային զարկերակը նրա երկատման շրջանում, երբ այն բաժանվում է արտաքին ու ներքին ճյուղերի:

Զգուշացում՝ անհրաժշետ է խուսափել ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի մոտ տեղակայված միջին հաստաղիքային երակի ու ստորին ենթաստամոքս-տասներկումատնյա երակների միջև երակային բերանակցման վնասումից: Եղեք զգույշ միջաձիգ հաստ աղու տեղայնացման ժամանակ նրա չափից ավել ձգումից:

ե/ Ձստաղու հատումը իրականացվում է իլեոցեկալ փականից 10-15սմ պրոքսիմալ:

է/ Աղիքի մասնահատման շրջանում եզրային անոթային աղեղում շոշափվող պուլսացիան լավ արյան մատակարարման նշան է:

ը/ Պարտադիր չէ բերանակցումը ծածկել ճարպոնի կտորով:

թ/ Միջաձիգ հաստ աղու հատվածի, ձախ անկյան և հնարավոր է վայրէջ աղու պրոքսիմալ հատվածների ուռուցքների ժամանակ ընդլայնված աջակողմյան հեմիկոլէկտումիան թույլ է տալիս խուսափել հաստ աղիք - հաստ աղիքային բերանակցումներից, վերջիններիս բնորոշ ոչ հուսալի արյան մատակարարումով և կարող է կատարվել նույնիսկ չպատրաստված հաստ աղու պայմաններում /օրինակ, անացանելիության ժամանակ/:

Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

- Բերանակցման անբավարություն. իրականացրեք որովայնահատում դուրս բերելով բերանակցման երկու եզրերը ՝ ըստ Միկուլիչի ստոմայի ձևով կամ ձևավորելով առանձին ստոմա:

- Թարախակույտ /ենթալյարդային, ենթաստոծանիական, հարհաստաղիքային, կոնքային/: Եթե հնարավոր է դրենավորում մաշկի միջով ԳՁՀ-ի կամ ՀՇ-ի հսկողությամբ, հակառակ դեպքում՝ իրականացվում է վիրաբուժական դրենավորում:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ հեռացրեք քիթ-ստամոքսային զոնդը 1-3-րդ օրը, դրենաժները՝ 7-8-րդ օրը:

Կերակրման վերսկսումը՝ թույլատրեք խմել հեղուկներ 3-4-րդ օրը, պինդ սնունդը՝ առաջին հետվիրահատական կղանքից հետո, մոտավորապես 7-րդ օրը:

Աղիների գործունեություն՝ սպասեք գազերի հեռացմանը 3-5-րդ օրը, հնարավոր է պրոկինետիկների նշանակում, ոչ մեծ ծավալի հոգնաներ՝ 5-րդ օրվանից:

Ֆիզիոթերապիա՝ շնչառական վարժություններ:

ԻԼԵՈՑԵԿԱԼ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ՝

- բոլոր բարորակ ախտահարումները սահմանափակված իլեոցեկալ շրջանով,
- որպես ամոքիչ միջամտություն ուռուցքների դեպքում:

Այլընտրանքային գործառույթներ՝ աջակողմյան հեմիկոլէկտոմիա, կոլոտոմիա /օրինակ, պոլիպէկտոմիայի համար/:

Նախավիրահատական հետազոտություններ և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական ուսումնասիրություններ՝

- ✓ պարտադիր կոլոնոսկոպիա բիոպսիայով և ստացված նյութի հյուսվածաբանական հետազոտությամբ,
- ✓ ստամոքս-աղիքային տրակտի ռենտգենաբանական հետազոտում,
- ✓ ուռուցքային մարկերներ,
- ✓ որովայնի օրգանների ԳՁՀ և ՀԾ:

Հիվանդի պատրաստումը՝ աղիների օրտոգրադ լավաժ, հարվիրահատական հակաբակտերիալ թերապիա, կենտրոնական երակի կատետերիզացիա, միզապարկի կատետերիզացիա:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի ինֆորմացված համաձայնությունը

- ❖ չարորակ ուռուցքի ժամանակ վիրահատական ծավալի ընդլայնում,
- ❖ բերանակցման անբավարարություն />2% դեպքերում/,
- ❖ որովայնաբորբ,
- ❖ վերքային ինֆեկցիա />10%/,
- ❖ բերանակցման նեղացում, ստենոզ,

- միզածորանի և 12-մատնյա աղու վնասում />1%/:

Հիվանդի դիրքը՝ մեջքի վրա պառկած:

Մուտքը՝ միջային կամ տրանսռեկտալ որովայնահատում, աջ լայնակի որովայնահատում: Հնարավոր է երեք տրոակարներով լապարասկոպիկ միջամտություն:

Վիրահատություն

Փուլ 1. ***Մասնահատման ծավալը***

Իլեոցեկալ մասնահատման ժամանակ հեռացվում է զստաղու դիստալ ու հաստ աղու պրոքսիմալ սեգմենտները, առանց համապատասխան ավշահատման: Դիսեկցիան կատարվում է աջակողմյան հեմիկոլէկտոմիայի նման, սակայն սկելետիզացիան իրականացվում աղիքի պատին մոտ: Աղիքի լյարդային անկյան լրիվ տեղայնացում հազվադեպ է պահանջվում:



Փուլ 2.

Վերակառուցումը իրականացվում է միաշարք կարով/3-0 PGA/:Թեքությամբ հատված զստաղին “ծայրը-ծայրին” բերանակցվում է վերել հաստ աղու հետ:Միջընդերային դեֆեկտը կարող է փակվել առանձին կարերով:



Անատոմիական առանձնահատկություններ, լուրջ ռիսկեր, վիրահատական հնարքներ

ա/ Իլեոցեկալ հատվածը տեղակայված է միզածորանի, աջ սերմնային/ձվարանային անոթներին և 12-մատնյա աղու հետորովայնամզային հատվածին մոտ:

Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

- Եթե վիրահատության տեղը լավ դրենավորվում է, իսկ բորբոքման համակարգային նշաններ կամ այլ կլինիկական ախտանիշները բացակայում, ապա բերանակցման անբավարարության դեպքում կարելի է ընտրել սպասողական մարտավարություն՝ կիրառելով պարենտերալ սնուցում, մինչև խուղակի ինքնուրույն փակում:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ քիթ-ստամոքսային զոնդը հեռացվում է 1-2-րդ օրը, իսկ դրենաժները՝ 5-7-րդ:

Կերակրման վերսկսում՝ հեղուկները թույլ են տրվում 2-3-րդ օրից, պինդ սնունդը՝ առաջին հետվիրահատական կղանքից հետո:

Աղիների գործունեությունը՝ հնարավոր են ոչ մեծ ծավալով հոգնաներ կամ պրոկինետիկներով բուժում հետվիրահատական 4-րդ օրից:

Ակտիվացում՝ միանգամից:

Անաշխատունակության տևողությունը՝ 1-2 շաբաթ:

ՍԻԳՄԱՅԱՁԵՎ ԱՂՈՒ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ

- սիգմայաձև աղու շրջանի բարորակ պաթոլոգիական գոյացություններ, երբ կպումների և նախորդած վիրահատության հետևանքով լապարասկոպիկ մուտքը անհնար է:
- չարորակ ուռուցքների ժամանակ, միայն պալիատիվ նպատակներով:

Այլընտրանքային միջամտություններ՝ ձախակողմյան հեմիկոլէկտոմիա - սովորաբար իրականացվում է սիգմայաձև աղու չարորակ ուռուցքների դեպքում: Բացառություն՝ լյարդի մետաստատիկ ախտահարումներ, երբ իրականացվում է սիգմայաձև աղու մասնահատում:

Նախավիրահատական հետազոտություններ և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ պարտադիր կոլոնոսկոպիա՝ բիոպսիայով,
- ✓ ռենգենկոնտրաստային հետազոտություն,
- ✓ որովայնի ԳՁՀ ու ՀՇ՝ չարորակ ուռուցքի հեռավոր մետաստազների բացառման համար:

Հիվանդի պատրաստումը՝ աղիքի օրտոգրադ լավաժ, կենտրոնական երակի կատետերիզացիա, հարվիրահատական հակաբիոտիկ թերապիա, միզապարկի կատետերի տեղադրում, քիթ-ստամոքսային զոնդ:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- ❖ ձախ միզածորանի վնասում /1% դեպքերում/,
- ❖ փայծաղի վնասում /1%/,
- ❖ բերանակցման անբավարարություն />10%/:

Հիվանդի դիրքը՝ մեջքի վրա պառկած, մոդիֆիկացված լիտոտոմիկ դիրք՝ ըստ Լյորդ -Դեվիսի:

Մուտք՝ միջային որովայնահատում պորտից ներքև: Հնարավոր է նաև՝ կտրվածք ըստ Պֆաննենշտիլի կամ ձախակողմյան պարառեկտալ կտրվածք՝ ըստ Լեննանդերի: Լավագույն ընտրություն է համարվում լապարասկոպիկ մուտքը

Վիրահատություն

Փուլ 1. *Վիրահատության ծավալը*

Սիգմայաձև հաստ աղու խողովակային մասնահատում /միայն աղիքի մասնահատում, առանց միջընդերքի լրիվ հեռացման/ ցուցված է բորբոքային գործընթացների ու աղիքի դիվերտիկուլների պարագայում: Մասնահատման ծավալը պայմանավորված է աղիքի պատի պաթոլոգիական փոփոխությունների աստիճանով: Դիասեկցիան իրավանացվում է աղիքի պատին մոտ:



Փուլ2. *Վերակառուցում*

Աղիքի անընդհատության վերականգնումը վայրեջ հաստ և ուղիղ աղու բերանակցումով սովորաբար դժվարություն չի ներկայացնում: Փայծաղային անկյան տեղայնացման անհրաժեշտություն ի հայտ է գալիս միայն լայնածավալ մասնահատումներից հետո:



Փուլ3. *Մուտք*

Մուտքը միջին ստորին որովայնահատումով, որը կարող է լայնացվել պորտից վեր: Կանանց մոտ, ելնելով կոսմետիկ նկատառումներից, այն իրականացվում է՝ ըստ Պֆաննենշտիլի:



Փուլ4. *Ռետրակտորի տեղադրումը վերքի մեջ*

Որովայնահատումից հետո խոռոչում տեղադրվում է վերքալայնիչ, որի համար շատ նպաստավոր է Գոլայերի շրջանակը: Բարակ աղին ուսումնասիրելուց հետո, մեծ ճարպոնի հետ, ծածկվում է խոնավ ծածկոցով և տեղաշարժվում որովայնի խոռոչի վերին հատված և այնտեղ պահվում է լայնիչի միջոցով:



Փուլ5. *Սիգմայաձև աղու տեղայնացումը*

Բարակ աղին ու մեծ ճարպոնը տեղաշարժվում են գլխամասային ուղղությամբ և վիրահատական դաշտում ձախից մնում է սիգմայաձև աղին իր միջընդերքի արմատով, աջից՝ հազիվ երևացող կույր աղին և միզածորանը, որը նշմարվում է բարակ որովայնամզի տակից: Դիսսեկցիան սկսում են սիգմայաձև աղու ձախակողմյա կպումներից: Սիգմայաձև աղին իր հետորովայնիամզային կպումներից անջատվում է աղիքի պատին մոտ «սպիտակ գծի» երկայնքով պինցետի ու մկրատի օգնությամբ և երկու Դյուվալի բռնիչներով զգույշ տրակցիայով ձգվում մեդիալ:



Փուլ 6. *Սիգմայաձև աղու ցիրկուլյար դիսսեկցիա*

Սիգմայաձև աղու լրիվ տեղայնացումը թույլ է տալիս մերկացնել որովայնամզի հետին մակերեսը: Մասնահատման ծավալը պայմանավորված է բորբոքային փոփոխությունների աստիճանով: Միզածորանը պետք է միշտ հստակ երևա հետորովայնամզային տարածության սահմաններում: Այն առավել հեշտ հայտնաբերվում է զստային անոթների վրայով անցման տեղում: Պետք է նաև հայտնաբերվեն ու պահպանվեն ավելի դրսայնորեն տեղակայված ձվարանային /սերմնային/ անոթները:



Փուլ 7. Սիգմայաձև աղու միջընդերքի սկելետիզացիա

Սիգմայաձև աղու լրիվ տեղայնացումից հետո միջընդերքը, աղիքի պատին մոտ, սեղմիչների միջև մաս-մաս հատվում է: Այստեղ ևս պետք է զգուշանալ միզածորանի վնասումից: Անոթները կապվում են 3-0 PGA-ով: Դիսսեկցիան շարունակվում է պրոքսիմալ ուղղությամբ դեպի վայրեջ հաստ աղի և դիստալ՝ մինչև ուղիղ աղու պրոքսիմալ հատված: Խուսափելու համար պրոքսիմալ բերանակցման շրջանի ձգումից անհրաժշտետ է վայրէջ հաստ աղին լրիվ տեղայնացնել: Փայծաղային անկյան տեղայնացում սովորաբար չի պահանջվում:



Փուլ 8. *Պրեպարատի հեռացում*

Լրիվ տեղայնացումից և աղիքի սկելետիզացիայից հետո այն հատվում է պրեպարատի կողմից երկու ճզմող սեխմիչների և հաստ աղու մնացող հատվածների կողմից էլաստիկ աղիքային սեխմիչների միջև: Մասնահատման տեղը փակվում է անտիսեպտիկ նյութով թրջված սրբիչով:



Փուլ 9. *Հետին պատի բերանակցում*

Ձեռքի կամ մեխանիկական գործիքի կարով իրականացվում է “ծայրը-ծայրին” բերանակցում: Ձեռքի եղանակը պահանջում է կարեր-բռնիչներով պրոքսիմալ ու դիստալ եզրերի մոտեցում: Կիրառվում են 3-0 PGA-ի հանգուցակարեր: Բերանակցումը ձևավորվում է միաշարք, կարը թեք ուղղությամբ՝ դեպի աղիքի պատ /ավելի շատ սերոզ թաղանթ, ավելի քիչ լորձաթաղանթ/, լայնությունը կարերի միջև՝ մինչև 0.5սմ:



Փուլ 10. *Առաջային պատի բերանակցում*

Առաջային պատի բերանակցումը իրականացվում է նույնանման հանգուցակարերով: Անկյունի երկու կարերը խորասուզվում են աղիքի լուսանցքի մեջ:



Փուլ 11. *Միջընդերքի դեֆեկտի փակում*

Սիգմայաձև աղու միջընդերքը փակվում է առանձին կարերով, առանց անոթային աղեղների վնասման, ինչը կարող է խախտել բերանակցման շրջանի արյան մատակարարումը:

Վիրահատությունը ավարտվում է երկու դրենաժների տեղադրումով ու որովայնի պատի փակումով:



Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

⇒ *Բերանակցման անբավարարություն՝* եթե վիրահատական շրջանը լավ դրենավորվում է, կիրառվում է սպասողական մարտավարություն, պարէնտերալ սնուցումով, միչև խուղակի ինքնուրույն փակում: Պերիտոնիտի ցանկացած նշանի դեպքում կատարվում է շտապ կրկնակի որովայնահատում և ձևավորվում դուրս բերող ստոմա կամ դուրս է բերվում բերանակցումը, ուղիղ աղին փակվում է կույր ծայրատի ձևով և վայրէջ հաստ աղու վրա ձևավորվում եզրային ստոմա /Հարթմանի վիրահատություն/:

⇒ *Բերանակցման նեղացում՝* հիմնականում առաջանում է, երբ բերանակցումը գտնվում է ծգված վիճակում: Հնարավորության դեպքում իրականացվում է էնդոսկոպիկ դիլյատացիա, անհաջողության դեպքում պահանջվում է վիրահատություն:

Հետվիրահատական գործառույթները

Բժշկական խմնամք՝ քիթ-ստամոքսային զոնդը հեռացվում է 1-3-րդ օրը և դրենաժները՝ 7-8-րդ:

Կերակրման վերսկսում՝ հեղուկներ թույլատրվում են 3-4-րդ օրից, պինդ սնունդ՝ առաջին հետվիրահատական կղանքից հետո / մոտավորապես 7-րդ օրը/:

Աղիքի գործունեություն՝ բուժում պրոկինետիկներով 4-5-րդ օրից: Առաջին շաբաթների ընթացքում, աղիքային ֆունկցիայի վերականգնումից հետո, հնարավոր է թույլ պերօրալ թուլացնող միջոցների կիրառում:

Ֆիզիոթերապիա՝ շնչառական վարժություններ:

Անաշխատունակության տևողությունը՝ 2-3 շաբաթ:

Փորձառու վիրաբույժի խորհուրդները

- Սիգմայաձև աղին տեղակայված է ձախ միզածորանի, ձախ ձվարանային/սերմնային զարկերակի ու երակի, փայծաղի ստորին բևեռի հարևանությամբ:
- Բերանակցումը պետք է լինի առանց ձգման, հնարավոր է անհրաժեշտ լինի հաստ աղու փայծաղային անկյան տեղայնացում:
- Հաստ աղու տեղայնացման ընթացքում խուսափեք փայծաղի ստորին բևեռի վնասումից, աղու չափից ավել ձգման հետևանքով:

ՍԻԳՄԱՅԱՁԵՎ ԱՂՈՒ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ցուցումներ և հակացուցումներ

Ցուցումներ՝

- սիգմայաձև աղու չարորակ նորագոյացություններ

Այլընտրանքային գործառույթներ՝ ձախակողմյան հեմիկոլէկտոմիա՝ սովորաբար սիգմայաձև աղու պրոքսիմալ հատվածների չարորակ ուռուցքների հետ կապված: Լյարդում մետաստազների հայտնաբերման դեպքում՝ սիգմայաձև աղու խողովակաձև մասնահատում /միջընդերքի սկելետիզացիա աղիքի պատին մոտ/:

Նախավիրահատական հետազոտություններ և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ պարտադիր կոլոնոսկոպիա՝ բիոպսիայով,
- ✓ աղիների ռենգենկոնտրաստային հետազոտություն,
- ✓ ԳՋՀ ու ՀՇ չարորակ ուռուցքի հեռավոր մետաստազների բացառման համար,
- ✓ հնարավոր է ուրոլոգիական կամ գինեկոլոգիական հետազոտություն:

Հիվանդի պատրաստում՝ աղիքի օրտոգրադ լավաժ/լվացում, կենտրոնական երակի կատետերիզացիա, հարվիրահատական հակաբիոտիկ թերապիա, քիթ-ստամոքսային զոնդի տեղադրում, միզապարկի կատետերիզացիա:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի ինֆորմացված համաձայնությունը

- Ձախ միազածորանի վնասում /1% դեպքերում/,
- Փայծաղի վնասում /5%/,
- Բերանակցման անբավարարություն /10%/,
- Վերքի բացում /10%/:

Հիվանդի դիրքը՝ մեջքի վրա պառկած, մոդիֆիկացված լիտոտոմիկ դիրք՝ ըստ Լյորդ-Դեվիսի:

Մուտքը՝ միջային որովայնահատում, կտրվածքի շարունակում պորտից վեր դեպի ձախ թուլակող:

Սիգմայաձև աղու արմատական մասնահատումը խողովակային մասնահատումից տարբերվում է միայն մասնահատման եզրերի հեռավորությունով և միջընդերքի ավշային համակարգի միաժամանակյա ամբողջական հեռացումով: Այդ իսկ պատճառով ստորև բերվում են միայն այս տարբերությունները, մինչդեռ վիրահատության մյուս փուլերը նկարագրված են նախորդ գլխում:

Վիրահատություն

Փուլ 1. Մասնահատման ծավալը

Սիգմայաձև աղու արմատական մասնահատումը ներառում է սիգմայաձև աղին, ուղիղ աղու պրոքսիմալ սեգմենտը, միջընդերքի հիմքն /որտեղ աորտայից դուրս է գալիս ստորին միջընդերային զարկերակը/ ու վայրէջ հաստ աղու դիստալ սեգմենտը:



Փուլ 2, *Վերակառուցում*

Աղիքի անընդհատության վերականգնումը իրականացվում է վայրէջ հաստ աղու և ուղիղ աղու բերանակցման ձևավորամամբ, ինչը հաճախ պահանջում է հաստ աղու փայծաղային անկյան տեղայնացում: Ի տարբերություն ձախակողմյան հեմիկոլէկտոմիայի այս մասնահատման ժամանակ պահպանվում են ձախ փայծաղային անկյունն ու լայնակի հաստ աղու ձախ կեսը:



Փուլ 3. Անոթների բարձր դիսսեկցիա

Սիգմայաձև աղու մասնահատման ժամանակ կիրառվում են նրա միջընդերքի սկելետիզացիայի երկու եղանակներ: Առաջինը այսպես կոչված բարձր կապումն է, որը ներառում է ստորին միջընդերային զարկերակի հատում մինչև աորտայից նրա բաժանվելը և ստորին միջընդերային երակի դիսսեկցիա ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի մոտ:

Մյուս եղանակը՝ դա ավելի ցածր կապելու միջոցն է, որը ներառում է ստորին միջընդերային զարկերակով արյան մատակարարվող տարածքը, պահպանելով նրա առաջին ճյուղը՝ ձախ հաստաղիքային զարկերակը: Սիգմայաձև աղու արմատական մասնահատումը միշտ պահանջում է ստորին միջընդերային զարկերակի ու երակի բարձր կապում:



Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

⇒ *Բերանակցման նեղացում*՝ եթե հնարավոր է կատարվում է էնդոսկոպիկ դիլատացիա, հակառակ դեպքում՝ կրկնակի վիրահատություն

⇒ *Բերանակցման անբավարարության*՝ եթե այդ շրջանը լավ դրենավորվում է, կիրառվում է սպասողական մարտավարություն, պարէնտերալ սնուցման պայմաններում՝ մինչև խուղակի ինքնուրույն փակվելը: Որովայնաբորբի որևէ նշանի դեպքում իրականացվում է շտապ կրկնակի որովայնահատում տանող ստոմայի ձևավորումով կամ բերանակցման դուրս բերումով: Ուղիղ աղին կույր ծայրատի ձևով փակվում է և վայրէջ հաստ աղու վրա դրվում եզրային ստոմա /Հատրմանի վիրահատություն/:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ քիթ-ստամոքսային զոնդը հեռացվում է 1-3-րդ օրը, իսկ դրենաժը՝ 7-8-րդ:

Կերակրման վերսկսում՝՝ հեղուկի խմելը 3-4-րդ օրը, պինդ սնունդը՝ առաջին հետվիրահատական կղանքից հետո, մոտ 7-րդ օրը:

Աղիների գործունեությունը՝ աղիների գործունեության վերականգնումից հետո, առաջին շաբաթների ընթացքում, հնարավոր է բերանով թուլացնող միջոցներիլուծողականների ընդունում:

Ակտիվացում՝՝ անմիջապես:

Ֆիզիոթերապիա՝ շնչառական վարժություններ

Անաշխատունակության տևողությունը՝ 2-3 շաբաթ:

Փորձառու վիրաբույժի խորհուրդները

- Սիգմայաձև աղին տեղակայված է ձախ միզածորանի, ձախ սերմնային/ձվարանային անոթների և փայծաղի ստորին բևեռին մոտ:
- Բերանակցման շրջանում չպետք է լինի ձգվածություն, ինչը կարող է պահանջել հաստ աղու ձախ անկյան տեղայնացում:
- Փայծաղային անկյան տեղայնացման ժամանակ խուսափեք փայծաղի ստորին բևեռի վնասումից, հաստ աղու ձգման պատճառով:
- Նախքան ձախ հաստաղիքային զարկերակի կապումը, համոզվեք Ռիոլանի զարկերակային աղեղի առկայության մեջ:

ՍԻԳՄԱՅԱՁԵՎ ԱՂՈՒ ԼԱՊԱՐԱՍԿՈՊԻԿ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ցուցումներ և հակացուցումներ

Ցուցումներ

- սիգմայաձև աղու դիվերտիկուլյոզ, առանց դիվերտիկուլիտի նշանների:

Այլընտրանքային գործառույթներ՝ բաց եղանակ՝ թափածակման կամ թարախակույտի ժամանակ

Նախավիրահատական հետազոտում և պատրաստում վիրահատությանը՝

Տես՝ «Բաց մասնահատում» գլխում:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- Ինչպես և բաց մասնահատումների ժամանակ:
- Հնարավոր է անցում բաց մուտքի:

Հիվանդի դիրքը՝ պառկած մեջքի վրա, մոդիֆիկացված լիտոտոմիկ դիրք՝ ըստ Լյորդ-Դեվիսի:

Մուտքը՝ անմիջապես պորտից վեր կամ նրանից 4-5 սմ վեր տեղադրվում է տրոակար տեսախցիկի համար, երկու աշխատանքային տրոակարներ դրվում են աջ կողմնային ու աջ զստային շրջան: Սիգմայաձև աղին դուրս է բերվում ոչ մեծ կտրվածքով ըստ Պֆաննենշտիլի: Հնարավոր է չորրորդ տրոակարի տեղադրում որովայնի ձախ կողմում, հաստ աղու ձախ անկյան տեղայնացման համար:

Վիրահատման փուլերը

1) Պնևմոպերիտոնեումի իրականացում:
2) Աշխատանքային տրոակարների տեղադրում:
3) Կպումների անջատում:

4) Ձախ միզածորանի հայտնաբերում ու պահպանում:
5) Մասնահատման ծավալի որոշում:
6) Միջընդերային պատուհանի դիսեկցիա:
7) Ռեկտո-սիգմոիդ հատվածի ցիրկուլյար դիսեկցիա :
8) Կարող սարքով /Endo-GYA/ աղիքի դիստալ հատում:
9) Սիգմայի միջընդերքի դիսսեկցիա Ultciision-ի կամ էնդոկլիպների օգնությամբ:
10) Կտրվածք ըստ Պֆաննենշտիլի և սիգմայաձև աղու դուրս բերում:
11) Աղիքի մասնահատում և կարի ձգում կարող գործիքի շուրջը:
12) Աղիքի խորոսուզում ու ըստ Պֆաննենշտիլի կտրվածքի փակում:
13) Ցիրկուլյար կարող գործիքի տրանսանալ մուտք:
14) Կարող սարքերի միացում:
15) Բերանակցման իրականացում:
16) Փորձարկում ջուր չանցկացնելու տեստով:
17) Տրոակարների հեռացում ու կտրվածքների փակում:

Վիրահատություն

Փուլ 1. *Հիվանդի դիրքը*

Մոդիֆիկացված լիտոտոմիկ դիրք: Վիրաբույժն ու երկրորդ օգնականը գտնվում են աջ կողմից, առաջի օգնականն ու տեսախցիկը ձախից: Մոնիտորը դրվում է սարքերի սեղանի կողմից:



Փուլ2. *Տրոակարների դիրքը*

Կամերայի համար տրոակարը տեղադրվում է պորտից 1-5սմ վեր, աշխատանքային տրոակարները աջ կողմնային/զստային շրջանում: Չորրորդ տրոակարը ցայլքի վրա, Պֆաննենշտիլի կտրվածքի հատվածում: Հնարավոր է տրոակարի տեղադրում որովայնի ձախ կողմնային հատվածում, հաստ աղու ձախ անկյան տեղայնացման համար:



Փուլ3. *Հաստ աղու տեղայնացում*

Սիգմայաձև աղին ձգվում է և հատվում են նրա կողմնային կպումները: Որից հետո հատվում է որովայնամիզը, գտնելու համար ձախ միզածորանը և տեղայնացնելու սիգմայաձև ու վայրէջ հաստ աղու միջընդերքը: Հնարավոր է նաև հաստ աղու ձախ անկյան տեղայնացում:



Փուլ4. *Ռեկտոսիգմոիդ հատվածի դիսսեկցիա*

Փոքր կոնքի խոռոչում, ձախ կողմից սկսվում է որովայնամզի հատումը: Նույնը կատարվում է աջից՝ ձևավորելով միջընդերային պատուհան: Որից հետո, աջից գերձայնային գործիքով իրականացվում է մասնահատման դիստալ եզրի ցիրկուլյար դիսսեկցիա:



Փուլ5. Ռեկտոսիգմոիդ հատվածի հատում

Աղիքի ցիրկուլյար դիսսեկցիայից հետո այն հատվում է Endo-GYA կարող գործիքով:



Փուլ6. Սիգմայածև աղու միջընդերքի սկելետիզացիա

Սիգմայածև աղու միջընդերքի սկելետիզացիան իրականացվում է Ultra Cision-ի կամ անոթների առանձին մերկացումով և նրանց վրա հատելուց առաջ էնդոկլիպներ տեղադրելով: Դիսսեկցիան կարելի է իրականացնել աղու պատին մոտ /պահպանելով վերին ուղիղ աղիքային զարկերակը/: Մինչև միզածորանի ճշգրիտ հայտնաբերումն ու նույնականացումը, պետք է պահպանել հատուկ զգուշավորություն:



Փուլ 7. *Սիգմայաձև աղու դուրսբերումը*

Կատարվում է ըստ Պֆաննենշտիլի կտրվածք և աղիքը դուրս է բերվում որովայնի խոռոչից: Ավարտվում է սիգմայաձև աղու դիսսեկցիան /զգուշացում՝ սիգմայաձև աղու միջընդերքի հիմնական դիսսեկցիան անհրաժեշտ է իրականացնել ներորովայնային, դիսեկցիան աղիքի դուրս բերումից հետո չունի ոչ մի առավելություն/: Դրվում է քսակակար և սիգմայաձև աղին մասնահատվում:



Փուլ8. *Աղիքի խորասուզում*

Կարող գործիքի սանդի գլխիկի շուրջը դրվում է քսակակար և աղիքը խորասուզվում որովայնի խոռոչ: Կտրվածքը ըստ Պֆաննենշտիլի կարվում է և նորից դրվում պնևմոպերիտոնեում:



Փուլ9. *Ցիրկուլյար կարող սարքի ներհետանցքային տեղադրում*

Ներհետանցքային մտցվում է ցիրկուլյար կարող սարքը և նրա սայրով ծակվում մեխանիկական կարի գիծը ուղիղ աղու վրա, հնարավորի չափ մոտ կենտրոնին: Որովայնի խոռոչի կողմից սարքը կարող է ուղորդվել երկու տուպֆերների օգնությամբ:



Փուլ 10. *Բերանակցման ձևավորումը*

Կարող սարքը միացվում է այնպես, որ աղիքի պրոքսիմալ սեգմենտը չպտտվի:



Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

⇒ տարածուն կպումների հետևանքով վատ դիտարկամն կամ շարունակվող բորբոքման առկայության պայմաններում պետք է արագ անցնել բաց եղանակի:

⇒ մնացածը տես “Բաց մասնահատում” գլխում

Հերվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ քիթ-ստամոքսային զոնդը հեռացվում է 1-ին օրը, իսկ դրենաժը՝ 7-րդ օրը, եթե այն դրվել է:

Կերակրման վերսկսումը՝ հեղուկի օգտագործում թույլատրվում է 1-ին օրվանից, սննդակարգը արագ ընդլայնվում է պերիստալտիկ աղմուկների վերսկսումից հետո:

Ֆիզիոթերապիա՝ շնչառական վարժություններ

Աշխատունակության տևողությունը՝ 2-3շաբաթ:

Փորձառու վիրաբույժի խորհուրդները

- Վիրահատություն տարած հիվանդների մոտ առաջին տրոակարը տեղադրելու համար միշտ պետք է օգտվել բաց տեխնիկայից:
- Հաստ աղու ձախ անկյան տեղայնացման համար տեսախցիկը տեղափոխվում է ու տեղադրվում է հավելյալ տրոակար՝ որովայնի ձախ կողմնային շրջանում:
- Սիգմայաձև աղու միջընդերքի տեղայնացման ժամանակ պրոքսիմալ հատվածում պետք է նույնականացվի ձախ միզածորանը:

ՁԱԽԱԿՈՂՄՅԱ Ն ՀԵՄԻԿՈԼԷԿՏՈՄԻԱ

Ցուցումներ և հակացուցումներ

Ցուցումներ

- հաստ աղու փայծաղային անկյան ու ուղիղ աղու միջև ընկած շրջանի պաթոլոգիական ախտահարումներ

Այլընտրանքային գործառույթներ՝ սուբտոտալ կոլէկտոմիա, սիգմայաձև աղու մասնահատում:

Նախավիրահատական հետազոտություն և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ կոլոնոսկոպիա բիոպսիայով,
- ✓ ստամոքս-աղիքային խողովակի ռենտգեն կոնտրաստային հետազոտություն,
- ✓ ԳՋՀ և ՀՇ չարորակ ուռուցքի հնարավոր հեռակա մետաստազների բացառման համար,
- ✓ ըստ անհրաժեշտության՝ ուրոլոգիական կամ գինեկոլոգիական ուսումնասիրություն:

Հիվանդի պատրաստումը՝ աղիքի օրտոգրադ լավաժ, կենտրոնական երակի կատետերիզացիա, հարվիրահատական հակաբիոտիկ թերապիա, քիթ-ստամոքսային զոնդի տեղադրում, միզապարկի կատետերիզացիա:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- ❖ Բերանակցման անբավարարություն />5% դեպքերում/:
- ❖ Փայծաղի վնասում />5%/:
- ❖ Միզածորանի վնասում />1%/:
- ❖ Վերքի բացում />5%/:

Հիվանդի դիրքը՝ պառկած մեջքի վրա, հնարավոր է մոդիֆիկացված լիտոտոմիկ դիրք՝ ըստ Լյորդ-Դեվիսի /թույլ է տալիս կիրառել կարող սարք/:

Մուտքը՝ միջային որովայնահատում: Հնարավոր է կտրվածք փայծաղային անկյան տեղայնացման համար: Բաց վիրահատության ժամանակ կարող է կատարվել հաստ աղու փայծաղային անկյան լապարասկոպիկ տեղայնացում, ուղիղ աղու ուղեկցվող մասնահատումով:

Վիրահատություն

Փուլ 1. *Մասնահատման ծավալը*

Սիգմայաձև և վայրէջ հաստ աղու մեծ ուռուցքները պահանջում են ձախակողմյան հեմիկոլէկտոմիա, այսինքն, մասնահատում միջաձիգ հաստ աղու կենտրոնից մինչև ուղիղ աղու պրոքսիմալ հատված, ներառելով ստորին միջընդերային զարկերակի երկայնքով բոլոր ավշային գեղձերը: Հեռացվում է նաև մեծ ճարպոնի ձախ կեսը:



Փուլ 2. Վերակառուցումը ձախակողմյան հեմիկոլէկտոմիայից հետո

Ձախակողմյան հեմիկոլէկտոմիայից հետո աղիքի անընդհատության վերականգնումը պահանջում է միջաձիգ հաստ աղու լայնածավալ տեղայնացում, որոշ դեպքերում լարդային անկյան հետ:



Փուլ3. *Մուտք*

Արդյունավետ է ստորին միջային որովայնահատումը, պորտից ձախ դեպի որովայնի խոռոչի վերին հատված հնարավոր լայնացումով և, կախված անատոմիական իրավիճակից, նաև մինչև ձախ թուլակող:



Փուլ4. *Սիգմայածև աղու տեղայնացում*

Որովայնի խոռոչի բացումից հետո տեղադրվում է Գոլայերի լայնիչը, որը ապահովում է վիրահատական դաշտի լավ տեսանելիություն: Սիգմայածև հաստ աղին բռնվում է Դյուվալի երկու բռնիչներով ու տեղաշարժվում մեդիալ ուղղությամբ: Որովայնի պատի հետ նրա կողմնային կպումները, այսպես կոչված, սպիտակ գծի երկյանքով մկրատով հատվում են: Այստեղ դիսսեկցիան հիմնականում կատարվում է անոթներից զուրկ շերտում, հետորովայնամզային տարածության անոթային կառուցվածքները մնում են անփոփոխ:



Փուլ5. *Միջընդերքի արմատի դիսսեկցիա*

Ուռուցք պարունակող աղիքային սեգմենտը պրոքսիմալ ու դիստալ ուղղություններով փակվում է ռետինե օղակով, բացառելու համար ուռուցքի ներլուսանցքային տարածումը:

Միջընդերքի արմատը անոթների երկայնքով տեղայնացվում է մինչև աորտայից նրանց սկիզբ առնելը: Միզածորանները, որոնք հատում են զստային անոթները և սերմնային/ձվարանային անոթները պետք է հայտնաբերվեն ու պահպանվեն:



Փուլ6. *Անոթների բարձր հատում*

Միջընդերքի լրիվ տեղայնացումը թույլ է տալիս նույնականացնել ստորին միջընդերային զարկերակի անջատման տեղը և հետևել ստորին միջընդերային երակի ընթացքին մինչև ենթաստամոքսային գեղձի ստորին եզր: Անոթները հատվում են երկու սեղմիչների միջև և կարով կապվում: Այս անոթների մշակումը ուղեկցվում է առպատային որովայնամզի հատումով մինչև փոքր կոնք և հետո դեպի առաջ՝ միզապարկի հետին ու ուղիղ աղու առաջային պատերի միջև:



Փուլ 7. Ուղիղ աղու պրոքսիմալ հատվածի տեղայնացում

Կոնքի հատակի ցիրկուլյար հատման ավարտից հետո, կողմնային կապանների գլխամասային հատվածը կտրվում ու սեղմիչների միջև կարով կապվում: Անհրաժեշտության դեպքում ուղիղ աղին կարող է մասնակի անջատվել կոնքի պատերից: Դիսսեկցիան իրականացվում է անոթներից զուրկ շերտում, սրբանոսկրային երակների և նյարդային հյուսակների խստագույն պահպանումով:



Փուլ 8. *Մեզոռեկտումի անջատում*

Մեզոռեկտումը ևս բռնվում է երկու բռնիչ-գործիքներով և փուլ առ փուլ հատվում: Միայն մանրակրկիտ դիսսեկցիան է թույլ տալիս մի կողմից ունենալ անարյուն վիրահատական դաշտ, իսկ մյուս կողմից՝ չխաթարել բերանակցման համար պատրաստված աղիքային սեգմենտների արյան մատակարարումը:



Փուլ 9. *Փայծաղային անկյան տեղայնացում*

Փայծաղային /ձախ/ անկյան տեղայնացումը պահանջում է ստոծանի-հաստաղիքային կապանի հատում, որի ժամանակ պետք է խուսափել փայծաղի ստորին բևեռի վնասումից: Որպեսզի ապահովվի այս մասի ճիշտ էկսպոզիցիան, անհրաժեշտ է կիրառել հավելյալ ռետրակտոր /լայնիչներ/: Առանց ձգման վերակառուցման համար պետք է հաստ աղու փայծաղային անկյունը լրիվ անջատվի ու տեղաշարժվի մեդիալ ուղղությամբ:



Փուլ 10.

Որպեսզի հայտնաբերվեն, հատվեն ու կապվեն փայծաղային անկյան կապանային կառուցվածքները, վայրէջ հաստ աղին ու միջաձիգ հաստ աղու ձախ կեսը պետք է տեղաշարժվեն միջային ուղղությամբ:



Փուլ 11. Ստամոքս-հաստաղիքային կապանի հատում

Ձախ ստամոքս-հաստաղիքային կապանի հայտնաբերման ու հատման համար անհրաժշտ է միջաձիգ հաստ աղու ձախ մասը զգույշ ձգել ոտնամասային ուղղությամբ: Հատուկ զգուշություն պետք է ցուցաբերել, չվնասելու համար փայծաղն ու ենթաստամոքսային գեղձը: Իրական դիսսեկցիայի ավարտին տեղայնացվում է հաստ աղու ամբողջ ձախ կեսը՝ միջաձիգ հաստ աղու կեսից մինչև ուղիղ աղի:



Փուլ 12. *Դիստալ հատում*

Եթե ենթադրվում է մեխանիկական կարի կիրառում դրվում է քսակակար: Վերջինիս համար գործիքի և ուղիղ անկյան տակ ծռված սեղմիչի դնելուց հետո, աղիքը նրանց միջև հատվում է: Ձեռքով բերանակցման դեպքում այն հատվում է կոշտ /պրոքսիմալ/ և փափուկ /դիստալ/ սեղմիչների միջև:



Փուլ 13. *Միջընդերքի սկելետիզացիա*

Միջընդերքի սկելետիզացիայի աստիճանը պայմանավորված է իրականացվող մասնահատման ծավալով: Հիմնական ուղեցույց է հանդիսանում ստորին միջընդերային զարկերակի հատման տեղը: Միզածորանն ու հետորովայնամզային անոթները պետք է խստագույնս պահպանվեն:



Փուլ 14. *Պրոքսիմալ հատում*

Պրոքսիմալ հատվածում դրվում է քսակակարի սեղմիչ, իսկ հեռացվող դիստալ հատվածին Կոխերի սեղմիչ, որոնց միջև աղիքը ուղիղ մկրատով հատվում է: Աղիքը պետք չէ հատել ամնիջապես կիսետային կարի համար սեղմիչի վրայով, անհրաժեշտ է թողնել մոտ 2-3 մմ բարձրությամբ հյուսվածքի շերտ: Եթե սեղմիչը լրիվ փակված չէ ուղիղ ասեղի անցկացումը դժվարանում է: Նման դեպքերում աղիքի պրոքսիմալ լուսանցքը փակում են փափուկ սեղմիչներով, իսկ մասնահատվող հատվածը՝ կոշտ:



Փուլ 15. Պրոքսիմալ աղու լայնացում

Աղու պրոքսիմալ հատվածը երկու կորնցանքներով լայնացվում է այնքան, որ ցիրկուլյար կարող գործիքի գլխիկը հնարավոր լինի առանց դժվարության մտցնել աղու լուսանցք: Քսակակարը պետք է ստուգվի և անհրաժեշտության դեպքում ուժեղացվի:



Փուլ 16. *Ապարատային /գործիքային/ կար*

Կարող գործիքի ներհետանցքային ուղիով մտցնելուց առաջ օգնականը, որը գտնվում է հիվանդի ոտքերի արանքում, մինչև 2-3 մատի չափով լայնացնում է հետանցքի սեղմանը: Կարող գործիքը մտցվում է փակ վիճակում և բացվում է միայն աղիքի ծայրատում: Սկզբում կապվում է քսակակարը ուղիղ աղու վրա, ապա սանդի գլխիկի վրա ձգվում է միջաձիգ հաստ աղու բաց եզրը, որից հետո ձգվում ու կապվում է նրա վրա դրվածքսակակարը:



Փուլ 17. *Կարող սարքի գործի դնելը*

Կարող սարքը ակտիվացվում է միայն պրոքսիմալ աղու բավարար ձգման դեպքում: Այս գործողության ընթացքում վիրաբույժը պետք է վստահ լինի, որ բերանակցման համար աղիների սեգմենտները ճիշտ են ուղղորդվում: Երբ օգնականը հայտնում է կարող գործիքի լրիվ փակման մասին, բերանակցման հատվածը ուսումնասիրվում է ևս մի անգամ, հարակից ստրուկտուրաների ինտերպոզիցիա կամ դեֆեկտ հայտնաբերելու համար, որոնք կարող են ի հայտ գալ վիրահատության այս փուլում:



Փուլ 18.

Կարելուց հետո գործիքը երկու կիսապտույտով մասնակի բացվում է և պտտող շարժումներով զգուշորեն դուրս բերվում, պրոքսիմալ աղու շրջանում ուղեկցվելով հակաձգումով /զգույշ/: Բերանակցման հերմետիկության ստուգումը իրականացվում է ուղիղ աղու լուսանցք պովիդոն-յոդինի ներմուծումով: Այս նպատակով վիրաբույժը պրոքսիմալ կողմից փակում է աղու լուսանցքը, որից հետո ներմուծվում է 100-200 մլ լուծույթ մինչև բերանակցման շրջանում փքվածության առաջացումը: Ամեն մի արտահոսք փակվում է առանձին կարերով:

Կարող է կատարվել ներվիրահատական էնդոսկոպիա: Վիրահատությունն ավարտվում է երկու դրենաժների տեղադրումով, որովայնի պատը շերտ առ շարտ փակվում և ենթամաշկային բջջանքում թողնվում ակտիվ դրենաժ:



Սպեցիֆիկ բարդությունների հետ կապված գործառույթները

⇒ Բերանակցման անբավարարություն. եթե վիրահատության շրջանի դրենավորումը բավարար է, կիրառվում է սպասողական մարտավարություն, պարենտերալ սնուցումով, մինչև խուղակի ինքնուրույն փակում: Որովայնաբորբի որևէ նշանի դեպքում կատարվում է կրկնակի որովայնահատում, ձևավորելով դուրս բերող ստոմա կամ դուրս բերելով բերանակցումը: Ուղիղ աղին փակվում է կույր ծայրատի ձևով և դրվում եզրային կուլոստոմա /Հարտմանի վիրահատություն/:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք. քիթ-ստամոքսային զոնդը հեռացվում է 1-3 օրը, իսկ դրենաժները 7-8 օրից: Հնարավոր է հարվիրահատական հակաբակտերիալ թերապիայի շարունակում:

Կերակրման վերսկսում՝ հեղուկները թույլատրվում է 3-4-րդ օրվանից, պինդ սնունդ առաջին հետվիրահատական կղանքից հետո, մոտավորապես 7-րդ օրը:

Աղիների գործունեություն՝ կարող են նշանակվել պերօրալ թույլ պրոկինետիկներ մեկ շաբաթվա ընթացքում աղիների գործունեության վերականգնումից հետո:

Ֆիզիոթերապիա. շնչառական վարժություններ:

Անաշխատունակության տևողությունը՝ 2-3շաբաթ:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Քանի որ վայրէջ հաստ աղու ավշային դրենավորման ճանապարհները անցնում են միջընդերային ստորին զարկերակի ու երակի երկայնքով, չարորակ ուռուցքների

ժամանակ ստորին ընդերային զարկերակը պետք է կապվի աորտայից անջատման տեղում, իսկ ստորին միջընդերային երակը ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի մոտ:

- Հաստ աղու փայծաղային կապանի տեղայնացման ժամանակ խուսափեք փայծաղի պատյանի վնասումից, հաստ աղու տրակցիայի ընթացքում:
- Աղու մասնահատման ոտնամասային եզրը պետք է լինի սրբոսկրի դարավանդի մակարդակին:
- Բերանակցման համար նախատեսված մասնահատված եզրերի սերոզ թաղանթը պետք է ցիրկուլյար մաքրվի ճարպային հյուսվածքից՝ մոտ 1 սմ տարածքի վրա:
- Համոզվեք բերանակցվող աղիների եզրերի ճիշտ դիրքի վերաբերյալ, տեղադրելով հաստ աղին այնպես, որ նրա միջընդերքը տեղակայվի բերանակցումից աջ /միջընդերքը միջընդերքին/:
- Ձգումը բերանակցման վրա պետք է բացառել:
- Բերանկացման հերմետիկության հաստատման համար կիրառեք տեստ ներկանյութով:

ՈՒՂԻՂ ԱՂՈՒ ԱՌԱՋԱՅԻՆ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ցուցումներ ու հակացուցումներ

Ցուցումներ

- ուղիղ աղու պաթոլոգիական գոյացություններ տեղակայված մաշկահետանցքային գծից 5 սմ վեր /կոլոանալ կարով 4սմ այդ գծից վեր/:

Հակացուցումներ՝

- չարորակ ուռուցքներ տեղակայված հետանցքից 4սմ-ից պակասհեռավորության վրա կամ ներաճած սֆինկտերի մեջ:

Այլընտրանքային գործառույթներ՝ ուղիղ աղու որովայնա-շեքային մասնահատում:

Նախավիրահատական հետազոտություններ ու պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ էնդոսկոպիա բիոպսիայով /անհրաժեշտ է հաստ աղու լրիվ ուսումնասիրում, ինֆորմատիվ իրիգոսկոպիա, եթե կոլոնոսկոպիան անհնար է/:

- ✓ չարորակ ուռուցքի հեռակա մետաստազների բացառում, անհրաժեշտության դեպքում մաշկի միջով պունկցիոն բիոպսիա, ԳՋՀ, ՀԾ,
- ✓ էնդոռեկտալ ԳՋՀ,
- ✓ անհրաժեշտության դեպքում՝ ուրոլոգիական կամ գինեկոլոգիական հետազոտություն:

Հիվանդի պատրաստումը՝ սակավարյունության միջվիրահատական կարգավորում, աղիքի օրտոգրադ լավաժ, քիթ-ստամոքսային զոնդի տեղադրում, կենտրոնական երակի կատետերիզացիա, հարվիրահատական հակաբիոտիկ թերապիա, միզապարկի կատետերիզացիա:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- ❖ Բերանակցման անբավարարություն />5% դեպքերում/,
- ❖ Բերանակցման նեղացում />10%/,
- ❖ Միզածորանի վնասում />4%/,
- ❖ Միզապարկի վնասում />1%/,
- ❖ Իմպոտենցիա /40-50%/,
- ❖ Միզապարկի դիսֆունկցիա /20-100%/, հատկապես եթե մինչև վիրահատություն արդեն եղել են նշաններ,
- ❖ Վերքի բացազատում /10%/,
- ❖ Ամպուտացիայի անհրաժեշտություն, ստոմայի ձևավորում:

Հիվանդի դիրքը՝ պառկած մեջքի վրա, մոդիֆիկացված լիտոտոմիկ դիրք՝ ըստ Լլոյդ-Դեվիսի:

Մուտքը՝ միջային որովայնահատում, կտրվածքի երկարացում պորտից վեր դեպի ձախ կողային եզր, հնարավոր է լապարասկոպիկ մուտք:

Վիրահատություն

Փուլ 1. *Վիրահատության ծավալը*

Ուղիղ աղու առաջային մասնահատում ցուցված է նրա պրոքսիմալ և միջին երրորդականի ուռուցքների դեպքում: Նման միջամտության նպատակն է վերականգնել ու պահել օրգանի ֆունկցիան վայրէջ հաստ աղին ուղիղ աղուն բերանակցելու ճանապարհով: Մասնահատումը ներառում է աղիքի ախտահարված սեգմենտի հեռացում, կողմնային կապանների և միջընդերքի ավշային կուլլեկտորների հետ: Սիգմայաձև աղու մասնահատման պրոքսիմալ եզրը համապատասխանում է ստորին միջընդերային զարկերակի անջատման մակարդակին: Մասնահատման դիստալ եզրը պայմանավորված է ուռուցքի տեղակայումով: Մաշկ-հետանցքային գծից 4սմ-ից վեր տեղակայված ուռուցքները կարող են մասնահատվել որովայնի խոռոչից, այսպես կոչված ցածր առաջային մասնահատման միջոցով: Ավելի ներքև տեղակայված ուռուցքները, մաշկ-հետանցքային գծից մինչև 4սմ, կարող են հեռացվել, պահպանելով պահելու ֆունկցիան և ապահովելով ադեկվատ մասնահատման եզրեր, միայն

կոլոանալ բերանակցմամբ համակցված ստորին առաջային մասնահատման միջոցով: Եթե ուռուցքը ներաճում է սֆինկտեր, կամ 5-6 սմ-ից ցածր տեղակայված ցածր դիֆֆերենցված ուռուցքների արմատական մասնահատման ժամանակ, պահող ֆունկցիայի ապահովումը անհնար է դառնում:



Փուլ 2. *Մուտք*

Մուտքը համապատասխանում է սիգմայաձև աղու մասնահատման մուտքին՝ ստորին միջային որովայնահատում, որը կարող է երկարաձգվել մինչև ձախ կողաղեղ:



Փուլ3. *Էքսպոզիցիա*

Որովայնի բացումից հետո նրա եզրերը ծածկում են թրջած սպիտակեղենով, որոնք վերքի ներքևում կարով և վերքի վերևում վիրահատական սպիտակեղենի բռնիչներով որովայնի պատը ֆիքվսում է որովայնամզին: Լավ տեսանելիության ապահովման համար առավել հարմար է Գոլայերի ռետրակտորը, քանզի այն բացում է վերքի եզրերը երկու կողմից և հնարավորություն տալիս առանձին լայնիչի միջոցով մեծ սպիտակեղենով ծածկված բարակ աղիներն ու ճարպոնը տեղաշարժել գլխամասային ուղղությամբ: Այն թույլ է տալիս միջընդերքի արմատի ստորին հատվածի և փոքր կոնքի դիսսեկցիայի ժաանակ ապահովել լայն էքսպոզիցիա:



Փուլ4. Սիգմայաձև աղու տեղայնացում

Փաստացի դիսսեկցիան սկսվում է սիգմայաձև աղու կողմնային կպումներից: Հաստ աղին տարվում է միջային ուղղությամբ, օրինակ, երկու բռնիչներով և այդ ձևով ձգված հյուսվածքը հատվում որովայնամզի ծալքի երկայնքով: Սիգմայաձև աղին վայրէջ հաստ աղու և ուղիղ աղու հետ ամբողջ երկարությամբ անջատվում է կողմնայի կպումներից և տեղաշարժվում միջայնորեն ու վեր:



Փուլ5.

Սիգայածև աղու տեղայնացումը շարունակվում է մինչև զստային անոթներ, մերկացնելով միզածորանը, որը հատում է զստային անոթներն ու սերմնային/ձվարանային անոթները: Որովայնամիզը ուղիղ աղու բոլոր կողմերից հատվում է ներքև մինչև կոնքի հատակ: Սիգմայածև աղու տեղաշարժը դեպի վեր բացում է միջընդերքի անոթային ոտիկը: Վիրահատության այս փուլում որոշվում են մասնահատման ծավալները: Ընդունվում է որոշում միջընդերային զարկերակի բարձր հատման, աորտայից անմիջապես անջատվելու տեղում կամ ավելի ցած՝ ձախ հաստաղիքային զարկերակի պահպանման վերաբերյալ: Ստորին միջընդերային զարկերակի անջատման տեղից եզրային ավշային հանգույցը բոլոր դեպքերում պետք է հեռացվի և ուղղարկվի հյուսվածաբանական հետազոտության:



Փուլ6. *Անոթային ոտիկի նույնականացումը*

Ընտրությունը «բարձր կապումով» /ստորին միջընդերային զարկերակի արմատական հատում աորտայից անջատվելու տեղում/ և «ցածր կապումով» /ստորին միջընդերային զարկերակի հատում ձախ հաստաղիքային զարկերակի պահպանումով/ մասնահատումների միջև պայմանավորված է Ռիոլանի զարկերակային աղեղների առկայությամբ: Այս բերանակցման ժամանակ բարձր կապումը կարող է բերել մասնահատման ծավալի ընդլայնման միջաձիգ հաստ և ուղիղ աղիների միջև բերանակցման ձևավորումով: Այդ իսկ պատճառով մինչև որոշում ընդունելը անհրաժեշտ է գնահատել վայրէջ հաստ աղու արյան մատակարարումը:



Փուլ 7. *Անոթների բարձր հատում*

Սիգմայաձև աղին հատման եզրից ցած փակվում է ռետինի հանգույցով և տեղաշարժվում դրսայնորեն: Նրա պրոքսիմալ հատվածն ու ուղիղ աղին կարող են մշակվել ցիտոտոկսիկ լուծույթով /պովիդոն-յոդին/: Ուղիղ աղու արմատական մասնահատումը ներառում է սնուցող անոթների բարձր հատում: Սկզբում երկու սեղմիչների միջև հատվում է ստորին միջընդերային երակը անմիջապես ենթաստամոքսային գեղձի ստորին եզրի մոտ և կարով կապվում: Ապա հատվում է ստորին միջընդերաին զարկերակը աորտայի մոտ, որի պրոքսիմալ եզրը կապվում է ու կարվում:



Փուլ 8. *Ռեկտոսիգմոիդ հատվածի սկելետիզացիա*

Անոթների հատումից հետո, ուղիղ աղու երկու կողմերից հատվում է կոնքի հատակի որովայնամիզը: Մանր անոթները ենթարկվում են կոագլյացիայի, խոշորները՝ սեղմիչների միջև հատվում ու կապվում: Հայտնաբերվում և պահպանվում են աջ ու ձախ միզածորաները: Կտրվածքը շարունակվում է միզապարկի հետին և ուղիղ աղու առաջային պատերի միջև պահպանելով Դենոնվիլի փակեղը: Միջընդերքը սկելետիզացվում է պահպանելով զստային անոթները: Որից հետո բացվում է մուտքը դեպի կոնքի խոռոչ:



Փուլ 9. *Առաջ-սրբանային դիսեկցիա*

Միջային սրբանային անոթները հատվում են սեղմիչների միջև, մինչև առաջ-սրբանային տարածության բացումը: Սրբոսկրից առաջ ստեղծվում է մուտք դեպի անոթներից զուրկ հետուղիղաղիքային տարածություն, որը լցված է ռետիկուլյար շարակցական հյուսվածքով:



Փուլ 10.

Ուղիղ աղին ձգվում է գլխամասային ուղղությամբ: Վիրահատության այս փուլում կարևոր է պահպանել ղեկավարվող ձգումը լայնիչի վրա, որը պահում է հիվանդի ոտքերի միջև կանգնած օգնականը: Այն հնարավորություն է տալիս մուտք գործել փոքր կոնք միզապարկի ձգմամբ դեպի առաջ և ոտնամաս: Այս պայմաններում հնարավոր է դառնում կտրող դիաթերմիայով իրականացնել մեզոռեկտումի լրիվ հատում որի ընթացքում փոքր կոնք մուտքի մոտ հայտնաբերվում և պահպանվում են երկու ենթաընդերային նյարդային հյուսակները



Փուլ 11.

Առաջ-հետին ուղղությամբ ուղիղ աղու լայնիչներով ռետրակցիան հետզհետե միացումով թույլ է տալիս հաջողությամբ բացել կոնքի խոռոչը: Առաջ-սրբանային դիսսեկցիան կատարվում է կտրող դիաթերմիայով կամ մկրատով անոթներից զուրկ շերտում: "Ձեռքով գործունեությունը" ինչպես աուտոպսիայի ժամանակ, համարվում է հնացած: Կտրող դիաթերմիան, մկրատն ու սեղմիչը հանդիսանում են լրիվ բավարար գործիքներ: Վալդևերի փականը և նրա հետևում տեղակայված երակային հյուսակները պետք է պահպանվեն:



Փուլ 12.

Ուղիղ աղու առաջ-սրբանային տեղայնացումը շարունակվում է դեպի ներքև՝ մինչև պոչուկի վերջը: Ուղիղ աղու ձգումը առաջային ու կողմնային թեքումներով լայնիչներով թույլ է տալիս իրականացնել ամբողջ կոնքի խոռոչի դիսսեկցիա՝ մինչև նրա մկանային հատակ: Ամբողջ մեզոռեկտումը դիաթերմիայով հատվում է, անընդհատ փոփոխելով հատման ուղղությունը: Դիսսկեցիայի նպատակը ամբողջ միզոռեկտումի հեռացումն է:



Փուլ 13. *Դիսսեկցիայի եզրը*

Դիսսեկցիայի համար շերտը առավել լավ տեսանելի է սագիտալ հարթությունում: Այն տարվում է անմիջապես սրբանից առաջ, պահպանելով վնասումից Վալդևերի նախասրբային փակեղը: Ապա շարունակվում ներքև դեպի կոնքի մկանային հատակ՝ դեպի հետանցքը բարձրացնող մկանների շրջան: Դիմացից ռետրովեզիկալ ստեղծվում է դիսսեկցիայի հարթություն՝ պահպանելով Դենոնվիլի փականը: Սերմնաբշտերն ու շականակագեղձը պետք է մնան փակեղով ծածկված:

Ցածր առաջային մասնահատման ժամանակ, հատման եզրը անցնում է կոնքի հատակով, որի հետևանքով ուղիղ աղու 2-3 սմ-ոց սեգմենտը մնում է շարժուն և պիտանի կարող սարքով բերանակցման համար: Եթե ուռուցքի տեղակայումը ավելի ցածր է և մասնահատման եզրը անհրաժեշտ չափով իջնելուց հետո, մնացած աղին անբավարար է բերանակցման անվտանգությունը ապահովելու համար, պահանջվում է ներսֆինկտերային մասնահատում ու կոլո-անալ բերանակցման ձևավորում: Այս նպատակով դիսսեկցիան շարունակվում է շեքի կողմից՝ արտաքին անալ սֆինկտերի մկանի, ցայլք-ուղիղաղիքային մկանի և ներսից ներքին անալ սֆինկտերի մկանի միջև: Բոլոր դեպքերում մասնահատման ստորին եզր է հանդիսանում ատամնավոր գիծը: Այն թույլ է տալիս ձագարաձև հատել աղիքի ամբողջ մկանալորձային

հատվածը պահպանելով նրա պահող ֆունկցիան: Սակայն այս դեպքում վերակառուցումը անհրաժեշտ է իրականացնել տրանսսանալ մուտքից:



Փուլ 14. Դիսսեկցիան միզածորանի հետևում

Դիսսեկցիան ուղիղ աղու առաջային հատվածում իրականացվում է Դենոնվելլի փակեղի երկայնքով: Սկզբից սուր եղանակով հայտնաբերվում է միզապարկի հետին պատը, միազապարկը տեղաշարժվում է առաջ ու ներքև ուղղությամբ, իսկ ուղիղ աղին՝ դեպի վեր ու հետ: Մուտքը դեպի խորք հնարավոր է դառնում փակեղային շերտի մշակման ժամանակ: Դիսսեկցիայի ավարտին Դենոնվիլլի փակեղի տակ հստակ երևում են սերմնաբշտերը: Սակայն եթե ուռուցքը ներաճում է այս շրջան, ցուցված է առավել արմատական դիսսեկցիա սերմնաբշտերի և փակեղի հեռացումով, իսկ որոշ դեպքերում նաև միզապարկի մասնահատում:



Փուլ 15. *Դիստալ քսակակար*

Ուղիղ աղու տեղայնացումը տարվում է մինչև կոնքի հատակ: Ամեն մի դեպքում պետք է նույնականացվի սՏվՏ-ուղիղ աղիքային մկանային հանգույցը: Եթե այս դեպքերում ցուցամատն ու միջնամատը կարելի է անցկացնել ուռուցքի տակ, ապա ցածր առաջային մասնահատման իրականացումը հնարավոր է: Նման դեպքերում որովայն-շեքային մասնահատումը չի ապահովի ավելի բարձր արմատականություն: Կոնքի հատակից վեր, աղիքի դիստալ հատվածի վրա դրվում է քսակակար: Կարելի է օգտագործել քսակակարի համար նախատեսված սեղմիչ և խորհուրդ է տրվում ընտրելասեղ, որը կարելի է ճկել նեղ կոնքի խոռոչից դուրս բերելու ժամանակ: Ոչ ճկուն ուղիղ ասեղը, այս շրջանում, սահմանափակում է շարժունակությունը և մասնահատման մակարդակի ընտրության հարցում բերում է կոմպրոմիսային որոշման:



Փուլ 16. *Ուղիղ աղու դիստալ հատում*

Ուղիղ աղին փակվում է ուղիղ անկյան տակ թեքված սեղմիչով, որը դրվում է չափավոր ձգման պայմաններում, թույլ տալով հատել ուղիղ աղին սեղմիչից վեր քսակաական դնելու համար: Կտրելու համար հարմար են անկյունավոր մկրատները: Զգուշացում՝ խուսափեք քսակակարի հանկարծակի հատումից: Կարի համար սեղմիչը չի կարելի բացել մինչև ուղիղ աղու հատումը:



Փուլ 17. Պրոքսիմալ սկելետիզացիա

Ուղիղ աղու պրոքսիմալ ծայրատը փակվում է պովիդոն-յոդինով թրջված թանզիֆով, որը ֆիքսվում է սեղմիչով: Աղիքի արյան մատակարարման աստիճանը որոշվում է մասնահատման գլխամասային եզրով: Միջընդերքի սկելետիզացիան սեղմիչների միջև շարունակվում է, քանի դեռ թույլ է տալիս արյան մատակարարումը: Մասնահատման եզրը գտնվում է վայրէջ աղու սիգմայածևի անցման գոտում: Պետք է մանրազննին գնահատվի Ռիոլանի բերանակցման միջոցով արյան մատակարարումը:



Փուլ 18. *Սիգմայածև աղու պրքսիմալ հատում*

Քսակակարի համար սեղմիչը դրվում է ավելի պրոքսիմալ, իսկ ջնջխող/կոշտ սեղմիչը՝դիստալ: Ապա աղիքը նրանց միջև հատվում:



Փուլ 19. *Աղիքի լուսանցքի լայնացումը*

Աղիքի պրոքսիմալ ու դիստալ եզրերը երկու կորնցանքով զգուշությամբ լայնացվում են: Այն թույլ է տալիս համոզվել որ քսակակարը դրվել է ճիշտ և կարող գործիքի տեղադրման համար աղու եզրերի հատման անհրաժշետություն չկա:



Փուլ 20. *Գործքային բերանակցում*

Ցիրկլուլյար կարող սարքը, սովորաբար 31 համարի սանդի գլխիկով, տեղադրվում է տրանսանալ: Քսակակարը ուղիղ աղու դիստալ ծայրատի վրա ձգվում է կենտրոնական ձողի շուրջը: Հիմա սանդի գլխիկի վրա կարելի է հեշտությամբ հագցնել լայնացրած վայրէջ հաստ աղին: Երկրորդ քիսեթի կապումից հետո հաստատվում է աղիքի պրոքսիմալ եզրի ճիշտ դիրքը:



Փուլ 21.

Կարող գործիքի տրանսանալ անցկացումն ու վայրէջ հաստ աղու ղեկավարվող ձգումը թույլ են տալիս ձևավորել բերանակցում, առանց աղիքի վրա ծալքերի առաջացման: Քսակակարում հավելյալ հյուսվածքի ծավալը պետք է լինի ոչ շատ և չգերազանցի կարող գործիքի ներհրվածության ծավալը: Որպեսզի խուսափենք ոլորումից, կարող գործիքի ակտիվացման ժամանակ անհրաժեշտ է անընդհատ ստուգել պրոքսիմալ աղիքի դիրքը:



Փուլ 22.

Երբ բերանակցման օղերը լրիվ սեղմվում են մեկը մյուսին, հիվանդի ոտքերի միջև կանգնած օգնականը ակտիվացնում է կարող սարքը: Ապա երկու կիսաշրջանի չափով գործիքի մասնակի բացումից հետո, այն պտուտակաձև շարժումներով զգույշ դուրս է բերվում: Կոնքի հատակի որովայնամիզը կարելի է չվերականգնել:



Փուլ 23. Միջփականային /միջսֆինկտերային/ մասնահատում

Եթե ուռուցքը տեղակայված է ցածր և որովայնի կողմից վիրահատելիս դեպի ներքև համարժեք հեռացում հնարավոր չէ ապահովել, կարելի է կիրառել միջսֆինկտերային մասնահատում: Այս նպատակով ուղիղ աղին հետևողականորեն անջատվում է կոնքի հատակից ստեղծելով դիսսեկցիայի համար միջսֆինկտերային հարթակ ցայլք-ուղիղ աղիքային մկանային հանգույցի և ներքին սֆինկտերի մկանի միջև: Լայնիչների ձգումը դեպի առաջ ու ներքև հնարավորություն է տալիս տեսնելու ուղիղ աղին մկանային հանգույցի մոտ, ինչը հեշտացնում է դիսսեկցիան: Այն իրականացվում է մկրատով կամ բութ՝ ցուցամատով, զգուշորեն պահպանելով ցայլք -ուղիղաղիքային և հետանցքը բարձրացնող մկանները: Ուղիղ աղին բոլոր կողմերից պետք է ազատվի մկանային օղից: Դա թույլ է տալիս մասնահատումը իրականացնել մաշկ-հետանցքային գծից մոտ 2 սմ վեր:



Փուլ 24. *Ուղիղ աղու հատում*

Մկանային շրջապատից ուղիղ աղու լրիվ ազատումից հետո, այն ուղիղ անկյան տակ թեքված սեղմիչով տեղաշարժվում է գլխամասային ուղղությամբ և անկյունավոր մկրատով, առանց երկրորդ սեղմիչի, հատվում ցածր՝ հետանցքից վեր: Շատ ցածր մասնահատումից /այսինքն անոդերմայում/ խուսափելու համար օգնականը պետք է հետանցքից անցկացված մատով նշի մասնահատման մակարդակը:



Փուլ 25. *Ուղիղ աղու ծայրատի դիսսեկցիա*

Ուղիղ աղու մասնահատումից հետո ցայլք-ուղիղաիքային օղի հատվածում հետագա տեղայնացումը սահմանափակվում է կողմնային կպումների անջատումով: Մասնահատման եզրային գոտին սովորաբար բավարար շարժուն է, որպեսզի դուրս բերվի հետանցքից:



Փուլ 26. *Ուղիղ աղու ծայրատի շրջում*

Այն իրականացվում է ցուցամատով, արտաքին սֆինկտերի մկանների միջով: Ծայրատը բռնվում է փոքր բռնիչներով և բոլոր կողմերից առանձնացվում, այնպես որ լորձաթաղանթը կպած լինի միայն ներքին սֆինկտերի մկանի ստորին հատվածին: Այս ստորին վալիկի պահպանումը խիստ կարևոր է ներքին սֆինկտերի մկանի ֆունկցիայի պահպանման համար: Որպեսզի խուսափենք սֆինկտերների դեներվացիայից այս բոլոր գործողությունները պետք է կատարվեն շատ զգույշ:



Փուլ 27.

Ուղիղ աղու ծայրատի լրիվ շրջումից հետո վիրահատական դաշտը սագիտալ հարթությունում ունենում է հետևյալ տեսքը՝ արտաքին սֆինկտերի և ներքին սֆինկտերների դիստալ հատվածի մկանները պահպանված են, Դենոնվիլի փակեղը ինտակտ, կողմնային կապանները կապված առանձին լիգատուրաներով: Գործիքային բերանակցումը բերում է ուղիղ աղու ծայրատի հավելյալ 0.5-1.0սմ հատվածի մասնահատման:



Փուլ 28. *Կոլո-անալ գործիքային կար*

Քսակակարը դրվում է արտաքինից և ներառում ներքին սիֆինկտերի մկանի մասերը: Նախքան կարող գործիքի (EEASI) մտցնելն ու քիսեթի կապելը, անալ օղը պետք է լայնացվի: Որովայնի խոռոչի կողմից վայրէջ հաստ աղին կապվում է սանդի գլխիկի շուրջը: Ապա ղեկավարվող ձգման պայմաններում /զգուշացեք աղիքի ոլորումից/ կարող գործիքը փակվում է և վայրէջ հաստ աղին միացվում է հետանցքին: Բերանակցումը պետք է դրվի առանց ձգման և լավ մատակարարվի արյունով:



Փուլ 29. *Կոլո-անալ գործիքային կար*

Բերանակցման ձևավորումից հետո վայրէջ հաստ աղին իջեցվում է արտաքին սֆինկտերի մկանի մեջ, ձևավորվում է նեոռեկտում պահպանելով նեքին սֆինկտերի բարակ շերտ:



Փուլ 30. *Ավարտված վերակառուցում*

Կոլո-անալ բերանակցումը գտնվում է մաշկ-անալ գծից 2 սմ ավելի վեր, այն կարելի է պաշտպանել դուրս բերող երկփող իլեոստոմայով կամ տրանսվերզոստոմայով: Ավելի հաճախ կարելի է նրանցից խուսափել և օգտագործել միայն վատ արյան մատակարարման կամ հետվիրահատական ճառագայթային բուժում պլանավորելու դեպքում:



Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

- *Բերանակցման անբավարարություն՝* սովորաբար զարգանում է հետվիրահատական 6-9-րդ օրը: Կլինիկական նշաններն են՝ ջերմության բարձրացում, լեյկոցիտոզ, մուգ արտադրություն դրենաժից, աղիքով կեղտի անցման դժվարացումից մինչև աղիքային անանցանելիության զարգացում: Առաջին ախտորոշիչ քայլը - հետանցքի միջով մատով բերանակցման շրջանի մանրազննին հետազոտումն է, հնարավոր է նաև ջրում լուծվող կոնտրաստ նյութի միջոցով հոգնա: Նշված ախտանիշների դեպքում կարելի է ընտրել սպասողական մարտավարություն համակարգային հակաբիոտիկ թերապիայով և բերանով սնունդ ընդունելու բացառումով /պարենտերալ սնուցման/: Եթե կան որովայնաբորբի զարգացման կասկածներ՝ կատարվում է ստուգում և տեղադրվում դրենաժ, դուրս է բերվում բերանակցումը կամ նրան անջատում են գալարային տրանսվերզոստոմայի միջոցով:

- *Միզապարկի դատարկման խանգարում՝* 5-7 օրվա ընթացքում թողնվում է միզային կատետեր և մեզը ուղարկվում ստուգման ու բակտերիաբանական հետազոտման:

- *Միզածորանի ներվիրահատական վնասում՝* դեֆեկտը կարվում է միզածորանային կատետերի վրա, միզապարկը կատետերիզացվում է 10 օրերի ընթացքում, հնարավոր է լոսկուտի կիրառում ՝ ըստ Բոարի:

- *Միզապարկի ներվիրահատական վնասում՝՝* կարվում է ներծծվող կարանյութով / 3-0 PGA/ երկշերտ եղանակով, 10 օրերի ընթացքում միզապարկի կատետերիզացիա:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ հեռացրեք քիթ-ստամոքսային զոնդը 2-4-րդ օրը և դրենաժները՝ 7-8-րդ օրը, առաջին հետվիրահատական կղանքից հետո: Պլանավորեք ճառագայթային թերապիա, քիմիոթերապիա:

Կերակրման վերսկսում՝ թույլ տվեք հեղուկներ 3-4-րդ օրից, պինդ սնունդ՝ 7-րդ օրից, առաջին հետվիրահատական կղանքից հետո:

Աղիների գործունեություն՝ հետվիրահատական շրջանում օգնեք կղանքի ռեգուլյար լինելուն, կարող են նշանակվել թուլացնող միջոցներ բերանով:

Ակտիվացում՝ անմիջապես:

Ֆիզիոթերապիա՝ շնչառական վարժություններ:

Անաշխատունակության տևողությունը՝ 2-3 շաբաթ:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Ռեկտոսիգմոիդ հատվածը տեղակայված է մաշկ-հետանցքային գծից մոտ 15 սմ ավելի վեր:
- Դուգլասի գրպանիկը գտնվում է ուղիղ աղու միջին երրորդից առաջ:

- Առաջ-սրբանային փակեղը /Վալդևերի/ գտնվում է ուղիղ աղուց ավելի դորզալ, իսկ միզապարկից առաջ տղամարդկանց մոտ գտնվում է Դենովիլլի ապոնևրոզը:

- Մեծ տրամաչափի առաջ-սրբանային երակը տեղակայված է Վալդևերի փակեղից ներքև: Նրա վնասումից հետո առավել անվտանգ հեմոստազի եղանակ է հանդիսանում կոմպրեսիան, հնարավոր է հեմոստատիկ միջոցների հավելյալ կիրառմամբ:

- Ուղիղ աղին ունի միջընդերք միայն վերին երկու երրորդականի հատվածում /վերին ուղիղ աղիքային զարկերակի հաշվին, որը հանդիսանում է ձախ հաստաղիքային զարկերակի վերջին ճյուղը/, ստորին երրորդը ունի հետորովայնամզային տեղակայում /միջին ուղիղ աղիքային զարկերակի ճյուղերը սկզիբ առնելով ներքին զստային զարկերակից, երկու կողմից հասնում են ուղիղ աղուն լատերալ կողմերից /կողմնային կապաններով կամ հարաղիքային բջջանքով:

- Մասնահատման արմատականության կարևոր պայման է հանդիսանում մեզոռեկտումի լրիվ հեռացումը:

- Շտապ իրավիճակներում /աղիքային անանցանելիություն, թափածակում/ կարևորվում է հաստ աղու ներվիրահատական լավաժը, ապենդէկտոմիայից հետո որդանման ելունի մեջ տեղադրելով միզային կատետեր: Աղիքային պարունակության դրենավորումը առավել լավ է կատարել հետանցքից մտցված ինտուբացիոն խողովակով:

ՈՒՂԻՂ ԱՂՈՒ ՄԱՍՆԱՀԱՏՈՒՄ

Ցուցումներ ու հակացուցումներ՝

Ցուցումներ

- անալ կապուղու կամ ուղիղ աղու ստորին երրորդականի չարորակ ուռուցքներ:

Այլընտրանքային գործառույթներ՝ հատում և քիմիո-ճառագայթային բուժում, ուղիղ աղու ցածր ուռուցքների ժամանակ տրանսաբդոմինալ մասնահատում և կոլո-անալ բերանակցում:

Նախավիրահատական հետազոտում և պատրաստում վիրահատությանը

Նախավիրահատական հետազոտություններ՝

- ✓ էնդոսկոպիա բիոպսիայով /անհրաժեշտ է ամբողջ հաստ աղու լրիվ հետազոտություն, ինֆորմատիվ իրիգոսկոպիա, եթե կուլոնոսկոպիան անհնարին է/,
- ✓ չարորակ ոռուցքի հեռավոր մետաստազների բացառում ԳՋՀ, ՀՇ,
- ✓ մաշկի միջով պունկցիոն բիոպսիա էնդոռեկտալ ԳՋՀ-ի միջոցով,
- ✓ հնարավոր է ուրոլոգիական կամ գինեկոլոգիական հետազոտություն:

Հիվանդի պատրաստումը՝ սակավարյունության նախավիրահատական շտկում, աղիների օրտոգրադ լավաժ, կենտրոնական երակի կատետերիզացիա, հարվիրահատական հակաբակտերիալ թերապիա, միզապարկի կատետերիզացիա: Ստոմայի տեղի մինչ վիրահատական նշում:

Սպեցիֆիկ ռիսկեր, հիվանդի տեղեկացված համաձայնությունը

- Իմպոտենցիա /20% դեպքերում/:
- Միզապարկի դիսֆունկցիա /20-100%/:
- Միզածորանի, միզապարկի, միզուկի վնասում:
- Բարդություններ կապված ստոմայի հետ /10-30%/, նեղացում, ռետրակցիա, պրոլապս, նեկրոզ:
- Վերքի բացում /անբավարարություն/ շեքի հատվածում />50%/:

Հիվանդի դիրքը՝ մեջքի վրա պառկած, մոդիֆիկացված լիտոտոմիկ դիրք՝ ըստ Լյոյդ-Դեվիսի:

Մուտքը՝ միջային որովայնահատում, կտրվածքի երկարացում պորտից վեր դեպի ձախ թուլակող, ուղղահայաց կարճ շրջանաձև կտրվածք ուղիղ աղու շուրջը: Հնարավոր է լապարասկոպիկ մուտք բաց շեքային փուլով:

Վիրահատություն

Փուլ 1. Ստոմայի տեղակայումն ու մուտքը

Մինչ վիրահատություն, հիվանդի կանգնած դիրքում պետք է նշվի ստոմայի տեղը: Նպատակահարմար է կղանքընդունիչ սարքի փորձնական տեղադրում: Մուտքը համապատասխանում է նմանին ուղիղ աղու առաջային մասնահատման ժամանակ: Հետագա դիսսեկցիան դեպի կոնքի հատակ համապատասխանում է նույն գործողություններին ցածր առաջային մասնահատման դեպքում: Վերջնական որոշումը ցածր առաջային մասնահատման և որովայնա-շեքային էկստիրպացիայի միջև ընդունվում է կոնքի հատակ հասնելուց հետո:



Փուլ2. Մասնահատման ծավալի որոշում

Ուղիղ աղու որովայնա-շեքային մասնահատում իրականացվում է, եթե ուռուցքը ներաճում է սֆինկտեր կամ ուռուցքի ստորին սահմանը գտնվում է մաշկ-անալ գծից 4սմ-ից պակաս տարածության վրա: Նման դեպքերում աղիքը հատվում է ռեկտոսիգմոիդ հատվածում և երկու եզրերն էլ խուլ փակվում: Վերջինս կարելի է իրականացնել պինդ լիգատուրայով կամ կարող գործիքով: Սիգմայաձև աղին սկզբից տեղաշարժվում է գլխամասային ուղղությամբ: Վիրաբույժը շարունակում է դիսսկեցիան դեպի փոքր կոնքի հատակ և ուղիղ աղին իր լրիվ շրջագծով տեղայնացնում: Սակայ ուղիղ աղու մասնահատումը վիրահատության վերջին փուլն է:



Փուլ 3. *Ստոմայի ստեղծումը*

Որովայնի պատը բռնում են վիրահատական սպիտակեղենի համար նախատեսված բռնիչներով և ձգում նրա սկզբնական դիրքին մեդիալ: Ստոմայի նշված տեղում մաշկը բռնում են նույնատիպ բռնիչով և մաշկն ու ենթամաշկը օղակաձև հատվում:



Փուլ4.

Որովայնի պատի ուղիղ մկանը բութ բացվում է և մկանաթելերը լայնիչներով տարվում են կողք: Լայնակի փակեղում և որովայնամզում կատարվում է խաչաձև կտրվածք, որը հեշտությամբ բաց է թողնում երկու մատ:



Փուլ 5.

Ներքին ճողվածքի ձևավորումից խուսափելու համար որովայնի պատի ու սիգմայաձև աղու միջև դեֆեկտը անհրաժեշտ է փակել քսակակարով: Նրա ավարտից ու սիգմայաձև աղու

ծայրատը ստոմայի կտրվածքով դուրս բերելուց հետո, որովայնի խոռոչը լվացվում է, կոնքի խոռոչը դրենավորվում երկու դրենաժներով և որովայնի պատը կարվում ակտիվ ենթամաշկային դրենաժի տեղադրումով:



Փուլ 6.

Վերքի կեղտոտումից խուսափելու համար որովայնի կարի գիծը սկզբում փակվում է սպրեյ կարով և ստերիլ տամպոններով, որից հետո բացվում է սիգմայաձև աղու ծայրատը: Ստոմայի ֆիքսացիան մաշկին առանձին կարերով նման է վերը նկարագրված տեխնիկային:



Փուլ 7. *Անալ անցքի փակում*

Լիտոտոմիկ դիրքով հիվանդին տեղադրելուց հետո սկսվում է վիրահատության շեքային փուլը:

Հետանցքը փակվում է պինդ քսակակարով /պոլիպրոպիլեն 2.0/, նրա շուրջը էլիպսաձև հատվում է մաշկը և ենթամաշկային շերտը դիաթերմիայով հետզհետե ենթարկվում կոագուլյացիայի:



Փուլ 8. *Հարռեկտալ դիսսեկցիա*

Հար-ուղիղաղիքային ճարպաշերտը անմիջական տեսողական հսկողության տակ կտրող դիաթերմիայով հատվում է: Խոշոր անոթները առանձին վերցվում են և կապվում կամ ենթարկվում կոագուլյացիայի: Դիսսեկցիան շարունակվում է վիրահատության ընթացքում աղու տրամագծով փոխելով լայնիչների տեղը և քսակակարի ձգման ուղղությունը:



Փուլ 9. *Կոնքի հատակի դիսսեկցիա*

Կոնքի հատակի մկանին հասնելուն պես դիսսեկցիան շարունակվում է ուղիղ աղուց որոշակի տարածության վրա: Դա անհրաժեշտ է վիրահատության տեղային արմատականության ապահովման համար և թույլ է տալիս խուսափել ուղիղ աղու լուսանցքի բացումից, ինչը կարող է բերել ուռուցքային բջիջների տարածման: Անոթները, հատկապես ստորին ուղիղաղիքային զարկերակը, պետք է առանձնացվեն, հատվեն ու կապվեն: Կոնքի հատակի մկանները հետևողական հատվում են ենթարկվում մանրակրկիտ հեմոստազի: Հատվում են պոչուկի կապանային կպումները, որոշ դեպքերում օգտակար է պոչուկը սրբան-պոչուկային կապանով անջատել և հեռացնել: Պոչուկի երկու կողմերից սուր դիսսեկցիայի ճանապարհով տարածքի ստեղծումը հեշտացնում է օրիենտացիան և դիսսեկցիան, թույլ տալով մատը անցկացնել ինտրապերիտոնեալ, բռնել ու ձգել հետանցքը բարձրացնող մկանները:



Փուլ 10.

Հետանցքը բարձրացնող մկանները վերցվում են մատի վրա, իսկ Վալդևերի փականը կարող է սկզբից ձգվել գլխամասային ուղղությամբ: Խորհուրդ է տրվում մկանները կապել, հաշվի առնելով հաճախ նրանց միջով անցնող անոթներ:



Փուլ 11.

Հետանցքը բարձրացնող մկանի երկկողմանի հատումը զգալի չափով ազատում է ուղիղ աղին նրան պահող կառուցվածքներից: Հետևից երևացող շերտը հանդիսանում է Վալդևերի փականը: Այն փեղեկվում է սուր եղանակով, եթե դա չի արվել ավելի վաղ, խուսափելու համար առաջ-սրբանային փակեղի անփույթ անջատումից, ինչը կարող է ավարտվել արյունահոսությունով ու նյարդի հնարավոր վնասումով: Բաց որովայնի խոռոչի պարագայում վիրաբույժը կարող է սրբոսկրի կողմից բռնել աղիքի ծայրատը և համահունչ աշխատանքի պարագայում շեքի կողմից աշխատող վիրաբույժի ձեռքը կարող է հանդիպել որովայնի խոռոչից աշխատողի ձեռքին:



Փուլ 12.

Ուղիղ աղին տարվում է դեպի ցած որպեսզի բացվեն առաջային խմբի մկանները: Վիրահատության այս փուլում անհրաժեշտ է հատուկ զգուշություն, խուսափելու համար միզուկի վնասումից: Այն պետք է ստենտավորվի և այդ կերպ միզապարկի կատետերով դուրս բերվի վիրահատական դաշտ: Ցայլք-պոչուկային մկանները հատվում են ուղիղ աղու և շագանակագեղձի, ինչպես նաև ուղիղ աղու և միզապարկի երկու կողմերում: Օգտակար է մատով պահել մկանային խուրձը, որպեսզի պաշտպանվեն ավելի խորը տեղակայված կառուցվածքները: Դիսսեկցիան շարունակվում է դեպի առաջ՝ Դենոնվիլլի փակեղի վրա: Ցայլք-պոչուկային մկանների երկու փորիկներն էլ հատվում են և կապվում: Վերջնական փուլը շագանակագեղձի վրա տարածվող կոնքային փակեղի հատումն է: Առաջային դիսսեկցիայի ավարտից հետո և եթե ներորովայնային դիսսեկցիայի ժամանակ հասել են կոնքի հատակին, ուղիղ աղին պետք է լրիվ անջատվի: Հակառակ դեպքում կարող է առաջանալ կողմնային կապանների մնացած հատվածների հատման անհրաժեշտություն: Ուղիղ աղու պրոքսիմալ ծայրատը բռնվում է Դյուվալի սեղմիչով և U-ա ձև դուրս բերվում հետևից՝ ձգելով առաջային մկանների վերջին խրձերը:



Փուլ 13. *Կոնքի հատակի փակում*

Ուղիղ աղու հեռացումը ուղեկցվում է մանրակրկիտ հեմոստազով և կոնքի խոռոչում տեղադրվում է ակտիվ դրենաժ: Կոնքի հատակի մկանները առանձին կարերով առավելագույնս մոտեցվում են իրար: Երկրորդ ակտիվ դրենաժը դրվում է ենթամաշկում և վիրահատությունը ավարտվում մաշկի ու ենթամաշկի կարով:





Գործառույթներ սպեցիֆիկ բարդությունների ժամանակ

- Շեքային վերքի ինֆեկցիայի նշանների դեպքում /դող, ջերմություն, լեյկոցիտոզ, տեղային ցավոտություն/ այն պետք է բացվի ու լվացվի:
- Աղիքով կեղտի անցման խանգարման դեպքում /ստոմաի 6-7-րդ օրը դեռ չի գործում/, իրականացրեք աղիքի ռենտգենկոնտրաստ հետազոտում /ջրում լուծվող կոնտրաստ/:

Հետվիրահատական գործառույթներ

Բժշկական խնամք՝ քիթ-ստամոքսային զոնդը հեռացվում է 2-4-րդ օրը, որովայնա-շեքային դրենաժները՝ 5-7-րդ: Տարեք հետվիրահատական հակաբիոտիկ թերապիա /7 օր/: Կատետերը մեզապարկից հեռացրեք 2-4-րդ օրը:

Կերակրման վերսկսում՝ հեղուկներ 3-4-րդ օրվանից, պինդ սնունդ ստոմայով առաջին հետվիրահատական կղանքից հետո՝ մոտավորապես 7-րդ օրը:

Աղիների ֆունկցիա՝ հնարավոր է ստոմայի միջով հոգնաներ 4-րդ օրից և պրոկինետիկների ներերակային կիրառում:

Ֆիզոթերապիա՝ շնչառական վարժություններ:

Անաշխատունակության տևողությունը՝ 2-4 շաբաթ:

Փորձված վիրաբույժի խորհուրդները

- Առաջ-սրբանային երակների վնասումն ու արյունահոսությունը Վալդևերի և սրբոսկրի փակեղների միջև ցույց է տալիս, որ դիսսեկցիան տարվում է շատ խորը /բացառություն՝ ուռուցքի ուղղակի ներաճ/: Փորձեք հասնել հեմոստազի կարերի ու կապի, կոագուլյացիայի կամ ոսկրային մոմի միջոցով /վնասված երկաները ներ են քաշվում սրբանային անցքերի մեջ/: Եթե հեմոստազը անաղյուսավետ է, օգտագործեք տեղային հեմոստատիկ միջոցներ և տամպոնադա:
- Առաջ-սրբանային դիսսեկցիան իրականացնում է սուր եղանակով աչքի հսկողության տակ, մինչև պոչուկի մակարդակից ներքև մուտքի ստանալը, ապա մատի օգնությամբ, բութ եղանակով կարող է շարունակվել կողմնային կապանների հայտնաբերման համար:
- Տղամարդկանց մոտ էրեկտիլ ֆունկցիայի պահպանումը պահանջում է նախաաորտալ նյարդային հյուսակից եկող ստորընդերային նյարդային թելիկների պահպանում, որոնք ընթանում են մի քանի հյուսակներով համապատասխան կողմից դեպի ներքև, սրբանի դարավանդի և կոնքի հետին կողմնային պատով:

- Միշտ հայտնաբերեք միզածորանը այն անցնում է զստային զարկերակի արտաքին ու ներքին ճյուղերի բաժանման տեղի վրայով /բնորոշ է միզածորանի պերիստալտիկայի ակտիվացումը, նրա մեխանիկական գրգռման ժամանակ/:

- Հատեք ստորին միջընդերային զարկերակը ձախ հաստաղիքային զարկերակի անջատվելու տեղից ավելի դիստալ /աորտայից մոտ 4 սմ ավելի դիստալ/: Բարձր հատումը անհրաժեշտ է, երբ կան նրա անջատման տեղի ավշագեղձերի ախտահարման վերաբերյալ կասկածներ:

- Կոլոստոման միշտ ձևավորեք ուղիղ մկանի հատվածում, ապահովեք հատման տեղի լավ սնուցում և հաստ աղու բավարար երկարություն: